



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





Ի ԱՇԽԵՆԱԴՐԱՎՆԵ  
ՄԵԼԻՔՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ  
ՓԱՆԵՍ.


БИБЛИОТЕКИ  
Мелькона Каспаровича  
ПАНЬЕВА.

№ 1017

• 73-17/1178

W 16

15



9(47.325)

Q-30

15

## ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՀԱՅՈՑ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ

ԽՐ

Ի ՄՈՒՏՈ-ՎԱՐԱՐԻԱ ՀՈՒՆԴՈՒԹ ԵԲ Ի ԼԵՀԱՍՑՈՒ

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ՑԱՄԻՆ 1876

ԱՐԵԱՆՈՅ Մ. ԱՎՐՈՒՆԵԱՆ



ԳՈՐԾԱՆ

1876



12700

---

ԳՈՐԾԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1877

---

2017

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Անդստին ի ընէ Հայոց ազգին ճակատակիրն  
եղած է գաղթականութիւնը, իրենց ընիկ երկրին  
մէջ նեղուիլ սկսելնուն պէս, թողլով հայրենիքնին  
օտար երկիր գաղթել և հոն ընակութիւն հաստա-  
սելլ :

Գաղթելու տրամադրութիւնն ու յօժարութիւնը՝  
ժողովրդի մը ամեն բանէն աւելի իր վաճառաշա-  
հութեանը և ապրուստին ետեէն պնդելու փափաք  
և թեկնածութիւն մը ունենալուն նշանն ու ապա-  
ցոյցն է. ինչու որ այս ժողովուրդը երբ կ'աեմէ թէ  
իր ընիկ և հայրենի երկրին մէջ պարագայներն ու  
կացութիւնը այլևս աննպաստ կըլլան և թոյլ չեն տար  
իւր աշխատութեան արդիւնքն վայելելու և դործառ-  
նութեամբ իր ապրուստը և շահը ճարելու, իսկոյն  
թողլով կ'մեկնի դէպ ի հոն՝ ուր տեղական պարա-  
գայները կ'նպաստեն աւելի իւր շահուն և աշխա-  
տութեանը :

Կան ժողովուրդներ, մանաւանդ ընկճեալ ու  
անկախութիւնին կորսնցնող ժողովուրդներ, որոց  
մէջ շահասիրութենէն աւելի զօրաւոր ըլլալով հայրե-  
նասիրական զգացումն ու վերականդ ման քաղաքական  
նողատակը, փոխանակ հայրենիքնին թողլով օտար  
երկիր գաղթելու և իրարմէ բաժնուելով ցըռելու,  
առաւել նախամեծար կ'ընտրեն մի և ամփոփ մնալ  
իրենց հայրենի երկրին մէջ, ամեն նեղութեանց և  
տառապանաց առկալով, թոյլ չտալով որ օտար տարր  
մը գայ մտնէ մէջերնին, և փոխանակ բարեկեցիկ  
երկիրներ փնտռելու՝ ընդհակառակն ջանալով որ բըռ-  
նութեան տակ հեծող իրենց հայրենի երկրը վերըս-  
տին իր առջի բարեկեաց և երջանիկ վիճակին մէջը

դնեն : Ասի այնպիսի մեծ հայրենասիրական զգացումէ բզիսեալ զահողութիւն և անձնուրացութիւն մ'է , զոր անկարելի է որ ընէ՝ սոսկ իւր վաստակին և շահուն համար ապրելու սովորած ժողովուրդ մը :

Խոկ Հայը , որոյ ի սկզբանէ անօփ , քաղաքական նպատակներ ու դիտումներ տածելէն աւելի՝ վաճառական և աշխատասէր ժողովուրդ մըլլալլ առակի կարդ անցած է , զարմանալի բան չէ որ իր հայրենի երկրին մէջ նեղուիլ ոկսելուն պէս՝ օտար երկիր գաղթելու հետամուտ դժնուի , ուս հին Արեւելեան առածին հետեւելով թերեւս թէ , « մի կապուիր ժնած տեղոյդ հետ , կապուէ կշտացած տեղոյդ հետ » : Տարակոյս չկայ թէ Հայուն այս կերպ իւր անհատական շահուն և վաստակին ետեւէն պնդելու սովորութիւնն ու արամագրութիւնը՝ Հայ ազգին իր հայրենի երկրին մէջ ընդհանուր բարւոքման ու բարեկեցութեան միջոցներն ձեռք ձգելուն մեծ արգելք մթեղած և Հայուն ամփոփ և հած մրութիւնը ակարացնելով , օտար տարչեր ալ իր մէջ մտնելուն թոյլ տուած է : Ասի բաւական է ապացուցանելու և հաստատելու թէ Հայը աշխարհիս վրայ աւելի վաճառական , աշխատաւոր , արտեստաւոր ու զործաւոր ժողովուրդ մը կ'ապրի , քան թէ քաղաքական ազգ մը :

Մանաւանդ ցաւալին այն է թէ , Հայուն այս դադարկանութիւնը յոռի կողմ մն ալ ունի . Մինչդեռ ուրիշ քաղաքակիրթ ազգեր իրենց հարկադրեալ դադարկանութիւնը կըցած և դիտցած են իրենց հայրենեայը օդովին ծառայեցնել , ինչպէս եղած է ատենօք Յունաց գաղթականութիւնը . և ինչպէս ըլլալու վրայ է այժմ գերմանական աղջին մեծամեծ դադարկանութիւնները , որք Ռուսիոյ :

Պազդիս, Հոլոնտայի և Անդղիոյ մեկ մասը բռնելէն զատ, մեծ մաս մ'ալ Ամերիկայի երկիրները լեցնելու վրայ կ'զտնուին, որոց ըրածը դադթականութեանէ մ'ալ կ'համարուի, Հայերը կըսեմք՝ ընդհակառակն իրենց դադթականութեամբը իրենց հայրենեաց ընդհանուր օգտին ալ կ'վնասեն, հայրենի երկիրնին թողով գուրս ենենուն պէս՝ իրենց հայրենակցաց հետ ունեցած հազորդակցութիւննին բոլորովին կարելով, խզելով, առանձնանալով, որպէս թէ բոլորովին օտարացած զատ աղդ մ'եղած ըլլային, մինչդեռ ուրիշ քաղաքակիրթ ժողովուրդներ երբ օտար երկիր դադթականութիւն մը հաստատեն, առաջուանէն աւելի սերտ հազորդակցութեամբ ու յարաբերութեամբ կ'կապուին իրենց հայրենի երկրին մէջ գտնուող ազգին հետ, այնպէս որ կարծես այդ դադթականութիւնը՝ օտար հողի և երկրի վրայ՝ միայն իր հայրենեացը համար կ'տալի:

Խնձօթն սարբերութիւն ասոնց և մեր Հայուն գաղթականութեանը մէջ, որոյ ցաւալի հետեանքը եղած է 4—5 դարէ ի վեր մանաւանդ Եւրոպայի այլ և այլ կողմերը—չըսեմք դադթող—այլ ցըուեալ Հայոց օտարանալը, կորսուիլը և ուրիշ ազգաց հետ խառնուենին, զոր ցարդ կ'ողբամք առանց դարմանը մտածելու: Թողունք կորսուած Հայերը, որոց կառուցած եկեղեցիներն ու բարեսպաշտական շէնքերն միայն կանգուն մնացած՝ ասոնք միայն ցոյց կ'տան մեզ թէ հոդ ալ ժամանակաւ հայ ժողովուրդ մը կայ եղեր, որ այժմ կորսուած՝ միայն իւր շինուածոց հետքերը կեցած են իրը յիշատակ կամ շիրիմ իւր մահուանը, թողունք այդ անթիւ և միլիոնաւոր կորսուած Հայերն, նոյն իսկ այսօրուան օրս, երբ

Հաղորդակցութեան միջոցներն այսքան գիւրացած և հայրենասիրական զգացումներն փոքր և շատէ վառած ու արթնցած են, նոյն իսկ այսօրուան օրս չեմք գիտեր թէ Եւրոպայի ո՞ր կողմը, ո՞ր քաղաքները հայ դաղթականութիւն մը կ'գտնուի որ տակաւին իր հայութիւնը պահած է, և եթէ գիտնանք իսկ այս ինչ կամ այն ինչ տեղը հայ գաղթականութիւն մը դանուիլը, չեմք գիտեր թէ քանի՛ հոգիէ կը բաղկանայ, ի՞նչ է վիճակնին, լեզունին, ընթացքնին, բարքերնին, սովորութիւննին, ինչո՞վ կ'զբաղին և ի՞նչպէս կ'ապրին: Օրինակի համար, գիտեմք թէ Վարնայի, Շումանյի, Բուսնուքի, Ֆարշանի, Առաջովախի, Պուքըշիշի և լուն Եւրոպական քաղաքաց մէջ հայ գաղթականութիւններ կան, բայց դիտե՞նք թէ սրչափ են, ի՞նչ կընեն, ի՞նչ է աղդային, ընտանեկան, քաղաքական և առելորական վիճակնին:

Ամօթ կ'զգամքը ըսելու թէ ասոնց մէկն աւ չեմք գիտեր, ինչու որ ասնք հաղորդակցութեամքը կ'իմացուին ու կ'գիտուին, և այդ հաղորդակցութիւնն սղ կարծես անիծուեր է: մեր աղդին մէջ, ուր ամեն բան այդ միութիւնը, այդ հաղորդակցութիւնը խղելու, անշատելու նպատեր է, և Հայ աղդը քաղաքակիրթ աշխարհնին մէջ վայրենի աղդի մը վիճակին իջուցեր է: Այսո՛, վայրենի է այն աղդը՝ որ իր ցրուեալ անդամոցը տեղոյն, թուոյն և մինակին վրայ ծանօթութիւն ու աեղեկութիւն մասնամ չունի:

Չեմք տկնածիր որպած ենալու թէ Հայ աղդն ոյ քաղաքակիրթութեան շաւզին մէջ մուած է, երբ տակաւին Հայուն պաշտօնատկան դիւնանատանը մէջ դոնէ ճիշտ և որոշ վիճակադիր մ'անդամ շկայ որ ճանշցնէ թէ ի՞նչ քան Հայ կայ նոյն իսկ Տաճկառամի մէջ,

ի՞նչքան Հայ՝ մեզ ծանօթ երկիրներուն մէջ, և դեռ  
ի՞նչքան Հայ կ'գտնուի մեզ անծանօթ մնացած տե-  
ղերը։

Ի զուր կ'տքնիմք ու կ'աշխատիմք մեր քարեկե-  
ցութեանը ու բարօրութեանը, եթէ ամենէն առաջ  
գեռ վիճակագիր տախտակի մը վրայ միացնել չփոր-  
ձեմք աշխարհիս երեսը ցրուեալ Հայ ազգին անդամ-  
ներն, որով միայն մեր քաղաքակրթութեան շաւղին  
մէջ առաջին քայլն առած պիտի համարուիմք։ Առ  
այս օդուտ մը չունին միայն Խղմիտի սովելոց հանգա-  
նակութեան կամ Վանայ հրկիզութեան քննութեանը  
ոլէս ձեռնարկներ, որոնք ազգերնուս թշուառու-  
թիւնն ու աղէտքը անդամ մալ մեր աչքին առջելը  
հաստատելէն զատ ուրիշ բանի չեն ծառայել, Եթէ  
Եւրոպայի այլևայլ կողմերը գտնուող Հայ գաղթակա-  
նութիւնները զիտցած ու ճանչցած, և անոնց հետ  
հաղորդակցութեան մէջ ըլլայինք, ամենամեծ չարեաց  
ու աղետից համար եղած հանգանակութիւններն  
ասանկ խղճալի և արտօնուքի հատի մը չափ արդիւնք  
չեին դոյացնել։

Թողլով մեր Ազգային կեդրոնական Ապրչու-  
թեան՝ այդ հեռաւոր և անծանօթ ցրուեալ ազգայ-  
նոց հետ հաղորդակցութիւն հաստատելու անմիջական  
միջոցներուն հոգը, մենք միայն առ այժմ յիշեալ հե-  
ռաւոր ազգայնոց գտնուած տեղւոյն, ազգային և  
ընտանեկան կենցաղոյն, և քաղաքային ու առեւտրա-  
կան վիճակին վրայ կարեւոր և հետաքրքրութեան  
արժանի տեղեկութիւններ հաղորդելու նպատակաւ  
մեր Ազգին, 1876/ն Վալաքիա, Մօլտավիա և  
Հունգարիա ըրած մեր ուղեղորութեանը միջոցին,  
նոյն կողմերու Հայ գաղթականութեանց վրայօք կա-  
րելի եղածին չափ քաղած ներկայ Տեղեկադրութիւննիս

պյս անգամ մասնաւորապէս հըստարակելու կ'ձեռք  
նարկեմք, սոյն գործոյն աշխատութեան յարդն ու  
արժեքը բանասէր ընթերցողաց դնահատութեանը  
թողլով:



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մանկութենէս 'ի վեր , երբ Հայոց պատմութիւնն իրքն գասագիրք ձեռքս տուած էին , ի սկզբան սրտնեղութեամբ ուսանելու հարկադրուելու հակառակ , քանի վերջն առի , այնքան աւելի ապաւորուելով , սրտիս զգացումները կ'արթննային և անհնարին վիշտ մը կը ներշնչէին յիս , տեսնելով մեր ազգին մէջ անգակաս գործուած մատնութիւններն , ոխակալութիւններն , անմիաբանութիւնն , անիշխանութիւնն և ասոնցմէ յառաջ եկած այնքան աղէաքն ու չարիքը , որք մեր հպարենեաց հիմունքը քանդեր էին , մտածել տալով ինձ որ եթէ այս ինչ նախարարն կամ այն ինչ իշխանը սա կամ նա չարիքն և մատնութիւնը չգործէին , մեր ազգն այսօր Ասիական ազգաց մէջ ամենէն առաջինն և յառաջադէմն եղած պիտի ըլլար , փոխանակ այսօրուան պէս՝ աշխարհիս ժողովրդոցը ամենէն նկուն , բրեալ , թշուառ . և խեղճու անոք ազգն ըլլալու :

Այս մտածումներս այն աստիճան եռանդս վառեցին , որ մանկութենէս 'ի վեր բոլոր փափաքս և նպատակս եղաւ մեր ազգին վերջին իշխանութեանը փառաւոր ժամանակաց վկայ և ականատես ժողովրդեան , Անեցւոց սերունդն եղող այժմու կենդանի մնացած մասը , ուր որ կան ցըսւած կամ գաղթականութիւն հաստատած , անդամ մը աչօքս տեսնել և փափաքս յագեցնել :

Հուսկ ուըեմն եկաւ ժամանակը , և օդնեցին դէպքերը , որ մանկութենէս 'ի վեր առաջադրած դիտաւորութիւնս այս անդամ իրապէս ի գործ դնեմ , ուստի չնայելով կարողութեանս , ապագային մէջ ապ-

բառատի միշոյ մ'եզած փոքրիկ դրամագլխովս , ելոյ  
անցեալ տարի Վարճայէն ոկտեմբ , Մոլտօ Վալաքիա ,  
Հունգարիա և Աւստրան շրջելէս յետոյ Թրիսթէի  
ճամբով գարձայ ՚ի Կոստանդնուպոլիս , 30էն աւելի  
քաղաք այց ելնելով , ուր որ Հայ գտնուիլը իմացայ՝  
գնացի և ահօնուեցայ , կարողութեանս ներածին  
չափ խուզագլութիւններ ըրի , և ահօնածո ու լսածո  
տեղեկագրելով ամփափեցի :

Անկարելի է ինձ բացատրել ընթերցողացս , թէ  
այս ճամբորդութիւնս ինչ տխուր տպաւորութիւն  
մ'ըրսու վրաս , թէ ո՞րքան դառնատէս յարտասառս շար-  
ժեցայ անսելով այն խեզը Սնեցւոց մնացրդը ,  
որոնք Հայաստանի վերջին մայրաքաղաքը թօղլով ,  
ոյինքան հեռաւոր երկիրներ դաշինք էն , կարծե-  
լով թէ հանդչեցան , և թէ կարող են այլևս ազգու-  
թիւննին և կրօնքնին կործանումէ զերծ և ազատ  
պահպանելու , չգիտնալով խեզներն թէ վերջին հան-  
գիպելիք ազգութեան և կրօնից թշնամինին Սնիի  
վրայ յարձակող բարբարս թշնամիներէն ալ աւելի  
անագործին և անխիզն ողիսի ըլլան եղեր , որոնք ոչ  
թէ միայն Հայուն ստացուածքը յափշտակելով շա-  
տացեր , այլև նորա ազգութիւնն և կրօնքն ալ իրեն  
մոռցնել տալու աշխատեր են :

Մենէ հեռաւոր , անձանօթ և կիսակորուստ այս  
հայութեան մնացորդ սերնդին վրայօք փոքր ՚ի շատէ  
տեղեկութիւն մը տալը սիրելի Ազգիս ծառայութիւն  
մ'ընել համարելով , ի՛համարձակիմ այս անդամ հա-  
ւաքած տեղեկութիւններն առանձինն տետրակաւ մը  
ընծայել Ազգիս , բարեսէր և զգայուն ազգայնոց  
այս մասին ցոյց տուտծ համակրութենէն քաջալեր-  
եալ , համոզուած և վստահ լինելով թէ ես ևս ներ-  
կայ աշխատասիրութեամբս ըստ իմովտանն իրական

ծառայութիւն մը մասուցած սկիտի ըլլամ Աղջիա,  
այս դործոյս բանասէր ազգայնոց քով դանելիք ըն-  
դունելութիւնը, որոյ աներկմիտ եմ, բաւական փո-  
խարինութիւն և վարձաարութիւն մ'ինձ նկատելով:





ՀԱՄԱՊՈՅԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՆԵՑԻՈՑ

1020—1795

---

Ինչպէս որ Յառաջաբանին մէջ խօսեցանք , հոգ  
ալ կուզենք Անեցւոց գաղթականութեան եր՞ը և ի՞նչ  
պատճառի համար , և քանի անդամ եղած ըլլալուն  
վըսյօք տեղեկութիւն մը տալ : Այս պատճառները  
որչափ որ պատմութեան մէջ կան յիշատակուած , բայց  
դեռ այս մասին մասնաւորապէս հմտութիւն չու-  
նեցողներուն համար , ճամբարդութեանս Տեղեկա-  
դրութիւնը սկսելէս առաջ , հոս համառօտիւ բացա-  
տրութիւն մը տալ հարկ աեսայ :

Օտարաց մէջ առակ է թէ՝ Հայերը պէտք չէ որ  
օտարին թշնամի ըսեն , վասն զի բուն զօրաւոր թըշ-  
նամին իրենք են իրենց աղղին կործանմանը : Ստու-  
դիւ ալ նոյն իսկ մենք եղած ենք մեր ազատու-  
թեանը , մեր թագաւորութեանը կործանման պատ-  
ճառը : Պատմութիւնը ձեռքը առնողը պիտի տեսնայ  
թէ քանի՛ անդամ որ թշնամին Հայաստանի վրայ

քալեր է , ամեն անգամուն ալ թէ նախարարք մէկ զմէ - կու դէմ կամ թագաւորին դէմ ոխակալութեան ոգուով , և կամ արծաթասիրութեամբ կամ փառասիրութեամբ , փոխանակ թշնամին ընկճելու , թշնամւոյն կողմն անցեր են :

Թողունք ի սկզբանէ իշխանութեանն Հայկայ մինչև Սքգար , բուն Հայոց իրենց աղդին ըրած մասնութիւնները մի ըստ միոջէ յիշատակել , նաև թողունք Սքգարին մինչև Գագիկ թագաւորն . սկսինք միայն Գագիկ արքային որդի՝ Յովհաննէս արքայի 1020ին թագաւորած օրէն Հայոց թշուառութիւնը ուշադրութեան առնել :

Գագիկ երկու որդի ունէր , Յովհաննէս և Աշոտ . առանք կ'ուզէն իրենք թագաւոր նստիլ , իսկ Գագիկ իւր ձեռքովը իր Յովհաննէս որդին դրաւ իւր տեղը իբր յաջորդ և ժառանգորդ թագին : Աշոտ իրեն կուսակից շատ մը նախարարներ ունենալով և զօրեղ ըլլալով , բազմաթիւ զօրօք Անիի վրայ քալեց և զայն պաշարեց : Հայոց նախարարք Կաթողիկոսին հետ ժողովը ընելով , իմացան որ վերջը դէշ պիտի ըլլայ , աշխատեցան հաշտեցնել զանոնք , երկուքն ալ երդուցուցուցին այն դաշամբ որ , Յովհաննէս թագաւոր նստի յԱնի և շրջակայները և ինքը տիրէ , իսկ Աշոտ ալ իբր երկրորդ թագաւոր Հայաստանի միւս կողմերուն տիրէ : Երբոր Յովհաննէս եղբայրը առաջ մեռնի՝ ինքը նստի թագաւոր յԱնի :

Այս կերպիւ թէպէտ խաղաղութիւն եղաւ , բաց կուսակցութիւնները մնացին , քանզի նախարարք ումանք մէկ կողմը և ումանք միւս կողմը բանելով , այսպէս երկպառակութեամբ թագաւորութիւնն ալ թուլցաւ ու տկարացաւ :

Ահա ասկէ սկսեալ երկպառակութիւնը և ա-

տելութիւնը օր ըստ օրէ զօրացաւ, այն աստիճան որ  
Աշոտի կուսակից նախաբարներէն ոմանք մինչև իսկ  
գնացին Վրացւոց մատնեցին Յավհաննէս թաղաւորը,  
Վրացիք ալ Անիի մօտ դալով, դաղսնի կ'սպասէին  
որ Յովհաննէս արքայն Անի քաղքէն դուրս ելնէ,  
ինչպէս որ օր մ'ալ առանց դիտնալու երրոր գուրս  
ելաւ արքայն, Վրացիք իսկոյն վրան յարձակեցան,  
բռնեցին և քաղաք մտնելով շատ վնասներ տուին, ար-  
քայն ալ Վրաստան տարին, ուր բանտարկեց զանի  
Գորդի թագաւորը, և մինչև որ Հոյաստանէն աեղ շա-  
ռաւ չը թողուց :

'Նախարարք այս տեսնելով փոյթ ըլքին արքա-  
յին օգնելու : Աշոտ՝ նախարարաց այս անտարբեր ըն-  
թացքը տեսնելով, որ նախարարք ոչ իրեն և ոչ ալ  
եղբօրը հետ կը միաբանին, չար խորհուրդ մը յդա-  
ցաւ ի գործ գնել իւր եղբօրը դէմ, Փօխանակ միա-  
բանութեամբ թշնամին դուրս վանելու, սուտ հիւանդ  
եղաւ, անկողնոյն առջելը որոգայթ փորել տուաւ, և  
հրաւիրեց իւր եղբայրը որ իրեն տեսութեան դայ,  
երրոր Յովհաննէս արքայն եկաւ իր եղբայրը տեսնելու  
մէկէն որոգայթը ինկաւ : Այն ժամանակ Աշոտ հրա-  
մայեց Ապիրտատին որ կաղէ իր եղբայրը ու սպան-  
նէ, իսկ Առիրատ այս անգթութիւնը ըրաւ, այլ  
կապեց և տարաւ յԱնի իւր աթոռը նստեցուց, ըսե-  
լով թէ և լու է իմաստուն արքայ քան անողորմ  
բռնաւոր ։ Դրացի թշնամիներն մեր այս ան-  
միաբանութենէն օգուտ քաղելով սկսան Հայաստանի  
շորս կողմէն վրան յարձակիլ, հարստահարել ոչ միայն  
Պարսիկները, այլ և Թաթարք, Վրացիք և Հռով-  
մայեցիք, Նախարարք ասոնք տեսնելով ամեննեին հո-  
գերնին չեին ըներ, այլ իրենց անձնական հանգստու-  
թիւնը կը նայէին :

1024 ին Վրաց թագաւորը Յունաց դէմ ապշուտամբեցաւ, Յովհաննէս արքան դաշնակից առնելով իրեն, Վասիլ թագաւորը բաղում զօրքով Վրաստանի վրայ քալեց, տակնու վրայ ըրաւ, անկէ դարձաւ Տրավիզն ձմերեց, երբոր Արքայն իմացաւ որ դարնան Հայաստանի վրայ ալ պիտի քալէ, սկսաւ դողալ որովհետև նախարարաց անմիաբանութիւնը և իրեն ալ թուլամորթ ըլլալէն յուսահատեալ՝ այս վատ խորհուրդը յղացաւ :

1025ին Պետրոս Կաթողիկոսը Տրավիզն ղրկեց որ հաշտութիւն կնքէ, և որովհետեւ Յովհաննէս ղաւակ չունէր, իւր մէկ նամակուը կերպնոյը թէ Անի և իւր բոլոր գաւառները միասեղ իրեն կուտայ, միայն թէ քանի որ ինքը ողջ է՝ իրը փոխանորդ Վասիլին՝ թագաւորութիւնը շարունակէ, Եբբոր Վասիլ Հայոց արքային այս մատնիչ նամակը կարդաց, խիստ ուրախ եղաւ այսպիսիբան մը միտքէն չ'անցնելով, Վասիլ երբ Պօլիս դարձաւ շատ չ'ապրեցաւ. «Մեռնելու մօտ իւր խզճի խայթէն զդածեալ, Հայոց թագաւորին նամակը յիշեց, ուստի Պօլիս հաւատարիմ Հայ մը բնաւել տալով գտաւ Կիրակոս անուն երէց մը Վասիլ նամակը այս մատնիչին յանձնեց ըսելովիրեն և Տար այս նամակը քու արքայիդ, և իմ կողմանէս ըսէ որ ինծի մահ հասաւ. չեմ ուզեր որ իւր նամակը իմ քովս մնայ, այլ իւր թագաւորութիւնը իւր որդւոյն և ազգին թող տայ, իրենց ազատութիւնը պահեն, չըլլան օտարաց դերի » : Իսկ Կիրակոս այս նամակը առաւ և առանց մարդու իմացնելու իր քովը պահեց :

1034ին Կոստանդ և Ռոմանոս կայսերներէն ետքը երբոր Միխայիլ կայսր եղաւ, այս անօրէն քահանայն Յովհաննէս արքային նամակը տարաւ Միխա-

Յիշ կայսեր յանձնեց . և փոխարէն շատ դանձով  
գարձաւ , իսկ արքայն ուրսախանալով նամակը պահեց  
և Հայոց արքային մահուանը կողասէր որ Հայաս-  
տանի տիրէ :

1039ին Յովհաննէս արքայն մեռաւ 20 տարի  
թագաւորելին ետքը : Աշոտ եղբայրը անկէ և տարի  
առաջ մեռած և 14 տարեկան Գագիկ անուն դաւակէ  
մը թողեր էր , և որովհետեւ Յալհաննէս թագաւորը  
անզաւակ էր , գահաժառանդը Աշոտի որդին Գա-  
գիկը ովհտի ըլլար : Բայց ինչպէս որ ըսինք , նախա-  
րարք անմիաբանութեամբ անպիտանացած ըլլալով ,  
փոյթ չունեցան զինքը թօդաւոր նստեցնել , ուստի  
ժամանակ մը թափուր մնաց աթոռը մինչեւ որ  
Վեստ Սարդիս նախարար բռնանալով , բոլոր ար-  
քունական գանձը կողոպտեց և կուզէր որ ինքը  
թագաւոր նատի : Միխայիլ երբոր Հայոց թագաւո-  
րին մեռնելը լսեց , Անին յափշտակել կուզէր որ-  
պէս թէ ինքը Հայոց արքային ժառանգորդն եղած  
ըլլար : Դեսպան խրկեց որ Անին յանձնեն , Հայք  
երբոր լսեցին՝ շուարեցան և չուզեցին տալ , բայց  
Միխայիլ միշտ գեսպան կը զրկէր և ձեռք ձգելու  
հնարը կը մտածէր : Երբոր համոզուեցաւ թէ առանց  
զինու զօրութեան չը ովհտի կը նայ առնել , 100,000  
զօրք զրկեց Անիի վրայ , որ պատերազմով առնեն .  
Ինչպէս որ Հայոց բնութիւնն է , երբոր իրենց մէջէն  
միաբանութեան ոգին կորուի , առաւել կ'ընտրեն  
տարաց ծառայել , և որ աւելի գէշն է՝ իւր ազգը  
արհամարհելով թշնամիին հետ միանալ : Ահա այս-  
պէս եղաւ երբոր Վեստ Սարդիս անդլուխ ազդին  
դլուխ եղաւ , ինքը փոխանակ թշնամիին գէմը ել-  
նելով զայն հալածելու , անոնց գզնեց որ Հայաստան  
մտնեն բոլոր հարստութիւնը կողոպտեն , և յարաչաբ

իւր աղքակիցները ողակոտող հանեն : Այսպէս գե-  
մերնին ազգասէր նախարար մը չելնելով , արձակ հա-  
մարձակ մինչև Անիի առաջը հասան , և զայն պահա-  
րեցին : Բայց գտնուեցաւ այն մասնիչ նախարարաց  
մէջ Վահրամ Պահրաւունի քաջ սպարապետը , որ  
30,000 ձիաւոր և հետեւակ զօրութեամբ թշնամիին  
գէմը ելաւ , սաստիկ ջարդ մը տուաւ , այնպէս որ  
փողոցներէն վազած արեան հեղեղը Ախուրեան դեռը  
ներկեց : Խոկ անօրէն Սարգիս այնու հետեւ զաղանի  
կուսակիցներ կ'օրսար Հայոցմէ , որ զինքը Անիի թա-  
գաւոր նստեցնեն , սակայն Վահրամ ժողովք մը գու-  
մարեց , ուր որոշուեցաւ թէ թագին օրինաւոր ժա-  
ռանգը՝ Աշոտի որդին Գագիկը ողէտը է թագաւոր  
օճեն Անիի :

1042 Գագիկ 47 տարեկան թագաւոր նստաւ ,  
որչափ որ սա իմաստուն էր և աղքասէր , քաջ և Աստ-  
ռածասէր , բայց ի՞նչ կրնար ընել իւր հայրենեացը ,  
քանի որ անմվաբանութեան սրումը ցանուած էր նա-  
խարարաց մէջ , և օր ըստ օքէ զօրանալու վրայ , այն-  
պէս որ աշ թէ միայն այն անօրէն նախարարք թշնամ-  
եաց Հայաստանի վրոյ արշաւելը կ'ուղէին , այլ նաև  
բուն խոկ աէրութեան դէմ որոգոցի լարել կը խոր-  
հէին , որոնց սրբադլուին էր անօրէն Սարգիսը : Սա  
սկսաւ Յօյները գրկուել իւր աղքակցացը դէմ , նոյն  
խոկ ինքն ալ իւր թշնամի Հայաստանի չորս կողմը կը  
պարզաէր և Հայերը կը չարչարէր ու կը հարստահարէր :  
Երբոր Միխայէլին յաջորդեց Անօմախոս , Յանաց  
թագաւոր , սա գեսագան զրկեց նօրէն որ Սնին յանձ-  
նեն իրեն : Բայց չյաջողեցան և ամեն հնար ի դերեւ  
ելաւ : Վերջապէս ելաւ Հայաստանի վրայ քալեց ,  
բայց Գագիկ իւր թշնամիին դէմն ելնելով սաստիկ  
Հարդ տուաւ հալած եց , սակայն մասնիչ Սարգսի թէ ե-


լագրութեամբ Յոյնք նորէն բազմաթիւ զօրք խրկեցին, և Պարսիկներն ալ ոտք հանեցին որ Հայոց զօրքը շփոթեցնեն, իսկ այս անդամ ալ չարաշար յաղթուեցան, սակայն այս յաղթութիւնները օգուտ մը չունեցան, ինչու որ թշնամին մէջէն էր : Այսպիս Ասրգիս հայ մեծամեծաց մէջ բանսարկութեամբ երկպառակութիւն ձգեց, ամենքը մէկղմէկէ զատեց, այնպէս եղաւ որ Անի անհամար կուսակցութիւններու բաժնուեցաւ, և ալ անմիաբանութիւնը սկսան բոլորվին ձեռք տոնել : Սարդիս տեսնելով այս երկպառակութիւնը որ իւր ուղածէն աւելի յաջողած էր կեղծառորութեամբ ի գլուխ հանելու, գաղանաբար Մոնմախոսի իմաց տուաւ թէ ի՞նչպէս իշխանաց մէջ երկպառակութիւն ձգած, և ի՞նչպէս որոգայթ լարածէ թոգաւորը մատնելու : Երբոր արքայն իմացաւ շատ ուրախացաւ որ քանի՛ պատերազմներով առնուլ չկըցած բանը՝ մատնութեան և անմիաբանութեան շնորհիւը պիտի ձեռք ձգէր, դիւրութեամբ Անիին պիտի աիրէր, և Հայոց թագաւորութեան վերջ պիտի տար : Աւստի դեսպան դրկեց Անի, Սարդիսի և մէկքանի նախարարաց շատ բան խոստացաւ, որ հաւանութիւն առնեն թուգաւորէն՝ Անին իրեն յանձնելու : Այս վասակները պազանի խորհուրդ ըրին թէ ի՞նչպէս իրենց արքունիքը և հարուստ մոյրաքաղաքնին թշնամին յանձնեն և իրենք ալ օտարաց դերի ըլլան : Նամակ դրկեցին Յունաց արքային, որ պատրուակաւ մը Հայոց արքայն Ա. Պօլիս հրաւիրէ, որպէս թէ հաջտութիւն կնքելու, և երբոր գայ՝ բանտարկէ : Աւտի կեղծառորութեամբ սիրալիր նամակ մը դրեց Գագիկ արքային, որով կը հրաւիրէր զինքը Պօլիս գալ և բարեկամութեան դաշինք կնքել . բայց Գագիկ Յունաց վրայ կտրկած ոտ ըլլալուն չը գնոց : Կրիին

նամակ եկաւ շատ երդումով և զաստուածներն վկայ  
 բռնելով թէ թշնամութիւն մը չ'ունի , և մինչև իւկ  
 խոստացաւ Յովհաննէս արքային նամակը իրեն տալ ,  
 իւր կեզծ բարեկամոթիւնը հաստատելու համար :  
 Բայց Վահրամ և այլ նախարարք կը յորդորէին զԴա-  
 գիկ , որ չիսաբուի Յունաց : Խոկ նենգամիտ Սարդին  
 իւր արքանեակներովը կ'ստիպէր արքոյն որ Պօլիս  
 երթայ , և թէ իրենք կը պաշտպանեն թէ զինքը և  
 թէ Հայաստանը , և այս բանին վկայ . Պետրոս կա-  
 թողիկոսին և այլ նախարարաց առջև Ա. պատարա-  
 գին երդում կ'ընեն , և երդման զիրը Քրիստոսի ար-  
 եամբը կը զրեն , որոյ վրայ այլես վատահացեալ՝ 1045ին  
 իրեն փոխանորդ կը կարդէ Ա.պիլատ իշխանը , և ին-  
 քը կելնէ Պօլիս երթալու : Երբոր Յունաց կայսրը  
 իմացաւ , առաջ խիստ սիրով ողատուեց զինքը . բայց  
 մէկ քանի որ ետքը սկսաւ Անին ուզել իւր երդում  
 ները մառնալով : Երբ Գաղիկ դէմ կեցաւ , կայսրը  
 զայրանալով անամօթաբար զինքը Պօլոյ մէկ կզղին  
 աքսորեց : Գաղիկ այս մատնութիւններուն իրազէկ  
 ըլլալով , հնոցի պէս կը վառէր կը բորբոքէր , շատ  
 աղալեց Մոնումախոսին՝ որ զինքը աղատ արձակէ .  
 բայց անհնար եղաւ : Երբոր նախարարք արքային բան-  
 տարկուիլը իմացան , կ'ուզէին որ ժամ մ'առաջ Անին  
 յանձնեն Յունաց . բայց Սարդիս տեսնելով թէ մէկ  
 քանի նախարարք իրենց երդմանը վրոյ հաստատ կե-  
 ցած են , կեզծ ու ողատիր խօսքերով ուրիշ նախա-  
 րարներն , ինչպէս նաև Պետրոս կաթողիկոսը իրեն  
 որսաց , և հաւանեցոյց զանանք որ Անին Յունաց յանձ-  
 նուի : Ուստի նամակ գրեցին միաբան թէ՝ « մենք  
 պէտ Անին քեղի կը յանձնենք , միայն թէ մեզ թըշ-  
 նամիներէն պաշտպանես » : Խոկ Սարդիս իւր մտերիմ  
 գաղտնապահին միջոյաւ գաղտնաբար Անիին և Պա-

շատովն բանալիները նամակաւ մը Յունաց կայսեր պըր-  
 կեց ըսելը թէ «Ահա այսուհետեւ Անի և բոլոր Հա-  
 յաստան քուկդ է» : Երբոր Մանումախսոս բանալիները  
 ձեռք ձգեց, ուրախութենէն զինքը կորոյս, մաածե-  
 լով թէ որչափ անհնարին էր այսպիսի զօրեղ տէրու-  
 թեան մը ձեռքէն թագուորութիւնը յափշտակել և  
 իւր երկիրներուն տիրել, բայց եթէ այսպէս մատ-  
 նութեամբ, և ի՞նչպէս չը հոգարտանամ, կըուէր, որ  
 իրենք դրկեցին այս բանալիները և իրենք կաղաչեն,  
 որ օտարին գերի իյնան : Անստի զուոզութեամբ Հա-  
 յոց արքայն իւր գէմը բերել տալով ըստ : «Հիմայ  
 ըսելիք մը ունի՞ս, ահա նախարարներդ ինձի տուին  
 Անիին հետ բոլոր Հայաստանը» : Գաղիկ խիստ և զօ-  
 րեղ պատասխաններ տուաւ իրեն եղած անիրաւու-  
 թեանց համար, բայց ինչ որ ըստ՝ անօդուտ եղաւ,  
 Մոնոմախսոս գիտնալով որ առանց թագաւորին հա-  
 ճութեանը՝ Անիի տիրելը անիրաւութիւն է, և անէ  
 եղաւ որ հաւանութիւնը առնէ . բայց Գաղիկ շարու-  
 նակ մերժողական պատասխան կուտար : Ի՞նչ օգուտ  
 որ մէկ մը ինկած էր անիրաւ թագաւորի մը ձեռքը,  
 աղատին այլես անհնար էր : Անստի որչափ որ հնար  
 մը մտածեց աղատելու՝ չը կըցաւ դանել, հետեւըաք  
 յուսահատութեան մէջ ինկած կը տաղնտապէր, ուստի  
 համայ ակամաց հաւանեցաւ տալ իրեն Անի քաղաքը՝  
 Ասոր վրայ կոյսրը իրմէն թուղթ առնելով, Պիզու  
 քաղաքը իրեն տուաւ, Խոստանդնուպօլսոյ մէջ ալ պո-  
 չատ մը : Գաղիկ քիչ մը ժամանակ Պոլիս կենալէն  
 վերջը, հըաման տռաւ երթալ իւր բաղաքը բնակիլ.  
 սիրաք կը մաշէր իւր աղջին ողորմելի թշուտութեա-  
 նը վրայ, մանաւանդ շատ կը ցաւէր երբ կ'յիշէր իւր  
 սիրելի և զեղեցկաշէն Անին, որ այսպէս շարաչաք  
 մուտնուեցաւ . բայց ի զ՞ւ բ, վան զի մատնիչը էին

իւր նախարարնելը , և յափշտակողը կոյսր միւ :  
 1046ին Վանամախոս Ահիկողայսոս զօրոտպետը բա-  
 զում զօրոք Անի զրկեց , Գագիկին նամակն ալ միատեղ  
 որ Անիին տիրէ , նաև Կամոզիկոսին ալ շատ ընծայ  
 զրկեց : Ապիրատ երբոր լսեց՝ դէմ կեցաւ բսելով ,  
 թէ քաղաքին տէրը թող գայ յանձնէ , մենք չենք  
 կրնար տալ . Յոյնք երբոր իմացան՝ կատղեցան , քա-  
 զաքը պաշարեցին , և սկսան պատերազմիլ . բայց այս  
 անդամ ալ բոլորովին յաղթուեցան : Խեղճ Անեցիք ալ  
 տեմնելով որ արքայնին պերի գացած , նախարարք  
 մասնիչ , միաբանութիւնը քայքայեալ , և թէ վող  
 կամ անադան Անի թշնամեաց ձեռքը պիտի անցնի .  
 ուստի դէթ գառն պատերազմու մեծաշեն մոյրա-  
 քաղաքը չը կործանելու համար , թուղթ դրեցին Յու-  
 նաց որ գան Անին առնեն Հայոց պաշտպան ըլլալով ,  
 բայց աստուածալիին բարկութիւնը արդէն հասած եր  
 որ մարդիկ հոյրենիքնին պաշտպանելու համար վրէժ-  
 խընդիր չեղան մասնիշներուն . ուստի այս երկիրն ալ  
 պատժեց ահագին երկրաշարժով մը : Խոկ Յոյնք միւս  
 կողմանէ իրենց անիրաւ յափշտակութեամբը ուրա-  
 խանալով , այսպէս բոլոր Հայաստանի տիրեցին , Հա-  
 յերը անտէր և անօգնական թողլով : Բայց Սատուած  
 տնօրինեց , անիրաւութեամբ առածնին՝ շատ չը վա-  
 յելէն զատ , իրենցմէ ալ շատ երկիր վրայ տուին :  
 կայսրը Հայաստանի տիրելէն հպարաանալով , Ապլո-  
 ւար պարսիկ իշխանին վրայ զօրք զրկեց որ Հայոցմէ  
 յափշտակած տեղերը իրեն գարձնէ : Պարսիկք այն-  
 պիսի ջարդ մը տուին Յունաց՝ որ քիչերը ազատեցան :  
 Այսուհետեւ ալ աւելի համարձակութեամբ այլազգիք  
 ալ Պարսից հետ միանալով սկսան Անիի սահմանները  
 գու և ամեն չարիք գործել . շատերը նահատակեցին  
 պրաց մէջն էր Աւհրամ Պահլաւունի , ութ սունումեաց

ծերունին : Յոյնք քիչ մը կ'ակնածէին ոյս ծերունին , երբոր սա մեռաւ , ոռքա ալ սկսան արձակ համարձակ Հայաստանը կողոպտել . Յոյնք աս անիբաւութիւններով և հարստահարութեամբ չը բաւականանալով , կուզէին նաև Հայ իշխանները ձեռք ձղել և սպաննել : Այս ժամանակն էը որ Կեսարիոյ յոյն Մետրապոլիտը Հայոց գէմ ունեցած իր ատելութիւնը յայտնելու համար իւր շանը անունը ուժն դրած էր : Դագիկ երբոր իմացու՝ գնաց Կեսարիա , խնճոյքէ մը ետքը իւր ծառայններուն հրամացեց որ թէ՛ Մետրապոլիտը և թէ՛ շունը մէկ պարկի մէջ դնեն ու այնպէս խեղդամահ ընեն : Յոյնք այս նախատինքը չ'աւնելով կուզէին զինքն սպաննել , ինչպէս որ օր մ'ալ Կազիստրայի բերգին տեալրը որ երեք եզրայր էին , երբոր Գագկայ իրենց մօտ ըլլալը իմացան , առաջ կեղծաւորութեամբ , վերջը իրենց պահվոած մարդոց միջոցաւը ձերբակալեցին և շարաշար տանջանօք սպաննեցին զինքը , և մարմինն ալ պարսպէն դուրս կախեցին : Այսպէս վերջացաւ Բաղրատունեաց թագառութիւնը :



## ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱԽՄՆ ԱՆԻԱՑ

1046ին երբ Յոյնք Անիին տիրեցին , սկսան Հայ երկելիններն ալ հալածել , կարծելով թէ ասանկով հանգիստ կ'իշխեն Հայաստանի . իսկ ոյս բանն եղաւ իրենց պատուհասը , վասն զի 1064ին Ալբասլան աւանալով Հայաստանի անտէր թաւլը . անմիեւ բազմութեամբ Հայոց վրայ եկաւ , երկիրը արիւնով ներկեց և քալեց եկաւ բանակեցաւ Անիին դիմացը նիրակ գաւառը : Ալբասլան , քաղաքին բարձրը անմատչելի բերդերը աւետելով տոնի բերան . յուսահատեցաւ :

բանց պարագին մէկ կողմը տեսնելով որ տկար է, այն  
կողմը բարանով զորկաւ : Պարսիկք քանի անդամ ոք  
յարձակեցան պատռուածքն ներս մտնելու , մեծ կո-  
րուստով ետ մշտեցան . ուստի տեսնելով Ալբասլան  
որ Անին առնելը անհնար է , ետ գառնալու պատրաս-  
տուեցաւ : Քաղաքին վերակացուք չիմացան թշնամ.  
և այն հեռանալու գիտաւորութիւնը , կարծելով թէ  
սիխի չը կարենան մինչև վերջը Պարսից գէմ դնել .  
ուստի յաւսահատ երենց զօրօքը միջնաբերդը քաշ-  
ուեցան . իսկ քաղաքացիք այս շփոթութիւնը տեսնե-  
լով «ժամ է փախչելու թշնամւոյն ոուրէն» ըսելով .  
30,000 հոգի Անիէն դուրս ելան ցրուեցան : Երբոք  
Պարսից բանակին վերջին մասզորդքը Հայոց շփոթու-  
թիւնը և փախուսող իմացան՝ զարմացան , շատերը  
քաղաքին մօտենալով իմացան այս շփոթութեան պատ-  
ճառը , վաղեցին թշնամւոյն մասնեցին , որոնցմէ մին  
ալ կնկան մը զիրկի երախայն յափշտակելով տարաւ  
Ալբասլանին ըսելով , «Ս.հա նշան՝ որ քաղաքը մեր  
ձեռքը անձնատուր եղաւ» , ուրախութեամբ ետ գար-  
ձան և գիւրութեամբ ներս մտան , և սկսան կատա-  
զութեամբ կոտրել քաղաքացիքը , այնպէս որ քա-  
ղաքին փողոցները արեամբ ներկուեցաւ , և փողո-  
ներու անկիւնները մեռելները դիզուեցան , հարուստ-  
ներու ովալասները կողովառեցան , եկեղեցիք պղծե-  
ցան , աղջկանը և տղայք գերի վարեցան . իշխաններն  
կը չարչարուէին որ հարսութիւննին ցուցնեն , քահա-  
նայք ալ կայրուէին , զոմանս գերի կը տանէին և զոմանս  
ալ կը խեղդէին : Մէկ քանի որ վերջը ներքնաբեր-  
գին վրայ յարձակեցան , ամեն ինչը յափշտակեցին :  
իշխանք գերի վարեցին և պյուպէս աւերակ ու արիւ-  
նաշաղախ թողուցին զԱնի , ուր Պարսիկ մը վերա-  
կացու դնելով , բազում զօրօք անկէ քաշուեցան :

Ահա Հայոց գաղթականութիւնը այս թուականէն 1064 էն կ'ակսի , որոնք թափառական գացին Լեհաւանին ինկան :

### ԵՐԵԲՐԴԻ ԱՌՈՒՄՆ ՍԵՒԹՅ

Ասկէ ասուը տարի ետքը 1084 ին այլադր իշխան մը՝ Փատլուն Ամիրան՝ լսելով Անիի մեծագործութիւնը , կուղէր որ ինքը զրաւէ , ուստի շատ գանձ տուաւ Ալբալանին , գնեց զայն և իւր Մանուչէ թոռը վեր բակացու դրաւ : Ասու օրով Անեցիք քիչ մը խաղաղութիւն գտան . ինչու որ այլազգով նենդաւոր Յոյնէն գթասիրտ էր : Այս ժամանակներու Ալբալան Պարսից թագաւորը մեռաւ և իւր որդին Մելիք Շահ նստաւ : Աս ևս քաղցրաբարոյ և խաղաղասէր մարդ մ'էր :

1080 ին Մանուչին օրովը Գագկայ աղջական քաջն Ռուբէն զօրացաւ և քաջութեամբ ինքնադլուիք կիլիկիոյ թագաւոր նստաւ :

1086 ին Մելիք Շահ այնչափ զօրացաւ որ Յունաց Հայաստանի ամեն դրաւած տեղերը ձեռքէն առնելէն ետքը՝ մինչև Միջերկրական ծովը հասաւ , ուստի Մանուչէ իշխանը վախուն ստիպուեցաւ Անին նորէն Մէլիք Շահին տալ , բայց Շահին կօղճանէ նուրէն իշխան նստելով : Այս ժամանակները յաճախ Պարսիկները Հայաստանի այլ և այլ տեղերը կը նեղէին Հայերը . բայց Բարսեղ կաթողիկոսին խնդրանօքը հարըստահարելէ դադրեցան քիչ մը : 1094 ին Սկիւթացի Թաթարք 7000 հոգի Անիին վրայ քալելով կուղէին տիրել , բայց Գրիգոր իշխան քաջ երիտասարդներով դէմն ելու ու սաստիկ ջարդ մը տուաւ ասոնց :

## ԶՈՐՅՈՒԹԻ Ա.ՅՈՒՄՆ Ս.ՆԻՑ

Մանուչէ Ամիրային մեռնելէն ետքը՝ Ապլառուար իւր հօրը տեղն անցաւ, Ասի տկար և անարի անձ մ'էր, Թաթարք ասկէ օգուտ քաղելով զօրացան և շատ վիշտ հասուցին Սնեցւոց, մինչև Շիրակ գաւառն ոտնակոխ ըրին: Այս վատ իշխանը փոխանակ թշնամին վանելու, որոշեց որ ուրիշ այլազգ Ամիրայի մը ծախէ զԱնին: Հայք երբոր իմացան շփոթեցան, մէկէն Վրաց Դաւիթ արքային իմաց տուին, որ սա ալ եկաւ պաշարեց քաղաքը, և մատնութեամբ քաղաքացւոց՝ դիւրութեամբ մտաւ յԱնի 1124ին: Դաւիթ արքայն վաստ մը չըրաւ, մանաւանդ թէ շուտ մը եկեղեցիներն նորոգեց, քաղաքը բարեկարդեց, Ապլիչիթ Վրացի իշխանին և իւր Խվան որդւոյն յանձնեց և ինքը Վրաստան դարձաւ Տփխիս, Ապլառուար հետք տանելով: Այն ատենները Դաւիթ մեռաւ և իւր որդին Դեմետր նստաւ: Հայք որ Սնիին ելնելով ուրիշ տեղեր ցրուած էին, երբոր Սնիին քրիստոնէից ձեռքովը կառավարուիլը իմացան, շատերը դարձան հայրենիքնին, բայց երբոր Ապլառուարի որդին Փատլուն՝ որ Խօրասան էր, լսելով Սնիին Վրացոցմէ առնուիլը, շատ զօրք վարձեց Պարսիցմէ և եկաւ Շիրակ գաւառը Սնիին պաշարեց ու սկսաւ պատերազմիլ, թէպէտ Խվան տարի մը պաշտպանեց քաղաքը, բայց պաշարումը տարիէն աւելի տեսելուն՝ սովոր սկսաւ նեղել քաղաքացիքը, որոնք կամաց կամաց փախչելու ստիպուեցան քաղաքէն, որոնք որ Պարսկաց ձեռքը կլինային՝ չարաչար կ'ըստ պանսուէին, անանկ որ՝ ինչոքէս կ'ստորագրէ Սամուչչ Սնեցին, «Արեամբ և ուկերօք ծած կեցաւ զերկիր»: Երբոր երկու կողմանէ ալ երկայն սրբարժմանէն ձան-

ձրացան , Փատլուն քաղաքին իշխանին գեսպան դրկեց  
ըսթլով թէ անձնատուր ըլլան , որ իրենց մսաս մը չը  
համնի , այլ խաղաղութեամբ կը կառավարէ իրը իւր  
ժողովուրդը : Քաղաքացիք Վրաց Դեմետր արքային  
իմացուցին զայս , նա ալ խորհեցաւ թէ չը պիտի կընայ  
այլևս պաշտպանել զանոնք թշնամիներէն , հաշտու-  
թիւն ուզեց կնքել այն պայմանաւ թէ , քանի որ ին-  
քը ողջ է , իւր անուամբը մնայ Անի : Փատլուն հա-  
ւանեցաւ և երդուաւ , մտաւ Անի 1126ին և ըստ  
պայմանի չարիք մը չըրաւ , սակայն մեր ազգը միշտ  
դառն դերութեան մէջ մնաց , և օր ըստ օրէ աղքա-  
տանալով թշուառացաւ , Փատլուն ալ իւր խօսքին վրայ  
հաստատ չը մնաց , եկեղեցւոյ թանկաղին զարգերը  
տեսնելով սկսաւ կողոպտել , և Մայր եկեղեցւոյ Գրի-  
գոր քահանայն բանտարկեց պատճառաւ մը , ստիպե-  
լով զինքը , որ եկեղեցւոյ դանձերը իրեն յանձնէ ,  
իսկ քահանայն դէմ կենալով չը յանձնեց : Փատլուն դի-  
շեր մը հրաշալի տեսիլքով մը՝ ահ ու գողով արթնցաւ  
և երկիւզէն քահանայն բանտէն արձակեց :



## ՀԵՆԳԵՐՈՐԴԻ ՍՈՌԻՄՆ ԱՆԻՑ

1131ին Անի երկրորդ անգամ մեծ և ահագին  
երկրաշարժ մ'եղաւ , այնպէս որ Ամենափրկիչ եկեղե-  
ցին կործանեցաւ : 1132ին Փատլուն մեռաւ ութը  
տարի տիրելով , և յաջորդեց անոր իր Մահմաւտ եղ-  
բայրը , ասոր ալ իւր Փատլուն որդին : Նոյն միջոց-  
ներն Դեմետր Վրաց թագաւորն ալ մեռնելով , յա-  
ջորդեց որդին Գորդիս : Սա՝ որ քաջութեամբ զօրաց-  
եալ էր՝ Հայաստան արշաւեց , Եիրակ գաւառը և  
Անին առաւ : Ետհարմէն երբոր իմացաւ Վրաց զԱ-

նին առնելը , 80,000 զօրօք եկաւ պաշարեց : Քաջն Գորդի 7,000 զօրօք յարձակեցաւ այլազգեաց վրայ , մէկ մասը սրէ անցուց , շատն ալ դերի վարեց , և Սադան իշխանն ալ Անիի վերակացու դնելով դարձաւ իր տեղը . Այս իշխանը ուզեց նորոգել փլած պարիսպները , բայց Գորդի կարծելով թէ պարիսպը ամրացնելով չըլլայ թէ ապստամբի , փոխեց զանի և Սարդիս անունով հայ իշխան մը դրաւ : Սական այս բանին վրայ նեղանալով , Ելտկուղ Պարսից սպարապետին գիմեց մատնելու , բայց Գորդի զինքը խարելով եւտ դարձուց և սպաննեց : Խոկ Ելտկուղ թշնամութիւն ունենալով Վրացոց դէմ , Պարսիկները գրգռեց արք շատ զօրքով եկան Անին պաշարեցին . բայց չը կընալով առնել սկսան Վրաստան արշաւել և կողոպտել : Գորդի չորս տարի թշնամույն դէմ երկիրը պաշտպանելէն վերջը , տեսնելով որ ալ չը պիտի կրնայ դիմանալ , տուաւ Անին Պարսից և հաշտուեցաւ : Ահա Անիի պէս երեելի քաղաք մը օտար արքայից ձեռքը իւազալիկ եղաւ , որոնք միշտ իրարու ձեռքէ յափշտակելով քաղաքը կը նսեմացնէին . խոկ բնակչաց կրած տառտպանքը պատմելն անհնարին է :

1174ին Գորդի նորէն զօրանալով Անիի վըայ քալեց , առաւ զայն քաջութեամբ և իշխան դրաւ . Խվոնէ Ռւլպէլեանցը , և Պարսից Ամիրշահ իշխանը բըռնելով տարաւ Վրաստան Ելտկուղ լսելով բարկացաւ , շատ զօրքով Անի եկաւ պաշարեց և այնչափ նեղեց՝ որ իշխանը ստիպուեցաւ տալ , բայց Հայք չը թողուցին , այլ սաստիկ պատերազմելով թշնամույն յաղթեցին , Ելտկուղ յուսահատութեամբ կտ դարձաւ : Այսպէս իրարմէ կը յափշտակէին անտէր քաղաքը , բնակչէքը օրովու ու սովով կսպաննէին : Ահա պնմիւրանութեան և մատնութեան պառուները . . . . .


Ասոր չնորհիւը այս միջացին Հայուստանի ամեն կողմելն  
ալ անկարգութիւնը կը տիրէր, թէ աշխարհականաց  
մէջ և թէ եկեղեցականաց :

— 604 —

### ՎԵՅՏԻՐՈՒԹ ԱՌՈԽՄՆ ԱՆԻՑ

1485ին այլազգ Ամիր Խարաջայ՝ Շիրակ դաւառն  
եկաւ, Ծառաքար բերդաքաղաքը յափշտակեց, որ  
Բարսեղ եպիսկոպոսին ժառանդութիւնն էր: Հայոց  
դէմ ատելութիւն ունենալով՝ չարիք չը մնաց որ չը  
հաօցնէ. վերջը Խըզլասլն տիրեց Ծառաքարին և  
անողորմ Պալաիկ մը վերակացու դրաւ, Առ այնչափ  
անդութ էր որ բոլոր Հայոց հարստութիւնը յափշտա-  
կելն յետոյ, տեսնելով որ ալ բան չը մնաց, կը բըս-  
նէր գերեզման կը գնէր զանոնք և անօթութենէ կը  
մեռցնէր: Անեցի Հայք չը գիմանալով ոյս կոտորած-  
ներուն, քաջութեամբ ողաւերազմելով Պարսիկները  
Հարդեցին:

1239ին Թաթարք անկաւ բազմութեամբ Հայա-  
տան արշաւեցին, քակեցին, կոտրեցին և սպանեցին:  
Զարմաղան, որ գլխաւոր իշխաննեն էր, Անիի վայ  
եկաւ, գեսարան խրիեց որ Անին յանձնեն. երբոր  
տեսաւ թէ Հայք գեսարանները սպանեցին, կատա-  
զութեամբ պատերազմեցաւ և Անին պաշարելով սով  
Ճկեց բնակչաց մէջ: Եատ իշխանք ինքզինքնին թըլ-  
նամեաց կը մասնէին, բայց ասոնք խորամանկութեամբ  
իշխանները կը կերակրէին: Քաղաքացիք այս տեսնե-  
լով սկսան քաղաքէն ենել և Թաթարներուն քով եր-  
թալ, բայց Թաթարք առնց ամենքն ալ սպաննեցին:  
և այնպէս կողոպտեցին Անին, քանդեցին, ապակո-  
նեցին՝ զոր տեսնողը չեր ճաներ: Երբոր ալ ըանմը ք



մաց ընկելու , ձգեցին գացին Հայաստանի միւս կողմերը , երեւելի իշխանները սպաննեցին , բոլոր ինչքերնին յափշտակեցին , Հայերը վերջին թշուառութեան մէջ ձգելով գարձան երկիրնին : Երբոր փախստական Հայերը եկան Անին տեսան որ այնովէս քայլքայուերէ , որ ոչ բնակութիւն մնացեր է և ոչ բնակիչ . սկըսան արտասուել , ուուզ պահել , կ'անիծէին ազգին անմիտանութիւնը՝ որ Անիին թագաւորութեանը կործանման պատճառ եղաւ : Այսուհետեւ լեռնաբնակ վայրենիներն ալ տեսնելով որ Հայաստան մեռեալ է , ասոնք ալ Հայաստանի մէջ արշաւելով չորս կողմը կը կողոպտէին , կ'սովաննէին . ալ ազգ չիկար , Հայ չիկար , որ ասոնց դէմը ենէր , ուստի ասոնք ալ արձակ համարձակ կը գործէին՝ մինչև որ Հայ ազգը բերին վերջին թշուառութեան հասուցին . քիչերը փախչելով ազատեցան այս թշուառութենէ , որոնք այլ և այլ կողմեր ցրուեցան , ինչպէս են կափայեցիք , Տրապեզոնցիք ; Ահացիք և Թաթարստանցիք :

— 88 —

### ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ԱՆԻՑՅ

Քաջ զօրաւոր Հայ իշխանաց ցրուելովը , Յանաց Հայաստանին վրայ ունեցած իշխանութիւնն ալ տկարաց ու բոլորովին : Այն ժամանակ Թաթարք ալ արձակ համարձակ արշաւելով Հայաստանի բալոր քաղաքները կողոպտեցին , բնակիչներն ալ դերի վարեցին : Նոյն ժամանակներն էր որ Ավլիկիայի մէջ Հայոց թագաւորութիւնը վերականգնելով , Օյին թագաւոր կը նստէր , բայց հազիւ թէ սա՝ ժամանակ ունէր անհամար թշնամեաց դէմ իւր տէրութիւնը ոլաշտպանելու , որ ատեն Յոյներն ալ սկսած էին տկարա-

նալ։ Այս ժամանակներս եթէ Հայք Կիլիկիա թագաւորութիւն չունենային, թնամիք բոլորովին կը ջնջէին Յունաց տէրութիւնը, ինչպէս որ ալ Հայոց թագաւորութեան բարձմանէն յետոյ եղաւ։

1319ին այնպիսի սոսկալի Երկրաշարժ մը պատահեցաւ Արարատայ գաւառը՝ որ շատ քաղաքներ կործանելով գետինն անցան, շատ դիւզեր քայլայուեցան։ Ահա այս վերջինն էր որ Անի մայրուքաղաղաքին մնացած շենքերը բոլորովին կործանեցաւ, հիմնայատակ եղաւ։ Անեցւոց մէջ աւանդութիւն մը կայ թէ՛ Երզնկացի Յովհաննէս քահանայն անխօն եր է Հայոց անմիաբանութիւնն. ուստի Անեցիք կը ունին՝ թէ այդ անէծքն է որ իրենց քաղաքին բոլորովին կործանմանը պատճառ եղեր է։

Ահա տեսէ՞ք, անմիաբանութիւնը ինչ կ'ընէ եղերինչ հզօր թագաւորութիւններ կը կործանէ, քաղաքները, փառաւոր շենքերը հիմնայատակ կ'ընէ, ժողովուրդը զերի վարել կ'տայ, որոնք դարերով ամեն որ կը հարստահարուին, կ'ըսպաննուին, այնպէս որ յորդոց յորդի ժառանգելէ ուրիշ բաժին մը չէ մնացած իրենց, բայց եթէ աւեր, աղէտք և թշուառութիւնք, որ Հայ անուան յատակ հոմանիշն և հանդամանքը ճանացուած է աշխարհիս վրայ։

## ՅՐՈՒՌՈՒՄՆ ԱՆԵՑԻՈԾ

Գաղիկ արքային օրով Անիին մատնութենէն սկըսեալ, Անեցիք այլեւս սկսան Հայաստանէն հեռանալով օտար աշխարհ դադիթել, որ իրենց հոյակապ քաղաքաց կործանումը չը տեսնեն :

1060ին երբոր Անի օտարաց ձեռքն անցած էր, մոյրաքաղաքին և շրջակայ քաղաքաց բնակիչք բազմութեամբ ելան Հայաստանէն, և սկսան դեպի Լեռնաստան և Մոլոտավիա դադիթել :

1064ին երբոր Պարսիկները առին և կողոպաեցին յիշեալ քաղաքը, բնակչաց մեծ մասը առաջիններուն պէս ելան գաղթեցին նախ Մոլոտավիա և անկէ Լեռնաստան : Խոկ Անիի վեցերրորդ առումին 1239, մեացորդաց մեծ մասը դադիթեց Թաթարստան, Աժտէրիսանի և Ալասարայի կողմերը, որոնցմէ մաս մալ վերջէն գաղթեցին Սիս, Ջուզայ և Վան :

Անեցիք երբոր Ալասարայ դացին, շատ հալածանք և վիշտ կրեցին Թաթարներէն, որք անդադար կը նեղէին զիրենք : Ասոնք լսելով որ Ճենժվացիք Կափայի (Քէֆէ և այժմ Թէօդոսիա) կը տիրեն, դեսպան խրկեցին իշխանին, և հրաման առնելով ելան Խորիմ եկան, ու Քէֆէ քաղաքը բնակութիւն հաստատեցին :

Անիի վերջին կործանումին, մեացած բնակչաց մէկ մասը Վասպուրական, անկէ Պարսկաստան, անկէ ալ Աժտէրիսան, և մէկ մասն ալ դեպի Խաղտիս, Համզէն և Տրապիզոն գաղթեցին, իսկ որսնքոր Համզէն գաղթած էին, աղքատութեամբ կը տառապէին . ուստի չը կլնալով կենալ հոն, մէկ մասը Տրապիզոն, մէկ մասը Ալեքսանդրապոլ գնացին, մեացածներն ալ այլազգ եղան :

Արդ Անեցւոց մեծ մասը Լեհաստան ժողովուեցան, ամեն կողմէ հոն կը գիմէին, ծովով կուդային Մոլոտովիա, Գանուբէն կ'անցնէին Կալիցիա Բօտոլսքի և ուրիշ Լեհաստանու գաւառները կը բնակէին, վասըն զի, ինչպէս որ պատմութիւնն ալ կը վկայէ, Լեհացւոց բնութիւնը շատ կողմանէ Հայոց բնութեանը կը համապատասխանէր, որոնք հիւրասէր, հեղ, բարերարոյ, Աստուածավախ և հաւատարիմէին, նաև երկիրն ալ Հայաստանի պէս բարերեր :

1060ին Կալիցիոյ Դեմէտրիոս Կարմիր դքսին՝ որդին Դէոթոր որ Կալիցիոյ ինքնազլուխ կը տիրէր, երբոր Յունաց և Պարսից դէմ Հայոց քաջութիւնները լսեց, ուզեց իր երկիրը հրաւիրել Հայերն, և իրեն նիզակակից ընելով, ասոնց օդնութեամբը Լեհաց թագաւորին հետ պատերազմիլ: Ուստի 1062ին գեսպան խրկեց, հրովարտակով հրաւիրեց Հայերը՝ որ գան իրեն հետ պատերազմին, և փոխարէն իրենց շատ աղատութիւն տալ խոստացաւ, ինչպէս որ հրովարտակով ալ հաստատեց իր խոստումը :

Անեցիք այս կողմերն երբոր քիչ մը հանգստութիւն գտան, Հայաստանի Հայերը զայս լսելով, և իրենք ալ վերջին ատախնան թշուառութեան մէջ ըլլալով, սկսան հետզհետէ Լեհաստան դադել, այն պէս որ 40,000 տուն եղան: Աւանդութիւն մը կոյթէ Անեցիք Լեհաստան այնչափ զօրացեր են՝ որ Լեհացիք վախնալով թէ շըլլայ որ օր մ'ալ ելնէն Լեհաստանի տիրեն, խարէութեամբ պատերազմներուն առաջը կը քշեն եղեր զՀայերն որ կոտրուելով նուազին ու չբազմանան :

Անեցիք առաջին անգամ Դեմետր դքսին հետ պատերազմի դացին, մեծ քաջութեամբ յաղթեցին, և մեծ պատիւ դտան, ուստի ալ չը դարձան իրենց

Հայրենիքը , շատերը զինուորութեան մէջ մուացին ռատարաց ծառայելով : Իրենց քաջութեամբը աղնուական եղան , շատ հարստացան , մանաւանդ Լիդուանիոյ մէջ , որոնք հիմայ բոլորովին լեհացած են , բայց իրենց առհմային անունը կը պահեն , ինչպէս կան մինչև գայսօր , Գրիգորովիչներ , Մալիսասվորիներ , Նուրիճաններ և այլն և այլն :

Այս գաղթականաց մեծ մասը վաճառականութեան պարապեցան , ինչպէս որ բնութեամբ ալ արդէն յարմարութիւն ունին , և Լեհաստանի . Կալիցիոյ բոլոր քաղաքները ծաղկեցուցին , ամեն քաղաք մեծ շէնքեր շինեցին և Լեհացոց ալ պատճառ եղան իրենց նմանելու , Լեհաց թագաւորներէն մեծ պատուանը շաններով ճոխացան , վամն զի Հայք եղան պատճառ իրենց գիւղային կեանքը՝ քաղաքային կենաց փոխելուն , և բոլոր Լեհաստանի ծաղկելուն , և այնչափ հարստացան՝ որ Վլատիսլաւս Պ. թագաւորը , Բերնարդովիչ հայ վաճառականէ մը 400,000 դահեկան փոխառութիւն մ'ուզեց . վաճառականը պատասխանեց թէ ի՞նչ տեսակ դրամ կ'ուզէ , ուկի՞ , արծաթթ թէ պղինձ : Թագաւորը զինքը փորձելու համար կ'ըսէ թէ երեք տեսակէն այլ կ'ուզեմ : Այն ատեն վաճառականը շուտ մը երեք տեսակէն ալ կը զրկէ իրեն ուզածին չափ դրամը : Երբոր թագաւորը կը տեսնէ , զարմանքէն ափի ի բերան կը թնայ . ալ ասոր վրայ Հայոց աղջին նկատմամբ աւելի մեծ համարում կ'ունենայ , ըսելով թէ ահա աղդ մը՝ որ տէրութեանտ հարուստ և անսպառ զանձն է :

Լեհաստանցիք Տրապիզոնցոց հետ խնամութիւն ունին , ինչպէս որ գեռ մինչև այսօր ալ Լեհաստանց շատին մականունը՝ Տրապիզոնցիք ալ կը կրեն , բայց բառերը կը ճատեալ :

1483ին Անեցիք բոլոր Լեհաստանու քաղաքները  
տարածուեցան և քիչ ժամանակի մէջ Անիի եկեղեց-  
եաց նմանութեամբը շատ մեծագործ եկեղեցիներ  
շինեցին, ինչպէս Լէմպէրկ, Լիդուանիա, Կամենից :  
Լուցկա և այլ քաղաքներն, նաև շատ ազատութեան  
հրովարտակներ ոտացան, իրենց դատարաններն զա-  
տեցին և չո՞ր անուամ իրենց զատ ազդապետ դրին,  
12 անկախ դատաւոր, և 40 հոգաբարձուք : Այս-  
դէս Հայք իբր ազատ և ինքնազլուխ՝ իրենք զիրենք  
կը կառավարէին :

1344ին Կամինիցի և 1356ին Լիմպէրկցի Հայոց  
այս ազատութիւնը Լեհաց Գաղիմիր աղքայն վերըս-  
տին հաստատեց : Այսպէս 2-3 դար շարունակ այս  
ազատութիւնը կը վայելէին, և իրենց յատուկ գոր-  
ծադրած վարչական օրէնքներն ալ Հայոց Յովհաննէս  
Բագրատունի թագաւորին շինած օրէնքներն էին,  
ինչպէս որ Լատիներէնի ալ թարգմանուելով՝ մինչե-  
ցայսօր Լեհաց տումարներուն մէջ կեցած են :

Ահա այսպէս Հայերն օր ըստ օրէ այնչափ յա-  
ռաջացան, որ թագաւորք անոնց «ազնուական ազգ»  
կը կոչէին, ուստի Թաթարուանու մնացորդ Հայերն  
ալ ասոնց վայելած ազատութիւնը լսելով և իրենց  
կրած հաղածանացն ու նեղութեանը չը դիմանալով,  
բոլորն ալ Լեհաստան եկան, ընդարձակ դաշտի մը  
վրայ քաղաք մը շինեցին, որ մինչև ցայսօր նոյն տե-  
ղը Օրմեանի (Օքամեան) կը կոչուի : Այս դադթակա-  
նաց փոխագրութիւնը 1500 թուականէն ետքը եղած  
է, բայց այս վերջինները երբոր Լեհաստան եկան,  
դրեթէ Հայերէն լեզուն՝ ալ մոռցած էին, բոլորն ալ  
թաթարերէն կը խօսէին, և դատերնին և եկեղեցա-  
կան ձեռադիր դրդերը թաթարերէն լեզուաւ կը գը-  
րէին, Ասի Հայոց գէշ սովորութիւնն է որ իրենց լե-

զրոն ձգելով օտարինը կը գործածէն : Եւ ահա ոյս  
պատճառաւ կորսուեր են և այսօր չեն մնացեր, եթէ  
իրենց լեզուին նախանձախնդիր ըլլային, հաւանական  
է որ չը պիտի կօրսուէին . . . : Ինչպէս որ ըսինք, այս  
երրորդ և չորրորդ գաղթական Հայերն՝ հայերէն չը  
դիտնալուն, թաթարերէնն ալ օր ըստ օրէ անպէտ  
լեզու մը ըլլալուն, փոխանակ իրենց մայրենի լեզուին,  
տեղացւոց լեզուն սովորեցան, այնպէս որ այնուհետեւ  
ալ միայն իրենց կրօնքովը կը ճանչցուէին թէ Հայ են,  
իսկ հայութիւննին ալ կօրուսին՝ երբ մատնիչ Նիկօլ  
Թորոսեփիչ չեպիսկոպոսը զատնք պատականութեան  
գարձնելով, կրօնքով ալ բռնի միացուց Հռովմէակա-  
նաց, այլևս բոլորովին թէ ազգութեամբ և թէ կրօն-  
քով կորեան : Որոնք որ իրենց կրօնքին վրայ հաստատ  
մնացին . չը դիմանալով չ՛7 տարի շարունակ ձիզիթ-  
ներուն բանեցուցած և Նիկօլին դործադրած հալա-  
ժանացը, ցրուեցան Մօլտօ-Վալաքիա և մեծ մասը  
Սուչաւ հաստատուեցան, որք մինչև հիմայ հաւատա-  
րիմ են իրենց կրօնին և եկեղեցւոյն, որոնք որ Անեց-  
ւոյն վերջին մնացորդն ըլլալով, 1606ին Պարսկաս-  
տանէն և այլ հայաբարբառ երկիրներէն ելան Եւրո-  
պա գաղթեցին, ասոնք պահեցին իրենց հայերէն լե-  
զուն, ինչպէս են Գութեր, Հօրոտինքա, Սուչով,  
Մոյլով, Կեռլա, Պաշպալով և Ճըրճովա քաղաքները  
բնակող Հայոց գաղթականութիւնը :

Ինչպէս կը տեսնուի, Հայոց թագաւորութեան  
կործանմանէն յետոյ, կամ ըսւ ևս է ըսել, Անեցոց  
անմիաբանութիւնը զիրենք ցրուելու հարկադրելէն  
վերջը, ինչ մեծ հարուած և պատուհաս կրեցին, ուր  
որ գաղթեցին՝ հանդստութիւն չը դտան . քանի՛ քա-  
նի՛ անգամ տեղերնին փոխելով վերջապէս մեծ մասը  
Եւհաստան լեցուեցան : Ասոնք այս երկիրին մէջ իրօք

շատ ջանացին զօրանալու և իրենց Անրի կորուսեալ  
ազատութիւնը վայելելու . բայց միթէ հնա՞ր և կա-  
րելի՞ բան է , որ իրենց անմիաբանութեամբը դրախ-  
տի պէս դեղեցիկ հայրենիքնուն մէջ հիմ չկարենալ  
բռնէլէն վերջը , օտար երկրի մէջ հիմ բռնեն և լիո-  
վին աղատութիւն վայելեն . . . .

1795ին երբ Լեհաց թագաւորութիւնն ալ ջըն-  
ջուելով , Լեհաստան երեք կայսրութեանց մէջ բաժ-  
նուեցաւ , ապրակոյս չկայ թէ Հայք ևս իրենց վա-  
յելած բացառիկ արտօնութեանց դարաւոր աղատու-  
թիւնը կորուսին ամեն տեղ , և որ ըստ օրէ սկսան  
նուազիլ ու աղքատանալ . . . .

Ահա , սիրելի ընթերցող , Սնեցւոց անկմանն ու  
գաղթականութեան պատճառներուն սոյն համառօտ  
բացատրութիւնը տալէս յետոյ , կ'ոկսիմ այժմ աե-  
զեկազրել անցեալ տարի վերոյիշեալ կողմերն ըրած  
ուղեղութիւնս , որ ինչպէս սլիափ աեսմուի՝ 40,000  
ընտանիքը 1060էն մինչև 1876 , 800 տարուան մէջ  
փոխանակ 4-500000ընտանիքի ելնելու , այսօր թէ՛ Լե-  
հաստանու , թէ՛ Մաճառիստանու և թէ՛ Մոլու-Վա-  
լաքիոյ մէջ , բոլորը միատեղ հաշուելով՝ հազիւ հաղ-  
ընդամենը 4,000ի չափ ընտանիք կ'ելնէ . ասոր ալ  
3,000ը Պուլական , 1,000ը Լուսաւորչուկան . . . . :

## ԸՐԿԱԾԵԼԻ

Յումանիոյ Հայ դաղթականութեանց վրայ խօսելէս յառաջ, հարկ կը համարիմք նախ Եւրոպական Տաճկաստանի հիւսիսակողմը գտնուող քանի մը գլխաւոր քաղաքաց Հայերուն վրայօք, համառօտ տեղեկութիւն մը տալ, որոյ վիճակն ու կեանքն ալ միւսներէն ոչ նուազ հեռաւոր և անծանօթ մնացած են մեզ:

### Ա. Ա. Բ Ն Ա.

Այս քաղաքը, որ ինչպէս յայտնի է՝ Առ ծավուղերքը վաճառաշահ և առևտրական կեդրոն մը համարուող նաւահանգիստ մնէ, 5000էն աւելի տուն բնակիչ կը պարունակէ, այլևայլ ազգերէ խառն, տաճիկ հայ, յոյն և Պուլկար, իսկ քաղաքացւոց մեծ մասը յոյն է: Հայերն ընդամենը 210 տնուորէ կը բաղկանան: Ժողովուրդն առհասարակ տղէտ է:

Քաղաքացիք մինչև 1865, օտար վաճառականներու շնորհիւը շատ աղէկ կ'ապրէին. իսկ այսօրուան օրս յիշեալ վաճառականաց մեծ մասին՝ ուրիշ տեղեր գայած ու ցրուած ըլլալուն պատճառաւը, բնակչաց շատն այժմ վերջին ծայր աղքատութեան մէջ է:

Տեղացիք առաջներն օտար վաճառականաց՝ ետանջ էւրէնէ կ'ըսեն եղեր, բայց այսօր անսնց յարդը ճանչցուած են, անսնց հեռանալէն՝ իրենց ալ բարեկեաց վիճակին նուազումն ու անկումն հետեւիլը տեսնելով:

Քաղաքացւոց վարժարանները՝ մանաւանդ Հայոց դպրոցը շատ խեղճ բան է, ուր մինչև անգամ հայերէն «կրակ մը բե՛ր» խօսքին նշանակութիւնը չեն

հասկնար , լեզունին կոշտ թրքերէն է : Այն կողմը դացող Պօլսեցի դաստիարակաց շատը փորձած են Հայերէն լեզուն ընդհանրացնել Հայ ժողովրդեան մէջ նախ դպրոցական մանկութիւն սկսելով . սակայն կերեկի թէ ծնողաց յամառութիւնը տաճկերէն լեզուին վրայ՝ արգելք մը եղած և անյաջող հանած է այդ փորձը , Ժողովուրդը այնքան դպրոցակար ալ չթուիր , չնչին խռովութեան մը կամ երկպառակութեան մը պատճառաւ շատ ժամանակ դպրոցնին դոց կը մնայ ի մըսաս մանկութիւն :

Կը դանուի մէջերնին սակայն ազգասէր անձինք , բայց այն ալ խիստ հազուագիւտ , օրինակի համար , Քօմիսիօննի Հայրապետ աղա անուն անձը , որն որ դպրոցին մեծ մասը իր ծախսիւքը շինած է , իսկ տեղացիք անոր ալ յարգը չճանչելով , սիրող վիրաւորեցին , և պատճառ եղան՝ որ ազգին փոքր ի շատէ բարիքն ու օգուտը համեստ այսպիսի ազգասէր անձ մը բոլորովին ետ քաշուի ազգային դործերէ :

Դպրոցին այժմու դաստիարակը՝ Տրապիզոնցի Ելմասեան Միսաք անուն ազգասէր երիտասարդն է , Շահնաղարեան վարժարանի նախկին աշակերտոներէն . սա յոյս կ'տայ—ինչպէսնաև քանիցս ալ խոստացած ու վստահացուցած է դիս անձամբ—թէ սկիտի աշխատի քիչ ժամանակուան մէջ դպրոցն յառաջ տանելու :

Վարժարանն ընդ ամենը 80ի չափ մանչ տղայ ունի , իսկ աղջկանց դպրոց բնաւ չկայ . քաղաքին բոլոր թաղերուն մէջ ալ մինչեւ 12 տարեկան աղջիկներն —չը նմանցնենք ուրիշ բանի—հավու ձագի , վառեակներու պէս և ասոնց հետ առաւտէն մինչեւ երեկոյ փողոցները կը թափառին : Սակայն խիստ ցաւալի բան է որ Վարճա , հաղիւ Ա. Պօլսէն 14 ժամու հեռաւորսթիւն մ'ունեցող քաղաք մը ըլլալով , 210

տնւորէն երկու հոգի չկայ հայերէն գիտցող կամ իստ  
սող , իցիւ թէ քիչ մը նախանձոտութիւն ունենային  
Յունաց դպրոցներուն վրայ նայելով , որ Հայոցմէ շատ  
յառաջադէմ ու նախանձելի վիճակ մ'ունին :

Վարնայի Հայերը փառաւոր եկեղեցի մը և եր-  
կու քահանայ ունին , մէկը պանդուխտ Տ . Պետրոս  
անուն , միւսն ալ Տ . Սարգիս անուն , սակայն Վարնա-  
ցիք հոգ չեն տարած որ եկեղեցւոյ արտաքին պար-  
տէզին դուռը քիչ մը բարձրացնելով , ճիշդ եկեղեց-  
ւոյ մը դրանը վիճակին վերածեն , այնպէս որ եթէ  
օտարական մը Հայոց եկեղեցին վնտուել ուզէ , մտքէն  
անգամ չանցներ թէ՝ ասանկ հին ու ցած ախոռի մը  
դրան պէս դռնէ մը պիտի անցնի եկեղեցւոյ պար-  
տէզն ու բակը մտնելու համար , ճիշդ ինչպէս որ պա-  
տահեցաւ ինձի առաջին անգամ , այնպէս որ պարտէ-  
զին չորս կողմը շարունակ դարձայ որ եկեղեցւոյ  
մը դուռ դանեմ ու չը դժայ , մինչև որ տեղացի Յոյն  
մը դալով ըստ ինձ թէ «ահա այդ ցած դընէն ներս  
մտնելու է որ եկեղեցին դանես» :

Ասի հայազդի այցելուներու համար հոգ չէ ,  
սակայն դիտել արժան է թէ յիշեալ քաղաքը գրե-  
թէ շարունակ խիստ շատ օտարազգի ճանբորդներ  
կուգան , որոց մեծ մասը խիստ հետաքրքիր են քա-  
ղաքին գրեթէ բոլոր հասարակաց չէնքերն այցելելով ,  
աչքէ անցնելու , որոնք երբ Վարնայի մեր եկեղեցին  
ալ տեսնել ուզեն՝ սմենէն առաջ այդ պարտէզին  
խարիսխած դուռը տեսնելով , շատ կասկածելի է թէ  
Հայոց հոգատարութեանը , մաքրութեանը և կիրթ ու  
ճաշակի տէր ըլլալնուն վրայ նպաստաւոր դադախար  
մ'ունենան :

## ՐՈՒՍՃԱՆՔ

Սակ Դանուբը գետին եղերքը շինուած լայնարձակ քաղաք մ'է , Դանուբեան գաւառին կուսակած լանիստ գլխաւոր տեղին , որու վրայ եթէ հեռուէն նայուի՝ այնպէս կը կարծուի թէ 20,000 տունով բազմամարդ քաղաք մ'է , սակայն ընդ ամենը 6200 տուն կը պարունակէ , ասոր 3800 ը Տաճիկ , 2000ի չափ Պուլկար , 250ը Հայ և 400ն ալ Հրէայէ . Բնիկ Յոյն ժողովուրդ գրեթէ չկայ , այլ եղածներն ալ առետրական դործով հսն գացող ու բնակութիւն հաստատող անձինք են , որոնք Պուլկարները հերետիկոս կամ հերձուածող կոչելով ասոնց եկեղեցին չերթալնուն պատճառաւ , Յոյները ցարդ եկեղեցիէ զուրկ մեացած էին , բայց այժմ նոր եկեղեցի մը շինած են :

Բնիկ ժողովուրդն այնքան յառաջադէմ չէ , մասնաւանդ Պուլկարներն՝ որ շատ խեղճ և տղէտ են : Շուկային մէջ 1800 խանութ կայ , որ քաղաքացւոց թուոյն նայելով շատ է , 10ի չափ պանդոկ կայ : Տեղացի ժողովրդեան մէջ Տաճիկն ետքը հարուստ՝ Հայերն են , միանգամայն և աշխատասէր . իսկ այնչափ քաղաքակրթութենէ զուրկ են՝ որ եթէ օտարական մը բարեւ տայ իրենց , կը վարանին բարեն առնելու , կասկածելով թէ արդեօք գէ՞շ բան մը կընեն կոր , մարդու հետ տեսութիւն ընել կամ գաւաթ մը գինի հրամցնելը մեծ շռայլութիւն է իրենց համար : Այս տեղի Հայոց երեսը ըլ խնդար , այլ լուրջ , մտածկուտ և շուքը ծանր դէմք մ'ունին , և եթէ ծիծաղերէս մէկը տեսնուի՝ հասկնալու է թէ այդ Հայը օտարի հետը տեսնուելու և յարաքերութիւն ընելու վարժուած է . վերջադէս ասոնք օտարականի մը՝ անարդական կամ թշնամիի մը աչօք կը նային :

Բուսճուգ քաղաքը Միտհաթ փաշայի չնորհիւը՝  
եւրոպական քաղաքի մը կարգն անցած է, այնպէս որ  
այս քաղաքը, որն որ Միտհաթ փաշոյէն առաջ պար-  
զապէս գիւղաքաղաքէ մը տարբերութիւն չունէր, այսոր  
Տաճկաստանի ոչ միայն ասիական, այլև եւրոպական  
քաղաքներուն մէջ ալբարեկարգութեան և շինութեանց  
կողմանէ առաջին քաղաքն եղած է, ուր լայն փողոց-  
ներ, կաղեր, քարուկիր նոր շէնքեր, պանդոկներ,  
զբօսարաններ, ընթերցարաններ և այլն կան, ժողո-  
վուրդն այնքան համակրանօք սէր կապած է իրեն, որ  
Միտհաթ անունը լսելուն պէս խոկոյն կ'այլայլի : Առ-  
կից զատ Միտհաթ փաշայ ընթերցանութիւն և ուսու-  
մը տարածելու և զարգացնելու համար, յատկապէս  
իր անձնական ծախիւքը Ընթերցարան մը (Գրաաթ-  
խանէ) բացած, և բազմաթիւ այլ և այլ լեզուէ տե-  
ղական թէ եւրոպական թերթեր բերել տուած էր,  
յատկապէս Պոլիսէն բերել տուած Հայու մը տնօ-  
բէնութեանը տակ դնելով զայն . որպէսզի ժողովուր-  
դը կարդայ զանանք և բան սավրի : Խակ ինքը  
անկէ մեկնելէն ի վեր, ինչպէս իր ըրած ամեն բա-  
րենորոգութեանը, նոյնպէս այս և ընթերցարանն ալ-  
դոցուելավ՝ այժմ խեղճ ու երկսի վրայ մնացած է :

Երկրագործութիւնն ալ հոս շատ խղճալի բանէ,  
և շատ ետ մնացած է . մանաւանդ ժամանակին Զէր-  
քէզներուն երեսէն Պոլիսարաց կրած հալածանքն ու  
հարստահարութիւնը՝ Հայաստանի Քիւրաերուն ըրա-  
ծէն շատ վար չմնար . հաղիւ Ֆ-Ֆ տարիէ ի վեր մօրէ  
մերկ ու բոկտոն՝ Տաճկաստան խուժող Զէրքէմներն՝  
այսօրուան օրս հարիւրաւոր տարուան բնիկ Պոլիար  
գիւղացիներէն հարուստ են, և որսց համար ամենօրեայ  
ու սովորական բան մը եղած է դողութիւնը, յափըշ-  
տակութիւնը և սճրագործութիւնը, որոց հետքը յու-

սովի է թէ այսուհետեւ չը մնար : Տեղացիք կըսեն թէ Միտհաթ փաշայի օրով այն աստիճան ապահովուած թիւն կը վայելեն եղեր , որ շատեր մինչև իսկ խանութնին բաց թողով , բնաւ ո և է մէկը կամ չարագործ մը չկայ եղեր որ համարձակի դալ ամենափոքր զողութիւն ու յափշտակութիւն մ'անդամ ընելու :

Խեղճ գիւղացին կերածը հաց ու պղպեղ (պիպէր) է , վասն զի անկէ աւելին ուտելու կարողուած թիւն չ'ունի . հոս առատ բանջարեղէն չ'կայ , ինչու որ գիւղացիք պարափանութենէ բոլորովին անտեղեակ , բանջարեղէն հասցնել չ'են գիտեր :

Հայոց թաղը երկուք է , մէկը՝ որ Եէնի-մահալը կ'ըսուի՝ քաղաքէն դուրս է , և Հայոց եկեղեցին ալ հոն կառուցուած է , միւսն ալ քաղքին մէջն է : Այս տեղի Հայերն ալ հայերէն խօսիլ չ'են զիտեր , բաց ինորահաս մէկ քանի երիտասարդներէ , որոնք քանի մը տարիէ ի վեր ուսման ճաշակն զգալով , մէջերնին ընկերութիւն մը կազմած են , հանգանակութեամբ աղջկան դպրոց մը բանալու , որ տակաւին չ'կար , և մանչ տղայոց վարժարանն ալ յառաջացնելու :

Խակ մեծ մեղադրանաց արժանի են այս տեղի հարուստ ազգայինք , որք Վարնացի Հայերէն հարիւրապատիկ աւելի հարուստ ըլլալով , դպրոցի համար ստակ տալը կամ ծախսք ընելը՝ մեղք կամ տուգանք կը համարին , և ամենելն հոգերնին չէ իրենց զաւակացը ուսմանը փոյթ և խնամ տանիլ : Եթէ այս քաղաքին Հայերը ուսումնասիրութեան և գիտութեան ճաշակ մ'ունենային , կրնայ ըսուիլ որ իրենց դպրոցը բոլոր ազգերուն ալ նախանձելի օրինակ մը եղած պիտի ըլլար , վասն զի քիչոր և մեծ մասն ալ հարուստ և դիւրակեաց է :

Բայց ասոնց հարստութիւնն իրենց թողլով , եթէ

այս քաղաքին ազդայնոցը համար ապագային յօյս մը  
կայ նէ՛ այն ալ արդի տեղացի ուսումնական երիտա-  
սարդութեան փոքրիկ խումբն է , որ իր կարողութե-  
նէն վեր ազդողուտ ծառայութեանց ձեռք կը զարնէ ,  
և երանի՛ թէ անվհատ մինչեւ վերջը յարատեէր իւր  
այդ գովելի ջանիցը մէջ :

Անցնինք այժմ դիմացի կողմը , Յումանիոյ Հա-  
յոց վրայ ակնարկ մը ձգելու :




# ՅՈՒՄԱՆԻԱ

ՃՐՅԱՎՈՐ ԿԱՄ ԵԼՐԱԿՈՅ

Վաղաքիոյ վաճառաշահ նաւահանգիստ քաղաք  
մ'է , Դանուբի եզերքը շինուած , որն որ Ռուսնուրի  
դէմը կիյնայ փոքր ինչ դէպ Արևմուտք , և հեռա-  
ւորութիւնը Ռուսնուքէն Դանուբի ճանրով կէս ժամ  
կը տեէ : Այս քաղաքին չէննալլ հազիւ 5-6 տարուան  
բան է , 2,000 տուն ունի , օդը բարեխառն , ջուրը  
Դանուբի ջուրն է : Մարդ այս քաղաքը մտնելուն պէս՝  
կզգայ թէ օտար եւրոպական քաղաք մ'է եկածը ,  
որ բոլորովին կը տարբերի Տաճկաստանի ամենէն ա-  
ւելի չէնցած քաղաքներէն , եւրոպական ճաշակ մը  
կրելով : Քաղաքին համեմատ ամեն բան կանոնաւոր  
է , թէ փողոցներուն լայնութիւնը և թէ տուներուն  
մէկ գծի վրայ շինուած կանոնաւորութիւնը իրարու  
կը համապատասխանեն , ամեն տեսակ վաճառաց ալ  
խանութներն՝ իրենց տեսակին համեմատ՝ զատ և ամ-  
փոփ են , և ոչ թէ իրարու հետ խառնուած . օրինա-  
կի համար՝ մսավաճառի խանութներն ամենքն ալ զատ  
տեղ մը բռնած են , բանջարեղին վաճառող խանութ-  
ներն զատ տեղ մը և այլն . ամեն տեսակ դիւրութիւն  
կայ , կառքեր , ձիեր , կազեր , ընտիր զբօսարաններ ,  
վերջապէս Թուրքիոյ քաղաքներէն տարբերիլը ասկէ  
կը հասկցուի թէ՝ հսս փողոցները բնաւ շուն չկայ :  
Ժողովարդը Վլահ է , և մեծ մասը աղքատ , բայց  
շատ յոյն վաճառականներ կան : Այս քաղաքն ընդ-  
ամենը 8 տուն Հայ կայ Պուքրէշէն եկած , որոց ա-  
մենքն ալ հարուստ են , ինչպէս Դանիէլ Պապիկ ,  
Մկրտիչ , Յուստիկ և այլն : Հսս հայազգի մ'ալ Պա-

սլիկ անուն՝ Գրօսարան մ'ունի և կը բանեցնէ , որ շատ պատուաւոր է , այնպէս որ բոլոր քաղաքացւոց երեւ լիներն ու մեծամեծներն հոն կը յաճախեն , և օտար ու նորեկ Հայերն ալ եթէ ուղղակի հոն դիմեն՝ կը ռնան ամեն կողմանէ դիւրութիւն գտնել :

Սոյն քաղաքն ընդարձակ հրապարակ մ'ունի , որոյ մէջաեղը ժամանակաւ մզկիթ մը կայ եղեր , զոր տեղացիք քանդելով ու անհետ ընելով , միայն մնարեն թողուցած են , վրայի կապարեայ ծածկոյթն ալ քակելով , և այժմ զայն նշանազեկոյց աշտարակի մը ծառայութեանը յատկացուցած են , ճակատը մեծ ժամացոյց մը դնելով , որոյ ձայնը բոլոր քաղերն մէջ կը լսուի . նաև եթէ քաղաքին մէջ հրդեհի գետք մը պատահելու ըլլայ , առկէ կուտան նշանը , որոյ վրայ բոլոր քաղաքը ուաք կ'ելնէ հրդեհին տեղը օգնութեան դիմելու :



### ՊՈՒԲԸՆԵՇ

Առաջ մինակ Վալաքիոյ , իսկ այժմ միացեալ Ըումանիոյ իշխանանիստ մայրաքաղաքն է , որ ճըրճօվայէն երկաթուղոյ ճանրով և ժամու չափ հեռաւութիւն մ'ունի : Վալաքիոյ 1848ի յեղափոխութեան ատեն այս քաղաքը տեսնողը՝ այժմ չը կրնար ճանչել , այնքան փօխուած , չէնցած , կանոնաւորուած ու մեծ ցած է , որն որ ճիշդ եւրոպական մայրաքաղաքի մը կարգն անցած կը համարուի . 220,000 բնակիչ կը պարունակէ , որոց մեծ մասը Վալաք է , հոս տեղի դրեթէ բոլոր վաճառականութիւնն ու հարստութիւնը ձբէից ձեռքն է , և կրնայ ըստիլ որ եթէ այսպէս երթայ՝ ասկէ 20 տարիէն ամբողջ Պուբլիչ Հրէից

ձեռքը պիտի անցնի , բաղդատելով ասմայ զործունեա-  
ոթիւնը , աշխատասիրութիւնն ու ինայօղութիւնը ,  
բնիկ տեղացւոց շուայլութեանն ու ծուլութեանը հետ :

Պուքրէշի մէջ ընդ ամենը 270 տուն Հայ կայ , որ  
զատ և առանձինն թաղ մը կը կաղմէ , մէջտեղը փա-  
ռաւոր քարաշէն եկեղեցի մը և տղայոց համար ալ  
վարժարան մ'ունենալով : Երբ Ֆէնէրի յոյն ոլէյերը  
կը տիրէին հոս , արտօնութիւն տուած չէին Հայոց՝  
եկեղեցինին քաղաքին մէջ շինելու , ոյլ քաղաքէն  
դուրս . բայց անկէ ի վեր քաղաքին շրջապատը ըն-  
դարձակուելով մեծնալուն , այժմ Հայոց թաղն ու ե-  
կեղեցին ալ ճիշդ քաղաքին մէջտեղն ինկած է :

Զարմանալին սա՛ է թէ , երբ Հայոց եկեղեցին  
այսպէս քաղաքին ճիշդ կեղբանը բերուած և տակա-  
վին Հայոց ձեռքը կը կենայ , անդին Յունաց բոլոր  
վանքերն ու եկեղեցիներն ալ վլահ ժողովրդոց կող-  
մանէ գրաւուած են , դաւանական նոյնութեան պատ-  
ճառաւ , բոլոր եկեղեցեաց սեպհականութեան և  
վարչութեան ինքինքնին տէր հռչակելով :

Հայոց եկեղեցին հարուստ է , 400 հօմայի չափ  
արծաթ , տարին ալ 1200 քըլմից եկամուտ ունի :  
Երկու քահանայ կայ : մէկ ալ Կարապետ անուն քա-  
րոզիչ վարդապետ մը կեսարացի , որն որ քարոզութե-  
նէն ու հօվուութենէն աւելի իր անձնական շահուն ու  
քսակին Էտէն համար վեղարը գլուխն անցուցած ե-  
կեղեցւոյ մէջ կը ծառայէ , քարոզ մ'անդամ ըլ կրնար  
խօսիլ : Գմբաղդարար աղջկանց գպրոց չըլլութէն զատ ,  
որու համար տեղոյն գրեթէ բոլոր Հայ աղջկէներն  
երենց ազգային լեզուն մոռցած վլահերէն կը խօսին ,  
տղայոց գպրոցն ալ շատ ետ մնացած է : Սրդարն  
Պօլակցի Գէորգ վարժապետ մը կայ , որոյ աշխատու-  
թիւնը չուրացուիր , ամեն պաշտօն իր վրայ առած

քլլալով, բայց աս ալ լեզուէ և ուսմունքէ աւելի եւ քամշտութեան և ձայնաւորութեան նուերելով իր բոլոր հողն ու ջանքը, տղայք միւս ուսմունքներէն ետ մնացած են . զարմանալի բան է թէ այսքան եկամուտ ունեցող հարուստ վարժարան մը՝ ի՞նչու այսքան ադահութիւն ընէ, փոխանակ ամեն մէկ ուսման համար դատ զատ դասաւուներ բռնելով յատկացնելու, ընդհակառակն բոլոր ուսմանց դասերն ալ մինակ մէկ մարդու մը վրայ բեռցնելով, որպէս թէ աժան ըլլալու համար թերես, մինչդեռ եղածն ալ բոլորովին կորուստ մ'եղած կ'ըլլայ, փոխանակ յառաջադէմ աշակերտներ հասցնելու՝ եկեղեցւոյ կալուածները շատցնել կը նային, այնպէս որ աղայոց շատը իր կարդացածը չը հասկնար :

Այս տարի հարուստ և բարեսէր հայազգի մը վտինճանելով Պուքրէշ, 5000 քրըմից կտակ թողած էր՝ աղջկանց վարժարան մը շինելու, յայտնի չէ թէ այդ դումարն իրնպատակին դործածուած է մի, որ եթէ չ'է կարծեմք թէ ազգային Վարչութեան Ուսումնական խորհուրդը ազդու յորդոր և հրաւէր պէտք է զրկէ յիշեալ կտակին նպատակը ժամ յառաջ ի գործ դնելու : Արդէն Հայոց հարուստ մասին շատն իրենց տղայքը օտար վարժարաններ կը զրկեն, եթէ այսօր ջանք ըլլայ՝ 1200 քրըմից եկամուտով դպրոց մը՝ ի՞նչ աշակերտներ չը կրնար հասցնել :

Նաևս պէտք է դիտնալ թէ՝ Պուքրէշի Հայոց մէջ տակաւին մէկ քանիներու վրայ ամիբայական դրութիւնը կը կենայ ու կ'ամիրէ ցարդ, եկեղեցւոյ և դըպրոցի հոգաբարձութիւնը 2-3 հոգիի ձեռք է միայն, որոց դործին խառնուելու իրաւունք չ'ունի հասարակ ժողովուրդը, իրենք կ'ընեն բոլոր մատակալարութիւնը, և մարդու հաշիւ տալու պարտք և պատասխա-

Կոստութիւն մը չունին . Ասով հանդերձ ազդասէք են , քաջ են և հայութիւնն իրենց պարծանք կը համարին , ինչքան որ քիչւոր են՝ բայց և այնու հանդերձ թէ տէրութեան և թէ բնիկ տեղացւոց առաջը մեծ յարդ ու համարում կը վայելէն , ինչպէս որ Մելիք անուն քաջասիրտ Հայ մը 1848ի յեղափօխութեան ժամանակ , երկրին իշխանը սպանութենէ ու մահուանէ ազատելով , շաբաթներով իր տունը պահծ էր զայն , առանց համարձակելու յեղափօխական քաղաքացեաց՝ որ Մելիքի տանը վրայ յարձակին :

Հայոց մեծ մասը հերուստ է , իսկ ծխախոտը հոս ալ Ռէյի ըլլալէն ի վեր է որ շատ մնանկացողներ եղան , վասն զի ծխախոտի առուտուրը միայն Հայոց ձեռքն էր , Ասոնցմէ ուրիշ գործ բռնողներ ալ եղան , բայց նոյն գործին վրայ լու ու բաւական հմտութիւն չունենալուն համար վնաս ընողներ ալ եղան :

Տէրութեան ծառայութեանը մէջ բաւական պաշտօնավարներ կան Հայոցմէ , բայց զարմանալին սա՞է թէ Ռումանիոյ Հայերը իրենց տէրութեան որչափ հաւատարմաբար ծառային , որչափ օդուտներ ընծային , գարձեալ ետ մնալով չեն յաւաջանար . սպատճառը սաէ թէ տեղացիք ծոյլ և գանդաղ են իրենց գործոյն , մանաւանդ թէ տէրութեան առաջին պաշտօնեայէն մինչև յետինը գող և անհաւատարիմ են . ուստի և անկարելի է հաւատարիմ , գործունեայ և սակաւաթիւ Հայ պաշտօնավարք գող ու ծոյլ բնիկ տեղացւոց հետ միատեղ պաշտօն վարեն ու յաւաջանան : Եթէ Հայերն ալ իրենց բնաւորութեան մէջ գողութեան ախտ մ'ունենային , տարակոյս չկայ թէ մինչև առաջին պաշտօնեայ ըլլալու չափ բաց էր առաջնին առարելը , իսկ հաւատարիմ ծառայող ըլլալուն համար՝ տեղացի գող պաշտօնավարք արգելք են ասոնց յառաջացմանը :

Հայոց հաւատարմութիւնն ալ այն աստիճան առաջուցեալ և հաստատեալ իրողութիւն մ'է , որ Ռումանիայ ու և է քաղաքի մէջ տեղւոյն մնտուկին գանձաւ առ առ թեան պաշտօնը Հայ պաշտօնավարաց յանձնը է , դրեթէ միայն Ռումանիոյ կառավարութեան հաւատ պաշտօնեայն Հայ չ'է : Իսկ Հայոց այսքան ատարիմ ծառայութեանը փոխարէն , ցաւալի է Ռումանիոյ Հայերն , երկրին երեսփոխանական ժողով մէջ զիրենք ներկայացնող մէկ հայազգի երեսան մը չ'ունին , և կամ չ'են կրցած տակաւին իրենց հանդիպութելով , քուէ վաստկցնել , ինչու որ անիրաւութիւն մ'է որ ամբողջ Ռումանիոյ 8,000 Հայ քաղաքացիներն երեսփոխանաց խորհրդանին մէջ առանց ներկայացուցիչ մ'ունենալու ընալ :

Կարելի է որ եթէ Ռումանիա բանիբուն , ուստի և քաղաքագէտ Հայ առաջնորդ մը գտնուած է , այս պակասը տէրութեան իմացնելով , Հայոց զլացեալ իրաւունքը ճանչցնէր , և քանի մը հատ երեսփոխաններ ալ ընտրել տալու յաջողէր :

Հոյերն տէրութեան զինուոր կ'տան , իսկ շատեւ դիր հարկէն ազատելու համար՝ օտար երկիր կը դիմէն զաւկնին : Տեղացի սպայներու պաշտօնեայք յէ ամենքն ալ ազնուականներէ կազմուած ըլլասոնց գործն ուրիշ բան չ'է՝ բայց եթէ մաքուր ուիլ , փողոցները ժուռ գալ , որոնք քաղաքացիութ անառակութիւնը իրենք կ'ընեն , և մարդ չը հաներ , ինչու որ ազնուական են : Եթէ պազմի մը խօսք ըլլայ , ասոնց լեզին կը բրդի , այն որ կը վախնան պատերազմէ : Հասարակ զինուորն աստ վատոյժ և վեհերոտ է . ասոնք պատերազմ մէջ աւելի յարմար են գերի երթալու , քան

թէ հայրենեաց պաշտպանութեան համար քաջար կուռելով արիւն թափելու , այնպէս որ եթէ քաջարութիւն մը չ'տրուի իրենց , աւազակաց խմբի ետեին անդամ չ'են կրնար վազել և վրանին յարձաւ :

Հոս գէշ սովորութիւն մ'ալ կայ որ , եթէ զաքէ քաղաք զօրք փոխադրեն , այս փոխադրութիւնը քանի օր տեէ՝ այնքան քաղաք իջևանած առնին , 2էն մինչեւ 10 հոգի՝ նոյն զօրքերը քաղաք տուներուն մէջ կը բաժնեն գիշերը , ուր կուռե կը խմեն , կը պառկին , և հետեւեալ օրն ալ կը չ'երթան առանց ստակ մը վճարելու :

Բնիկ տեղացւոց ընկերութիւնը և բարոյակ վերջին աստիճան ապականեալէ . այնպէս որ ընդուր խօսք մը եղած է մէջերնին թէ , ինչպէս որ տարեկանէն վեր կոյս աղջիկ մը գտնելն հազուազ է , նոյնպէս ալ խիստ սակաւէ 15 տարեկանէն վեր առ և անախա երիտասարդ մը գտնելը , որոյ պատճառ հոս 60 տարեկանէն աւելի ապրող մարդ տեսն հազուազիւտ բան է : Բայց ասոնցմէ ամենէն տակ զարմանաց և գովութեան իրաւամբ արժանի է , այս մոլար և ապականեալ բարուց տէր ժողովրդեան մէջտեղը՝ Հայ իգական սեռին իր բոլոր համեստ թիւնն ու պարկեշտութիւնը ցարդ անբիծ և անապահ պահելու կարող եղած լինելը , որն որ տեղացւոց նակ ըլլալու արժանի է :

Եթէ ցաւալի բան մը կայ , այն ալ սա՛ է մասամբ իւիք Հայ կանանց մէջ ալ պճնասի թիւնը ճարակած է , և ծախուց կողմանէ անդիի շուայլ և մսխող են , ասոր համար երիտասարդք մասամբ ամուսնանալէ խոյս կ'տան , թէպէտ այս մուրիութեան մէկ ուրիշ պատճառն ալ , ինչպէս ըլլալու արժանի է , տեղացւոց ընկերութեան ապական է :

բարոյականն ու կենակցութիւնն է , յորմէ մեծապէս  
օգուտ քաղելով երիտասարդք , ամուսնանալու այն .  
քան մեծ հարկ մը չեն զգար : Առոր համար է որ օրի-  
որդաց մէջ ալ տարիքնին տռած շատեր կը գտնուին ,  
որոնք անկէ ետքը նոյնպէս անայր ապրելու կը հար-  
կադրուին , և ասկէ ալ յառաջ կ'պայ օր ըստ օրէ  
Հայոց նուազումը :

Խակ տեղացի Հայք հիւրասէր են և քաղաքակիլիք ;  
մինակ սա՛ թերութիւնն ունին որ գլուցներնին յառաջ  
տանելու մասին անդիի ծայր անհոգ և անտարբեր են :

Պուքքէշի մէջ Հայոց թաղին մօտ զբօսարան մը  
կայ , զոր կիւմիւշեանի Գաղինօ կը կաչէն , ուր և  
կը ժողովուին և կը յաճախեն գրեթէ միշտ Հայերն .  
Հոս Մասիս լրագիրը բերել կուտան , զոր տեղւոյն  
Գէորգ պատուելին կարդալով անոնց՝ տաճկերէնի կը  
թարգմանէ , որպէս զի կեդրօնական Հայոց վրայ տե-  
ղեկութիւն սասան . ինչու որ տեղացի Հայք հայե-  
րէն չեն հասկնար :

Վամողի պէտք է դիմնալ թէ Մօլտո-Վալաքիա ,  
Աեհաստան և Հունգարիա գանուող Հայերն , ամենքն ալ  
ժամանակաւ Անիի աւերմանէն յետոյ անկէ գաղթող  
Անեցի Հայերն ըլլալով , շատ քիչ իրենց ազգային լե-  
զուն պահած են . թէպէտ ամենամեծ մասը Լատին  
կամ Կաթոլիկ եղած են ոյսօր , և այս պատճառաւ  
օտար աղգաց հետ խառնուելով կորսուելու և անհետ-  
տանալու վտանգին մէջն են , մինչդեռ վերոյիշեալ  
մէկ քանի քաղաքներն և գլխաւորաբար Եաշի և Պուք-  
քէշի մէջ գտնուող Հայերն՝ վերջէն Տաճկաստանէն  
Ռումանիա գաղթած են , որոնք հայերէն չը դիմնա-  
լով տաճկերէն է խօսած լեզունին . իսկ իրենց աղ-  
գային մեծ եկեղեցւոյն հաւատարիմ և հնագանդ միա-  
ցած են տակաւին մինչև ցայսօր :

Աւտոի Բումանիոյ մէջ անոնք որ հայերէն դիտեն, ինչպէս են Ֆօրշանցիք, Բօմանցիք, Պօթուշանցիք և այլն, ասոնք բուն Անեցի Հայ գաղթականութեան սերունդն են, մինչդեռ անոնք որ հայերէն չը դիտնալով տաճկերէն կը խօսին՝ վերջերս Տաճկաստաշնէն Ծումանիա դաղթող Հայերն են, և ցաւալի բան մը կայ որ այս երկու տարբեր սերնդէ գանուող միանոյն Համազդէ Հայ ժողովրդոց մէջ զիրար անաղդելու տեսակ մը հակակրութիւն կը տիրէ :

Քաղաքը մեծապէս բարեկարգուած է, Յ0էն աւելի եկեղեցի կայ, սքանչելի հասարակաց պարտէջներ, մեծաշին պանդոկներ, փողոցները հանձոր քարերով շինուած են. հազարաւոր կառքեր, Թրամվիյ և Օմիլիաւոներ կան, բայց ի խել մը փոքր այլ և այլ թատրոններէ և Գօնսէրներէ՝ նաև մեծ և նշանաւոր թատրոն մ'ալ կայ : Տաւները բոլորն ալ քարուկիր փառաւոր շինքեր են, մէկ խօսքով Պուքրէշ եւրոպական մայրաքաղաքաց կարգն անցած է, թէպէտ միւսներէն քիչ մը փոքր է տեղւոյն ժողովրդեանը հետ բաղդատմամբ : Ճանքորդ մը, գեռ եւրոպական մեծ մայրաքաղաքները չը տեսած՝ եթէ հոս հանգիպի, Պօլսոյ թաղերուն հետ բազգատելով պիտի աողի, տեսնելով թէ մէկ միլիոն ժողովորդ ունեցող Կ. Պօլսոյ պէս մայրաքաղաք մը՝ զէթ Պուքրէշի հաւասարելու համար՝ երկա՛ր տարիներու կարօտ է :

## ՊՕԹՈՒՆԵԱՆ,

Ասի բայ դաշտի վրայ շինուած ընդարձակ քաղաք մ'է, օդը առողջ, բայց ջուրը լեղի, բնակչաց բոլոր թիւն է 18,000, մեծ մասը Վալաք և Հրէալ է :

Այս տեղի ժողովրդոց հարստութեան վիճակը միջին բան մ'է , նաև 2 տարիէ ի վեր հունձք ջլլալուն պատճառաւ շատերը մնանկացած են . մանաւանդ փոքր դրամագլուխ ունեցողներն : Հոս ալ առևտրական դործառնութեանց ամենամեծ մասը զրեթէ Հրէ-ից ձեռքն է , որք այնչափ յառաջացած են՝ որ քրիստոնէից հացն անդամ Հրէայք կ'ուտան : Հոս ալ միւս տեղերուն պէս՝ բնիկ տեղացի Վալաք ժողովուրդը ծոյլ և անհոգ է :

Պօթուշանու մէջ ասկէ շուրջ կէս դար յառաջ 400 տուն Հայ կար , իսկ ոյժմ հազիւ 200 տուն մնացած են , ասոնց ալ մեծ մասը աղքատ է , այնպէս որ չափազանցութիւն մը չը համարուիր եթէ ըսենք թէ հոստեղի հայ ժողովրդին կէսը , այսինքն 100 տունը ողորմութեան և այլոց նպաստիցը կը կարօտին , և ասոնց ալ օդնողները գրեթէ սակաւաթիւ հարուստ երևելիներն են : Առաջներն ոոյն քաղքին Հայերն շատ լաւ և բարեկեաց վիճակ մ'ունին եղեր , բայց քանի որ Հրէայք հոս ալ ոտք կոխեր են , հետզհետէ Հայոց ձեռքէն յափշտակեր են ապրուստնին , այնպէս որ այս օրուան օրս բոլոր արուեստ և առուտուր մի միայն Հրէից ձեռքն է , որք բուն տեղացւոցմէ աւելի հարուստ են : Բայց Վալաքները աւելի թշուառ են Հայոցմէ , որոնց ունեցածը Հրէից ձեռքը անցնելէն վերը , այսօր պարաւոց տոկոսի համար ալ Հրէից ճանկերէն ազատելիք չ'ունին :

Այս քաղաքին մէջ 26 եկեղեցի կայ , որոնց 24ը Վլահաց է և 2ը Հայոց : Ասոնց մէկն է Ս. Աստուածածնայ եկեղեցին , միւս ալ Ս. Երրորդութիւն անուամբ , երկուքն ալ մեծ ու քարաշէն , Հայոց գերեզմանատունն ալ Աստուածածնայ եկեղեցւոյ ընդարձակ պարտիզին մէջն է , որոյ ձախ կողմը տղայոց նո-

բաշեն փառաւոր դպրոցը կառուցուած է : Սոյն դերեզմանատան մէջ Քրիստոսի 1148 թուականը կրող տապանաքար մը կայ , որմէ կը հետեւ թէ Հայոց յիշեալ քաղաքը բնակութիւն հաստաելնին 700 տարիէն աւելի է : Աստուածածնայ եկեղեցին՝ ինչպէս կ'անուի իր թուականէն՝ 540 տարուան շէնք մ'է :

**Ահաւասիկ տապանաքարին օրինակը .**

Այս է տապան հանգստի Արեւելեան յերկրին . Բըզտացի Ազիզպարի որդի Պէրէքէզի . մայրն Նազլը խան կոչի , որք հանդիպիք այսմ շիրմի լուվ սրտիւ դուք զողորմիք հանդեալ . 1148  
ի Արն օգոստոսի :

Հայոց եկեղեցիներն 6000 ֆիորին , այսինքն 550 ուկուոյ չափ տարեկան եկամուտ ունին կալուածներէ , որոց կէսը սակայն աղքատաց արուելով , հազիւ միւս կէսը եկեղեցւոյ և դպրոցին յատկացած է : Վարժարանը մէկ հատ մ'է՝ մանչ տղայոց համար , այն ալ շատ յետադէմ վիճակի մէջ . իսկ աղջկանց վարժարան բնաւ չկայ . ասով հանդերձ այսչափ քիչ հասոյթ ու եկամուտ ունեցող դպրոցի մը աշակերտաց ցոյց տուած ջանքը , ինչպէս նաև թէ՛ հոգաբարձուաց և թէ՛ Տ. Պօղոս ծերունազարդ քահանային՝ վարժարանին վրայ ունեցած հոգն ու խնամքնին մեծապէս գովածեան արժանի է : Սոյն քահանային վարժարանին մէջ հայկաբանութիւն և միանգամայն եկեղեցական երաժշտութիւն կ'ուսուցանէ . մանաւանդ . աշակերտներէն ոմանք այս վերջին ճիւղին մէջ այնքան յառաջ դացած են՝ որ ասոնց չափ եկեղեցւոյ ժամասացական քաղցրութիւն ուրիշ տեղ քիչ լառած է : Զը մոռնանք նաև յիշատակել սոյն դպրոցին եւրոպական լեզուաց դասատու . Սիմօն վարժապետը , որոյ աշխատութիւնն ու ջանքն ալ դովութեան արժանի է :

Եկեղեցւոյ և դպրոցին հողաբարձութիւնը կազմով անդամներն են այսօր՝ Մեծ աղայք Տօղթօր Վալեքեան, Տօղթօր Կոյլաւ, Տօղթօր Մանեա, Աբրահամ Իպրայիլ, Յակոբ Պլյաղեսմ: Չորս ալ քահանայ ունին՝ Տ. Պօղոս, Տ. Ստեփան, Տ. Խաչատուր և Տ. Յովհանննէս, որոց ամենքն ալ քահանայի մը յատուկ արժանաւոր բարեմանութիւններն ունին, մանաւանդ ծերունի Տ. Պօղոս քահանայն, որոյ նման աղքատէր և ընտիր բնաւորութեան ու յատկութեանց տէր եկեցական մը, ոչ միայն բոլոր Մօլոս-Վալաքիոյ մէջ չեկայ, այլ և կրնայ ըսուիլ թէ նոյն խոկ Պօղոսյ և Յուռքիոյ մէջ հազիւ թէ նմանը կը գտնուի: Սա քաղաքացւոց թախանձանօքն ու ստիպմամբը քահանայ եղած է, իսկ իր քահանայական ծառայութեանը համար եկեղեցիէն մէկ ստակ վարձք կամ բաժին չառներ, քիչովլ բաւականացող է, և եթէ փառասիրութիւն մ'ունի՝ այն ալ ձեռքէն եկածին չափ աղքին յառաջադիմութեանը ծառայելու և օգտակար ըլլալու փափաքն է, այնպէս որ յիշեալ քահանայն իր ընտիր բարեմանութիւններովը և երբեմն լրագրաց մէջ հրատարակութեան տուած յօդուածներովը քաջածանօթ եղած է թէ՛ աղքին ուսումնականաց և թէ յիշեալ քաղաքը հանդիպող բոլոր ճանբորդներուն: Յաւալի է որ այս քահանայէն նուազ անձնուեր եղողները օրհնութեան կոնդակներով ու խաչերով կը փառաւորուին, մինչդեռ Տ. Պօղոս քահանայի պէս անձնուեր և աւելի արժանաւորագոյններն վարձատրելը անտես և զանց կ'առնուին: Այս կետը Սմեն. Արքազան Պատրիարք Հօր ուշագրութեանը կը յանձնեմք, որուն կատարելապէս ծանօթ է, թէ՛ յիշեալ քահանայն և թէ՛ Աղքին իւր ըրած մեծամեծ և դովելի անձանձիր ծառայութիւնները:

Տեղւոյս հայ հարուսաններուն վրայ ալ այնքան  
դպրոցափրական մեծ եռանդ ու զգացում մը չ'տես-  
նուիր, ասոնք իրենց զաւկներն փոխանակ աղջային  
գպրոցը զբկելնւ՝ օտար վարժարաններ զբկելով, որք  
եթէ իրենց որդւոց ուսմանն համար օնարտց տուած-  
ստակին գոնէ կէսը Հայոց գպրոցին տային, թէ՛ ի-  
րենց բոլոր ուղած ուսմանքնին կրնային կատարելա-  
պէս աւանդել տալ աղջային վարժարանին մէջ իրենց  
զաւակացը, թէ՛ ասոնց մայրենի հայերէն լեզուն սով-  
տեցուցած կըլլային, և թէ իրենց չնորհիւը՝ աղքատ  
և չքաւոր հայ ընտանեաց զաւկներն ալ միատեղ ուս-  
ման և գիտութեանց մէջ կըթուելով յառաջ կ'երթային:

Նմանապէս ոչ նուազ ցաւելու արժանի է հոս ալ  
հայ աղջկանց վարժարան մը չը դանուիլը, որ ընաւ  
պատիւ չը բերեր իրենց, Պարապ տեղը պիտի առար-  
կեն թէ Ժողովուրդին շատն աղքատէ, ուսանողնեւ-  
րէն եկամուտ չը գոյանար, և թէ եկեղեցին ալ կա-  
րողութիւն չունի աղջկան գպրոց մը հօգալու: Վատա-  
հութեամբ կըսեմք թէ այն հարուստ Հայերը, եթէ  
իրենց օրիորդացը համար՝ օտար վարժարաններուն  
տուած գումարնին մէկտեղ բերեն, ասով թէ աղջր-  
կանց հոյակապ վարժարան մը կը հասաւատուի, թէ  
աղջիկներնին կը դաստիարակուին ու զածնուն պէս,  
թէ մայրենի լեզունին կը պահեն, և թէ իրենց զաւա-  
կացը հետ Հայ աղքատ աղջկներն ալ կը դաստիա-  
րակուին և բան կ'ուսանին:

Ասով հանդերձ Պօթուշանի Հայոց մէջ, բայց ի  
մէկ քանի հարուստ ընտանիքներէ, ժողովրդեան միւս  
մասին վրայ աղջասիրութիւնը բոլորսին մարած ու-  
մեռած չէ, մինակ սա ցաւալի է որ իրենց աղջային  
եռանդն ու զգացումը արդիւնաւորելու յաստի խոր-  
հուրդ և դաղափար տուովներ կը պահոի մէջիրնին:

Հայ և աղքատէր երեւելի և հարուստ ընամնեաց մէջ նշանաւոր է Կօյլաւ գերդաստանը , որոյ անդամներն են Տօդթօր Կօյլաւ , Խաչերես Կօյլաւ , Վաղերեան Կօյլաւ , Լուսիկ Կօյլաւ , Պըյըդլեան գերդաստանը՝ որոյ անդամներն են Յակոբ և Յարութիւն աղայք Պըյըդլեան , բաց ի ասոնցմէ նաևս համբաւաւոր գերդաստաններ կը կազմեն Խաչերես Մամուկեանց , Գարբիէլ Միսիր , Աւետիս Բրունքօլ , ծերունի Ստեփան Միլզաեանց և այլն :

Խնչպէս ուրիշ ամեն տեղեր , նոյնպէս և այս քաղաքին ալ Հայերը գլխաւորաբար վաստաբանութեան , բժշկութեան և տէրութեան ոլաշտօններու մէջ մեծ ծապէս յառաջ դացած են . Հայ երեւելի վաճառականները ալ կան , թէպէտ քիչ են այս վերջիններն : Յարքերնին ու բնաւորութիւննին շատ լուրջ և ծանր է , այնպէս որ զանոնք առաջին անդամ տեսնողը՝ հպարտ և մարդատեաց կը կարծէ , բայց քանի մ' անդամ տեսնուելուն՝ անոնց ունեցած վեհանձնութիւնն ու մարդասիրութիւնը կրնայ անձամբ զգալ ու վկայել :

Յաւալի սովորութեանց մէկն ալ ոտ է թէ՛ ժողովուրդը մեծ մասամբ եկեղեցի յաճախելը զրեթէ մոռցած է՝ բաց ի կանանցմէ , որմնք անդին ծայր բարեպաշտ , կրօնաւոէր , պարկելաւ և համեստ են բարուք , բնիկ տեղացւոց առ հասարակ վատարսոյութեանն և վկտիութեանն հակառակ , և ասի Հայ աղդին իդական սեռին գլութէ ընդարոյս մէկ յատկութիւնն եղած է :

Ասով հանդերձ ժողովուրդը իմաստուն և զիտուն Հայ եկեղեցականները մեծապէս կը յարդէ , բայց տգէտն ալ կ'ատէ ու երեսը չընայիր . ինչու որ շատ պանդոխտ ու տղէտ Հայ քահանայ և վարդապէտներ դացած են այն կողմերը , որք իրենց անյազութեամբն

ու կոպտութեամբը զզուանք պատճառած են : Սաոր  
համար անխտիր ամեն եկեղեցականի ալ մէկէն ի մէկ  
համակրութիւն և յարդանք չեն շուցներ , մինչեւ որ  
առ այդ արժանաւոր ըլլալուն վրայ չը համոզուին ,

Յիշատակութեան արժանի պարագայ մ'ալ կայ  
թէ , ժամանակաւ Ֆէնէրցի Յոյներն , երբ հոս կ'իշ-  
սէին , շատ թշնամութիւններ ըրած են Հայոց , իրա-  
ւունքնին ձեռքերնէն առեր , արտօնութիւննին ան-  
դործադրելի ըրեր , վերջապէս չարիք չէ մնացեր որ  
չը հասցնեն Հայոց , իսկ այսօր դեռ Հայերն այս քա-  
զաքին մէջ մեծ ու նշանաւոր տեղ մը կը բռնին , մինչ-  
դեռ Յոյներուն արմատը բալրուվին չորցեր , ու տե-  
ղացւոց հետ խառնուելով , կորսուեր անհետացեր են  
բոլորովին :

Քաղքին տուներն ընդհանրապէս մրայարկ են և  
սկարաէզներու մէջ շինուած , քարուկիր և փայտաշէն  
խառն է . իսկ վերջին ժամանակներո ոկսած են քար-  
ձըր շէնքեր ալ կառուցանել : Փողոցներն այնքան ճիշդ-  
ուղղահայեաց չեն , բայց մաքրութեան մեծ հոգ կը  
տարուի :

Խնչպէս ուրիշ քաղաքներ , հոս ալ երկուշաբթի  
օրերը մեծ քաշ , կ'ըլլայ , ամեն տեսակ նիւթոց , թէ  
ուտեսոտի և թէ կենդանեաց վրայ մեծ առուտուք  
ըլլալով :



## Պ Օ Մ Ա Կ

Ասի Մոլովա գետակին քսվը շինուած է , որն  
որ Մէրէթ գետը կը թափի : Եաւչէն երկաթուղիով  
Յ յամ հեռու՝ Վալաքիոյ դիսաւոր քաղաքներէն մէկն  
է , որն որ այժմ անունը Մօլու-Վալաքիոյ միացեալ  
իշխանութեանը տուած է , որ Պումանիա կը կոչուի :

Սոյն քաղաքը 2000 տուն ունի 8000 բնակչոք, մեծ մասը Հրէայ է : Շուկային մէջ երկու Հայէ զատ բոլորն ալ Հրէայ են, ուր 800 խանութ և մաղաղա կայ, որոց տռուտուրն ընդհանրապէս դիւզացւոց հետ է, և տարին մի անգամ օդուժուին մէջ մեծ տօնավաճառ կ'ըլլայ :

Բնիկ տեղացի Վալաք Ժաղովուրդը ամենէն աւելի խեղճ վիճակի մէջ է, չկայ ագարակ մը՝ չկայ տուն մը և կալուած մը, որ Հրէայ սեղանաւորաց քով գրաւի գրուած չըլլայ, տամանապատիկ ուող տսկոսով փոխառութեան մը տեղ, իսկ քաղաքին մէջ բաց ի տէրութեան պաշտանարաններէն, եթէ տեսնուելու արժանի մեծամեծ ու հոյակապ շէնքեր կան, անոնք ալ հարուստ Հայոց աներն են, որ ժամանակաւ ձեռքերնին մնացեր է, և ասնք աղատ մնացած են Հրէից քով աւանդ գրուելէ, ինչու որ հոս ալ Հայերն այնքան մօտաւորութիւն չունին Հրէից հետ, որոց թշնամական աջօք կը նային, մանաւանդ թէ Հայերն ընիկ տեղացի ժողովրդեան պէս շռայլ, մսխող, անհոգ և դործը չը դիտող ժողովուրդ մը չ'են :

Պօմանի մէջ 15րդ գարուն վերջերը 740 Հայ ընտանիք կոյ եղեր, այսինքն բնակչաց կեսը Հայ . ինչ ովէս մինչեւ ցարդ կեցած արձանադրութիւնները կը վկայեն, բայց հետզետէ ցրուելով առկէ մէկ ու կէս դար տռաջ 140 տռւն, իսկ այսօք հազիւ 75 տռւն Հայ մնացած է, այն ալ օր ըստ օրէ նուազելու վրայ ըլլալով :

Քաղաքին կեդրսնը Ա. Աստուածածնայ եկեղեցի մը կայ Հայոց, իբր 250 ամօք յառաջ կառուցեալ, իսկ շէնքը հին ըլլալուն՝ քաղաքիս երկելիներէն երկու հարուստ հայազդիք, Պ. Պ. Տօնիկ Ախմէնիան և Թէոդորոս Ասղոմանեան, տռարական ընկեր

քութիւն մը կը կաղմեն , այն պայմանաւ որ եթէ այս  
գործէն ստակ շահին՝ ամենէն տռաջ եկեղեցին նո-  
րոգեն , Աերջին տարիներս Աստուած յաջովելով զոր-  
ծերնին , ինչպէս կը յաջողէ ամեն բարենպատակ ձեռ-  
նարկութիւններն , յիշեալ բարեսիրտ և ազգասէր Հա-  
յերն 6000 քրըմից ոսկի ծափաք ըրեր են եկեղեցւոյ  
նորոգութեանը համար , որն որ քաղքին մէջ այսօր  
խիստ հոյակապ և սիրուն տեսք մ'ունի , ճակատը  
մեծ ժամացոյցներով զարդարուած , Եկեղեցւոյ մէջ  
600 տարուան զրչագիր Աւետորան մը կայ :

Ազգային դերեկմանատօնն ու վարժարանը եկե-  
ղեցւոյ պրոտիզին ու բակին մէջն է , բայց ցաւելով  
կըսեմք թէ՛ հոս ալ խեղճ և յետադէմ վիճակի մէջ  
է դպրոցը , տղայք ամեննեին հայերէն չեն գիտեր ,  
կարդացած աշխարհաբառ գրքերնին իրենք բնաւ չ'են  
հասկնար . դպրոցին շէնքն ու արտաքին տեսքն ալ  
ներքին վիճակէն վար չմնար խեղճութեան կողմանէ ,  
դետնի վրայ միայարկ սրահով ցած ու հին շէնք մը ,  
որ աւելի գոմի կամ ախոռի մը կ'նմանի՝ քան թէ դըպ-  
րոցի . վարժապետ ուսուցիչ մ'ունին՝ որ տակաւին  
ինքն ուսման կարօտ է , վլահերէնի համար ալ Վալաք  
քահանայ մը կուգայ չարունակ դաս տալու : Խոկ աղ-  
ջըկանց դպրոց բնաւ չկայ :

Սյո քաղաքին մեր ազգայինքն ալ կ'երեի թէ ,  
զոնէ երկու սենեակով յարմար և վայելուչ վարժա-  
րանէ մ'աւելի՝ սոսկ եկեղեցի շինելու մասնաւոր հա-  
ճոյք և ճաշակ մ'ունեցած են , ինչու որ եկեղեցւոյ  
այնքան ծախսք ընելնէն վերջը , դպրոցը անանկ խեղճ  
և ախոռանման վիճակին մէջը թողեր են , որ ցաւալի  
հակապատկեր մը կ'ընծայէ եկեղեցւոյ գէմը՝ սորտ  
փառաւոր տեսքին հետ :

Եկեղեցին երկու թոշեկաւոր քահանայ ունի , մին

Պրուսացի Տ. Սարգիս անուն ծերունի մը , միւսն ալ Եացցի Տ. Ստեփան քահանայն : Պամիկ ժողովութզն առհատարակ և վերջին աստիճանի տղէտ է , շատ քիչ բացառութեամբ , ազգայնութեան ողին կարծես բոլորովին մարտծ է մէջերնին , ինչու որ ընդհանուր սկզբունք մ'եղած է իրենց մէջ սա խօսքը թէ ուր որ ապրինք՝ մենք ալ այն ազգէն ենք կ'ըսեն , բայց գոնէ ապրուստի կողմէն քան զայլս գերազանցած ըլլային , դարձեալ իրենց մէկ ութերորդ մատեն լին աղքատ , չքաւոր և ուրիշին օգնութեանը կարօտ է , և Հրէայք հոս ալ մեծապէս յառաջ անցած են քանի Հայերն :

Տեղւոյս Հայոց մէջ մասնաւորապէս յիշատակութեան արժանի են , իրենց ազգասիրութեամբն ու բարեպաշտութեամբը , եկեղեցին շնորհ Տօնիկ Սիմեոնեան և Թէսդորոս Սողոմոնեան գերդաստաններն , նաև Ֆէրհատեան ընտանիքին ազա Սբրահամը , որուն աղքասիրութիւնն ու երկիւզած ութիւնը բացառելու համար բառ կը պակափ , տար ձեռքէն Հայոց պատմաթիւնը և Ստուածաշունչը չկինար անդադար , իւր ալեօր ծերութիւնը կարդալով կ'անցնէ , և որոյ անդամներէն մէկուն վրայօք ալ վերջն ի մասնաւորի սպիտի խօսիմքը Եւ մանաւանդ Գրիգոր և Գէորգ Զունդ Վաճառականք՝ որ սոքա ևս յիշուելու արժանի են :

Սրդարեւ ընդհանուր Մօլտօ-Վալաքիայիք Հայոց հետ բազգատմամբ՝ ասոնց չափ գործունեայ և աշխատասէր չեն , անոր համար ասկէ շատ տարիներ յառաջ երկրին զրեթէ բոլոր հարատութիւնը Հայոց ձեռքն էր , ինչպէս նաև վաճառականութիւնը , երկրագործութիւնը , և այլն . բայց Հրէայներն ամեն կողմանէ Հայոցմէ աւելի ճարպիկ , յաշողակ և խնայողագէտ բրդելով , մանաւանդ թէ իրարու ձեռք

բռնող և մէկզմէկու օդնող ըլլալնուն համար , յատ-  
կոթիւն մը որ Հայոց մէջ մեծ մասամբ կը պակսի ,  
ասով Հըէայք բոլորն ալ իրենց ձեռքն անցուցած են  
Հայոց գործերն ու առուտուրներն , որով և Հայերն  
ալ որ ըստ օրէ ազքատանալու , ցրուելու և կորհչելու  
վրայ են : Պատրիարքարքին անհրաժեշտ պարտակա-  
նութիւնն է՝ որ Մօլու-Վալաքիա իմաստուն , բանի-  
քուն , գործունեայ և անշահասէր առաջնորդ մը դըր-  
կէ , որպէս զի Անեցի դադթականութեան այս մնա-  
ցորդ Հայերն ալ կարենան կորստեան և անհետանա-  
լու վտանգէն աղատիլ , ինչու որ եթէ այսպէս քա-  
ռորդ դար եւս շարունակուի , հոս ալ ճիշդ Եեհաս-  
տանի պէտ բնաւ Հայ մը չը մնալով , յիշատակարա-  
նաց և տապանաքարերուն վրայ միայն պիտի տեմնուի  
Հայոց անունները :

## Ե Ա. Շ

Սա առաջ Մօլուավիոյ մայրաքաղաքին էր , ուր  
դադթեր են ժամանակաւ մեծ մասամբ Հայերը : Առ-  
իէ 180 տարի առաջ 150 տուն Հայ կոյ եղեր հոն ,  
իսկ այժմ 90 տօւն մնացած է :

Կը պատմն թէ 1554ին հոս ակրող Մօլուավիոյ  
Ֆէներցի իշխաններէն Սթէֆան պէտ , մեծ հալած անք  
հաներ է Հայոց դէմ և շատ շարչարեր է զանոնք որ  
յունակաւան ըլլան , բայց անյաջող ելեր է . որոյ վրայ  
տեղացի Հայոց շատը թօղլով այս երկիրը՝ որիշ տե-  
ղեր քաշուեր բնակեր են :


Ս.յո քաղաքին ալ այժմու փառաւորութիւնը ,  
Պատքրէշէն շատ վար չը մնար . ասի զրեթէ Պումա-  
նիոյ վաճառականութեան դիմաւոր կեդրոն քա-

շաքներէն մին է : Հոս հայաղդի մը բումաներէն լրա-  
թերթ մը կը հրատարակէ Գուրէն անուամբ , որ մեծ  
համարութ և ազդեցութիւն ունի երկրին մէջ :

Ժաղավրդեան հարստութիւնը միջին կարգի է :  
Ունին երկու եկեղեցի , Առաւարորիչ և Աստուածա-  
ծին անուամբ , և մէկ քահանայ , բայց մասնաւոր ազ-  
դային գովրոց մը չունին , այլ Պ. Խաչերես Գարա-  
գաշեան իւր սեպհական մէկ մեծ տունը վարժարանի  
յատկացնելով , հոն ամեն ազդէ տվայք կ'ընդունուին,  
ուր և Հայոց տպայքն ալ կուդան , որք չըստ լեզու  
կ'ուսանին :

Հոս ալ հայերէն զիտնալէ զուրկ են թէ աղայք  
և թէ օրիորդք , որոնք Պուրէշցոց պէս առաջկերէն  
կը խօսին . քաղաքին երիտասարդութիւնը լուսաւորեալ  
կը կարծուի , բայց ըստ մեծի մասին անտարքերու-  
թիւն մը կը տեմուի վրանին թէ՝ կը ոնքի և թէ՝ ազ-  
դութեան կողմանէ :

Ս.յս վիճակը ցաւալի բան է , այնպէս որ եթէ  
ասոր գարմանը մտածուելով առաջքը չ'առնուի՝ հոս  
ալ հետզհետէ աղդութիւնը կորսուելու և անհետա-  
նալու վրայ է : Ս.յսպիսի օտար քաղաքաց առաջին  
պէտքի բանն է դպրոցները , որպէս զի նոր սերունդն  
հետզհետէ իր լեզուն ու ազդութիւնը ճանչելով , դո-  
նէ կարենայ Հայութիւնը կանդուն պահել , ապագայ  
վերակենդանութեան մը յուսովք :



## Հ Ա Ր Կ Ն Ա

Ս.սի գեղեցիկ քաղաք մ'է Եաշէն երկաթու-  
ղեով քիչ հեռի , անոյշ ջուր ունի և առողջ օդ մը :  
Հոս մէկ աղահանք մը կայ , որ շատ անուանի է , և

այս է քուն Վ. Ա. Հանի աղ կոչուածը : Ա. յս քաղքին մէջ  
30 տունի չափ չայ կայ , որոնք Ա. Աստուածածին  
անուամբ փայտաշեն եկեղեցի մ'ունին առանց դըմ-  
բոցի :

---

## Գ. Ա. Լ. Ա. Ս

Ասի ալ Մօլտավիոյ երևելի նաւահանգիստ քա-  
ղաք մ'է Դանուբի եզերքը Սէրէթ և Բըռութ գետերուն  
մէջտեղը շինուած : Հոս առեւտրական մեծ գործել  
կըլլան , ուրկէ շարունակ ցորեն և ամեն տեսակ ար-  
մանիք նաւերը բեռցնելով՝ օտար երկիրներ կը զրկեն :

Ա. յս քաղաքին մէջ ընդամենը 50 տունի չափ չայ  
կայ , գրեթէ ամենքն ալ վաճառական և գօմիսիօննի ,  
հարստութիննին և դիւրակեցութիւննին ձեռք կ'առյ ,  
և իրենք ալ միւս քաղաքաց չայերուն հետ քաղդատ-  
մամբ , քիչ մ'աւելի լուսաւորեալ և ըստ Ռումանիոյ  
ապդասէր են :

Մէկ եկեղեցի ունին Ա. Աստուածածին անուամբ ,  
բայց չունին քահանայ , ոչ ալ յատուկ վարժարան մը :

Ահա ցաւալի բան , ժողովուրդ և եկեղեցի կոյ՝  
քահանայ չկայ , ինչպէս գեռ ութիշ քաղաքներ , որք  
նոյնպէս քահանայ չունին , ինչպէս որ պիտի խօսիմք  
վարը ատոնց վրայօք ալ :

---

## Ֆ Օ Բ Շ Ա Ն

Ա. յս քաղաքին քովէն Մելքոն գետը կ'անցնի :

Ամբողջ Ռումանիոյ մէջ այս քաղաքն է միայն ,  
որոյ չայ ժողովուրդը իր ազգայնութեան նախատիպն

ու հանգամանքը իր լեզուն և բարբը, իր աղջոյին սովորութիւնքն ու զգացումները փոքր իշտոէ անեղծ և անվթար պահած է ցարդ։ Հայ աւղիոր մը՝ երբ միւս քաղաքներն ճանբորդելով այցելելէն յետոյ Ֆօքանի համնի, հսո քիչ մը կուրախանայ և կոկոի միսիթարութիւն մը զգալ՝ միւս քաղաքաց Հայոթեան թշուառութիւնն և տիսուր վիճակի տեսնելէն վշտացւալ իր սիրան սիստիելու համար։

Արդարի Ֆօքշանի Հայերն ալ բաւական աղջատէր և բարեպաշտ են, այժմ 200 տոնի չափ Հայ ընտանիք կայ հսո, թէպէտ առաջները աւելի շատ են եղեր, երկու եկեղեցի ունին Ս. Գէորգ և Ս. Աստուածածին անուամբ, երկուք ալ քահանայ ունին, Աստուածածածնայ եկեղեցին 1300 թուականին շինուած է, մեծ, փառաւոր, դմբեթայտրկ, և խիստ պայծառ է, Հոս ալ թէպէտ աղջկանց վարժարան չկայ, սակայն մանչ տղայոց դպրոցնին, ուրիշ քաղաքաց հետ բաղդատմամբ շատ յառաջադէմ վիճակի մէջ է, 60ի չափ աշակերտ կը սրարունակէ, որոնք՝ բաց ի հայերէն լեզուէ և հայկաբանութենէ, որոյ դասատուն դբէթէ միշտ Պօլսեցի կը լլայ, Ասկէ առջի վարժապետն ալ Պօլսեցի մէր, Մկրտիչ անուն, որն որ 40 տարիի չափ ամենայն անձնուիրութեամբ աշխատած է վարժարանը յառաջադիմութեան ճամբուն մէջ գնելով զարգայնելու, և որոյ աշխատութեան պտուղը կը վայելէ այսօր թէ ինքը և թէ աղջը, ինչու որ ինքն եղած է Ֆօքշանցի Հայոց սրախն մէջ աղջութեան սէրը վառ և արծարծ պահողը, բայց դժբաղդաբար իւր յաջորդ վարժապետը, որ նոյնպէս Պօլսեցի է, արքեցող ըլլալուն պատճառաւ, տեղացիք կը գանգատին և միշտ դժգոհ են: Երեք լեզուագիտութիւն և կուսանին, Պումաներէն, Գերմաներէն և Գաղղիերէն:

Գալլոցին յառաջադիմութիւնը բաւական զոհացացիչ է, և աւելի յոյսերով լի է տեղայս երիտասարդութիւնը, որը Հայաստան անուամբ ընկերութիւն մը հաստատած են, ընդհանուր Բուժանիոյ Հայոց համար կեզրոնական տռումնարան մը բանալունականակառ, որոյ կանօնագրութիւնը և տեղացւոց ազգասիրութիւնը նկատելով մեծ յոյս կոյ թէ՝ քիչ տաճնէն կը յաջողին իրենց այս գովելի նստատակին համնելու, յօդուա Հայ աղջին և ի պատիւ Ֆօքշանի Հայոց, որք այս կերպիւ մեծ ծառայութիւն մատուցած պիտի ըլլան աղջին, Բուժանիոյ մէջ ցրուեալ Հայաղդի ժողովրդոց համար Հայութեան կեզրոն ու վառարան մընելով զմօքշան քաղաքը, և տոկէ անսնց րոյս և մնունդ ջամբելով պահելու համար աղջութիւննին ու լեզունին, առանց նոր սերունդը կրթելու լուսաւորելու և աղջային զգացում ներշնչելու միջացան ու նորհիւը :

Թարգմանեան Անտօն վարդապետն յիշեալ քաղաքն հասած տան, տեղացիք միաք ունէին զինքն իրեն լեզուաղիտութեան դասաւու վար դնել վարժարանին համար, սակայն անկէ ի վեր յայտնի չէ թէ զինքն այդ պաշտօնին մէջ հաստատած են թէ ոչ, Առեկայն ինչ որ ալ լինի սա անուրանալի և ամենաստուգէ թէ Ֆօքշանի Հայերն, որոնցմէ քանի մը ընտանիք և մասնաւորապէս Ֆերհատեան դերդաստանը, Պոլսոյ Հայոց հետ միշտ յարաբերութեան մէջ կը գտնիւն և Պօլիս հրատարակեալ աղջային թերթեր կ'ըստատան, այս տեղի Հայերը բոլոր Բուժանիոյ միւս քաղաքաց Հայերուն նայելով նախանձելի վիճուկ մը ունին, և ըլլած յառաջադիմութիւննին ալ այլոց նուխանձախնդրութիւնը զրդուելու արժանի օրինակ մը կընայ հանդիսանալ :

նուած չըլլալին է , մինչդեռ իրենց նժամն գրացի միւռ  
երկիրները , օրինակի համար և հաստան , Պուքովինա  
և Հունդարիա գաղթող Հայերն ամենամեծ մասումը  
հեռանալով իրենց ազգային եկեղեցին , ոմանք Պու-  
պական եղեր և այնպէս կը մնան , և ոմանք բոլո-  
վին օտար ազգաց հետ խոռնուելով ու խնամութիւն  
ընելով՝ անոնց մէջ ձուլուեր ու անհետացյեր են : Խոկ  
Թուրքիոյ Հայերս կը մասնայի գոհունակու-  
թեամբ նկատել թէ՝ բոլոր Պումանիոյ Հայ գտնիմա-  
կանութիւնը , իր ազգային կիսատ նվազուին , և տե-  
ղական սովորութեանց հետեւելնուն հակառակ՝ դար-  
ձեալ և այնպէս իրենց ազգային մեծ եկեղեցւոյն կա-  
տարելապէս հաւասարիմ մնացած են , և ասոնց մէջ  
պապականութիւնը բնաւ մուտ գտած չէ , որն որ այս  
կողմերս բաւական կրօնական աշխարհակալութիւն-  
ներ ու յաղթանակներ եղած է վերջին դարերուս մէջ :

Ուրիշ ընդհանուր գոհունակութեան արժանի բան  
մալ կայ , որ Պումանիոյ Հայոց իդական սեռը , զին-  
քը վընապատող տեղական լիտի և անպարկեշտ բա-  
րուց հակառակ , առհաօսրակ այս կողմերը տեսնուած  
վատաբարոյ կենցաղավարութեանց մէջուեղը , Պումա-  
նիոյ մեր Հայ լրդական սեռը իր բոլոր պարկեշտու-  
թիւնը , համեստութիւնն ու պատկառանքը պահած  
է , և ասոնց այս գովելի յատկութիւնն ու բարեմաս-  
նութիւնը այնքան հանրածանօթ եղած է տեղացւոց ,  
որ ամենէն անպարկեշտ և վատաբարոյ բնիկ տեղացին  
չը համարձակիր Հայ կնոջ մը պարկեշտութիւնն ու  
պատիւը փորձելու , այլ ամենէն անամոթն անզամ  
մեծ պատկառանօք և ակնածութեամբ կը նայի ու կը  
վարուի Հայ կնոջ կամ աղջկան մը հետ , զիտնալով  
որ ասոնց ամենքն ալ անխտիր իրենց պատւոյն և հա-  
մեստութեանը տէրն են , և թէ ասոնց պարկեշտու-

նուած չըլլալնին է , մինչդեռ իրենց նման դրացի միւռ  
երկիրները , օրինակի համար կեհաստան . Պուքօվինա  
և Հունգարիա գաղթող Հայերն ամենամեծ մասսմբ  
հեռանալով իրենց ազգային եկեղեցին , ոմանք Պու-  
պական եղեր և այնպէս կը մնան . և ոմանք բոլո-  
վին օտար ազգաց հետ խռոնուելով ու խնամութիւն  
ընելով՝ անոնց մէջ ձուլուեր ու անհետացեր են : Խոկ  
Թուրքիոյ Հայերս կրնամք ամենայն գոհունակու-  
թեամբ նկատել թէ՝ բոլոր Պումանիոյ Հայ գողթա-  
կանութիւնը , իր ազգային կիսատ լնդուին , և տե-  
ղական սովորութեանց հետևելնուն հակառակ՝ գար-  
ձեալ և այնպէս իրենց ազգային մեծ եկեղեցւոյն կա-  
տարելապէս հաւատարիմ մնացած են , և ասոնց մէջ  
պապականութիւնը բնաւ մուտ գտած չէ , որն որ այս  
կողմերս բաւական կրօնական աշխարհակալութիւն-  
ներ ու յաղթանակներ եղած է վերջին գարերուս մէջ :

Ուրիշ ընդհանուր գոհունակութեան արժանի բան  
մալ կայ , որ Պումանիոյ Հայոց իդական սեռը , զին-  
քը շրջապատող տեղական լկոփ և անպարկեշտ բա-  
րուց հակառակ , առհասարակ այս կողմերը տեսնուած  
վատաբարոյ կենցաղավարութեանց մէջտեղը , Պումա-  
նիոյ մեր Հայ իդական սեռը իր բոլոր պարկեշտու-  
թիւնը , համեստութիւնն ու պատկառանքը պահած  
է , և ասոնց այս գովելի յատկութիւնն ու բարեմաս-  
նութիւնը այնքան հանրածանօթ եղած է աեղացւոց ,  
որ ամենէն անպարկեշտ և վատաբարոյ բնիկ տեղացին  
չը համարձակիր Հայ կնոջ մը պարկեշտութիւնն ու  
պատիւը փորձելու , այլ ամենէն անամօթն անզամ  
մեծ պատկառանօք և ակնածութեամբ կը նայի ու կը  
վարուի Հայ կնոջ կամ աղջկան մը հետ , գիտնալով  
որ ասոնց ամենքն ալ անխտիր իրենց պատւոյն և հա-  
մեստութեանը տէրն են , և թէ ասոնց պարկեշտու-

թիւնը բնաւ երբէք փորձի տակ չը կրնար ձգուիլ և  
Ասսնց այս գովելի յատկութիւններն ի բաց տու-  
նելով, ցաւալի է թէ՝ ինչպէս ըստնք Ռումանիոյ Հա-  
յերն իրենց իդական սեռն ալ կըթելու, և աղջային  
զգացումներով սրաերնին մշակելու և մաքերնին դաս-  
տիարակելու համար, ցարդ աղջկանց վարժարան մը  
չ'ունին և ոչ մէկ տեղ մը, որոյ պատճառաւ իդական  
սեռին մեծ մասը հայերէն խօսիլ դիտնալէ դուրի կր-  
պանուի, և իւենց զաւակներն ալ գրեթէ շարունակ  
վլահերէնը լոելով իրենցմէ, տսի բաւական մեծ ար-  
դելք մը կ'ըլլոյ աղաւոց ալ կանոնաւոր հայերէն մը  
սորվելուն, և հայերէն լեզուն այն կողմի Հայ գաղ-  
թականութեանց մէջ աարածելով ընդհանրացնելուն  
դէմ, որն որ ազգութիւնը կենդանի և անկորուստ պա-  
հելու ամենազօրաւոր միջոցներէն մին համարուած է :

Ժողովրդեան բարեպաշտութիւնը պաղած է ըստնք  
մեծ մասամբ . բայց տսի ոչ այնքան կրօնասիրութեան  
և ազգային եկեղեցին յարգելու փափաքին նուազու-  
մէն յառաջ եկած է, որքան աւելի արժանաւոր և բա-  
նիրուն եկեղեցականներ չ'ունենալուն համար, որք  
իրենց սրտին մէջ աղջին և եկեղեցւոյ սէրն ու-  
զգացումները արծարծեն : Ընդհանրապէս Ռումանիոյ  
բոլոր հայաքաղաքաց մէջ՝ հոգեսր հովուութիւն ու  
բոլոր պաշտամունքներն քահանայք կը կատարեն, քա-  
րող խօսող մէկ վարդապետ մ'անդամ չ'կայ, բաց ի  
Պօթուշանի Տ. Պօղոս ծերունազարդ քահանայէն, որ  
ինչպէս ըստնք՝ պատկառելի, ազգասէր և արժանա-  
ւոր եկեղեցական մ'է . միւս բոլոր քահանայներն ալ  
առհասարակ տգէտ են, և ամենքն ալ իւենց կամ  
քին ու հետին համեմատ կը վարուին, որոց ընթացքն  
ու կարգապահութիւնը բնաւ կանոնի և հոկողութեան  
ներքի չ'է առնուած : Չունին իրենց վրայ և մօտեր-

Նին հոգեսոր գլուխ կամ տեսուչ մը՝ որ տէնածին կամ կանոնադահովեան հրաւիրուին ժողովուրդն ալ զըեթէ բոլորովին անտարբեր է եկեղեցւոյ ներքին կառավարութեանը մասին . ուստի ամենքն ալ իրենք իւրենց գլխաւն ընթացք մը բռներ է երթան :

Յայց ասոր հետեանքն եզած է ժողովրդին կրօնասիրութենէ պաղիլը , ասոր համար բաց ի կանանց մէ , կիրակի օրերը ամեն մէկ քաղաքի Հոյոց եկեղեցին՝ հազիւ Յ կամ Յ հոգի կը դանուի :

Յումանիոյ Հայ գաղթական ժաղովրդեան այսօրուան ունեցած միակ և անհրաժեշտ սկզբն է՝ բանիրան և արժանաւոր ընդհանուր առաջնորդ մ'ունենալ , որ իրաւասութիւն ունենայ նոյն կողմի բոլոր հայաբնակ քաղաքաց ազգային եկեղեցիներուն տեսչութեանն ու կառավարութեանը վրայ , վարժարանաց յառաջադիմութեանն և նորանոր՝ մանաւանդ աղջկանց վարժարաններ բանալու համար ամեն քաղաքի հոգաբարձութիւններն ու ժողովրդներն համազէ և զանոնք յառաջ տանելու ջանք ընէ :

Այս սկզբը մանաւանդ Պօլոյ Յատրիարքարքարանը պէտք է աշխատի լրցինելու , որ եթէ անտեղեակէ է ահաւասիկ այժմէն հարկ կը համարիմք իմաց տալ իրեն թէ այսօր Յումանիոյ Հայ գաղթականութիւնը ստիպողական և անհրաժեշտ սկզբք ունի հայ առաջնորդի մը , բայց չէ թէ կեղեքոլ և իր փորն ուռեցնող , այլ քիչով բաւականացող և արժանաւոր առաջնորդի մը , և արդէն այն եկեղեցականը որ արժանաւոր է՝ բնականաբար քիչով ալ բաւականացող կ'ըլլայ , վասն զի՞ այս երկու պայմաններն ու յատկաթիւններն իրարմէ չեն բաժնուիր :

Տեղացիք արդարեւ եկեղեցականի ստակ ապէչնեն փախչիր , իսկ եթէ այնպիսի առաջնորդ մը երթաց

որ միայն իր կոկորդն յադեցնելը նոյնի, այնպիսին առ չեն ուզեր և չեն ճանչեր, և դժբաղդաբար Մօլու Վալաքիոյ Հայերն՝ այս տեսակ եկեղեցականներ շատ տեսած ըլլալնուն համար, որոնք օտար ազգաց առ չեր Հայոց արատ և անարգանք բերած են, ուստի և վախերնուն միշտ կասկածու աշօք կը նային ասոնց վրայ, մինչև որ համոզուին պարկեցու, արժանաւոր և ակնածելի անձինք ըլլալնուն,

Յիրաւի առաջնորդն իրենց համար նոր ծախքի մը դուռ բանալ է, բայց երբ տեսնեն այնպիսի քաղաքադէտ, գործունեայ, բանիբուն, դիտուն և արժանաւոր բարձրաստիճան եկեղեցական մը, որ զիւտէ ու ճանչէ իր պաշտօնին ու կոչման յարգն ու արժանիքը, որ երկրին իշխանութեանը քով մեծ համարում և յարգ ստանայ, որ ազգայնոց 20 տարիէ ի վեր երեսի վրայ մնացած դործերը ձեռք առնելով զանոնք յաջողութեամբ ի գլուխ հանէ, որ ոչ թէ կեղծաւորութեամբ կամ մարդահաճութեամբ, այլ իւր բարի և պատկառելի վարքովն ու բարքովը ինքը սիրելի ընէ ժողովրդեան, թէպէտ խիստ ու անաշառ, բայց պառող և արդիւնք ցոյց տայ. այս պիսի առաջնորդ մը կընամք ըսել ամենայն վստահութեամբ, որ եթէ եկեղեցւոյ հասոյթէն մէկ ստակ ալ չտոնէ, դարձեալ ժողովուրդն իր քսակը դորա դոգը կը պարպէ ամենայն գոհութեամբ, ինչպէս որ տակաւին մինչև ցարդ Ռումանիոյ Հայը ամենայն գովութեամբ կը յիշատակէ Ներսէս վարդապետին (այժմու մեր Ս.Պատրիարքը, որ ինչպէս յայտնի է իւր վարդապետութեան ժամանակը այս կողմերն հոգեւոր այցելութեան և հանգանակութեան ելած էր) և Մելքիսեդեկ վարդապետին անունները ու չըյադենար, և զանոնք բերնէն չը ձգեր, հառաջելով ու փափաք

յայտնելով թէ ուր էր որ բոլոր հայ եկեղեցականք  
ալ ասոնց նման ըլլային :

Գովութեան և չնորհակալութեան արժանի է ի-  
շինց այս ընտրողութիւնն ու արժանեաց ճանաչողու-  
թիւնը , իսկ Պատրիարքարանին ալ պարտքն է որ ա-  
սոնք ըաւ նկատողութեան առնու , ու արժանաւոր  
առաջնորդով մօօժտէ Ռումանիոյ Հայը , որ եւրոպա-  
կան ժողովրդի մը մէջ ընակելու հանդամանքն ու բա-  
րեմասնութիւններն ունենայ , վասն զի հոս Տաճկա-  
տանի և Անատօնույի դաւառաց շընմանիր . այս տեղի  
առաջնորդը՝ պատրիարքի մը յատուկ յատկութիւն-  
ներն գրեթէ կատարելապէս ունենալու է , որ թէ ինք-  
զինքը և թէ իւր հովուած ժողովուրդը յարդի ը-  
նել տայ տէրութեան և օտար ազգաց առաջը , որոյ  
հետ շարունակ հաղորդակցութեան ու յարաբերու-  
թեան մէջ են այս կողմի Հայերն :

Եթէ այս մասին անտարբեր և անհոգ մնամք , և  
Ռումանիոյ Հայ դաշլթականութիւնը ընտիր և բանի-  
բուն առաջնորդէ մը զուրկ պահեմք տակաւին , տա-  
րակոյս չկայ թէ վրանին այսօրուան տեսնուած ազ-  
գային փոքր ինչ զգացումն ալ պիտի անհետի , եկե-  
ղեցափառութիւննին բոլորովին պիտի մարի , որ ազ-  
գութեան մնալուն հիմն է , և ազգային լեզուն պի-  
տի կորսուի , որ ազգութեան դոյութեանը նշանն է ,  
և ալ ուր պիտի գանեմք Ռումանիոյ մէջ Հայ , որ  
ցարդ կազող եղեր է ինքզինքը պահպանելու . այնու-  
հետև ուրիշ բաժին ը պիտի մնայ մեզ , բայց եթէ  
ասոնց ալ կորստեանը վրայ ողբալ , ինչպէս կողբամք  
դեռ միւս անհետացող Հայոց անդառնալի կորստեանի  
վրայ :

Պահնք այժմ Հունգարիա անցնելու :

## ՀՈՒՆԳԱՐԻԱ

Այս դադթական Անեցիք, 15րդ դարուն մէջ, սկսան Հունգարիա անցնիլ. սմանք Թափարտանէն Տրապիզօն՝ անկէ նաւով Մօլտավիա անցան, և Մօլտավիայէն Հունգարիա դադթեցին. սմանք ՆիկոԼ Հեղիսկոպոսին հալածանացը չը դիմանալով՝ Լեհաստանէն ելան Սուչօվա եկան, որոնցմէ մէկ մասն ալ Հունգարիա անցան. և շատերն ալ լսելով Հունգարիոյ պաղաբերութեան և վաճառականութեան շահաբերութիւնը, և իրենցմէ առաջ դացող աղբակցացը հարսաութիւնը՝ թէ Մօլո-Վալաքիայէն և թէ այլուր երկիրներէն Հունգարիա անցան. Անանկ որ մինչև 16րդ դարուն սկիզբները բոլոր Հունգարիոյ քաղաքները Հայ ընտանիքներով լեցուեցաւ, և մինչև 6,000 ընտանիք եղան. և որովհետեւ ասմանք Լուսաւորչական ըլլալով, հակառակ իրենց կրօնասոխրութեանը ամեն տեղ եկեղեցի և դպրոց չ'ունէին. ուստի աղդասիրական ողուով միաբանեցան, Թրանսիլվանիոյ մէջ երկու քաղաք շինեցին, մին անուանեցին Հունգարիամ Ակռա, իսկ միւսը Եղիսաղեթուութիւն կամ Պաշտաճէ, և Հայոց մեծ մասը այս երկու քաղաքը հետզհետէ եկան բնակութիւն հաստատեցին. բայց մէկ մասը Մաճառաց ձըրճով քաղաքը բնակեցան, և երեելի եկեղեցիներ շինեցին, և որոնք որ առևտրական յարմարութիւն ունէին անոնք Մաճառաց այլ և այլ քաղաքները և գիւղերը մնացին, ինչպէս որ վարը պիտի խօսիմ:

Ասոնք 1607ին տէրութեան տուած հրովարտակին չնորհիւը, ոչ թէ միայն մասնաւոր ատեան և ատենակալ ունէին, այլ և դաւառական ժողով և վրեալ

ռական ատեսն , որոնք թէ աղջին և թէ քաղաքին ամեն վճերը իրենք կը վճաէին . (ինչպէս որ վարը դատարանաց օրագրութենէն քաղելով քանի մը օրինակ պիտի դնեմ) և այս ազատութիւնը մինչև 18րդ դարուն սկիզբները վայելեցին , բայց որ ըստ օրէնուազելով և ցրուելովսին այսօր այս ազատութիւննին ալ կորսնցունելու վիճակին մէջ են .

Ասոնք հազիւ հազ 30 տարիի չափ իրենց եկեղեցւոյն հարազատ դանուեցան . և որովհետեւ Հայոց բոլոր առուտառուը Մաճառաց հետ էր , իրենք տարբեր կրօնք դաւանելուն համար՝ մէջերնէն ատելութեան ոգին վերցնելու . և Մաճառաց համակրութիւնը գրաւելու համար՝ շահախնդրութեամբ եկեղեցինին միացուցին Մաճառաց հետ , որ մինչև ցայսօր իրենց մէջ շատերուն եթէ հարցնես թէ՝ ի՞նչու հայերէն չես գիտեր , կը պատասխանեն թէ՝ Հայու լեզուն՝ մեզ չը շահեցներ» : Ասոնց մէջ այն օրէն՝ այսինքն պապականութիւնը ընդունած օրէնի վեր՝ ոկտած է աղջութեան ոգին օր ըստ օրէ անհետանալ , և իրենք ալ խնամութեամբ նուազիլ , ուր այսօր հազիւ 1,200 ընտանիք կ'ելլէ , և ասոնք ալ դըեթէ Լատին ժողովը դէ մը տարբերութիւն չունին : Ցաւոլին այն է թէ ասոնք իրենց մէջ Հայ ըլլալնին , կամ աւելի շիտակն ըսելու համար , Հայ սերնդէ իջած ըլլալնին կը խոստովանին , բայց այնքան տգէտ ու անտեղեակ են Հայոց աղջին վիճակին վրայ , որ պարզամտութեամբ անանկ կը կարծին թէ՝ իրենցմէ զստ աշխարհիս երեսը Հայ անուամբ ոչ ոք մնացած է , և թէ Հայերն այլևս իրենց յատուկ կենդանի լեզու մը չ'ունին , առ սոր համար իրենք ալ հայերէն լեզուին այնքան մեծ կարևորութիւն մը չ'են տար սորվելու կամ դործածելու :

**Հունգարիոյ գաղթական Հայոց աղջային այս վի-**

Ճակը ինչքան ցտւալի է և կոկիծ կ'ազդէ Հայու մը սրտին, այնքան աւելի մեղադրելի և անդօմնելի է այս կողմերն այլ և այլ քաղաքներն գտնուող Հայ-Պատպական վարդապետաց բռնած թոյլ ու անհոգ ընտեղացքը, որոնք այս Հայ ժողովուրդներն հովուելու համար եկած կամ զրկուած ըլլալով, ասոնց մէջ ազդային լեզուն ու զդացումն արծարծելու և տարածելու փոյթ ու ջանք մը ընելէն զատ, ընդհակառակն կարծես թէ ասոնց ազդութիւնն ու լեզուն դիտամբ իրենց մսոցնել տալու և օտարացնելու մասնաւոր և յատուկ հրահանդ մ'առած են :

Պապականութիւնն ահա ոյսպէս մեր ազդին տունը կործաներ է, և տակաւին կ'աշխատի խրամատելով հիմն ի վեր ատպալել և բոլորովին բնաջինջ ընել զայն՝ չնորհիւ տղիտութեան, որոյ մէջ ուահել կ'աշխատի միշտ իւր ճանկին տակ ձգած ժողովուրդներն :

Ըստ մեզ, մեր ազգային իշխանութեան անհրաժեշտ պարտականութիւնն է առաքելութիւն մը հանել այդ կողմերը, երթալ լուսաւորելու, մտքելնին բանալու և ճանչցնելու համար ոյդ մենէ օտարացեալ և հեռաւոր ազգայնոց թէ՝ իրենցմէ հեռի այլ այլ մեծամեծ երկիրներու մէջ, Թուրքիա, Ռուսաստան, Պարսկաստան, Հնդկաստան և այն, մեծ Հայոց ազդ մը կը դանուի 4 միլիոնէ բազկացեալ, որք իրենց յատուկ լեզուն, կրօնքն ու ազգային եկեղեցինին դեռ կը սկահեն, և թէ իրենք ալ այդ մեծ և կենդանի ազդին հեռաւոր անհատներն ու անդամներն են :

Այս գաղտնիարը պապական քարոզիչներու անհնար է տալ, ինչու որ ասոնց պաշտօնն աւելի Հայ ազդը պառակտել ու ջրատել է, քանի թէ զայն միացնել ու զօրացնել. այս դադարիարը սոսկ և բուն հա-

բաղատ չայու գաղափար է, և զայս չայ առաքեալ ներն միայն կընան քարոզել ու տարածել հեռառ և անջատեալ աղդայնաց մէջ :

Իսկ այս առաքելութիւնը կատարելու պարտականութիւնը՝ մեր աղդային իշխանութեան վրայ անհրաժեշտ հարկ մ'եղած ըլլալով, կ'ուզէ մեր Պօլսոյ Պատրիարքարանն առ այդ ձեռնարկէ, կ'ուզէ իր այդ մասին անկարողութիւնն զգալով, Էջմիածնաց Վեհ. Կաթողիկոսին թախանձէ, որ ինչպէս ամեն հեռաւոր տեղեր, նոյնպէս Հունգարիոյ և Գերմանիոյ և այլ օտար երկիրներու մէջ դանուած հայարնակ քաղաքներն մէկ մէկ բանիբուն և գործունեայ Հայ առաջնորդ Եկեղեցականներ զրկէ, զանոնք քարոզելով և լուսաւորելով՝ Հայատանեայց միութեան կեդրոն. Սոյը Աթոռոյ հետ վերստին կապելու և յարաբերութեան մէջ դնելու համար :

Անցնինք այժմ մասնաւոր քաղաքաց վրայ առաջիւննիս շարունակելու :

### ՊՐԱՇՈՎ. ԿԱՄ ԸՍ ԳԵՐԱ. ՔՅՈՆՇԹԱ.Տ

Ասի 42րդ դարուն վերջերը շինուած մեծ ու նըշանաւոր հարուստ քաղաք մ'է Պումանիոյ սահմանակից, 2,000 տուն կայ և 15,000ի մօտ բնակիչ ունի, խիստ մեծ մասը Բողոքական է: Հոս Լուտերի աշակերտը քարոզած ըլլալով, իր տունը տակաւին կը կենայ իբր սրբազն և նուիրական տեղ մը, զոր տեղացիք վերջին աստիճանի կը յարգեն և ուր ամեն ապրի մեծամեծ ցոյցեր կ'ըլլայ: Ընդ ամենը չորս նկեղեցի կայ հոս, Բողոքականաց, Մաճառաց, Լատինաց և Վլահաց. իսկ Բողոքականաց Եկեղեցւոյն մեծութիւնն ու

Հոյակապ տեսքը քան զմիւսներն կը կերազանցէ : Քառաքին երկայնաթեամբը սքանչելի ծառուղի մը կայ, որ Յ քառորդ ժամ կը տեէ ոտքով, և որոյ նկարագրութիւնն ու հարկ եղած գովեստը աւելի բանատեղծի մը գրչին կը փայլէ ընել, քան թէ մեզ, որ խեղճ Հայուն հետքերը խուզարկելու ելած եմք այդ փառաւոր և մեծաշէն քաղաքաց մէջ :

Ա.ոկից 70 տարի առաջ այս քաղաքին մէջ 70 տուն Հայ կար, յորմէ 20 տուն հազիւ մնացած է այսօր, ոչ թէ օտար տեղ գաղթելով, այլ նոյն քաղաքին բնակչացը հետ խառնուելով ու անհետանալով : Օտար մը երբ Հայոց այս ողոքմելի վիճակը տեսնէ, անհնարին է որ աչքին արտասուքը կարենայ բռնել և չզգալ թէ այդ պատականութիւնը ի՞նչ աստիճան փառակար և աղետաբեր եղեր է մեր ազգին համար, որոյ ազգեցութեանը ներքե ո՛ դիտէ թերեւս 20 տարիէն յիշեալ քաղաքը բնաւ Հայ մը չպիտի մնայ :

Քաղաքին մէջ երեելի վաճառատուններն Հայոցն են, երեելի ու վառաւոր շնոքերն Հայոց սեպհականութիւնն են, իսկ ասոնց վրայ չը տեսնուիր դոնէ նշան մը՝ որ Հայ ազգութեան յատկանիշն եղած ըլլայ, վաճառականութեանց և բնակութեանց տէր Հայերն բոլորն ալ մաճառերէն և Մաճառաց պէս գրած են իրենց նշանատախտակներուն վրայ անուններնին, մինչեւ իսկ հայկական էան մասնիկը դոնէ զանց ըրած են գործածելու, կարծելով ասոնք թէ՝ Հայութիւնը ոչնչացած է, թէ աշխարհիս վրայ կենդանի լեզու չունի, և թէ հայութեան՝ պարծենալու բնաւ մէկ կողմը չէ մնացած, ուստի և իրենք ալ կ'ամաշեն ատարազգիներու առջե. «Հայ ենք» ըսելու, այնպէս որ եթէ մէկը քաղաք մտնելով հարցնէ օտարազգիի մը թէ հոս Հայ կայ, պատասխան պիտի ընդունի թէ

«աղէկ մը չեմ գիտեր , բայց կարծեմ պիտի ըլլայ» :

Տեղոյս Հայերն թէպէտ փոքրավթիւ են՝ բայց մեծ անուն ունին քաղաքին մէջ , ցաւալի է սակայն որ ազգութեան ոդին ու զդացումը կարծես մարած է սրաերնուն մէջ : Հայոց եկեղեցի չունին , այլ Հայերն մինչեւ վերջին տարիներս Լատինաց եկեղեցին կը յաճախէին : Բարեբազգաբար Ֆօքշանցի մեծանուն Ֆէրհատեան Յակոբ աղա ազգասէր անձին չնորհիւը , այժմ Եագութեան Հ . Արդանէս անուն վարդապետ մը ունին , որոյ ծախքը և թաշակը առատօրէն յիշեալ Յակոբ աղան իր քսակէն կը հոգայ , ոչ ուրիշ բանի համար՝ բայց միայն ազգասիրութենէ ներշնչեալ , որպէս զի տեղացիք գէթ հայերէն լեզուաւ թիւ պարագ լսեն և Հայ ըլլալին ճանչեն ու չը մօռնան :

Մեծանուն Ֆէրհատեան , ինքը բռն և հարազատ Հայ մ'է Ֆօքշանէն եկած , Հայաստանեայց եկեղեցւոյ անգամ , որոյ գերդաստանին յիշատութիւնն ըրինք Ֆօքշանի Հայոց վրայ խօսած ատենիս : Ուստի զարմանք պիտի պատճառէ թերես թէ՛ ինքն Հայ մը ըլլալով և վարդապետին ալ ծախքը իր քսակէն տալէն յետոյ , ինչո՞ւ Հայ եկեղեցական մը բերել չտալով Պատպական վարդապետ մը բերել տուած է հոգ :

Իսկ նա աւելի ազգասիրական եռանդեամբ վառեալ՝ քան թէ կրօնական տեսութեամբ գործած է . վասն զի նկատելով որ տեղացի Հայք հնուց ի վեր Պապականութեան սովորած ըլլալով , եթէ Հայ քահանայ մը բերել տոյ՝ Պապականները քովը չպիսի յաճախեն , ուստի ինքն ալ պապական վարդապետ մը բերել տուած է , որպէս զի չխորչին իրմէն տեղացի Հայք , որոցհետ ինքն ալ ի սէր ազգին ներկայ դանուելով եկեղեցին՝ թիւ պատարագ կը լսէ , որպէս զի ականչնին վարժուի և սովորի հայերէնի :

Այս անձին ազդասիրական ողին՝ նոյն իսկ Եւ ըսպայի ալ մէջ հաղուագիւտ բան է, ի նսկաստազդին ստակ չը խնայեր, ազդասիրութենէ դրդեալ բոլոր հմայաբնակ օսար քաղաքներն այցելութեան ելած է, դպրոցներնուն և աղքատաց մեծ նպաստներ տուած է, այսօրուան օրս ալ իւր ծախսքովը Հունդարերէնով Հայերէն քերականութիւն մը տպել տուած և բոլոր նոյն տեղի Հայոց ձըի բաժնած է, որպէս զի եթէ դպրոցներուն մէջ չեն դործածեր, գոնէ ամեն տուն մէկ մէկ համ գտնուի ի նշան Հայութեան։ Օտարական Հայ մը երբ այս քաղաքն երթայ, անհնար է որ այս անձը չը աեսնայ և իրմէ մեծ պատիւ և ընդունելութիւն չը գտնէ, նեղութեան մէջ գտնուող Հայ մը անհնար է իրմէն օգնութիւն չը աեսնէ, վերջապէս իւր կրօնասիրութիւնը, ազդասիրութիւնն ու մարդասիրութիւնը որչափ դոլուի՝ քիչ է, ափառն, որ եթէ իրեն նման քանի մը հսդի դեռ և ո գտնուէին՝ ազգն ի՞նչ պտուղներ և օդուտներ կը վայելէր. այնպէս որ Ֆերհատեան այժմ սոյն քաղաքի Հայոց պաշտպանը կը համարուի Նախախնամութենէն դրկուած, և եթէ Պրաշօվի մէջ Հայ ազդութիւնը դեռ որչափ ատեն կենդանի մեայ՝ ազգը այդ մասին գոյութիւնը՝ Ֆերհատեանի կը պարտի, որոյ փոխարեն կամ Ս. Պատրիարքին և կամ Վեհ. Կաթողիկոսին կողմանէ օրհնութեան և քաջալերութեան կոնդակի մը արժանի է այս անձն, ի վարձատրութիւն իւր ազգին մատուցած ծառայութեանցն և ըրած բարիքներուն։

Այսպիսի կոնդակի մը վրայ շատ հաւանական է թէ յիշեալ բարեսիրտ անձը, փոխանակ Հայու ստակով պապական վարդապետ մը կշացնելու (որ այս ալ ֆէճէ բնաւ տարբերութիւն մը չունի), Հայ վարդապետ կամ քահանայ մը բերել տայ :

ինչպէս ըստնք , տեղւոյս Հայք բնաւ հայերէն չեն դիտեր բաց ի Ֆէրհատ աղայէն և իւր զաւկներէն , որոց մեծ խնամով հայերէն սովորեցնել տուած է հայրերնին : Ս.յո Հայոց մէջ օտարազգիներաւ հետ խնամութիւն ընելու սովորութիւնն ընդհանրացած ըլլալով , մեծ վախ կայ որ եթէ 20 տարի ալ այսպէս անհոգ և մոռացման մէջ թողուին , այժմու դանուած Հայերն ալ պիտի կորսուին , ինչպէս կորսուեր են 50 տարուան մէջ 40-50 Հայ ընտանիք , մինակ այս քաղաքին մէջ :

---

### ՊԱՇՊԱԼՈՎ ԿԱՄ ՀԱՏ ԳԵՐՄ. ԷԼԻՉԱ.ՊԵԴՐՈՒ.Ա.Տ

Պուշչովէն մինչև այս քաղաքը երկաթուղիով 9 ժամ է , իսկ անկէ մինչև հոս երկաթուղւոյ անցած քաղաքներուն մէջ կը գտնուին 3-4-5 կամ 10 Հայ ընտանիք , առանց իրենց Հայ ըլլանին դիտնալու և առանց ու և է Հայ հովիւ և առաջնորդ մ'ունենալու , այնպէս որ դէթ 10 տարին անդամ մ'առնիք Հայ ճանբորդի մը երեսը չեն տեսած ու չեն հանդիպած : Ս.յա անծանօթ մնացող Հայոց բնակած քաղաքներն են Հօրթին , Ֆոլվարդ , Ա.պաղա , Ա.կասթօնլովո , Ա.լ-շօրաքօշ , Հօմօրթբէսք , Քաձա , Պէնէ , Երկէօթ , Հէյաշվալվա , Շակէշվառ , Տանուշ և Պաշպալով : Երկաթուղիով այս քաղաքին քառորդ ժամ մը մնացած՝ հեռուէն կը տեսնուի Հայոց եկեղեցւոյն քարձր դ մըէթը :

Ի՞նչ կ'զգայ մարդ և ի՞նչ տխուր ապաւորութիւն կ'ընէ Հայու մը վրայ , երբ ոս տեսնէ թէ՝ Անեցիք երենց երկրէն հազարաւոր փարսախ հեռի օապը երկրի մը մէջ միլիոններ վատնած են ասանկ եկեղեցիներ շինելու , կարծելով թէ այսու կարող պիտի ըլլան ի-

բենց մայրենի և հնաւանդ կրօնքնին պահել, չդիտանալով խեղճերը թէ՝ պապականութիւնը ոչ միայն իրենց մայրենի կրօնքէն, այլ և իրենց ազգութենէն ալ հեռացնելով զիրենք, փճացնելու և անհետացնելու ընթացք մը բռնած են :

Պարսիկներն և Թաթարք, որք անհաշտ թշնամի եղած էին Հայոց, պապականութեան չափ մնաս չեն տուած մեզի, ինչու որ եթէ անոնք հայոցմէ հարիւրին Յը միայն կարող եղան խլելու կրտկապաշտ ընել, Պապականութիւնը ամբողջ այդ գաղթականութիւնը մենէ խլեր և օտարացուցեր է, հակառակ և ի հեճուկս մեր նախնեաց թափած այնքան արեան Հայաստանի աւերակացը վրայ, որպէս զի հայութիւնը չը կորսուի և մի ու ամփոփ մնայ, Այս քաղաքաց Հայերուն հետ եթէ տեսնուիս այսօր՝ բնաւ հաւտառմիքդ չգար թէ ասոնք այնքան ու հայրենասէր Անեցւոց սերունդն եղած ըլլան :

Սոյն քաղաքն առաջ կպաշփոլվո կը կոչուէր, իւր մօտն այս անուն գիւղ մ'ունենալուն համար, բայց երբ Հայերն այս փոքր քաղաքը շինեցին, անունը փոխելով Պաշպալով դրին, և վերոյիշեալ գիւղն ալ այժմ այս քաղաքին շրջակայ արուարձաններէն մին կը համարուի, Քաղաքը՝ լայն ձորի մը մէջ շինուած է, որուն երկու կողմը՝ տափարակ մշակելի բլուներով շրջապատուած է, Թրնօվա դետին արևելեան կողմը, որոյ վրայ փայտաշէն բայց մեծ ու փառաւոր կամուրջ մը ձգուած է: Այդ արևելեան կողմը Հայոց երկիրն է, թագաւորական աղատ, փոքր և բարեչէն քաղաք մը, լայն և ուղղահայեաց փողոցներով, տուները քարտչէն միայարկ կամ երկու դստիկոնով, իսկ լայնարձակ և մեծ, ամեն տուն՝ քաղաքին շրջակայները իւրեն սետհական երկիր ունի: Քաղաքին տէրը Հայ է:

ինչպէս որ Հայերն շինած են զայդ և 470 տուն կը պարունակէ :

Ասկէ մէկ գար առաջ 2300ի շափ Հայ ժողովուրդ կար հոս , բայց օր ըստ օրէ ցրուելով , կամ օտար ազգաց հետ խնամութեամբ և կամ ուրիշ քաղաքներ փոխադրելով բնակութիւննին , այսօր հազիւ 400ի շափ Հայ կ'ելնէ , այն ալ միայն անուամբ Հայ , իսկ այն Հայոց մեծամեծ ու փառաւոր տուներն այսօր Մաճառներով ու Վըլահներով լեցուած է :

Ասի մինչև 1848ին շատ ազէկ վաճառաշահ քաղաք մ'էր , իսկ Հունգարացւոց 48ի յեղափոխութեան ատենը՝ շատերն ուրիշ տեղ գաղթելով , յեղափոխութենէն ետքն ալ առջի վաճառականութիւնը չ'է մնացեր , անոր համար քաղաքացիք կ'ըսեն թէ այսօր իրենց քաղաքն աւերակ է , ինչու որ Մաճառիստանի գրեթէ բոլոր Հայերն ալ վաճառական ըլլով , խիստ քիչ արհեստաւոր կը գտնուի , և այս մասին հնաց ի վեր ամեն ազդէ ալ առաջինն ու յառաջադէմն եղած են :

Յիրաւի ալ քաղաքին ընդարձակութեանը եթէ նայուի , անշուշտ պիտի կարծուի թէ ժողովուրդը ցըրուած է , վասն զի նա որ բոլորովին ուրիշ տեղ մը չէ գաղթած , ինքն այլուր գնալով ընտանիքը հս ձգած է , ճիշդ ինչպէս կ'ընեն այժմ մեր Անատոլոյի գաւառացիներն , ասոր համար շատ տուն էրիկ մարդ չ'կայ , այնպէս որ բոլոր քաղաքն մէջ հայազդի այր մարդոց թիւը հազիւ 40 կամ 50 հոգի կ'ելնէ :

Հայք և եկեղեցի ունին , ուր լատինական ծէսով կը կատարուի կրօնական արարողութիւններն . առաջինն է Ս. Երրորդութիւն , միջին մեծութեամբ , որոյ վրայ գրուած է՝ «Շինեցաւ այս եկեղեցին ու միայն հոտուրուցեալ ԼՈՒՍՈ.ԼՈՐՉՈ.ԿՈ.Ն ժողովութեալ» : Երկրորդը քաղաքին մեծ հրապարակին վրայ է Ս. Եղիսաբէթ անուամբ ,

ընդարձակ մեծ ու քարաշն եկեղեցի մը , որոյ ճա-  
կատը բարձր երկու զանդակատուն կայ , և տաճարին  
մէջ Աւագ Խորանին երկու կողմերը , մեր ազգային  
եկեղեցիներուն ձեռվը , չորսական մեծ ու փառաւոր  
խորաներ կան , երկու կողմը մէկ մէկ վերնատուն  
ունի , որոց մին ազնուական ընտանեաց յատկացեալ  
է (թէպէտ չ'կայ այժմ այն ազնուականութեան տիտ-  
ղոսը կրող Հայ ընտանիքներ) , միւսն ալ Հայկական  
թանգարան կամ գրատուն մ'է , ուր Անի քաղաքէն  
բերուած ու մագաղամի վրայ դրուած խիստ շատ  
զիրքեր կան եղեր ժամանակաւ , իսկ ժողովրդին ան-  
հոգութեամբը ասոնց մեծ մասը գողցուած , մէկ մա-  
սը իւրաքանչիւրն իրեն սեփհականած , մեայածն ալ  
Պէնէտիկցիներն առնելով իրենց վանքը տարած են ,  
այնպէս որ այսօրուան օրս հոս մեացած զիրքերն ան-  
նըշան բան մ'է , այն ալ վոշիներու տակ թազուած :

Սպան եկեղեցւոյ ճակատը արձաններով ու սիւ-  
ներով զարդարուած է , բարձր գմբէթ մ'ունի վրան  
սղնձապատ , տաճարին գրնէն մինչև Աւագ Խորանը  
եղած երկայնութիւնը 103 ոտք է , այնպէս որ սյս  
եկեղեցւոյն մեծութիւնն ու ընդարձակութիւնը՝ Պոլ-  
սոյ եկեղեցեաց քառապատիկն է :

Երրորդն է սուրա դէմը՝ հրապարակին արեելեան  
կողմը Մխիթարեանց շինած եկեղեցին՝ Պօղոս Պետ-  
րոս անուամբ , որ այս ալ միւսներէն նուազ փառա-  
ւոր չ'է , ոսկեզօծ սիւներով ու պատկերներով զար-  
դարուած , սա իրեն սեփհական վանք մ'ունի , ուր  
առաջներն Հայ տղայք հայերէն կուսանէին Մխի-  
թարեանց ջանիւքը , բայց ցաւալի է որ վերջէն ասոնք  
ալ Վիէննացոց ընթացքը բռնելով , հայերէն լեզուի  
ուսումը բարձի թողի ըրին : Արդէն Հայերն , Վիէն-  
նայի միաբանութեան նայելով , Վիէնետիկցոց վրայ

փոքրի ի շատէ համարում մ'ունին աղղոյին լեզուի  
մշակութեան մասին . ուստի ոչ նուազ ցաւ կ'աղդէ ,  
երբ հակառակ Միսիթար Աքբայի ուխտին՝ կը տես-  
նուի որ յիշեալ միաբանութիւնն ալ անհոգ կը գլո-  
նուի , իրեն յանձնուած Հայ ժողովրդին մէջ հայերէն  
լեզուն տարածելու . Այդ ժողովուրդը բրած է թէ՝  
եկեղեցւոյ և թէ վանքին ծախքը , և եկամուտներ  
յատկացուցած է , որ Հայ մանկտիք հայերէն ուսա-  
նին Միաբանութեան ջանիւքը , մինչդեռ Միսիթար-  
եանք այսօր յիշեալ վանքը՝ միաբանութեան հաշւոյն  
համար օտարին վարձու տուած ըլլալով , անշուշտ ի-  
րենց աւելի շահ մը բերելու նպատակաւ , Հայ տղայ-  
քը քաղաքին գպլոյցը կը յաճախին , ուր խտոն ամեն  
օտար աղդէ ալ ուսանողներ կը դժնուին , ասոնց հետ  
ուսմանց ընթացքն ունենալով , և ալ թոշակ վճարե-  
լով , մինչդեռ օտարք բան մ'ալ չեն վճարեր :

Հայ տղայք շարաթը երկու օր , մէյ մէկ ժամ՝  
գտաս կ'առնեն Վէնէտիկի միաբանութեան անդամ Հ.  
Նիկողայոս Ջիշեանէն , որ տեղացի է , սակայն շատ  
ցաւալի բան , ուսուցանողն ալ ուսանողք ալ , այնպէս  
որ այսօր քաղաքին մէջ չկայ Հայ երիտասարդ մը ,  
չկայ օրիորդ մը որ հայերէն բառ մը դիմնայ , մին-  
չե իսկ բառն անդամ ըսելու լեզունին չը դառ-  
նար , ուսանող տղայք ալ սակաւին և միշտ հայերէն  
քերականէն անդին չեն անցած , և եթէ այսպէս եր-  
թայ՝ անցնելիք ալ չունին :

Չեմ գիտեր թէ ասի Վէնէտիկցոց պատիւ կը  
բերէ՞ արդեօք , եթէ այսպէս շարունակուի՝ շատ հա-  
ւանական է թէ ասկէ 20 տարի ետքը՝ այս քաղաքն  
ալ հայերէն բառ մը գիտցող չը պիտի մնայ , և հոս  
ալ ուրիշ քաղաքաց մէջ եղածին պէս՝ Հայերն պիտի  
անհետանան , և այն ատեն Վէնէտիկցիք չը պիտի ա-

Քաջեն իրենց տղած Հայոց պատմութեանը մէջէն և Մահառիստանի Հայ գաղթականք բառերն իրենց դրչով սրբելու : Իրենք զիրենք աղղատէր կեղծելնուն ու այնպէս ցոյց տալ ուղելիուն հակառակ , Պաշպալօվի մէջ ոյսօր ընդամենը 20 ծեր չելնէր հայերէն դիտցող , ասսնք ալ հաղիւ դեռ 40 տարուան կեանք մը ունին , այնուհետեւ Հայ ճամբորդը թող երթայ եկեղեցւոյ յիշատակարաներն կամ լոկ գերեզմանատանց տաղանաքարերը կարդալով , Հայոց կորսաեանը վրայ ողբայ և արտասաք թափէ :

Զօրբորդ եկեղեցին է Յալհաննու Մկրտիչ անուամբ , զոր Թիւրքեանց ցեղէ Հայ իշխան մը շինածէ , անունն ալ եկեղեցւոյ ճակատը գրուած կը կենայ . Նաև լեբան գաղաժն ալ հայկական մատուռ մը շինուած է , ուր Աւագ շաբթուն իբր Գողգոթայի լեռը , բոլոր Հայք քահանայներով թափորի կ'ելնէն հօն , սրայ դրսի դին մեծ Խաչելութիւն մը կայ վրան Քըրիստոս խաչեալ :

Հոս նաև ուրիշ երկու փայտաշէն եկեղեցի ալ կայ , մին Մաճառաց միւսն ալ Ալահաց : Հայք և քահանայ ունին , Անտոն Մարթօն՝ որ ժողովրդապետ է , Յակոբ Մաքքովիչ , Դուկաս Աւետիք և Հ. Նիկոլայոս Զիշեան : Հայոց նախնիքը՝ քաղաքին տաղեկան 60,000 ֆիօրինի չափ եկամուտ մը թողած են թէ քահանայից , թէ եկեղեցեաց և թէ աղքատաց պէտքը հոգալու համար , բայց ինչպէս ըսկնք՝ քաղաքին մէջ օտարազգիք շատնախուն համար՝ ոյդ եկամուտն աննք վայելելու վրայ են այսօր , ինչպէս այս տարի տէրութիւնը քաղաքին բերդին նորոգմանը համար , յիշեալ եկամուտէն 20,000 ֆիօրին առաւ , որպէս թէ այդ հասոյթը քաղաքին պահպանութեանը կամ հասարակաց շինութեանը համար յատկացած ըլլար :

Պաշտպանութեան մէջ տեսնուած յաշ  
ռալի մէկ պարագայն ալ այն է , որ ժողովաւրդը բնաւ  
միջամտութեան և համարառութեան իրաւունք և ձայն  
չունի ազգային կալուածոց , սեպհականութեանց և  
ընդից մատակարարութեանն ու հասութից և ծախուց  
գործածութեանը մասին , որն որ բոլորովին կղերին  
ձեռքն անցած է , որ ուղածին պէս կը վարուի , ինչ  
պէս վերն յիշեցինք թէ՝ քաղաքին Հայ մանկուոյն  
հայերէնի ուսմանն համար հաստատուած վանքն ու  
վարժարանը օտարազգիներու վարձու տուած , կը թո-  
ղէին որ Հայ տղայք օտարազգի տղայոց հետ խառն  
քաղաքային հասարակաց վարժարանը յաճախեն :

Նմանապէս ասկէ 2 տարւոյ չափ յառաջ , սոյն  
քաղաքէն Մելիք անուն հարուստ և բարեպաշտ հա-  
յազդի մը վախճանելով Վիշնայի մէջ , 80,000 ֆի-  
որին արժողութեամբ իր սեպհական մէկ տունը քա-  
ղաքին Հայոցը կտակ կը թողու , գորա եկամուտը  
յօդուտ ազգին գործածելու , այդ ստակին ալ որո՞ւն  
ձեռքն անցած է և ուր է , մարդ չկիտէ :

Սոյն քաղաքը հասարակաց պարտէղ մ'ունի , ուր  
տեղացիք ամեն կիրակի իրրե մէկ ընտանիք հաւաք-  
ուելով կը օսմոնուն ու կը պարեն :

Հայերն Մաճառաց տէրութեան զօրք կ' տան , այս  
հայազդի զինուորականաց մէջ մեծ ու նշանաւոր մար-  
դիկ ելած են և դեռ կան , իսկ ցաւալի է որ այս  
քաջ ու արի Հայերն ալ իրրե Մաճառ կը յիշուին ու  
կը ճանցուին օտարներէն :

Այս քաղաքին մէջ սովորութիւն մը կայ , որ ժո-  
ղովուրդը իր ուտելիք պարէնը շաբաթ մը բաւելու  
չոփ մէկտեղ կ' տանէ շաբաթ օրերը , որ հաշտ կ' ըլլայ ,  
և նպարն ու այլ պէտք եղած սիւթերն շրջակայ Վա-  
լաք զիւղացիք կը բերեն հոն ու կը ծախսեն , շաբթու

մէջ ուրիշ օր ուտելիք դանելն զրեթէ անկարելի է :  
 Սոյն քաղքին Հայ ժողովուրդը , որն որ Հունակարիոյ ուրիշ քաղաքաց Հայ բնակչացը նայելով , առելի հայութեան մէջ կրթուածը պիտի ըլլայ , մեծ մասամբ և կարելի է ըսել թէ ամենքն ալ , այն աստիճան տգէտ ու անտեղեակ են ամեն կողմանէ , որք կը կարծեն թէ ժամանակաւ Հայոց այն մեծ ազգին միացորդները՝ միմիայն Մաճառիստանի մէջ դանուող Հայոց այդ փոքր մասն է . այնքան Հայու վրայ խօսք չ'են լսած , Հայ պապական վարդապետ և ուսուցիչներ ալ ունենալուն հակառակ , որ բնաւ հաւատալնին չիգար՝ երբ ըսես իրենց թէ այսօր աշխարհիս երեսը 4-5 միլեոնէ բազկացեալ Հայոց ազգ մը կայ : Մինակ հայասիրութիւնը՝ փոքր ինչ տեղւոյս ծերերուն սրտին մէջ դեռ կենդանի մնացած է , որոնք շարունակ կ'ըսեն թէ՝ «Աւա՛զ» , որ մենք ենք հայ լեզուն պահողը , բայց երբ մենք մեռնինք՝ հայերէնն ալ հոս մեղի հետ պիտի մեռնի և մոռցուի յաւէտ» , ուստի և կ'ազաշեն ու ջերմ փափաքներ կը յայտնեն , որ օտար երկիր գանուող Հայերն այս բանին դարման մը տանին և առաջքն առնուն :

Այս տեղի Հայ երիտասարդութիւնը իր ազգին վրայ բնաւ գաղափար և զգացում չ'ունի , չնորհիւ պապական կղերէն ստացած կրթութեանն ու դաստիարակութեանը , և իրենց այս փոքրամանութեանն ալ նայելով կ'ամաչեն «Հայ ենք» ըսելու : Խնչղէս որ ըսինք ասկէ առաջ , այս քաղաքին մէջ Հայոցմէ երիկ մարդ շատ չ'ըլլալուն պատճառաւ , պանդխտութեան երեսէն՝ Հայ օրիորդք որ ազգէ որ եւզուին՝ կ'երթան , տսով օտարաց հետ Հայոց խնամութիւնն այն աստիճան յաճախի է՝ որ ասանկով թերես օր մ'ալ բոլորովին պիտի հանին ու սպառին :

Ս.յո քաղաքը Աստուածատուր Նուրինան անուն  
ծեր մը կար, որ քաղաքին 55 տարի ծառայութիւն ըրած-  
է, և քիչ շատ աղդաբէր էր, յիբաւի օտար երկրի Հա-  
յոց վրայ սյնչափ տեղեկութիւն չունէր, բայց իր նա-  
խնեցմէ մեացած քանի մը կտոր հայերէն գրքերն իր  
աղդասիրութիւնը վառ պահած էին, և միայն սորա  
որդիքը քանի մը բառ հայերէն գիտեն ու կը հաս-  
կընան, հայերենին տանը մէջ միշտ հայերէն խօսիլսո-  
վորութիւն ըրած ըլլալուն համար:

Սա այս տարի մեռաւ, և որոյ վերջին մէկ նա-  
մակը ստացած էի ի Վիէննա, իմ այս քաղաքը ըրած-  
այցելութենէս երկու ամիս ետքը, որով կ'աղաչէր թա-  
խանձանօք ըսելով թէ քաղաքիս խեղճ վիճակը, զոր  
տեսար, պատմէ՛ քու երկրիդ Պատրիարքին որ դար-  
ման մը տանի, վասնզի այլեւս եռ ալ անկողին ինկայ,  
և ցաւօք պիտի բաժնուիմ աշխարհէս, քաղաքացոց  
այս դառն վիճակը տեսնելով:

Պաշպալօվի Հայոց մէջ նշանաւոր ընտանիք և գեր-  
դաստաններ կազմով անձանց գլխաւորներն են այժմ՝  
Զաքարիաշ, Քօրաչնի, Զիքի Լաքար, Եադօք Սէմ-  
բէթէրի, Քօլօման Քօսսա, Ֆօղէվ Նուրինան, Տօդ-  
թօր Բաթրուպան, Սօբօննօշ Միքլօշ և այլն:

Տեղոյս Հայերը առ հասարակ փոքր ինչ թխո-  
դէմ (էսմէր) են, յայսնի չէ թէ երկրին կլիմայէն  
է, թէ իրենց վաղեմի Անեցոց սերնդական կամ ժա-  
ռանդական գոյնն է :

Եկեղեցեաց մէջ պատարագը ճիշդ լատինական  
ծէսով կը կատարեն ու երգեհանով, ինչպէս վերն  
ըսինք, օրը 3 անդամ ժամերգութիւն կ'ըլլայ, քա-  
հանայք վերջին աստիճանի տղէտ են բաց ի Վէնէ-  
տիկի միաբան Հ. Նիկողայոս Զիքիեանէն : Խոկ ժողո-  
վուրդը աղդասիրութենէ աւելի բարեպաշտութեան

մէջ անդիի ծայր կըթուած է, այնպէս որ աղջութեան անունը 7 տարի բերան չառնէ՝ հոդ չէ, բայց պէտք է որ ամեն օր եկեղեցի երթայ և իրօք ալ կերթան, Սաոյզն ըսելու համար ասոնցմէ շատերը՝ գաղափար չունին թէ Պապականութիւնն ու Լուսաւորչականութիւնը տարբեր են իրարմէ, այլ անանկ դիտեն թէ Պապականութիւնն է Հայուն բուն և հնազանդ կրօնքը: Աըսեն թէ «Ամենքս ալ Լուսաւորչի զաւակ ենք, և թէ Հայաստանի մէջ ի՞նչ կրօնք որ կը պաշտէինք՝ հոս ալ նոյնն ենք», չեն դիտեր խեղճերը թէ ի՞նչ էին և թէ ի՞նչ եղած են այժմ, բայց Լուսաւորիչն ալ անդիի ծայր կը սիրեն և կարելի է ըսել թէ մինչև Քրիստոսի չափ կը պաշտեն ու կը յարգեն:

Մաճառիսթան գաղթող Հայոց խօսած հայերէն լեզուին մէջ, որչափ ինչ որ կրնան խօսիլ, ընդհանրապէս խառնուած կը դանուին մաճառերէն, վլահերէն, գերմաներէն, լատիներէն և թաթարերէն բառեր, ճիշդ ինչողէս որ մեր Թուրքիոյ Հայոց ասկէ կէս դար առաջ խօսած լեզուին մէջ կը դանուէին անխըտեր տաճկերէն բառեր, որոցմէ այս օրուան օրն մաքրուած է մեր ոսլորական զրական լեզուն, և միայն ստորին կարդի ռամիկ և անուս ժողովրդեանը մէջ հազիւ կը դանուին:

Մաճառիսթանի Հայ գաղթականութիւնը՝ իր այդ դործածած խառն բառերուն մէջէն՝ կայ որ Հայաստաննէն իր հետ բերած է, մասնաւորապէս թաթարերէնը, և կայ որ տեղացի կամ հազրրդակցութիւն ունեցած ժողովրդոց բարբառէն փոխ առած է, այնպէս որ օտարական Հայ մը 2-3 ամիս մեծ դժուարութիւն կը քաշէ, մինչև որ վորքը ինչ վարժուի ու հասկնայ այս կողմերու Հայոց խօսած հայերէն լեզուն:

Այս ժողովրդոց մէջ հայերէն գիր գրել դիտցող

գլութէ բնաւ չկայ, և եթէ հայերէն բան մը դրել  
պէտք ունենան, իրենց հայերէն գրուածները մաճա-  
ռի տառերով կը գրեն, դիբն մաճառերէն և խօս-  
քը հայերէն :

Հունգարիոյ քաղաքաց մէջ դլսաւորաբար ելի-  
զապէգշմատն ըլլալով, ուր քիչ մը հայերէն լեզուն  
կը խօսուի, և այն ալ ժողովրդին տարեսը և ծերունի  
մասին մէջ, ինչու որ նորահաս երիտասարդութիւնը  
զայդ ալ չունի դժբաղդաբար : Թէպէտ Վէնէտիկիի  
միաբանութենէն ալ շարդապետ կայ Հ. Զիջիեանն  
որ հայկաբանութեան (կամ աւելի ճիշգն ըսելու հա-  
մար՝ հայ այբբենարանի) դասատու է, և Հ. Պուկաս,  
ուստի և հետաքրքրութեան համար, և իրը օրինակ  
Մաճառիսթանի մէջ խօսուած հայերէն լեզուին մէկ  
քանի բառերը մեր ընթերցողաց կը ներկայացնենք,  
նշանակութիւննին ալ միատեղ դնելով, ինչպէս են  
աղաչա առա կամ պարունակ, պիքա հն, բաննա օքերու, բո-  
հէ սպառ, ուտելի հաճած, նմա ննի, շաղաշիլ ճոածեւ բաղդ-  
երի, լմանն է ժիշտ է, մէկ վազը մաս օք, հիմպիկ այժմ,  
պինդէ ասանէ է, զօր ազիէկ շատ առէն : կութիլի հաճոյ  
կամ պեսուոր է, կիսէ հըս, սրտոտել երես ռաբնել, պիսի-  
րէի կուզէ, հինտիկուց հինտան այսօրուան օք, խօսեցը-  
նել կուրաւ հեծել արէ, քաղուիլ ժողովուիլ ճուռում հա-  
պարացաւ, հըրց սոքէն, դուիլի քոհուուէ, ցենել հըտակել, գա-  
թա ամենեն, տարը բայց զարադ հէմու, պէռնա ընծայ և այլն :

Ասն նաև հետևեալ բառերը :

Թաթարերէնէն՝ խօճա հորոսոր, տէսթուր բառական  
է կամ կ'օ, բէշաքար արնեսուսոր, սօյ պեսու, օզիա սո-  
ւէլ կամ օրու, պաղչա պարուն, խըյար կորսուն և այլն :

Հունգարերէնէ՝ քիչիթ մը +իւ հը, կրինտան յեղուն,  
պոլթ ճառարա կամ վահուարուն, անալս սոքնօտ և այլն :

Ալահերէնէ՝ ոլովոտ ներել, պարաս հէմոյ, տարպա

ինչպէս, ոչ օ բա ոչինչ, ոեւով կոխորէն, աղպար քառու և այլն:

Ասմաց խօսած հայերէն լեզուին ամբողջին վրայ դաշտափար մը տալու նպատակաւ, հոս կը գնեմք վերջերը ինծի ուղղեալ նամակի մը օրինակը, որն որ կելիզապէթշդատէն գրուած է մաճառերէն զրով, և լեզուն հետեւեալ հայերէնն է, ինչպէս պիտի տեսնուի չհասկցուած բառերուն նշանակութիւնն ալ մեր կողմանէ փակագծիւ յաւելցնելով:

Աղաջա Արշակ Ա. լ՛ժանեան:

Թողութիւն պ'անիս ինչպէս հայնակ չի պիտի՞ զիանալ զրելու (այսինքն՝ հայերէն զրել չի դիտնաւլու համար ներողամիտ պիտի գտնուիս), ասպէս մաճառ զիր մեր երկերը սորվեցինք, զօր խօմաթ պի համըրիմ (բախտաւոր եմ) մէկ քանի բան զրելու, ու թէ հոս գալ իմացիլ իմ օգկանուն (որիներէն) թուղթ զրիլիս նա պիտի խնդրվէի . . . և ոյլն:


Չիս մոռնաս, շտա ոյ առըափրի մէջ կիլանք (կըլ-լանք) մինք երկուսս մէկ (իրարու խօսք) հասկինալու ես կի հասկինամ ու զիտիմ թէ վը՞ր (՞ր) երկերը ինչ կի նայվի (կանցնի) ու ինչի մէջ կի լանք բարա վասդիկելու (ստակ շահելու ՞ր միջոցին մէջ աջազոկ ենք):

Հըրմընքըդ հիմպի զիտիս մեր երկերը, մինք զօր սիրիլ ինք զէլըըմընքդ, տարը (բայց) չինք բոհել (սպասել), վըր հըրմօնցը գժուազութիւն անինք հոս դալու . մինք կի կամենանք վըր մեզի շատ լաւիմֆօրմացիօններ (տեղեկութիւն) տաս Կաստանդնուպալսի Հայոց վիրա թէ ի՞նչ հիվոգօլներու (պաշտօն) մէջ կի ծառային օամանցոց Գուռը, և թէ ինչի մէջ լսու ին . . . և ա լի:

Այսքան օրինակ մը բառ է Հունգարիոյ Հայոց խօսած ու զրած լեզուն հասկնալու, որ թէ ոլէտ խեղճ

քան է, սակայն երանի՛ թէ այսքան ըլլար դիտցած -  
նին ու այս չափն ալ մնար :

Ով գիտէ 20 տարի ետքը՝ զէթ այսքան հայերէն  
մ'իսկ պիտի կընա՞յ լսուիլ հոգ :



## ԱԵՌԱԾՈՒ ԿՈՄ ՀԱՏ ԳԵՐՄ ԱԱՄՈՒՇՈՒՅԻ ԱԲ

### ՀԱՏ ԼԱՏ ԱՐՄԵՆՈԲՈԼԻ Ե

Ելիզապէթշղատէն մինչև այս հայաբաղաքը եր-  
կաթուղիով 10 ժամ կը տեէ, իսկ այս երկուքին մէջ  
տեղը գտնուած դիւղերն ու քաղաքներն ալ ցրուած  
Հայ ընտանիքներ կան առանց հովուի և հոգաբար-  
ձուի : Այս գիւղերն ու քաղաքներն են, Էջեր, Միգ-  
եաշ, Տիշքարուշ, Միքսս, Տէվօ, Պօլտշֆոլվօ, Նո-  
տիննէդ, Ֆելլից, Մօրօչոյիվար, Քօշտոթ, Կիրաշ,  
Վիրակուշիէ, Քօլօշքարտ, Օքօյիտո և այլն : Այս վեր-  
ջին գիւղին մէջն է երկոթուղոյ կայարանը, որի որ  
կեռլայէն 4 ժամու չափ հեռի է, և տրկէ կառքով  
կերթան քաղաքը :

Կայարանէն մինչև Աէոլա զնալիք ճանքուն վրայ  
երկու կողմը անթիւ անհամար խաչելութեան նշան-  
ներ կան, բնական մեծութեամբ Քրիստոս ալ վրա-  
նին քեեռեալ, կամ Աստուածամօր արձանները զՅի-  
սուս գիրին առած կեցած, և կամ Լուսաւորիչը որ  
զՏրդատ կը մկրտէ . բոլոր ասմնք կամ քարի և կամ  
փայտի վրայ քանդակուած, այնպէս որ ճամբորդի  
մը կը թուի թէ աւելի Երուսաղեմայ տաճարին կը  
մօտենայ՝ քան թէ եւրոպական քաղաքի մը ճամբուն  
վրայ կը գտնուի :

Ասոնք տեսնողը բնական զտրմամբն ու զգացու-  
մովն հանգերձ, նաև ճիշգ գաղափարը մը կընայ ու .

նենալ տեղւոյն Հայոց ինչքան կրօնասէք և բարեպաշտ ըլլանուն վրայ , ինչու որ կայարանէն մինչեւ քաղաքը 25-30ի չափ կայ այդ քանդակներէն , որոց առջևէն անցնող ու և է քրիստոնեայ ճանբորդ մը անհնար է որ երկիւղածութեամբ զգածեալ , դլուխը բանալով մէկ երկու ազօթք չ'արտպահէ :

Կայարանէն մինչեւ քաղաքը երթալու համար 36 հատ մեծ ու փոքր կամուրջներէ անցնելու է , ասկէ կը հասկցուի թէ որքան ջրոտ երկիր մ'է սա : Այս քաղաքը 1703ին շինած են Հայերն Շօմուշ գետին քովը . բարեբեր անտառներով լեցուն գեղեցիկ և ընդարձակ գաշտի մը վրայ , Հայերն 1744 թուականին մեծամեծ արտօնութիւններ ստացեր են տէրութենէն , որոց արքունի բնազրէն համառօտիւ օրինակուած մէկ քանի պատճէնները կայ քովերնիս :

Ասկէ 60 տարւոյ չափ յառաջ 6,000 Հայ բնակիչ կը հաշունն , իսկ այսօր հազիւ թէ 2,000 հոգի կ'ենէ . 2,000էն աւելի Հայոց սեպհականութիւնն եղող տուն կայ , բայց ասանց ալ մեծ մասը՝ Պաշպալօվի պէս սկսած է օտարազդիններով լեցուիլ Հայոց հետզհետէ պակսելովը : Մինչեւ 1848 , Հունդարիոյ յեղափոխութեան ատեն՝ օտար մը եթէ հոս գար , չէր կրնար բնակութիւն հաստատել , վասնզի քաղաքացիութեան իրաւունք չէր արուեր իրեն . իսկ յեղափոխութենէն յետոյ օտարաց ալ սկսաւ արուիլ այդ քաղաքացիութեան իրաւունքը , որով օտարք օր ըստ օրէ լեցուելու վրայ են քաղաքին մէջ , այնպէս որ այսօր Հայոց տեղ 6,000 բնակչաց կէսէն աւելին օտար ազգի է :

Հայք առհասարակ աւելի վաճառական են քան թէ երկրագործ . իսկ իրենց տանը պէտք եղածին չափ բան կը ցանեն : Քաղաքն այնքան ընդարձակ ելու

կիր չունի իր շրջակայքը . ամեն տուն հաղիւ մէկ կամ երկու շափ (շափը 5000 քառակուսի կանգունէ) աեղ ունի : Հայոց մէջ արհեստաւոր գրեթէ չկայ , ինչու որ ինչպէս ըսինք՝ առհասարակ ամենքն ալ վաճառական են . իսկ Հայոցմէ աղնուականութեան աիտ զոսով մեծատուն և երեւլի գերդաստաններ կը գըտնուին այս քաղաքը :

Քաղաքին օդն առողջէ իսկ ջուրը լեղի , քաղաքին շէնքն ու ձեւ խիստ վայելուչէ , լոյն և ուղղահայեաց փողոցներով , տուները քարուկիր , մէկ կամ երկու դստիկմով , իսկ խւրաքանչիւրը նէն մինչև 43 սենեակ ունի : Տուներուն մէջը կազով կը լուսաւորի , գիշերային պահնորդներ կան ստիկաններէ զատ , նաև խիստ սքանչելի հասարակաց պարտէղ մ'ունի , որոյ նմանը ամբողջ Հունգարիոյ մէջ չը գտնուիր :

Պարտիզին մէջ գեղեցիկ ամարնային թատրոն մը կայ , ծառի ոսաերէ և կանանցեղէններէ շինուած , բայց այնքան ճիշդ և ճարտարաւթեամբ յարմարցուած է թատերատրահը , որ եթէ փայտաշէն ալ եղած ըլլար , ճարտարապետը անկէ աւելի գեղեցիկ և վայելուչը չպիտի կընար շինել :

Ասկից զատ ունին նաև Աղքատանոց , Պլիւպի և Պարահանդէսի սրահներ , վերջապէս ամեն բան , ինչ որ ասանկ քաղաքի մը կատարելութիւնը կը պահանջէ :

Քաղաքը մեծ հրապարակ մ'ունի , որուն բուն մէջ տեղը աէրութեան պաշտօնարանը և դատարանը կը գտնուի : Այս հրապարակը շաբաթը երկու անգամ բառայ , ուր Ալահ և Յանառ զիւղացիք ուտելիք և նպար կը բերեն քաղաքայւոց : Քաղաքին մօտը մեծ բերդ մը կայ , ուր կը բանտարկուին Թրանսիլվանիոյ յանցաւորներն , որք օ տարիէն մինչև ցման

բերդարդելութեան վճիռ ընդունած են : Այս ելաֆ պահուստ մէջը 1,100 բանտարկեալ կար , բայց շատ ուրախացայ երբ իմացայ թէ ասոնց մէջ մէկ հատ չայ չկայ\* :

Վաճառքառաններն յիշեալ մեծ հրապարակին վրայ են , որոց առուտաւը ընդհանրապէս դիւզացւոց հետ է :

Հայերն երեք եկեղեցի ունին , առաջինը՝ որ հրապարակին վրայ կառաւցուած է . խիստ մեծ է և ընդարձակ Ա. Երրորդութիւն անուամբ :

Արտաքին բակին մէջ , որ հրապարակին գէմը

\* Այս բերդին յանցաւորներն , Տաճկաստանի բանտարկելոց պէս ծրի չեն ուտեր , և բանտին մէջ անլուր խայտառակութեամբ չեն անցներ ժամանակին , այլ այս բանտարգելոց մէջ , գերձակութիւն , հիւսնութիւն , երկաթագործութիւն , վերջապէս ամեն տեսակ արհեստներ կան , որոնք բարի գիւղացւոց պէս ամենայն բարեկարգութեամբ առաւօտէն մինչև երեկոյ կ'աշխատին , և այս աշխատութեանց արդիւնքն իրենք ալ կը կերակրին , երես կոյին ամենքը մէկանց մէկ սեղանի վրայ ճաշելով : Այս յանցաւորներն իրենց աշխատութեանն իրը վարձք՝ օրական ալ առնելու իրաւունք կունենան , այնպէս որ իրաքանչիւրին աշխատած և հասուցած գործոյն համար օրական վարձքը նշանակուելով ու հաշիւ ըլլուրով , դատապարտութեանը պայմանաժամը լրացած պահուն , բանտէն ելած օրը իր ամբազջ վարձքը կառնէ և այնպէս կըմեկնի , որով և այդ գումարն իրեն դրամազլուխ մը կըլլոյ՝ բանտին մէջ սովորած արհեստը բանելով անկէ առլրելու :

Ասով մէկ քանի բարիք միանդամացն գործուած կըլլոյ , նախ որ բանտարկելոց մնունդը Պետութեան գանձուն վրայ աւելսրդ և պարապ բեռ մը չըլլար , երկրորդ՝ յանցաւորը պարապ չ'կենալէն գատ՝ արուեստ մ'ու ուսած կըլլայ բանտին մէջ , երրորդ՝ որպէսզի ատկէ ազատելէն վերջը , փոխանակ աւելի վատթար , որիկայ ու չարագործ մը ըլլալու՝ Տաճկաստանի բանտարգելոց պէս , ընդհանրապահին պարկեցաւ կրթեալ քաղաքացին մը դառնալովի իր արհեստովն կապրի , և ուրիշն վեսա հացնելու չ'առաջ նորդուիր :

կլիյնայ, երկուտասան Առաքելոց արձանները կան, որոյ տակն է թաղուած քաղաք և եկեղեցին շինող բարերար լաց, աղնուականաց և գ-քսերուն գերեզմանները: Գ-մբէթին վարի կողմն ալ Ա. Լուսաւորչի և Ա. Սահակ Պարթևի արձանները կեցած են: Երկու հատ բարձր զանգակատուն ունի, որուն մէջտեղն ալ բարձր աշտարակ մը, որոյ ճակատը գտնուած խոշոր ժամացոյցին ձայնը բոլոր քաղաքին մէջ կը լսուի: Առագ խորանը շատ բարձր է, երկու կողմերը չորսական հատ մեծ պատկերներով: Առագ խորանին աջ կողմը պատկեր մը կայ, որն օր Ա. Լուսաւորչի զԾրդատ մկրտելը կը ներկայացնէ: Խորաններն խիստ զարդարուած են: Տաճարին երկու կողմը մէկ մէկ մատուռներ և պահարաններ կան, որոց մեծութեանը նայելով կատարեալ եկեղեցի կրնան ըսուիլ ուր և ոսկեպատ հրաշալի պատկերներ կը գտնուին:

Պահարաններուն վրայ վերհասուններն են, որոց մէկ կողմինը տղնուական ընտանեաց յատուկ է, որն որ այժմ գոց է, միւս կողմինն ալ թանգարան է, ուր գաղթականք Անիէն հետերնին բազմաթիւ դիրք բերած ըլլալով, հոս ալ Պաշտաջօվի պէս կորսուած ու ցրուած է, մէկ քանին Վիէննացիք, մէկ քանին ալ Վէնէտիկցիք առնելով, այնպէս որ յիշեալ թանգարանին մէջ այսօր ընդ ամենը 200 կտոր ձեռադիր մատեան կայ, ամենքն ալ կրօնական նիւթոց վերաբերեալ: Առողմէ զատ կայ նաև ձեռադիր պատմութիւն մը՝ որ Անեցւոց Լեհաստան գաղթելուն մանրամասն նկարագրութիւնը կընէ, ասի քահանայի մը քով է: Կայ նաև մազաղաթի վրայ զըրուած Յայտմաւուրք մը արծաթապատ, վրան ալ ԱՆԻ գրուած, որն որ միւս զըրեանց հետ փոշիներու տակ թաղուած է, և բնաւ հոգ տանով չկայ այդ հնութիւններն պահելու:

Աւագ խորանին ճակատը դեղեցի կոսկեզօծ պատրշ-  
գամով վերնատուն մ'ունի , ըստ լատինական ձևոյ , ուր  
երդեհոնը դրուած է և գպիրք կ'երգեն : Եկեղեցւոյ  
ներքեւը պարապ և տեսակ մը դանբանարան եղած է ,  
ուր ազգին բարերարներուն , երեւելիներուն ու աղ-  
նուականներուն և քահանայից դերեզմանները կան ,  
ինչպէս նաև այժմ եկեղեցւոյ 200 ֆիորին նուէր տը-  
ւող քաղաքացիք ալ կը թաղուին :

Տաճարին բարձրութիւնը 74 կանգուն է մինչև  
դմբէթը , և լայնութիւնը 42 , իսկ դրնէն մինչև Աւագ խորանը եղած երկայնութիւնն է 145 կանգուն\* : Առա-  
եանին երկու կողմերն ալ 37ական մեծ նստարան կայ  
շարուած , այնպէս որ իտալական ճաշակաւ շինուած  
զարդարուն և փառաւոր մայր եկեղեցիէ մը բնաւ ջ  
տարբերիր :

Երկրորդ եկեղեցին է յանուն Աննայի կառուց-  
եալ , որ քաղաքին արևմտեան կողմը կ'իյնայ : Այս  
եկեղեցին շնորհ են պայազիտ և աղնուական ընտա-  
տանիքէ երկու եղբարք , Սողոմոն և Ասատուր Շի-  
մայեանց անուն , կտակ ընելով միանգամայն որ իրենց  
մահուանէն ետքը՝ եկեղեցին իր եկամուտներովը մի-  
ատեղ Աէնէտիկցոց յանձնուի , որպէսզի վանք շնե-  
լով միմիայն չայ տղայոց հայերէն ուսուցուի : Իսկ  
առանց մահուընէն յետոյ՝ քաղաքացիք դժկամակելով  
կը մերժեն եկեղեցին յանձնել Աէնէտիկցոց , որոնք  
տեղոյն դատարանը բողոք բառնալով դատ կը քա-  
նան քաղաքացւոց դէմ , բայց դարձեալ չ'են յաջողիք

\*Յերես շատեր չ'այսի ուզեն հաւատալ այս երկայնութեա-  
նը , բայց նոյն իսկ ևս ալ հիմնալով ոտքովս չափեր ու դաեր հմ  
թէ 145 կանգուն է : Անեցւոց ձեռօքը շինուած այն եկեղեցւոյն  
այս մեծութիւնը տեսնողը կամ լսողը պէտք չ'է սակայն զար-  
մանաց Անեցւոց եկեղեցափափութեանը վրայ , եթէ յիշէ անգամ  
մը թէ՝ Անիի կործանումէն առաջ 1001 եկեղեցի կը գտնուէր :

Եկեղեցին դրաւելու : Այդ Եկեղեցին այժմ զայդ շինող բարերարաց ազգականացը հսկողութեանը տակն է , որք դորա մատակարարութիւնը կը հոդան , և շաքաթը երկու անդամ քացուելով թիւ պատարագ կըլլայ :

Ահաւասիկ յիշեալ Եկեղեցին պահանջելու համար Վէնէտիկոց մատուցած բողոքը :

1780 Ինչդացիակ տված , Սողոմոնին առած ժաման համար

Յարգութեամբ յայտնելով մեծազոյն խնդիրքն առաջ ի Հայաքաղաքի երկուտասան Հայ գատաւորացն , խնդրեմ զի մտիկ առնէք խընդիրքս :

Խնձուս յայտնի է եկեղեցւոյն աւետմանըն շինեալ հոգի Սուղոմօնէ Շիմայեան , զկնի վախճանելոյն նորա որպէս երկի ի Դեստամէնդէն . յանձնեալ է ֆամիլեացին իւրոյ և արենակցաց , որպէս ողորմութեամբ Պ. Ա. Գրիգորին Շիմայեան և եղրօրորդոց նորին Պ. Ա. Լուսիկին Շիմայեան զոր տեսանելու և մոտածելու , որ Աստուծոյ ողորմութեամբն Պ. քաղքին վերապատվելի Բէպանիայէն եկեղեցին օր ըստ օրէ կուհաղատվի ու կը հատըրվի , վասն որս յօժարակամօք կամեցան տալու մեր կրօնին , որն որ տասը տարի է նրուն ժամանակին , ինքեանց հըրամանօքը կամեցան կուհաղատվի կամ արանց խնդրելու շնորհեցին մեզ զայս Ս. Աւետման եկեղեցին , իւր կացութեամբն և մշտընջենական փունտացիան զի մինչև որ Բէպանիան չի մտնուն Պ. քահանայքը , նա մինք չի մօտիկնանք , այժմ լսելու որ գերարգելի Տէր Մինասը ուր Աստուծած փոխեցաւ , վասն նորոյ յանցն առի գալ այս տեղը , խնդրուածք անենք մեծարելի Պ. Հայաքաղաքիս և դշնածին օր եփոր շնորհիւ տէրն այն ժամանակը համանելու , զվերտապատվելի քահանայքն մըտնուն Բէպանիան , անոր ետեէն Պ. քաղաքը սիրով ընդունէ զայս կրօնը որ Աստուծոյ շնորհիւ յօյս ունիմք , թէպէտ չինք պարծենար օր ժարայութիւն պի անենք վասն հոգոյց շահի փրկութեան և վասն տղայոց շգօլայնու ուստումնասիրութեան , թէօր կամօքը ըլլայ Պ. քաղքինը՝ որն որ կը յուսանք Նորհիւ տէրն , որովհետեւ օր Աստուծած մեղքըիլ է մեր Հայոց աղղին և զայս կրօնը լոյս հանիլ է մեր Հայոց աղղին օր միայ Հայի լեզուն հաստատ

կի սեպենք թէ Աստուծոյ այս պատուական հայաքաղքին ալ ողուտ պի ըլլայ , վասն բազում իրաց , գայս ալ կու յայտնինք ինչպէս օր ծանրութիւն չի պի անհնք Պ. քաղքին , զէրամ մու բացկան քահանայ չինք , որպէս օր կի լիսենք թէ շատօնք դուր ցիլէն : Այսու որպէս ու ասելով զվերոյգրեալ խնդիրքը զբառ սեմ զըթութեամբ բարի պատասխանութեամբ մեծարելութեամբն ձերոյմ :

Կուատագոյ ծարսոյ Հ. Ղազարոս կրնօաւորի  
կարգէ որբուն Անտօնի արբախ

### Ա.ՂԵՐՍԱ.Դ.ԲԻՆ ՊԱ.ՏՈ.ՍԼՈ.ՆԸ.

“Ինչպէս կարդալու Պ. քաղաքը չիշդանցիան (առ պերապիր) ձեր հըրամանուցը և մտիկ անելու զՊ. այս տեղացի Բլէպանիային պատասխանն ալ և զիւր և պիտուհութիւնը և տեօնալու օր չի գայ հնար զողոր ամութեամբն յԱստուծոյ Սօղօմօնին արած ժամն՝ զորն աոր Բլէպանիային թաղիլ է և ինչ վասն ալ Բլէպանի աաին ձեռնէ եղիլէ և է ձեր հրամանուցը կրօնին տառ ալու , և օչ կուտանք ամենիկն . Աստուծ տայ օր ահատըզի (լմնայ) նոր ժամն և ի հոն տրոիի Բլէպանիանին , և այս հին ոչ յԱստուծոյ Սօղօմօնին արած պժամին ոլիտվականութիւն չի ունենար Պ. քաղաքըն , անս այն ժամանակ այն ատենի ապրող քաղքըցը մօտ սոալիցի դաւագ (զիտնալու) բանի , որոնք ևս պանէն և ինտոր Աստուծ խրատէ իրինք :

“Պ. պատվելի Բլէպանին Ժողովուր դական կրօնի կրօնականն

Երբարդն է Պաղոս Պետրոսի եկեղեցին , որն որ Երբորգութեան եկեղեցիէն քիչ փոքր է , զոր Հայերն իրենց ծախիւքը շինելով Մաճառաց նուիրեր են զիւենք շահելու նպատակաւ :

Կահ չորրորդ եկեղեցի մալ ունին քաղաքէն :

դուրս , հայկական գերեզմանասանը մէջ , ուր ամեն օր ժամերգութիւն կ'ըլլայ : Հայք այն աստի ճամի բարեպաշտ են , որ ամեն օր գէթ անդամ մը պատարագի ներկայ պիտի դժուուին : Եկեղեցւոյ դրսի բակը Քրիստոսի խաչելութեան արձանը կայ , ուր շատ կանայք գիշեր ատեն ժամը 4-5ին դալով՝ ծընկան վրայ ժամերգով ազօթք կ'ընեն ու այնպէս կ'երթան սրառելու : Ամեն ժամերգութիւն ծանուցանող զանդակի հնչիւնը լսելուն՝ ուր որ ալ ըլլան դլուխնին բանալով կը կենան ու «Հայր մեր» մը կ'ըսեն և այնպէս ճամբանին կը շարունակեն , անսանկ որ չը կարծուիր թէ մինչև իսկ Երուսաղիմայ վանքին մէջ ալ ասոնց շափ երկիւղած ու բարեպաշտ անձինք դտնուին :

Եկեղեցական արարողութիւննին թէպէտ ըստ լուտինական ծիսի է , սակայն ըստ Հայաստանեայց եւ կեղեցւոյ ալ նախատօնակ կը կատարեն , զլիսաւոր և մեծ տօներու նախընթաց երեկոյին հայերէն շարականներով , մանաւանդ . Ա. Գրիգոր Լուսաւորչի տօնին օրը , որ ճիշդ մեղի հետ կը կատարեն , մեծ և փառաւոր հանդէս կ'ընեն , և բոլոր ժողովուրդք ալ միարերան կ'երգեն ու կը կարգան շարականներն :

Տեղոյս Հայերն Յ քահանայ ունին , որոց առաջինն է Լուքայի Քրիշթօֆ , որ ժողովրդապետ է , Ասի շատ ազգասէր անձ մ'է , և 2-3 կտոր գիրք հեղինակած ու հանած է , որոց մէկն է Հունդարացւոց Ասիայէն Եւրոպա գաղթելուն պատմութիւնը , յարում Ասիոյ մէջ Հայոց , Մաճառաց գրացի ժողովուրդք մ'ըլլալը կը բացարէ , և զայս խել մը Հայ պատմութիւններէ ու դրսէն բերած վաւերական վկայութիւններով կը հաստատէ . նաևս բառարան մը դրած է սոյն դիրքին վերջը , ուր Հայոց լեզուէն Մաճառաց շատ բառեր փոխ առած ըլլալը ցոյց կ'տայ , ինչպէս են

օրինակի համար՝ քիչիտ էւ հե, սերեգլեմ էւ սէրեմ, սեր դեւ, և այլն :

Այս մարդը շատ աշխատած է որ Մաճառիստանի մէջ Հայ եպիսկոպոսութիւն մը հաստատէ և իւր քսակէն շատ ստակ վատնած է այս նպատակին հասնելու համար, և Պատէն յաջողեր է այս մասին հաւանառութիւնն ալ ստանալ, բայց տեղւոյն Մաճառ եպիսկոպոսը դէմ կենալուն համար, իր ջանքն ապարդիւն ելեր է : Սա 20,000 ֆիորին նուիրած է քաղաքին մէջ որբանոց մը հաստատելու և ուրիշ շատ բարեգործութիւններ ունի ըրած, դժբաղդաբար այս տարի վախճանեցաւ, և իրեն յաջորդեց իրը ժողովրդապետ երկրորդ երեց ազգասէր հայր Պարանը,

Սա, երբ քահանայ ձեռնադրուեր է, հայերէն մէկ բառ չը գիտէ եղեր, բայց իւր փափաքովը քիչ ժամանակի մէջ լաւ հայերէն սովորեր է, և այսօր ազգասիրութեան կողմանէ գրեթէ մէկ հատիկ է Հունդարիոյ մէջ, Զմիւռնիոյ Արշալյոսի ալ բաժանորդ է, զոր փափաքանօք կը կարդայ իր հեռաւոր ազգայնոցը վրայ դաղափար և տեղեկութիւններ ստանալու համար :

Միւս 4 քահանայըն են՝ Քօրառ Շիմօն, Բօր Թօտօր, Զաքան և Նօվլաք, որոց ամենքն ալ քիչ շատ հայերէն գիտեն, բայց հայութեան զդացումը մարած է սրաերնուն մէջ, բաց ի առաջին երկու քահանայններէն :

Կեռլայի վարչական իշխանութիւնը դրեթէ բոլորովին Հայոց ձեռքն է, մասնաւոր արտօնութիւններով վաւերացեալ, այնպէս որ Հայոց տէրութեան մը ձեռօքը կառավարեալ քաղաքէ մը բնաւ տարբերութիւն չունի : Հայ մը երբ այս քաղաքը և իր հայկական վարչութիւնը տեսնէ, պիտի կարծէ անշուշտ

թէ Հայոց կործաննեալ թագաւորութեան ժամանուկէն սյս քաղաքը թերեւս մոռցուհիով ազատեր է , ինչու որ Հայ մը՝ Հունգարիոյ և Լեհաստանի միոս Հայաբնակ և Հայոց ձեռօքքը կառուց ցեալ քաղաքաց այս օրուան ողբալի վիճակը տեսնելէն յետոյ , երբ անգամ մ'ալ հոս Կէուլա հանդիպի , մեծ մխիթարութիւն և գոհունակութիւն մը պիտի իմանայ , տեսնելով որ քաղաքակետական պաշտօնարանին մէջ ամեն դիստրոք գործ Հայոց ձեռքն է , քաղաքապետէն մինչեւ իսկ գիշերային պահապաններն անգամ Հայ են : Ասոնք մինչև 1848 Մաճառաց յեղափոխութեան առենք , իրենց ստացած ազատ արտօնութեան չնորհիւը , իրենց դատերը իրենք կը վճռէին , կռուավարութիւնը բնաւ չը խառնուիր եղեր , բաց ի տարեկան տուրք քէ և զինւորէ :

Նաև Հայոց դատարաններուն արտօնութիւն և ձեռնհասութիւն ալ տրուած է եղեր եղեռնական դատերնին ալ տեսնելու , որոնք մինչև մէկ աստիճան փոքր յանցապարաններն իրենք կը դատեն ու կը պատժեն եղեր , իսկ ոճրագործները՝ զորս թէպէտ իրենք կը դատեն ու կը վճռեն եղեր , բայց պատիժը աշխատութիւնն ինքը կ'տայ եղեր , իսկ յեղափոխութենէն ի վեր այդ արտօնութիւնը ձեռքերնուն առնեւած է , ուր այժմ այդ դատերը տէրութիւնը կը տեսնայ . ասոր հետ մէկտեղ բաց ի դատարանէն՝ այսօր միւս ամեն քաղաքական պաշտօններ Հայոց ձեռքն է : Նաև նամակատանքներ , հեռադրատունը , դանձապահութիւնը , մաքսատունը , քաղաքին պահպանութիւնը , հրդեհ մարելու համար ջրհանակրաց խմբին կազմութիւնը , վերջապէս ամեն բան Հայոց ձեռքն է , և բոլոր պաշտօնավարներն ալ Հայ են :

Քաղաքը 410,000 ֆիորին եկամուտ ունի , զոր

Հայոց նախնիքը ձգած են, որն որ մեծ մասամբ հառարակային շինութեանց կը դորժածուի : Այս ստահեն կ'տան քաղաքին փողոցներուն, կաղերուն, պահապաններուն, հասարակաց պարտիզի սպասաւորացն ու պարտիզաններուն, աղքատաց, եկեղեցեաց, դըպացին և այլն : Կառավարութիւնը մէկ ստակ չը վճարեր քաց ի պաշտօնավարաց ամսականներէն, որ ոյս ալ ժողովարդէն հաւաքեալ արոց դումարէն կը տըրուի, և աւելքրդը տէրութեան դանձը կը դրկուի :

Ըստ հունդարակոն սահմանագրութեան՝ Յ տարին անդամ մը՝ պաշտօնավարաց փոփոխութիւն կ'ըլլայ, և ընտրութիւնն ալ քաղաքացւոց գուէարկութեամբը կը կտառարուի : Ինտրոդը որչափ ալ մեծ մասամբ օտար աղջի ըլլան, ոյսու ամենայնիւ Հայերն միշտ իրենց աղջակցին քուէ տալով, և միւս ժողովը շատին ալ քուէնին հայ քանտիտաներու տալերնուն համար, միշտ Հայերը պաշտօնեալ կ'ընտրուին, այնպէս որ մէջերնին մէկ Հունդարացի չկայ :

Հայք 1848էն առաջ խիստ հարուստ են եղեր, Մաճառաց ծուլութենէն օդուտ քաղելով՝ իսկ վերջերը հետզհետէ ինկեր են, մանաւանդ 48ի Մաճառաց յեղափոխութեան միջոցին, տէրութեան հանած մէկ միլիօն ֆիորինի թղթադրամը՝ բռնի այրել տուեր են, ըաց ի իրենցմէ առնուած մէկ միլիօն ֆիորինի պատերազմական նպաստէն, և քաղաքին հասած կէս միլիօն ֆիորինի մասաէն : Արգարեն Հայերն այսքան ահազին մասուն տեղը դարձեալ կարող պիտի ըլլան եղեր լիցնել իրենց գործունէութեամբն ու փութաշամութեամբը, բայց պատերազմէն վերջը դորժառութեան և առուտութիմ՝ առջինին քառորդն անդամ չէ մեացեր, այս պատճառու առուտուր և դորժ ճարելու համար օր ըստ օրէ այս քաղաքէն ալ ցրուիլ

ակսած են Հայերն ուրիշ տեղերը : Ասով հանդերձ յիշաւալ քաղաքն այս օրուան օրս մէկ կամ մէկուկէս միլիօն ֆիորինի ( 100 կամ 150,000 Օսմանեան ուկի ) հարստութիւն ունեցող Հայեր կը գտնուին , որոց քով Հայ ազգութիւնն ալ թէպէտ փոքր ի շատէ մասցած է տակաւին՝ ուրիշ քաղաքաց նայելով , բայց ափսո՞ս որ 3 տարին անգամ մը դոնէ Հայ ճամբորգի մ'երեւ սը չեն տեսներ , կամ Հայ քարոզի մը այցելութիւնը չեն վայելեր , որ հայութեան զգացումը սրանուն մէջ արծարծի , և ուրիշ երկիրներու մէջ հայ եղբարք և արենակիցներ ունենալին յիշելու առիթ մը տրուին որոց վրայօք միշտ տեղեկութիւններ ստանալու ամեւ նաջերմ վափաք ունին :

Յեղափոխութենէն առաջ Պօլսեցի մը դաշեր էր այն կողմերը , այս տարի ալ ես դաշի : Ազգին վրայ տըս ւած տեղեկութիւններս մեծ հաճութիւն կը պատճառ ուին և մեծ տպաւորութիւն կ'ընէին վրանին , ուստի և ալ աւելի մանրամասն տեղեկութիւններ կ'պահանջէին և հետաքրքիր կ'ըլլային : Երբ իրենց ամեն հարցմանցը պատաժնելով , զի՞րենք դոհացնելու նըսպատակաւ , ամեն բան կը պատմէի՝ քնառ հաւատալնին չէր գար , թէ աշխարհին վրայ իրենցմէ զատ ուրիշ տեղ Հայ կ'դմնուի . թէ այսօր 4-5 միլիօնի թիւ մը կը կազմեն , թէ ամեն տէրութեանց մէջ հայազգի պաշտօնավարներ գտնուած ըլլան :

Ասոնց հետ խօսողը՝ անհնար է որ աչքերը չլեցաւի : Կըսեն թէ երբ Մաճառ լրադիրներուն մէջ Հայուանուն մը կը տեսնեն յիշուած , ասի մեծ խնդութիւնն կը պատճառէ եղեր իրենց , օտար երկիր գտնուող իւրենց ազգակցին ու արենակիցին անունը լսելուն համար , բայց գժուարաւ կը միախն եղեր հաւատալ վախնազով որ խաքուած չըլլան : Խնչպէս որ ինծի ալ սոէպ կ'հար-

ցընէին թէ իրօք Արքահամ բաշտ, Ստեղան բաշտ,  
Նուպար բաշտ, Սարդիս ալէյ, Մագսուտ Սիմօն ալէյ  
Օտեան էֆէնտի, Վահան էֆէնտի և այլն ասոնց ա-  
մենքն ալ չայ են միթէ: Եւ երբ ասոնց Հայ ըլլալը  
հաւասաելէս վերջը՝ ուրիշ գեռ խել մը մեծամեծ  
պաշտօններու համսող Հայոց անուններն ալ կը յիշէի ի-  
րենց՝ անբացարելի ուրախութիւն մը կ'զգային, զոր  
անկարելի է նկարազըել: Սա չափ ըսեմ որ Յ շաբա-  
թուան մէջ ասոնց ազգասիրական զգացումն այնքան  
գրգռեցի ու բորբոքեցի, որ անցեալ տարի Եղմիածնայ  
կաթողիկոսին՝ Ռուսիոյ կառավարութեան ձեռօքն՝ աք-  
սորման լուրը երբ կարդացին, զոր Մաճառ թերթերը  
ուրիշ լրագիրներէ առնելով հրատարակած էին, այն  
աստիճան բարկացան ու կատղեցան որ եթէ ճիշդ և  
ստոյդ ենէր՝ պիտի պատրաստուէին 200 Հայ երիտա-  
սարդ խումբ մը կազմելով, պատերազմելու երթալի  
կովկաս :

Հարկ կը համարիմք դնել տատանօր Հունգարիոյ  
հայ գաղթականաց՝ իրենց հնաւանդ սովորութիւն-  
ներէն մի քանին փոխելով տեղոյն սովորութիւններն  
ընդունելուն նկատմամբ, 16րդ գարուն սկիզբները  
ըրած մէկ ժողովքնուն մէջ, որոշած ինչ ինչ բարե-  
կարդական կանոնաց և տնօրէնութեանց բուն պատ-  
ճէնը, զոր ընդօրինակած եմք յիշեալ քաղաքին արձա-  
նադրութեանց տօմարէն, և որ գիտնալու և կարեռ-  
ըութեան արժանի կետեր կը պարտևնակէ :

“ԹԱՂ. և ՃՂԶ. օդոստոսի ԻԱ. և Լաթինացւոց  
“1727 սեպտեմբ. Ա.”

“Ենօրհօքն Աստուծօյ կամեցողին վարեաց ժօղօ-  
ալեցամնք մինք Հայոց ազգը թէ քահանայք, թէ աշ-  
ախարհականք ի քաղաքս Հայոց Խեռլա, ու հաստատե-

“ցինք մեր մէջ զսուրբ միաբանութիւնը , որ այս ներ-  
ադյ գրեալ կանոններն ու փունքդերն մնան անշարժ ,  
ու հաստատ մեր մէջ մշանջենապէս , ու օվ որ այս  
“կանոններուն ընդէմ կաննի թէ քահանայ թէ աշխար-  
հական , նա ունենայ պատիճ քաշելու , կամ թէ ճռ-  
որում հարուցում տալու , ինչպէս այլ վայր գրած է :

“Ա. Նեխ և տռաջ թէ օր հանդիսի Ա. Յակոբյ  
ահետ ծնընդեան պատուցը մէկտեղ , նա տեղը մնայ  
անխաղտ , ասոր ըդդէմ կանոնըր , ճուրում ունենայ  
ատալու եկեղեցուն Բ. ոսկի : ”

“Բ. Ծընընդը թէ օր Պ. կամ Ռ. հանդըպի , ու-  
ստիս ուտիի եկեղեցոյն ատագին կէօրէ : ”

“Գ. Ծընընդեան ետե ութն օր մարդ ալ հրց սուտէ  
աշուտէ , ինչպէս օր ալ վաղուց հաստատած է զայ բա-  
մըըս , միայն ճերմակ ուտելու թողութիւն կայ հաստէ-  
ստի ու թէ օր հրց ուտէ , նա ունենայ ճուրում տա-  
ալու Բ. Մաճառի սուտէ անոն : ”

“Դ. Թէ օր ջուր օրհնեացը ճրագալուծն այսինքն  
աթըդումըն ուտիսաց օր ըննի , նա՝ պարտ է պաս ու-  
ստելու սուրբ եկեղեցին հրամանին գօրայ , վօլորն  
ադէմ ըլլայ , ունենայ Բ. մճը եկեղեցոյն ճուրում տա-  
ալու ու Ա. ալ գասաւորաց : ”

“Ե. Թէ օր ջուր օրհնենքն պասուց օր ըննի , ինչ-  
սպէց Պ. կամ Ռ. նա պարտական ըլլա ամեն մարդ  
աղաւար աեղը ըրնելու , ու ուտիս չուտելու սուրբ ե-  
կեղեցւոյն ատագին գօրայ , չէ հնազանդօղն ունենայ  
աճուրում տալու սուրբ եկեղեցւոյն Պ. փունդ մօմ , ու  
ադասաւորացը Ա. մճը : ”

“Զ. Թէ գտիի մեր մէջն օր վազուցու սովորու-  
թեան գօրայ ջուր օրհնեացն ետե Բ. կամ Փ օր հրց  
աուտէ , ունենայ եկեղեցւոյն ճուրում տալու Բ. փունդ  
ակերօն ու գասաւորաց Բ. մճը : ”

“Ե. Թէ օր մէկնի վորն Բուն բարեկենդանին, Բջ  
սու Գշ ուտիս ուտէ ընդդէմ մեր Հայոց սահմանքին,  
սունենայ ճուրում տալու եկեղեցուն Գ մճր ու դաս  
պատառաց Բ մճր :”

“Ո. Թէ օր մարդ գտվի օր Զատկին էտև զարա  
սքծերմակ ուտիսն կամ զիստակ պասն մըսեղէն ուտէ,  
սմեկնի վորն Գշ Ռւրբաթն, կամ ինչ ուրի Համբարձում  
աըստ հին ովկորութեան, ունենայ ճուրում տալու ե-  
սկեղեցւոյ Ե մճր, ևս դատաւորաց Ե :

“Թ. Թէ օր մարդ ճամբովն ճաճորութեան, կամ ուրիշ  
ստեղ պատուց օրն ճերմակ ուտիս կամ թէ միս ուտէ  
պատամոց թողութեան, նա ունենայ ճուրում տալու ե-  
սկեղեցւոյ Բ փունդ մօմ ու դատաւորաց Գ մճր :

“Փ. Վօվ օր տօն օրն կամ թէ կիրակիքն ժամէ  
աշխիքա պատարագ և քարոզ չի լսէ, կամ թէ զտօնըն  
աչէ բընէ առանց պատճառի և հրամանի, ունենայ  
սեկեղեցւոյ Բ փունդ մօմ տալու ու դատաւորաց Բ  
ամճր :

“ՓԱ. Վօվ օր ատոլէնդին հարանիք կամ թէ շան-  
ովօք նշանաւու, կամ թէ հարկ լաւուչոցմով նուստառն  
պանէ, նա ունենայ եկեղեցւոյ Ե մճր ճուրում տալու  
ու դատաւորաց Բ մճր :

“ՓԲ. Զուազատիկն որն որ կուդայ Հայոց թվին ՌՃՀ  
սին և ըստ լատինացւոց 1729ին Զին տարին ունե-  
պանք կատարելու, այնպէս օր Աեհցի հայելն կատարին  
այսինքն Շին տեղը զհօն բանեցնելու որ չիտակ դայ  
“Զատիկն, օվ օր ասոր հակառակ ըլլայ թէ քահանայ  
“թէ աշխարհական, ունենայ ճուրում տալու եկեղեցւոյն  
ևԵ օսկի ու դատաւորաց ևս Ե օսկի :

“ՓԳ. Ամեն երեք ասրի ընդանրական ժողովք ըւ-  
ռալայ մեր մէջ, Ս, անդամը ի Կեռլան, ուրիշ անդամ  
ամը Պաշպատօվն կարդօվ, որ թէ քահանայ թէ աշխար-

սհական ըլլայ, ունենայ իք մը մեծ տարտ կամ պատ  
սկասութիւն, թէ հոգեսոր ու թէ մարմնաւոր, նա  
ուղնարփի ժողովին մէջ, ու վոր քաղքըցիքն հակառակ  
ուղլան այս ժողովքին, նա ունենան ճուրում տալու իւ  
և մճր Արհապ գումբանիային :

Ա. Թէ օր մարդ տավար մօրթէ, վատ դիտա-  
ւորութեամբ հին սօվորութեան գօրայ, թէ անով  
ոմեղաց թողութիւն պի գտնու, կամ թէ իւղ անուշ  
անէ կամ մատաղ, նա ունենայ ԺԲ մճր ճուրում  
տալու եկեղեցոյն, ու թէ թարկը չխայ չ բակ առ  
աստաթինը՝ աս երկրէն աքսորիի ու գուս ելէ :

Ա. Վոկ օր կախարդութիւն անէ, կամ աղօթէ  
սկամ երկու զարմաւոր ջուր առնու կ-իորդական նշան, ու  
որիշ բանար ասոնց գօրայ կախարդական անէ, կամ  
սօղկային առէնքն անել տայ, կամ խրատէ կամ մահա-  
նայ ըլլայ, այսպիսի մարդն ԻՊ մճր ճուրում տայ  
և եկեղեցւոյն երեքում բոցը ըլայ մեծաւորաց :

Ա. Հինտիկուցինան դիտնայ ամեն մարդ,  
ու օր այնպէս շանվէ նշանէ դդուստրն օր երբոր ըլլայ,  
Ա. Մարեկան լըման օրհնուի նշանըն, և երբոր ԺԳ  
ատարեկան ըլլայ նա պլասկ երթայ . չէ ինչպէս ինչ-  
և վաս եղիլէ օր դաս մը ԺԱ. տարեկան ու դեր ալ  
ոքիշ շանվիլին դարդիլին, նա համ ընդդէմ Աս-  
տուծոյ ու օրինաց ու համ ընդդէմ աշխարհիս սո-  
և վորութեան գօրայ էղիլէ : Որ քահանայն գտվի որ  
ալ առաջ քան զԺԳ տարին նշան օրհնէ, կամ թէ  
քան զԺԳ տարուն մուտք առաջ պսակ տայ, նա Ա.  
տարի մը իրեն ժողովորթենէն, ու կէլուրէն զըրկը-  
ռուած ըլլայ :

Ա. Ամեն մարդ դիտնայ օր ասկից Պ տարին  
և երայ վարդն ետքուր ու մաքրիսն Տ-ԵՒՆԵՐ կարդիլին  
առ չի դտվի մազկըփի վրայ Տ-ԵՒՆԵՐ ու թէ մարդ ըն-

“դեմ գտովի էսօր վերայ , երեք տարին լմննայ , նա  
և վարդերը ու մաքրիտը եկեղեցուն առնուն , ու չոր-  
ամին երեքում բայցն դատաւորաց :

“ՖՈ . Հարսնից կողմունէ խալաճ մարդ ալ պար-  
ատական չիլայ տալու , ոչ խաշլուն ոչ օզկաներն առէւ-  
աները միայն թէ վօվ կամենայ փեսին օդնութիւն անե-  
ւու կըլայ , զհարսն ու զիեսան ալ շատ ոլոպոտ ներե-  
“ւէ չըլլայ բազնիք տանելու , լալեխ մարդու ալ չի-  
“տան . զարտօր ժողո մէն մը խաշլուին մէմը փեսին ,  
“մէմը փեսին հօրը ու մէմ մը վաղահին : Ոչ քա-  
“հանու ոչ եկեղեցընայ ոչ պիրօվին , և ոչ կտրիճվո-  
“րաց խալաճ չի տրուի , միայն թէ քահանու հարսնի-  
“քէն նասիոլ պիտրիկվի զհարսը ալ շատ չի քողին ,  
“փեսին ևս դտկին գոռու վրայ նարօտ չի դնին , միայն  
“թէ վէնէց դրուի կամ թէ գօրունա հարսինը դլխուն  
“վերայ զարդարած , ուրիշ բաներով ալ ըստ կարի :  
“Երբօր ըլլայ հինադրօնք ինս դնել ձենելու հրատերւ-  
“միայն զլօվ օր հարսինը հարը , ու մարը սիրէ զնո-  
“քա պիցենին , ու հաշկին օրըն զիեսին հարն կամ  
“փեսան զօրոնք սիրէ զնօքա հարսնիք հրամեցէք  
“պանէ : Նոր կարդուածնուն հինակիուցինտան ալոպոտ  
“չիլայ մազկապ հաղնելու , ոտնվորաց հարկ մարդ ալ  
“աշնէ հարք չը հրատերէն , բայց թէ կամենայ փեսան նա  
“պի հարկէ զստնվորաքն : Պաակ երթանա կերտներ  
“խալա հորդ չիտանին եկեղեցի , ոչ մեզը ուտեցնուն  
“հարսին ու փեսին ժամն . ժամին ազպարն կամ ու-  
“րիշ աեղ պատկէն դառնան նա խնկով չի ծխին , հաւ  
“ու խալաճ չէքէն չի թապլին չը նետեն հարսին ու փե-  
“սին գլխուն վերայօնն , ոչ ալ հարսին գլխուն վրայ  
“խալաճ կախ մնին չէքէն հոեւ բուն փեսան թռօվ նոտ  
“պասկ չերթայ ոչ օզկա տեղ թռօվ քալէ , վօվ օր  
“հարսնիք երթայ , նա ոկերնայ չիտայ երեսուն , զարու

աօր փեսին ու հարսին մարը ու հարը հարկին օրը պիտան պաշխիշ հարսին ու փեսին իրենց կարիեցը գուրայ, վօլ օր ընդդէմ ըլլայ այս բանիս, ունենայ եւ եկեղեցոյ Բ. օսկի ու գատաւորացը Ա. օսկի ճուրում ատալու : ”

“ Ճ. Եջ մճը օսկի սէրմիյա չտնեցողն, բարակ աշուխէ հաղուստ չի հազնի, իրենց կնտիքն ալ սլօպօտ չիլան ատամասդէ կազու հաղաշու կամ սուդանա կամ խաֆդան հագնելու ոչ տրծթէ գոտի կառապելու, բայց ինչ օր ինչվաս կարած հագուստ ունեան, ղան սլօպօտ ըլլայ հագնելու, ու ան ալ ինչ օր ածնօղացմու տված ունենան, տարը հինտիկուցինտան սիմանան զորը այսպիսի հաղուստ կարելով, ունենայ եկեղեցոյ ՓԲ. մճը ճուրում տալու ու գատաւորաց Ա. օսկի : ”

“ Եւ վասն հաստատութեան և ամրութեան այս վերոյգըրեալ կանօնացս, մինք Հայոց քաղքցիքս ի Պաշտպահութցիքս և Ճուրճօղցիքս թէ քահանայք թէ աչք մարհականք մեր յօժար կամօքն ըստօրազրկեցանք, ի քաղաքս Կեռլա : ”

“ Մինա Պարունեան, Ս. Գուշականական վարդապետ, Ես Տ. Մէռանա Թօրուն Բլբանաւ Աւելացի : Ես Տ. Օհանես ի Պաշտպահութցիքս Բլբանաւ Ես Տ. Ոիքն Թօրուն Բլբանաւ Հայոց, Ճուրճօղան “ Անդ Մէռլուի : Ես Եվելքցողն Աւելաւ Հայու ժողովի Խոռնի Յա յօժշանի : Ես Մըկո Օվանես Եվելքցողն ի Պաշտպահութցիքս Ես Ճուրճօղան Եվելքցողն Քից Մահուի Սբրենեմ : Ես Պիքով Հայու ժողովի Աւելաւ Սօսին Դատերի Եվելքցողն : Ես Զատիկի Պիքով ժողովանի : Ես Օվանես Մըկո Ա. յօժշանի Պիքով Ճուրճօղի : ”

Ա. հաւասիկ հոս կը զնեմ Ա՛լրդ դարուն սկիզբները՝ հայ գատաւորաց արձակած դատավճռոյն մէկ քա-

Նիին բուն պատճենները , զորս դատարանի արձանաւ  
դրութիւններէն քաղած եմք :

## Ա.

Ինչպէս օր եկաւ խռովը Ռուօլէմնարը ու տավի արաւ զտղայ  
սլէռպիարը (սափրիչ) , զիրին մանջը թէ , կնիկը ծեծիլէն : Վը  
կայութիւն տուաւ ուրուլ (որն օր) ծեր Գրոյգարը , ու ասաց տես  
սիլ է զպէրազիարը խազրան (գոմ) պահըտված , նա ասիլ է թէ  
ի՞նչ կանես ի հօդ , նա ասաց թէ պան ունիմ մէկ մարդու հետ ,  
անոր էտևաց կիլէ կընիկը գուրս Լիմնարինը , նա կիզարնէ մէկ  
կոտրաց գիետով մը ու թեւ ըսլուցցիդ արիլ է (կոտրել) . նա գտաւ  
դատաստանս օր անոր սեպը (փոխարէն) տայ ճուրում ընտօր կար-  
նայ հաշդուելու (Ճիծ ուրողը ինչպէս ուզէ պիտի փոխարինէ) :

## Բ.

Ինչպէս օր եկաւ Լուսիկ Նիկոլին որդին , ու տավի արաւ  
զաղահանգին մանջը թէ ճամրօվը գտօվլ Շըմօլէն (Վալաքի  
անուն) ասիլ է Հարուց (Նախատինք Հայոց) , ասաց ինք ալ թէ  
ասիլ է , զէ զատ քուֆուրլուիդ արիլ է զինքը բօրը շխամկոց  
պօդը քրֆըդ իլէ (Նախնեացը Հայհոյել) նա գտաւ դատաստանը  
օր բանտ դնին զերախայի երկրին մարդը (Ռումանիացի) ու Ճի-  
ժին օրուան վրայ (կիս օրէն ետև) Յ. Երաթա (ՅՕ հարուած) :

## Գ.

Ինչպէս օր եկաւ Խաչատրուրը Օմօրօղը ու տավի արաւ մեր  
դատաստանին զիմացը ՊՍիմոնը Դավուն՝ թէ կըրվըտիլին ու զՀո-  
սին քըրֆըդիլ է ու զինքը թուրլու թուրլու արիլ է , դտաւ մեր  
դատաստանը օր ԺԲ մճր ճուրում տայ ու օրուան վրայ ծեծեն Լ.  
Երաթա :

## Դ.

Ինչպէս օր եկաւ Հանդօն ու տավի արաւ մեր դատաստանին  
Դիմացը օր , մէկ չափինով մը (պարտամուրհակ) ՌԵՆՔ , մճրի  
թէ պարտէր Կօրօվէրի Մանըկը թէ , ութը տարիէ որ տվիլ է  
օրօլէն (Ճեռքէ) փոխ ստակ ՌԵՆՔ մճր օր տայ ի շարաթէն .  
նա տվիլ է ՌԵՆՔ մճր ու մնացիլ է երկու շարաթին գլխուն և  
շահնալ տալու , գտանք մեր գատասընը օր Կօրօվէնք վճարին և  
զլիին շահը ու ութը տարին կին շահն ալ կանէ ՀԳ նէմցէի  
զլօր շահ տալ , աւելի պակաս չիլա ու հաշդուին :

## ԱՆԹ-ՄԵՔԼՈՇ ԿԱՄ ՃՐԻ ՃՈՎ.


Այս քաղաքը Հունգարիոյ վաճառականաց կերպութիւնն է , 50 տարի առաջ 150 տասն Հայ կը դանուի եղեր հոս , բայց հիմայ 40 տասն հազիւ մնացած է . որոցմէ շատ քիչը գիտեն հայերէն : Խնչքան որ այս քաղաքը Մաճառաց կը վերաբերի , բայց և ոյնպէս Հայերն առելի գործունեայ և հարուստ ըլլալիտն պատճառաւ , մինչեւ 1848ի յեղափոխութիւնը , որո քաղաքին կառավարութիւնն ալ Հայոց ձեռքն էր ճիշգ և ու բայի պէս , իսկ այսօր Հայոց քով իրենց առջի հարըստութեան ու աղղեցութեան քառորդն անդամ չէ մը նացած :

Հայք գեղեցիկ եկեղեցիկ մունիքն , որոյ ճակատը դրուած է «Շինեցաւ եկեղեցն Ռիլ 1733ին Շառագ ժամանակ Թուրքի Աքանց և Պատր Օհանիսիւսնի հոգոբաշյուննեան ուղարք : Ունին քահանայ մը՝ որ նա ալ հազիւ քանի մը բառ հայերէն գիտէ : Տեղւոյս այժմու Հայերուն ամենքն ալ վաճառական են , և մէջերնին աղքատ չկայ բնաւ :

## Ս Ե Բ Վ Ի Զ

Հոս ալ ճիշգ վերինին նման , ասկէ 60 տարի առաջ 50 տասն Հայ կայ եղեր , իսկ այսօր 17 տուն կը դանուի , որոցմէ հազիւ մէկ երկու հոգի հայերէն գիտեն : Այս քաղաքին ալ կառավարութիւնը Հայոց ձեռքն է եղեր առաջուց , որոցմէ բոլորովին առնուած է այժմ : Գեղեցիկ եկեղեցի մը և վանատուն մունիքն , ժողովուրդը ոչ այնքան հարուստ է , դրեմէ յատուկ քահանայ չունին , այլ լաթինացեալ Հայ քահանայ է

մը պատարագ կը տեսնեն , Այս տեղի Հայ ժողովուրդը  
տակաւին սոսկմամբ կը յիշէ այն կոտորածը՝ որ տե-  
ղի ունեցեր է 1694ին Թաթարաց ձեռօքը , որ տոհն  
Հայ ժողովուրդը դեռ Լուսաւորչական է եղեր , երբ  
Թաթարք սոյն քաղաքը կը պաշարեն , Ա. Սարգսի շա-  
բաթ օրը յանկարծ եկեղեցւոյ վրայ կը յարձակին պա-  
տարագի ժամանակ , և բոլոր ժողովուրդը՝ քահանաւ-  
յով մէկտեղ ընդ ամենը 148 հոդի՝ անխնայ թրէ կան-  
ցընեն , այնպէս որ մէկն ալ չաղատիր : Այժմ յիշեալ  
եկեղեցւոյ մէջ Քրիստոսի 1044 թուականին գրուած  
մագաղաթեայ Աւետարան մը կայ : Ժողովուրդը մեծ  
մասամբ տգէտ է :




## 8 է Վ. Ա.

Այս քաղաքը քանի մը հայ ընտանիք կայ , ունին  
եկեղեցի մը՝ զոր Լատինք գրաւած են : Հայերը յա-  
տուկ քահանայ չ'ունենալով , Լատինաց հովուութեան  
ներքեւ են . իրենք ամենքն ալ վաճառական են , և հա-  
յերէն լեզուն միայն երկու ծեր դիտեն :



## Ն Ա Ս Ս Օ

Առաջներն 40 տուն Հայ կայ եղեր հոս , ամենքն  
ալ խիստ հարուստ և վաճառական , իսկ այսօր 20 տուն  
չ'ելնէր : Ա. Լուսաւորիչ անուամբ փառաւոր եկեղեցի  
մունին իր կալուածներովն ու ժողովրդապետի առաջ-  
նորդարանովը : Այս ալ Լատինաց ձեռքն անցած է այ-  
սօր :



## ՊՐԻՍԴԻՅՑ ԿԱՄ ՍՈՍ ՍԵՎԵՇ

Այս գեղեցիկ քաղքին մէջտեղը հոյակապ և մեծաշէն եկեղեցի մը կայ , զոր Հայերն կառուցեր են : Ամբողջ Թրանսիլվանիոյ մէջ գրեթէ չկայ ասոր նմանը ճաշակի և գեղեցկութեան կողմանէ , զոր այսօր Բողոքական Սաքսոնիացիք դրաւելով , իրենց ժողովարան ըրած են :

Հայ մը երբ այս ահադին եկեղեցին որ տեսնայ , Անեցաց սատակովը շինուած , բարձր գմբէթով ու թանձը պատերով , անհնար է որ սրտէն հառաջը մը չարձակէ ու աչքին արտասուքը բռնել կարենայ :

Տակաւին եկեղեցւոյ ճակատը կեցած է մեծ խաչը , զոր Բողոքականք հրաման չունին վար առնելու , մինչեւ որ ինքնիրեն իյնայ :

Հսո ընդ ամենը 8 տուն Հայ կայ , որք Աեռլայէն եկած են , մասնաւոր երէց չունին , այլ Լատինաց քահանայները կը հովուեն զիրենք : Այս ընտանեաց մէջ երեք անձինք կան , որոց քով ազգութեան զգացումը գեռ կեռ կենդանի ու վառ մնացած է , որք են կայծակօ , կրէկօր Սէնկօդ և Լուքաչի Դրիկդօր :



Նաև Մաճառիստանի այլ և այլ քաղաքները , ինչպէս են Այնուտ , Ապրուտ , Գուրստա , Ռէկին , Քէղափ-Վաշարհէլ , Մօրուշ-Վաշարհէլ Կօքլասօդ , Գեմինա , Ախպին , Տէժ և այլն . որոց մէջ 5էն մինչեւ 45 կամ 20 տուն Հայ ընտանիքներ կը գտնուին , հարուստ վաճառականներ և երկրատէրներ . մէջերնուն շատ քիչերն հայերէն զիտեն , իսկ ամենքն ալ լատին քահանայից հովուութեանը տակ են , ասով հանդերձ

կրօնասեր են և փոքր ինչ ալ աղջասիրական զգաց  
ցում մոռւնին , Եթէ Հայութիւնը իրենց ճանչցնող  
ըլլայ . ասմաց շատը օտարաց հետ խնամութիւն ունի :

Ասկէ զատ Թրանսիլվանիոյ որ գիւղն որ մտնես ,  
անհնար է որ Հայ մը չգտնուի , ինչու որ երկրատէր  
Հայերը դրեթէ միշտ գիւղերը կը բնակին , Ուստի որ  
դիւզացիին հարցուի թէ Հայ կա՞յ հոս , իսկոյն կ'տա-  
նի ցոյց կ'տայ , իսկ այն Հայը կը տեսնես որ իր Հայ  
ըլլալը չը գիտեր , այնքան Հայու վրայ խօսք եղած չէ  
որ ինքն ալ մոռցած է իր Հայ ըլլալը և կամ կ'ուրա-  
նայ Հայ ըլլալը , Հայոց վրայ դադափուր և ծանօթու-  
թիւն չունենալուն և մեծ աղք մ'ըլլալը չգիտնալ-  
նուն պատճառաւ : Բայց երբ Հայոց վրայ դոհացու-  
ցիչ և ուրախառիթ լուրեր հաղորդուի իրենց . կ'ոկը-  
սի վրանին շատ քիչ աղջային զզացմանց արթնեալուն  
հշանակըն տեսնուիլ : Արսեն թէ մեղ այսպէս բաներ  
պատմող և իմացնող չկտյ , մենք ալ գիտենք թէ մե-  
այն մենք ենք մնացեր Հայ , անոր համար ամօթ զգա-  
լով մենք ալ չենք ուղեր Հայ ըլլալնիոյ յայտնել , որ  
չըսեն թէ Զինկեանի պէս քիչ մը բան մնացեր ենք :

Այս է զրեթէ Թրանսիլվանիոյ դաղթական և կէս  
կորուսեալ Հայոց բոլորին ալ կարծիքն ու կեցութեան  
պայմաններնին և վիճակնին : Բաց ի առողջմէ , այդ  
Հայ դաղթականութիւնը Հունգարիոյ մէջ դեռ ու-  
րիշ շատ տեղեր թէ եկեղեցի , թէ մատուռ և թէ  
ուրիշ բաղմաթիւ հաստատութիւններ ու շատ կտոր  
կտուածներ ունի եղեր , որք այժմ բոլորովին Լա-  
տինաց ձեռքն անցած են , որոց հայկական գոյք ըլլալը  
վրայէն յարմանի է :

Այս կորուսաններն անշուշտ տեղի ունեցած են այս  
կողմի Հայերն առանց դլխուորի և առաջնորդի մնալ-  
նուն համար :

Մաճառ.իսթանի Հայերը թողելէ յառաջ, հարկի կը համարիմք սոյն դաղթականութեան վրայ ընդհանուր տեսութիւն մը ընել:

Ս.յա Երկրին Հայերը, ինչ կարգէ աղ լինին, ընդհանրապէս և առ հասարակի աշխատասէր են, յատկութիւն մը՝ որ կրնայ իրենց ազգին պատիւ մը բերել, հակառակի Հունդարացւոց դանդաղ և անյաջող բարոցը, հաւատարիմ և ուղիղ են վաճառականութեան և իրենց առուտուրին մէջ, որով գրամատեարց մեծ համարումն ու վատահութիւնը կը վայելին, փսխանակ Հըրէից պէս խարդախ կամ խարելոյ ըլլալու:

Բաց ի մէկ երկու քաղաքէ, Հունդարիոյ բուլը միւս քաղաքաց Հայերն, արք և կանայք, ընդհանրապէս բաւականատէր և ամօթխած են, հակառակ Մաճառ և Վահան իգական սեռին լիտի և անսպարկեցտ կենցաղավարութեանը, որոց մէջ Հայք կրտեր են պահապնել իրենց համեստութիւնը, մարդասէր են և բարեսիրա՞ հակառակ Մաճառաց սխակալութեանը և Լեհաց մարդաեցութեանը:

Հունդարացիք և Վահանք այնքան թեթև են ի կրօնս և շատն անհաւատ, բաց ի Վահաք դիւզացիներէն, որ սարին անդամ մը խոկ եկեղեցիին առջիւն չեն անցնիր, և 15 տարուան միջոցին, մինակ Մաճառներէն 3-4000 ընտանիք Մովոհական օրէնքն ընդունած են, զոր բայցրձակ կը դաւանին:

Մաճառներն շատ աղ հպարտ ու սնապարծ են, քսակնին մէկ սոկի որ ունենան, ինքզինքնին թաղաւոր կը կարծեն, շռայլ են և զեղս, զուարթերէս և զրօսասէր, բայց շատ ընտիր պատերազմող են, անանկ որ իրենց քաջութեանը հաւասարող ազգ չկայ դրեթէ. խիստ կարսի և հաստաբազուկ են:

Ասկից յառաջ ըսկնիք թէ Ահոլոյի հայ ժողովը.

դապետը Հայոց եպիսկոպոսութիւն մը հաստատել խնդրած էր Պապէն և հաւանութիւնն ալ ստացած, բայց Մաճառի եպիսկոպոսը դէմ կեցած էր: Այդ արդելքն ու ընդդիմութիւն հանելուն պատճառը սա էր թէ՝ տեղույն բնիկ Մաճառ ժողովուրդը, ինչպէս ըսինք, կրօնքէ պաղած ըլլալով բնաւ եկեղեցի չեն երթար, ընդհակառակն Հայերն ալ անդիի ծայր ջերմեռանդ ու կրօնասէր ըլլալով, առանց եկեղեցի երթալու չեն անցներ, հետեւաբար ընդհանուր Մաճառիսթանի Պապական եկեղեցիներն յաճախող ու պայծառ պահող ժողովուրդն, նաև իր շահու և հասութից աղքիւրն Հայերն ըլլալով, թող չէ տուեր որ զատ եպիսկոպոսութիւն արուեի ասոնց, ինչու որ այն ատեն պիտի հեռանան իրմէն և շահու աղքիւրը պիտի դոցուի. ալ որո՞ւ զանդակ պիտի հնչեցնեն հրաւիրելու որ եկեղեցի դան: Եթէ Հայերը չըլլան՝ Պապական եկեղեցեաց մեծ մասը պարապ կը մնան:

Իսկ Մաճառ եպիսկոպոսը այսքանով ալ չ'բաւականանալով, կայխատի որ խնամութեամբ և կամ ուսրիշ այլ և այլ միջոցներով, այսինքն դպրոցներէն հետքզհետէ հայերէն ուսումը և եկեղեցիներէն հայերէն լեզուաւ ժամասացութիւնը վերցնելով, Հայերն Մաճառ աղդի մէջ ձուլել ու կլլելով անհետացնէ, այնպէս որ եթէ օյս բանին անմիջական դարման մը չ'տարուի, հետեւանքը խիստ աղետալի և մօտալուտ է:

Հայերն մէկ պակասութիւն մունին որ մեծ մասամբ տգէտ են, յորմէ դժբաղդաբար շատ դէշ հետեւանքներ յառաջ եկած են: Սակայն միսիթալութեան արժանի բան մունին որ, իրենք ինչքան որ ջերմՊապական են, սակայն և այնպէս մեր ճանչցած Պապականաց պէտ բնաւ առելութիւն և թշնամութիւն չունին Առաստորչական Հայոց հետ, ընդհակառակն ինչ-

քան որ յարեալ են Պատին՝ կրնայ ըստիւ թէ անկէ շատ աւելի կը սիրեն Հայոց կաթողիկոսութիւնը և Եղմիածնայ Լուսաւորչական աթոռը երբ կըսեն՝ անձկակարօտ հառաջք մը կ'արձակեն, թէ ինչու իրենք այնքան հեռա մնացեր են անկէ : Վերջապէս Հունդարիոյ Հայերն իրենց պատականութեամբն հանգերձ, ինքզինքնին Լուսաւորչական և Հայոտանեայց Լուսուրչի եկեղեցւոյն զաւակներն կը համորին :

Ասի այնպիսի զգացում մ'է, որ եթէ արծարծի և ի կիր արկանի, կրնայ մեծամեծ և յաջող արդիւնքներ ձեռք բերելու շարժառիթ մ'ըլլալ :



### ԵՐԿԻԲԻ ՊԱՌԻԳՈՎԻ ԽՆԱԴ

Այս երկիրը մինչև 1778ին Մօլովինյ մէկ մասն ըլլարվ, սոյն թուականին Օսմանցոյմէ Գերմանացիներուն ձեռքն անցեր է, ուր և կը զտնուի տակաւին : Այս երկիրն մէջ ընդամենը 3 հայաքաղաք կայ, որք են Սուչաւա, Զէրնուվից և Աէրադ :

Ճանքորդը Թրանսիլվանիոյ սահմանէն մինչև Պուգովինայի երկիրը իջնելու պահուն, բոլոր անցած տեղերը Հայոց վրայօք հետաքրքրական խել մը բաներ պիտի տեսնէ, որոց մէկ քանին հարկ կ'համարիմք յիշատակել :

Աէջեցիք.— Այս ճանքուն վրայ դեղեցիկ դիւզաքառ զաք մ'է, ուր 30 տունի շափ Հայ կը զտնուի, որոնք այս տարի սիրուն եկեղեցի մը շինեցին, բայց իրենք քոհանայ չունենալուն համար Լատին եպիսկոպոսը 2 լատին քահանայ զրկեց ասոնց : Այժմ այս եկեղեցին Հայոց ստոկովն ու ծախիւքը Լատինաց եկեղեցի մը եղած է, և ի շնորհա Հայոց շինած այս եկե-

զեցւոյն՝ Յ-Ե տարիէն կարծեմ Հայ մը զլ պիտի մնոյ հոն , գիտցած ու շարունակած հայերէն ժամասացութիւննին ալ բոլորվին լատիներէնի փոխուելով :

Այս գիւղին Հայերը երկրագործ են , հիւրասէք և բարեպաշտ :


Ասոնք երբ իմացան Հայ օտար ճանրորդի մը իրենց գիւղն այցելելը , իսկայն իրենցմէ 2 պատգամաւոր ընտրելով կը դրկէն ինծի , ինդրելով որ աղաչեմ ու միջնորդութիւն ընեմ Հայոց մհծամեծներուն՝ իրենց հայերէն դիտցող հայ քահանայ մը զրկելու , որպէս զի լեզունին չկորսնցնեն և Լուսաւորչին լեզուտուը պատարագ լսեն , (Հայերէնը «Լուսաւորչի լեզու» կը կոչն ասոնք) վասնդի , կ'ըսեն , մեզքը չէ մեր ստակին որ Ֆրանկաց տանք , որ մեր նոր շինած եկեղեցին Ֆրանքերն առնեն ու Հայուն չը մնայ . . . : Ուստի և կը խնդրէին որ ժամ յառաջ իրենց հայ քահանայ մը հասցնելու ճարը նայիմ : Արդ՝ դու Հայ մը ըլլալով լոէ՛ ասոնք եթէ կլնա՞ս բռնել աչքիդ արտսուաքը կամ արզիլել որտիդ փղձկելը : Մարդուս ծնողացը կամ եղբարցը մտհը այնքան վիշտ ու կոկիծ չպատճառեր՝ որքան որ այս օտար երկիրներու մէջ ցրուեալու սփռեալ խեղճ և անոք Հայ ժողովրդեան անձկանարօտ և անիմամ վիճակն ու կացութիւնը , Արցածիս չափ մսիթարեցի և իրենց մեծ յայսեր տալէս զինի , Հառաչելով բաժնուեցայ . . . :

ՊՕՐԻԾ ԲՐԱԽՆՏ.— Այս ալ գիւղաքաղաք մ'է , ուր Յ տուն Հայ կայ , որք բաւական հարուստ են Բարեբաղդաբար ասոնք իրենց հայերէն լեզուն կատարելապէս ոլահած են , սա պատճառաւ թէ օտարազդիի մը առջել զործի մը առթիւ գաղտնի խօսակցելու յասուկ լեզու մ'օւնենալու համար , որ խիստ ստիպողական և անհրաժեշտ կը համարվին , և ոչ թէ Հայ ըլլանուն և

կամ հայութիւննին պաշտպանելու համար : Ասի իրենց խոստովանած պատճառն է , որ ոչ նուազ մարդուս ծիս ծաղը կը շարժէ :

Կան ուրիշ նաև իսել մը դիւղեր , ինչպէս են՝ Դիւկուցա , Գօյմբնու , Բայանըրսթամբըլը , Քօշնան , Տօրնա- վատիա , Եադօսինա , Բուտնա և Պօժօլիտա : Մինչեւ հոս գտնուող Հայերն պապականացած են , իսկ հետեւեալ դիւղերունը հարազատ Լուսաւորչական մեացած են , ինչպէս են՝ Քիմբլունք , Բրիսակ , Վաման , Ֆրաօն , Պուքօվա , Էլիշէշտէն , Սինափիլիս և Հօմօր : Ասոնց մէջ մէկէն մինչեւ 40-13 տուն Հայ կը գտնըւին , որոնց գործն է անտառներէն տախտակ կտրել տալ : Ասոնց մէջ կան նաև վաճառականներ ալ , որք դիւղացւոց ապրանք կը ծախսեն . վերջի Հօմօր դիւղաքաղաքին մէջ 40 տուն Լուսաւորչական և ազգասէր Հայ կայ , որոնց մէջ նշանաւոր են Սիմօն Ծատուրօլիլի Դրիգոր Փոփովիչ , Օհաննէս Սնտրուշքա և այլն :

Ասոնք եկեղեցի մ'ալ ունին , բայց քահանայ չունենալնուն համար , տարին 1-2 անդամ Սուչաւայէն (որ 4 ժամու հեռաւորութիւն ունի) քահանայ մը կ'երթայ Հօմօր որ լգոնէ պատարագ մը տեսնեն : Տղաքնին օտար գպրոց կ'երթան , բայց հայրերնին մեծապէս կը ցաւին ու կը դանդատին իրենց զաւակացը հայերէն ըստվրենուն վրայ :



## Չ Է Ր Ն Ո Ւ Վ Ի Յ

Ասի Պուքօվինայի մայրաքաղաքն է , Պէսարապիոյ ուահմանագլխոյն վրայ , Խօթունէն 2 ժամու չափ հեռոի , ձախ կողմէն Բրութ դետը կ'անցնի , որ կը դատէ Բումանիան Պուքօվինայէն : Սուչաւայէն ալ մինչեայս քաղաքը երկաթուղիով Յ ժամ կը տեէ :

Չէրնուվից 30,000 բնակիչ ունի մեծ մասը հարուստ, աղքատը շատ քիչ է . նաև քաղաքացւոց մեծ մասն ալ Հրէոյ է , բոլոր շուկայն և վաճառականութիւնը Հրէից ձեռքն է , բաց ի երկու հայաղդիներէ , որք հարազատ Առաւորչական են , Անտօն Պապաքար անուամբ :

Այս քաղաքին մէջ ամեն ազգէ ալ մարդ կ'գըտնուի , մանաւանդ որ Չէրնուվից՝ բոլոր Բուժանիոյ ու Վաճառիստանի կեդրանական ուսումնարանը կը համալուի . ոնի երեք հատ առաջին կարդի վարժարան , 12 քլաս , և 7 հատ երկրորդական դպրոցն բաց ի աղջկանց համար 2 դիշերօթիկ և 3 ցերեկեայ վարժարաններէ : Բուժանիոյ հարուսաները՝ օսար երկիրներէ իրենց զաւկները հոս կը զլկեն ուսումն առնելու , այնպէս որ իդական սեռի դպրոցաց մէջ մինչեւ 23 տարեկան աղջկները կը դանուին ուսմանց ընթացքնին աւարտելու համար , վերջապէս այս քաղաքն ամբողջ ուսումնարան մը ըլլալ կը կարծուի , ուր իրեն ամեն ճիւղերն ալ ունի :

Չէրնուվիցի մէջ 24 տուն Հայ կայ պապական , հարուստ երկրագործ և հաղատեր , որոնք շատ գիւղեր և արտեր ունին իրենց սեպհական , գժբաղդաբար ո՛չ ազգային զդացում ունին , և ո՛չ ալ հայերէն բառ մը գիտեն . մինչեւ իսկ Հայ ըլլանին ալ չ'են ուզեր խոստովանիլ , բայց խիստ քաղաքակրթեալ և ուսումնական են : Այնպէս որ Սուչաւայէն հոս , որ 3 ժամու չափ հեռաւորութիւն ունի , ճամբորդ մը մեծ և զգալի տարբերութիւն մը կը տեսնէ առաջնոյն և վերջնոյն բնակչացը մէջ , մէկուն տգիտութիւնը միւսին ուսումնականութեանը հետ հակապատկեր մը ձեւացնելով :

Հայերն այս քաղքին մէջ մինչեւ ցարդ եկեղեցի չ'ունէին , այլ Լատինաց եկեղեցւոյն մէջ խողան մը

կար յատուել , որ Հայ քահանայ մը կը պատօղադէ եղեր : Իսկ ջանիւք նոյն տեղի է . Միթուլցքի Հռովմէական քահանային , այդ 24 տառն Հայ ընտանիքը 100,000 ֆիորին ծախքով խիստ շքեղ քարաշէն եկեղեցի մը կառուցեր են , (որուն ազգահեր Մհծ . Զունդ 600 ֆիորին նպաստած է ) որ գեռ նոր այս տարի օծուած էր : Հայ մը որ այս փառաւոր եկեղեցին մանելով երբ անդամ մը Հայ արանց ու կանանց վրայ ակնարկ մը ձգէ , անհնար է որ տչքերը չը լեցուի , տհոնելով որ Սնեցի գաղթականութեան այս ընտիր մասին ալ ազգային և հայրենի զգացումները բոլորվին պապականութենէն թունաւորուելով , պապականութեան մէջ մարեր ու խեզզուեր են . Զը լսուիր բնաւ հայերէն բառ մը այդ Հոյսց բերմէն , որք եթէ օտար երկրէ համազալ Հայու մը հանդիպին՝ առաւաւելին միմիայն երեսը նայելով ըւելեայն կը ժըպտին , առավ հասկցնել ու յայսնել ուղելով թերեւո Հոյութեանն կատամմի ունեցած սէրն ու համակրութիւնը , իսկ առկէ զառ ալ ուրիշ բան չեն զիտեր , բայց միայն զերմաներէն բարեմը մը տալով հեռանալ , ցաւալի հառաջանքներ ու առաջային համար ախուր և չարադուշկ մտածումներ թողլով առաջգ :

Եկեղեցին երկու քահանայ ունի , մէկն է վերոյիշեալ Հ . Միթուլցքին , որ քիչ մը հայերէն դիտէ բարեբաղդաբար , իսկ երկրորդը ճիզվիթական դըպրոցի մը աշակերտ է , որոյ անունն անդամ արժան չէ տալ , հայերէն բարեմանդմամ տալ չը դիտէ , բայց եթէ շաբաթն անդամ մը թօւթակի պէս հայերէն թիւ պատարադ մընելէն զառ , այն ալ առանց նշանակութիւնը զիտնալու և հասկնալու երկու 1,45 տիրացու կայ ամսականաւ բռնուած , որոց արարողութեան համար պէտք եղած քանի մը հայերէն բառ սովորեցու-

յած են, ժամակօջն ու լուսարարը Լեհացի են : Վերապէս այս քաղաքին Հայերն ալ՝ մինակ այսօրուան օրու իրենց հայերէն թիւ պատարագովը կը ճանչցուին, այս ալ վերնայ նէ՝ ինը տես հոս տեղի 24 տնւոր Հայերուն ալ :

---

## Ս Ա Ւ Զ Ա Ւ Ա.

Աս հին քաղաք մ՞է, որոյ 2,000 տարուան բերդին մնացորդները աակաւին կը կենան : Քովէն Սուշով դեռ կ'անցնի՛ որ Մոլոօվիան կը զատէ :

Քաղաքիս բնակչաց թիւն է 15,000, որոց զրեթէ 4/3ը Հրէայ է, առոնք բոլորն ալ հարուստ և քաղաքին առուտուրը ձեռքերնին է : Հոս առաջներն Հրէայ չ'կար, և բոլոր վաճառականութիւնն Հայոց ձեռքն է եղեր, բայց օր բատ օրէ Հայք ցրուելով և Հրէայք շատնալով, այս վերջիններն այսօր հարստացեր, իսկ ընդհակառակն Հայերն ալ ազքատացած են :

Հրէից այսքան շուտ աճելուն և բազմանալուն պատճառներէն ամենէն դիմաւորը սա՛ կրնայ համարուիլ թէ, Հրէայք ընդհանրապէս 10-12 զաւակի տէր կըլլսն, մինչեւ Հայք ընդհակառակն 1-2 զաւակով կը բաւականան :

Հարստութեան մասին ալ Հայք դրեթէ իրարունախանձուս են և մէկմէկու մեծնալը չեն քաշեր, մինչդեռ Հրէայք ընդհակառակն միշտ իրարու օգնող և մշկմէկու հարստանալուն փափաքող են, ոյս ընթացքով կերեի թէ Հրէայք բոլոր աշխարհի ժողովրդոց ամենէն հարստան ու զօրաւորը պիտի ըլլան :

Առջաւայի մէջ առկէ 150 տարի առաջ 700 տուն Հայ կայ եղեր, 5 եկեղեցի և 2 վանաստոն ունենա-

լով , բայց ինչպէս առաջ ըսինք , ասոնք նախ Լեհաստանէն հոս և ասկէ ալ մէկ մասը վերջէն Վաճառիստան գաղթելով , ասկէ մինչև 70 տարի առաջ 200 տուն Հայ մնացեր է մինակ սոյն քաղաքին մէջ , ինչպէս կը տեսնուի եկեղեցւոյ արձանագրութենէն , իսկ այսօր 90 տուն Հայ քաղաքին մէջ կայ , 70ի չափ ալ շրջակայ գիւղերը : Քաղաքացի Հայոց մեծ մասը աղքատ է , իսկ զիւղացւոյ մէջ հարուստներ շատ կան , որոցմէ ոմանք ընդարձակ կալուածներու և շատը ամբողջ 2-3 գիւղի տէր են : Ասոնց մէջ Պարսնութեան տիտղոս կրող 6-7 Հայ ընտանիք կը դանուին , իսկ միւսներն հարուստ հողատէր են . մեծ մասը երկրադութեամբ կ'զբաղին , իսկ մէջներնին վաճառականութեամբ պարապող քիչ կայ :

Քաղաքին մէջ ընդամենը 23 եկեղեցի կայ , որոց 21ը օտարազգիներու է , և Հայոց 5էն միայն 2 եկեղեցիներն կանգուն կը կենան , իսկ միւս 3 եկեղեցեաց աւերակներն անդամ չեն տեսնուիր : Այժմու 2 եկեղեցեաց մինն է Ա. Խոչ , ուր ժողովուրդը կը յաճախէ գլխաւորաբար : Այս եկեղեցին Քիբրիեանց հայազգի իշխան մը շիներ է , որու տէրութենէն Պարսնութիւն արուեր է , և ոյդ աղնուականութեան տիտղոսին իրաւունքը տակաւին մինչև ցայսօր իւր ազգատոհմին բալր անդամներն ալ կը վայելին :

Եկեղեցւոյ դմբէթը կաթուղիկէի ձևով է , և բարձր քարաշէն զանդակասուն մ'ունի , գերեզմանատունն ալ սոյն եկեղեցւոյ բակն է :

Երկրորդն է՝ Ա. Սիմէօն անուն եկեղեցին քարուկիր փառաւոր շինուածքով , որոյ մէջ ալ գեղեցիկ գերեզմանատուն մը կոյ :

Հայոց 2 վանատուններէն մէկն է Ա. Օգուէնտ վանքը , որ գեղեցիկ եկեղեցի մ'ունի կաթուղիկէ և

քարաշէն զամդակատունով, յորմէ 42 ստք վեր Լուսաւորիչ անուամբ վարքը մատուռ մը կը տեսնուի, Քարաշէն առաջնորդ սրան մը կայ մէջը մատուռով մը, որն որ ըստ օրէ քոյքայտելու վրայ է, Ասի Ակորշան անուն անձ մը շիներ է, որոյ անունը քանդակեալ կը կենայ մատրան ճակատը :

Միւսն է Հաճկատար վանքը, որ քաղաքէն կէս ժամ հեռու, բլուրի մը վրայ շինուած է, ունի ուխտաւորաց սենեակներ, խիստ անոյշ ջուր մը, որոյ նրամանը չկայ քաղաքին մէջ, Այս վանքը հրաշագործ ըլլալու համբաւ մը կը վայելէ, ուր ոչ միայն Հայերը, այլ և օտարազգիք ալ կ'զան բժշկութիւն դըտնելու :

Յէ քաղաքին և թէ գիւղերուն մէջ գանուող այս 150 տունի շափ Համար՝ ընդամենը 2 քահանայ կայ. Տ. Լեռն և Տ. Յովհաննէս Կըյնայ, Ասոնք բաց ի ժողովրդէն առած նուէրներէն նաև տարեկան թոշակ կ'ստանան եկեղեցիէն, Գիւղերը դ տնուող Հայերը՝ շատ ժամանակ քաղաքը ըլլ կընալով կալ պատրագ տեսնելու, սահսրուած են Յունաց եկեղեցին ներն երթալ :

Գիւղաղդաբար քաղաքին Հայ եկեղեցիներն ալ մեծապէս քարւոքման և կանոնաւորութեան պէտք ունին, ժամասացաւթիւննին անկարդ և անկանոն է, մանաւանդ կարգացած շարականնին։ Այս եկեղեցեաց համար անպատճառ որիշ մէկ երկու ուսեալ և կարդ կանոն գիտցող քահանայներ պէտք են :

Սուչաւայի մէջ մեր գիտցած հին ամիրայութիւնը կը տիրէ, բառին բուն նշանակութեամբը, եկեղեցւոյ հոգաբարձուք ինչ որ հրամայեն՝ այնպէս պիտի ըլլայ, քահանայք ըստ ամենայնի պատրաստ են անոց հնազան գելու, սիս պատճառաւ կրօնքի դէմ

շատ բաներ աեղի կ'ունենան : Խնդիքս որ անցեալ տարի մկրտութեան մը առթիւ՝ քահանայից և հօգաբարձուաց մէջ վէճ մը ծաղելով, վերջիններն Պատրիարքարանէն ուրիշ քահանայ ուղելու ելան, Պատճառը ու էր թէ՛ հօգաբարձուաց մին ուրիշի մը գէմ ունեցած սխակալութիւնը յազեցնելու համար, կ'որատուիրէ քահանային թէ՛ երբոր երախոյն մկրտելու բերեն, մինչև որ հոյրը եկեղեցւոյն պարտք ունեցած 30 քրըմից սսկին չը հատուցանէ՛ չըլլաց որ զաւակը մկրտէ, Բայց քահանայն առանց մափկ ընելու այս պատուէրը, երախոյն կը մկրտէ . հօգաբարձուք իմանալով զայս, քահանայն առջել կանչել կտոյ և խըստիւ կը յանդիմանէ խօսքը մափկ ըրած չըլլալուն համար, առ որ քահանայն կը պատասխանէ թէ՛ ասի իւր պաշտօնն է, ուր որ մկրտութիւն, պատկ և ննջեցեալ մըլլաց, իր պարտքն է երթալ կատարել, զոր եթէ չընէ՛ իր կարգին և կոչմանը գէմ մեղանչած կ'ըլլաց, և թէ ինքը ստակի նոհուցու չէ և այլն:

Ասոր վրայ բարկանալով հօգաբարձուք՝ գանդատ կը գրեն Պատրիարքարքարանը յիշեալ քահանայից գէմ, պարտաշանցութեան յանցանօք ամբատանելով զանհնք, և ուրիշ քահանայ դրկուիլ կը ինդրեն Ս. Պատրիարքէն : Ստոյգն ըսելու համար քահանայք այս մասին յանցանք չունին, իսկ ուրիշ կողմանէ շատ մեղագրելի են, ինչու որ եթէ առած ստակնին իրենց դրապանը մտնելիքը գիտնան՝ անդիի ծայր կաշխատին, սյնպէս որ իրենց անյագ արծ աթսիրութենէն կարդերնին ու պատիւնին նուաստացուցած են, և հօգաբարձուք քահանայից հետ իրը ստորակարդեալ ծառայի մը հրամացելու պէս կը վարուին :

Հասարակ ժողովուրդը ձայն չունի բարձրացնելու և հաշիւ ուղելու, եկեղեցւոյ կարդաղը թիւն

և ամեն բան 2-3 հոդաբարձուաց ձեռքն է , որք 10  
տարին ի վեր է այս պաշտօնը կը վարեն :

Նաև Հայ եկեղեցեաց մէջ Լատինացոցմէ մէկ  
քանի սովորութիւն ներմուծած են : Օրինակի համար  
եկեղեցւոյ մէջ սովորութիւն ունին որ «Սուրբ սուրբի,  
Առէք կերէքի , Սրբասացութեան» և այլն միջոցին Լա-  
տինաց պէս սպասուորը զանդակ կ'հնչեցնէ , Ողջոյնի  
ժամանակ ժողովութքը զիրար չողջունէր : Առաքելոցն  
ալ կիսկատարըսելով չուտ մը կը լինցնեն :

Սրդէն ժողովուրդը եկեղեցի շատ չյաճախէր ,  
կրօնքէ գրեթէ բոլորովին պաշած է , բաց ի կնիկնե-  
րէ , որոնք միշտ եկեղեցիէն պակաս չեն ըլլար , բայց  
ասոնք ալ մինչև ժամերդութեան աւարտը բարձր ձայ-  
նով իրարու հետ խօսակցելով , ժողովրդին մտածական  
ազօթքը կը խանդարեն , վասն զի հոս վերնատուն չը  
դժնուելով , եկեղեցւոյ ատեանին կէսը այր մարդ կը  
կենայ կէսն ալ կին :

Մարդս վերջին աստիճանի զարմանք կիմանայ ,  
տեսնելով Սուչաւայի Հայոց այսքան կրօնքէ պաղիլը ,  
մինչդեռ Մաճախիստանի Հոյերն՝ որք հաղիւթէ 250  
տարիէ Սուչաւային Հունդարիա գաղթած են , բնաւ  
եկեղեցւոյ դբնէն չեն զատուիր և վերջին ծայր բա-  
րեպաշտ են : Ասոր պատճառն ըստ մեզ ուրիշ բան չէ  
բայց եթէ Սուչաւայի Հայ քահանայից անկարգու-  
թիւնն ու միայն իրենց շահուն համար աշխատելին  
եղած է , բայց ամենէն աւելի հսկող քարոզիչ առաջ-  
նորդ մը չկենալն է որ ամեն մարդ ըստ հաճոյից ըն-  
թացք մը բռներ կ'երթայ :

Թաղրոցնին շատ խեղճ բան է , ուր ուսումը հա-  
սպակ ընթերցմունքէն անդին չանցնիր , վարժապետ-  
նին է Աստուածատուր Պամական անուն ծերունի մը  
որ 500 ֆիորին թոշակ կ'սահնայ , բայց ինքը հայե-

րէն պարզ ընթերցմունքէ մը անդին չկրնար անցնիլ .  
նմանապէս գրած գիրելնին ալ Աղամէն մնացած է :  
Այս դպրոցը յաճախողներն խեղճ աղքատաց զաւակ-  
ներն են , որոց ամենէն աւելի պէտք է ուսումը , բայց  
հարուսաք իրենց զաւկներն քաղաքացին մեծ վարժա-  
րանը կը զրկեն տարին 100 ֆիորին թոշակով : Արդ-  
եօք այդ ստակով Հայոց դպրոցը յառաջ տանին և  
զարգացնեն , և աղքատ տղայք ալ հարուստներուն որդ-  
ւոց շնորհիւը ուսումն ստանան ու կըթուին նէ չը լլար :

Բայց որո՞ւ հոգն է այդ բանը , արդէն—ցաւալի  
է ըսել—բոլոր հարուստք այնքան հպարտ են և մե-  
ծամիտ , որք իրենցմէ ստորին մէկու մը անդամ բա-  
րեւ տալ կը զլանան , աղքատը մարդու աեղ չեն դներ ,  
ողորմութիւն խնդրող քաղաքացին կը վւնաեն առջեց  
նուն : Այն հարուստք իրարու ոխերիմ թշնամի են ,  
զիրար կը բամբասեն , շատերն իրարու հետ տարինե-  
րով սրդողած կը կենան , շաման ալ եկեղեցի չուզէր  
գալ եկեղեցւոյ հոգաբարձուաց մէկուն գէմ հակա-  
ռակութիւն կամ ատելութիւն մունենալուն համար :  
Իրարու շահու աչք կը տնկեն և զիրար սնանկացնելու  
և վատահամբաւելու կ'աշխատին :

(Ասով հանդերձ պէտք չէ բացառութիւններն ալ  
մունալ , ինչու ոք արդարութեան պարտք մը կատա-  
րած ըլլալու համար հարկ է խոստովանիլ թէ՝ Առւ-  
շաւայի Հայոց մէջ կը դանուին գեռ այնպիսի անձինք ,  
որք իրենց ներկայ վիճակին վրայ յուսահատեալ , մեծ  
վշտակութեամք անեքեռյթ ձեռքէ մը դարման և օդ-  
նութիւն կ'ակնկալեն՝ այս չարեաց և անտեղութեանց  
օր մը յառաջ բարձումը տեսնելու : )

Ասմաք այն աստիճան ճշմարիտ են՝ որ կընամք  
ըսել թէ տակաւին շատ պակաս են մեր այս յիշած  
թերութիւններն , ինչպէս կընայ վկայել նաևս Պէտ-

յիւք-տէրէ նստող այն աղնիւ Պ. Զունդ աղդասէր անձը , որն որ Սուչաւացի է , (բայց բնաւ մարդու հաւատալը չ'գար , ինչու որ անկարելի բան է թէ Սուչաւայի Հայոցմէ այսպիսի ընտիր և գովելի բարեմասնութիւններ ունեցող մարդ ենէ) :

Սա իւր հոգաբարձութեան օրովը , զոր վարեր է Սուչաւայի մէջ ասկէ 24 տարիի չափ յառաջ , վերջին աստիճան աշխատեր ու ճգներ է գոլրոցին յառաջադիմութեանը մասին , և երկու երեք տարուան մէջ բաւական ալ պտուղ և արդիւնք հասուցեր է , որոց մէկն է քաղաքիս Տ. Լեռն քահանայն : Բայց ինքը լուսամիտ և խիստ աղատասէր ըլլալուն , տեղացիք դըլիոյն փորձանք չ'է մնացեր որ չը բերեն , ուստի ինքն ալ չ'կրնալով համբերել , հոգաբարձութենէ հրաժարեր և ձգեր քաղաքը՝ Պօլիս եկեր է : Բայց իր բարի բնաւորութեամբը և անկեղծ ու արդարասէր վարքովը շատ Հայ երեելեաց սիրու շահելով , մեծ պատիւ ու համարում ստացեր է հոս , այնպէս որ այս օրուան օրո Պ. Զունդ թէ՛ ուսումնականութեան , թէ՛ հարըստութեան և թէ՛ պատուառորութեան մասին , Պօլեացի Հայոց մէջ երեելի և նշանաւոր անձանցմէ մէկն է , և սրոյ անունը նոյն իսկ իրեն թշնամի և հակառակորդն եղող Սուչաւացիք անդամայսօր ակնածութեամբ բերաննին կ'առնեն :

Մինչդեռ անդին , վիրաւորեալ սրտիւ Պ. Զունդի իրենցմէ բաժնուելով հեռանալին ի վեր է որ , իւրենք փոխանակ յառաջիմելու , օր ըստ օրէ յետադիմութեան երես բռնելով , այսօր այս տիսաւը վիճակին մէջ կը դանուին :

Սուչաւայի մէջ աղջկանց դպրոց չ'կայ , այլ գերմանուհի մը եկեղեցւոյ կարուածներէն մէկ երկու սենետկ վարձելով՝ հոն Հայ աղջկանց դերմաններէն

գաս կտայ , որոնք հայերէն բառ մ'ալ չեն դիտեր , Ավասու , միթէ այդ գերմանացին հետ հայ վարժու հի մ'ալ բերելով , 22 աղջկան համար գերմանուհւոյն վճարուած 220 ֆիորինի կէմն ալ այդ Հայ վարժուհին տալու ըլլան նէ գէշ մի կ'ըլլայ , որ Հայ աղջկան արն ալ գոնէ օրը իրմէն մէկ երկու հայերէն բառ ու խօսակցութիւն սովորելով մայրենի լեզունին անկորուստ պահած կ'ըլլան : Բայց ուր է այն սպին և այն զգացումը որ զասոնք մտածէ :

Այս տեղի Հայ ժողովրդին մէջ ալ ամսւանութիւնը նուազած ըլլալուն համար , Հայ օրիորդաց շատը օտարազգիներու հետ կարգուելու ախտին հետեած են : Տեղացիք մարդու հետ սերտ բարեկամութիւն չունին , վերջին ծայր կառկածու են , և տեսակցութիւննին խիստ ցուրտ է : Տակաւին կը տեսնուի այս տեղի Հայոց մէջ Թաթարաց պէս հէտպէտ , հնարքէ և եական գնողներ , զսրս տեսնողը՝ հին աշխարհի մարդոց վրայ կրնայ գաղափար մ'ունենալ :

Այժմ այս քաղաքին համար խիստ ստիպողական է գպրոցի բարեկարգութիւննու յառաջադիմութիւնը , և լու հայկաբան դաստառուի մը և վարժուհիի մը պէտքը խիստ զգալի և անհրաժեշտ է :

Այս գործն ալ ի զլուխ հանելու համար , հարկ է Ռումանիա բանիբուն առաջնորդ մը զրկել , որն որ մերթ ընդ մերթ այս կողմերն ալ այցելելով՝ ջանայ եկեղեցին բարեկարգել , ժողովուրդը կրօնասիրութեան բերել , քահանայից վրայ հսկել և մէկ երկու բանիբուն քահանայ ևս աւելցնել :

Եկեղեցին 15,000 ֆիորին եկամուտ ունի , բայց ի ուխտաւորաց և եկեղեցի յաճախող ժողովրդեան կողմանէ տրուած նուերներէն , որոց կէսը հազիւ թէ ծախը կ'ըլլայ . իսկ միւս ստակներն ուր կերթան կամ

ո՞ւր մնացած են, ոչ դիտցող կայ և ո՛չ հարցնող վնասող:  
 Սակայն մենք չեւ անցանք գրամական կորսուէն, հա-  
 յութեան այս մնացորդը դռնէ չը կօրսուի, որոյ հարկ  
 եղած գարմանն ու միջոցը ձեռք տանուին Ա.զդ., վար-  
 չութեան և Ա. Պատրիարքին լուրջ ուշադրութեանը  
 յանձնել հարկ կը համարիմք: Ապագայն պիտի անի-  
 ծէ զմեղ՝ եթէ այս մասին մեր ձեռքէն եկած ջանքն  
 ի գործ դնելու զլանամք և կամ անփոյթ մնամք:

---

## Ա Ե Բ Ա. Գ.

Հոս ընդամենը 10 տուն Հայ կայ, որք նոյնպէս  
 Չերնուվիցի Հայոց նման բնաւ հայերէն չեն դիտեր,  
 բաց է 1-2 անձանցմէ, կրօնքով Հռովմէական են, չունին  
 յատուկ եկեղեցի, Լատին քահանայ մը կը հովուէ  
 զիրենք, Երենք կ'ըսեն թէ՝ հոս առաջները 700 Հայ  
 ընտանիք կան եղեր . . . :

Ուր են մնացեր արդեօք, աւազ քեզ, ազդէ  
 Հայոց . . . .



# ԼԵՀԱՍՏԱՆ

ԻՆՎՈԴ ԿԱՄ ԸՍՏ ԳԵՐՄ. Լ.ՄՊԼԻԲԿ

Այս քաղաքը 1060ին շիներ է Լևոն անուն դուքս  
մը, որոյ անուամբը երբեմն Լէօրօլիս ալ կայ յիշուած :

Կերևի թէ այս քաղաքը Հայոց առաջին գաղ-  
թականութեանը միջոցները շինուած է, ինչու որ թէ  
քաղաքին շինութեան և թէ Հայոց այդ առաջին գաղ-  
թականութեան թուականացը մէջ ակներե զուգադի-  
պութիւն և նոյնութիւն մը կայ :

Հայք, առաջին անդամ 1420 տնւոր սկսած են  
գաղթել հոս, ուր նախ փոքր, բայց վերջը 1483ին  
փայտաշէն մեծ եկեղեցի մը շիներ են, որոյ յիշատա-  
կարանը կը կենայ գեռ, Հայերն ինչքան որ իրենք  
չեն շինած այս քաղաքը, բայց այնքան ծաղկեցու-  
ցեր են որ՝ այն ժամանակը 100 տարուան միջոցին՝  
Գերմանիոյ առաջին դեղեցիկ և վաճառաշահ քաղաքն  
եղած է :

Ստուգիւ ալ ասի մայրաքաղաք մը ըլլալու ամեն  
հարկ եղած հանգամանքներն ունի. քաղաքը մեծ է  
և զարդարուն, տուները բարձր ու քարաշէն, նոյն-  
պէս բարձրաբերձ և հսկայած 30ի չափ եկեղեցի-  
ներ : Ասոնցմէ զատ ունի, նաևս երևելի համալսա-  
րան մը, և վարժարաններ, մարմարեայ արձաններով  
զարդարուած թատրոններ, հասարակաց ոլարտէզներ,  
զրոսալայրք և գեղեցիկ ու սքանչելի հրապարակներ,  
վերջապէս իրօք մայրաքաղաք մը ըսուելու արժմնի է  
այսօր :

Մինչև 14րդ դարուն՝ 7,000 Հայ ընտանիք կայ  
եղեր այս քաղաքն և իր շրջակայիները, իսկ հետզհետէ

կորսուելով ու ցրուելով, մինչև 1640ին 4000 ընտառ  
նիք մնացեր է, անկէ յետոյ Նիկօլ ԺԱ. Թորոսեվիչ  
Հայ չեպիսկոպոսը պապականութիւնը բռնի Հայ ժո-  
ղովրդեան մէջ մայնել ուզելով, ժողովրդին երկար  
ատեն գէմ կենալուն, երկապառակութեան մեծնալուն,  
43-20 տարի Եկեղեցիները գոյ մնալուն, վերջապէս  
ժողովրդին արդար ձայնը՝ պապականութեան մէջ խըդ-  
դուելուն պատճառառաւ, շատերը թողլով Լեհաստանը՝  
Պուլաւա, Վոլտավիտ և ուրիշ քաղաքներ զաղթեր են  
1800 ին սկիզբները տակաւին 200 հայ ընտանիք կար  
հոս կըսին, բայց առաջ որ այսօր 20 ընտանիք մնա-  
ցած է ընդամենը.

Ասկէ 2 դար տռաջ Հայերն 3 Եկեղեցի, 2 վանք  
և մեծ ալ գպրոց մ'ունին եղեր՝ բազում կալուածնե-  
րով ու իրեն սեպհական գիւղերովը. իսկ այսօր մէկ  
վանատուն և ասոր կից Եկեղեցի մ'ունին իր սեպհա-  
կան կալուածներովն Հայոց վանքը մեծ ու քարուկիր  
շինուած է Օրմեանցքի Ռուիձա (որ նշանակէ Հայոց  
թաղ) ըսուած տեղը, այս վանքին մօտն է նաև ե-  
պիսկոպոսարանը, կանոնիկոսարանը և կուսաստանը.

### ԵԿԵՂԵՑԻ

Հայոց Եկեղեցին է արքեպիսկոպոսանիստ բարձր  
փառաւոր քարաշէն՝ Աստուածածին անուամբ, որն որ  
3 դուռ ունի մեծ ու փառաւոր, երկու կողմը 13 խո-  
րանով. ասոնց մէջ մեծ խորան մը կայ Ա. Լուսաւոր-  
չի, որ հարսւային կողմը կ'իյնայ, ուր ամեն հինգ-  
շաբթի օր պատարագ կ'ըլլայ՝ մէկ երկու կտոր շաբա-  
կանի երգերով. Այս պատկերն ամբողջ խորանին մե-  
ծութեամբն է և սոկեպատ, զոր Կատարինէ անուն  
Հայ կին մը նուիրեր է 1608ին, տեսիլքին մէջ այն-

պէս հրամայուելով իրեն, ինչպէս որ նոյն պատկերին  
մէջ մի ըստ միոնէ դրուած է :

Ս.յս եկեղեցին խիստ հարուստ է իր թանկադին  
զարդերովը, ուր տակաւին Անիէն բերուած եկեղեց-  
յական ծանրագին անօթներուն մնացորդները կը կե-  
նան, ինչպէս են 1010ին գրուած դրչագիր Ս.ւետարան  
մը ոսկեպատ, 2 հատ ոկին, մէկ քանի ձեռք ծանր  
զգեստներ և այլն. Եկեղեցին հայերէն լեզուաւ պատա-  
րագ կըլլայ ըստ ծիսի Լատինաց, իսկ ժամերգութիւնը  
Հայոց շարականներով կը կատարեն, այն ալ ոչ թէ ա-  
մեն օր : Կայ 10ի չափ Հայ կանոնիկոս, բայց եպիսկո-  
պոսէն զատ ուրիշ մէկնալ չգիտէ հայերէն, միայն թու-  
թակի պէս շարական կարգալու համար՝ հասարակ  
պարզ ընթերցմունք մը սովորած են : Ս.յս եկեղեցւոյն  
յիշաստակարանը այսպէս դրուած է :

Աթոռանիստ եկեղեցին Հայոց Խվավայ շինեցաւ յամի Տն.  
1183 փայտաշէն . իսկ ի 1565 շինեցին քարաշէն. Հիմնադիրն էր  
պղ. Յակոբ Շահնշահ Կաֆացի . և պղ. Ստեփան Փանոսեան Ար-  
քահամենց ի Վայսուրի քաղաքէ : Ի 1509 Նորոգեաց զդմբէթն  
յարգելի Առվաստուր Քօփուլէն : Ի 1562 կանդնեաց զանդակա-  
տունն պղ. Անդրէան Կաֆացի . ի 1725 շինեաց զվերնաստունն  
կուսանաց և բարձրացոյց զգաւիթն պղ. Խաչիկ Աւկուստոնօվիչ  
ազնուական իշխանն և գատաւորն (Հայ) գատաստանին . յորոց  
յիշաստակ կանգնեցին զսիւնն արտաքին :

### ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ

Աէմպէրկ երեք եպիսկոպոսութիւն կայ, Լատին  
Հայ և Առուս, երեքն ալ մէկզմէկէ անկախ Հայոց ե-  
պիսկոպոսարանը շինուած է եկեղեցւոյ արեւելեան կող-  
մը բարձր և գեղեցկաշէն, ունի 8 անեւակ, 4 սրան,  
մեծ սեղանատուն մը և փոքրիկ մատուռ մը : Աե-  
ղանատան պատերան վրայ՝ մինչև ցարդ Աէմպէրկ  
նսաող Հայ եպիսկոպոսաց պատկերները քաշուած, ու

ոսկի շրջանակներու մէջ առնուելով կախուած կը կե-  
նան, որոց առաջին 40 ետիսկոպոսները լուսաւորչա-  
կան են մինչև Նիկոլ Թօոքոսեվիչ չեպիսկոպոսը, առ-  
կէ ալ մինչև Կայեղան Վարդերեսեվիչ 9 պատվական  
հայ եպիսկոպոսունք, ընդամենը 19 պատկեր, որոց  
շարքին մէջ այժմու հայ եպիսկոպոսինն ալ կը տեսնուի:

Եպիսկոպոսարքունը բազմաթիւ արծաթեղէն և կահ  
կարասիք ունի, նաև թանգարան մը կայ հայերէն հին  
դրեանց, ուր կըսուի թէ 1500 կտոր ձեռագիր մաս-  
եան կը դանուի եզեր ժամանակաւ, որոցմէ եպիսկո-  
պոսներէն ու քահանայներէն շատեր կամ իրենք ա-  
ռեր և կամ ծախսեր են, շատն ալ Վիեննայի և Բէշ-  
թոյի արքունի մատենագարանին նուիրեր են, ինչ-  
պէս որ Վիեննայի կայսերական գրասունը այսօր 350  
կտոր գիրք կայ հայերէն: զոր նոյն աեղի Միւլէր  
Քրիսթից հայագէտ գերմանացին վկայած է: 1616ին  
հոս հայերէն տապարան մը հաստատելով, առաջին ան-  
գամ Սաղմոս մը տապարեր են, իսկ շատ շանցած  
գոցուեր և խաբանուեր է տապարանը, որուն յիշատա-  
կարանը ոյսպէս կը զրէ:

Ամենակարօղ զօրութեամբն Աստուծոյ կաղմեցաւ նոր տպա-  
գիրս երկիրն Ելախաց քաղաքս Աէլ կոչեցիալ ընդ հնդանեաւ նընծ-  
ման տուրք Ածածնին ձեռամբ յոքիամեղ քարմատանեէնց Յովանէս  
երիցուս, զոր հոգս առեալ մածաւ աշխատութեամբ և բազում  
ժամանակ տարի մի բոլոր արհեստաւորաց հետ դատեցայ մինչև  
գիրն ի գլուխ հանի և նոր կաղմարան սահմանեցի. և վասն փոր-  
ձի նախ զերգոն Դաւթի մարգարէին տալապրեցի և յօդուտ և ի  
շահ անտուածառէր աղօթօղաց մերասէռ ազանց . . . արդ՝ ե-  
ղեւ զրաւ ոորին թվականութեան շայոց Ծին ամին. յամսեանն  
գեկտեմբերի ժեւ և ի Տեառն 1616 ամի . . . ի թագաւորութեանն  
Քրիստոնէից Աէհ աղդին բարեպաշտ արքայի երրորդ Զիկմունտին:

Եկեղեցւոյ զանդակատունը մեծ և բարձր է ե-

պիսկոպոսարանին դրանը վրայ , ուր այսպէս յիշատառ կարան մը կայ գրուած :

Ահ Հայոց թվին և յամեանն յունվարի , ԽՃ. Անդրեասն Կաֆացին շինել ետուր զտուն զանկակին վասն իւր հոգոյ և իւր ձնողացն Խաչերեսն և Սառային և եղբօրն աւատքն . եւ ամնոյն զարմիցն ջիսուսին :

Եպիսկոպոսարանին և եկեղեցւոյ մէջտեղի փոքր բակը բարձր մարմարեայ քարէ սիւն մը կանգնած է , որուն վրայ հայր Յովոէլ ղՅիսուս դիրկը առած է , մարմարեայ սիւնին վրայ այսպէս փորագրուած է :

Ի վասս սրբոյ Երրորդութեան զօյս եկեղեցի և վանս նորոգեաց պատուելի Պարսն Խաչիկն Աւկուտօնօվիչ կառաւար և միծաւոր Հայաստանցի ի 1752 . յաւուր սրբոյ Խաչին :

#### ԱՅՆ ԽԿՈՍԱՐԱՆ

Կանոնիկոսարանը փողոցի վրայ բարձր ու քարու կիր փառաւոր շենք մ'է , մէջը շատ մը սենեակներ կան իրարմէ բաժնուած զատ զատ , ուր քահանայք կը բնակին : Հոս ալ կայ նաևս ազգային թանգարան մը , ուր կը պահեն եղեր Հայք իրենց թանկաղին մոտեաններն , իսկ այժմ ասոնց չորրորդն անդամ չէ մնացած : Հոս է նաև Հայոց գանձատունը , ուր առաջներն 40,000 սոկի հասոյթ կը մտնէ եղեր կալուածներէ , բայց հիմայ շատ նուազ բան մ'է եղած հասոյթը , կալուածոյ շատն յանիրաւի յափշտակուած և օտարազդիներէն գրաւուած լինելու :

Հոս շատ տեղեր հայերէն քանդակագիր յիշատակարաններ կը տեսնալին , զսրս Անեցիք ընծայեր են , և անհնար բան է որ մարդս—կամ մանաւանդ Հայ մը—դանոնք կարդալու ատենը կարենայ ըալք զսպել , Հայոց ո՛ր դուռը զարնես , — «Հրամեցէք սիւ-

բելի , ձեր երկրէն և մեր ազգակիցներէն ի՞նչ յուղը ու աեղեկութիւն ունիք , պատմեցէք մեզի ահանենք հրաւերը փոխանակ լսելու , խսկոյն լեհերէն լեզուաւ — «ո՞վ է ան» կը հարցնեն ներուն : Եթէ ըստ թէ — Հայ եմ—մենք հայերէն չենք դիտեր կը պատասխառնեն : Կարծես աղանիի բոյները՝ թունաւոր օձերու բոյներ են դարձեր :

Կանոնիկոսարանի բակերն ըսլոր Հայ տապանութերով ծածկուած են , որոց մէջ 1160 թուականին մեռնող մարդոց տապանաքարը կը տեսնուի :

### ԿՈՒՍԱՍՏԱՆ

Հայ մը երբ այս կուսաստանէն ներս մտնէ , արիւնը կը սառի , մազերը կը ցցուին ու շունջը կ'սպառի , ինչու որ հոս պիտի տեսնէ 15 Հայ օրիորդք , և 44 ալ լեհ միանձնուհիք : Կուսաստանն այնքան մեծ ու ընդարձակ չէ , բայց ամեն բան կայ իր մէջն ամբողջ , ունի նաև սիրուն և դեղեցիկ մատուռ մը , ուր օքը 3 անդամ ժամասացութիւն կ'ըլլայ :

Ասոնք Բիհնետիկտեան կարգէն եղող միանձնուհիներն են , ամեն սենեակ լի է պատկերներով : Պըրնէն ներս մտնելուդ ձախ կողմով սենեակ մը կայ , որոյ կէօք վանդակով գոցուած է , մէջտեղն ալ դուռ մ'ունի , որոյ կէսէն վեր փոքր պատուհան մը կայ , ուրիշ գլխաւոր մայրապետը արանց հետ կը տեսնուի ի հարկին : Այս սենեկին մէջ կան միանձնուհեաց շինած ձեռագործներն , մէկ քանի բնադիտական գործիքներ և խելմը որբոց պատկերներ : Միանձնուհիք գիտուն և ուսումնական են , միանդամայն և մայրապետութեան բոլոր հանդամանցներն ալ ունին , որոյ համար օտարաց առջելը մեծ պատիւ ու համազում կը վայելին :

Առնք պարկեցտ և բարեպաշտ կատարեալ միանձնուհիներ են , և ոչ թէ օտար մայրապետաց պէս երիտասարդ և պարզուա վարդապետներու սենեկապաններ : Վանքին գրնէն ամեննեին գուըս չեն եներ , ոյլ մինակ տարին անդամ մը Անունոցին գերեզմանատուն կ'երթան :

Այս միանձնուհիներն քաղաքին աշքատ 600 ի չափ աղջկանց ծրի գասատութիւն կ'ընեն , կրօնասիրութիւն և ձեռագործ կը սովորեցնեն , առանց ո և է վարձք , կամ նուէր մընդունելու : Օտար ազգաց մայրապետներն իրենց չափուալետին հետ՝ գիմակազզեատ ու ծպուեալ պարահանդէս գացած ատենին , ասոնք վանքին մէջ կէս զիշերուն ելութիւն , մէկ ժամ զիշերային ժամերգութիւն կը կատարեն :

Գլխաւոր վանամայրն է Գութերցի Կայեդանոս Անրդիսօվիչ , երկրորդ մայրապետն է Նեսքօլաստիքա Եավօնիչ , իսկ ասոնց ընդհանուր վերատեսուն է Լեմոլերկի :

Երբ գլխաւոր մայրապետին հետ տեսնուեցայ , իւր հայերէն խօսիլը տեսնելու՞ սիրտս փողձկելով ուրախութենէս աչքերս սկսու լեցուիլ , ինքն ալ վզէն կուրծքին վրայ կախուած Գրիգոր Լուսաւորչի պատկերը պադնելով սկսու լոլ , և պահ մը լուռթենէն յետոյ , սրտին խորէն հառաջանք մը արձակելով ըստ , — «Սենք Հայու երկրէն (Հայաստանէն ըսել կուզէր) եկած ենք , հոս կը կորինք , այս մենաստանին մէջ երկու մայրապետէն զատ հայերէն գիտցող չկայ , բայց Գրիգոր Լուսաւորչի շարականներն ամենուն պարտքն է որ սովորին ու կորդան , (ասոնք Հայոց շարականներուն անխափիր Լուսաւորչի շարական կըսեն , վասն զի ինչ բան որ Լատինաց մէջ չկայ և Հայոց յատուկ է՝ զայն Լուսաւորչի կը սեպհականնեն .) ունիմ հոս :

ըստու . 44 Լեհ մայրապետ , որ շարականը դոց զիտեն , ա՞հ . . . բայց ի՞նչ ընեմ , ես զիտեմ որ մեր քուն հաւաքը այս չէ , մեր Հայու երկրին ( Հայաստանի ) կրօնքը Գրիգոր Լուսաւորչինն է , մենք ա՛լ հօս պիտի կորինք , եթէ ես մեռնիմ , այս շարականներն ո՞վ պիտի կարդացնէ , եթէ ինչ ետքը որ մ'ալ զլիսաւոր վանամայրը Լեհ ըլլայ , ո՞ւր կը մնայ այն ատենը շարականը , հայերէն ժամերգութիւնը ևայլն :

Բոլոր օտար քաղաքաց Հայ գաղթականութեանց մէջ , ես այս կնոջմէն ղատ Հայոց վրայ լացող չոեսայ . Խնքն իր ձեռքովը բերաւ ցցուց շարականը , որ Կ. Պօլիս տպուած էր , և ի պատիւ ինձ՝ միանձնուհիներն ներս ժարու ժողվելով միաբերան «Առաւոտ լուսոյ» երդը կարդացնել տուաւ , որն որ հեղեղներու պէս աչքէս արտասուք բղիսեցոյց . կարծելով թէ հրեշտակներու ձայն մ'եր լսածս , Խնչ քաղցր միանգամայն և աննկարագրելի ուրախութիւն մը կ'զդայ մարդ՝ այն Հայոց աւերակներուն մէջ Հայ միանձնուհեաց շարականի երգելն լսելով :

Վանամայրն ինքը պատմեց Սելբիոնեղեկի վարդապետին հօն նախ քան զիս այցելութիւն մ'ընելը (\*) և ճիշդի ինձի պէս զիրենք աեսած ատեն արտասուելը և ճանչցնելն իրենց ըսելով թէ—«Զեր բուն հաւատքն այս չէ , ձեզ խաբեր են , դուք Գրիգոր Լուսաւորչի հաւատքն ունինք կըսէք , բայց մեծապէս կը ոխալիք , զի ձերը պապական կրօնք է , որ նոյն իսկ ձեր Հայ աղդին ոխերիմ թշնամի մ'է , ևայլն եայլն» Ասոնք պատմելէն վերջը՝ մայրապեան իր քոլէն Մել-

(\*) Ղեր. Մելքիոնեղեկի վարդապետի , այժմ Զմիւռնիոյ առաջնորդին , այն ատենն ըրած այն այցելութիւնն նկարագրող մէկ երկու կտոր նամակներն այն ժամանակի Մասիսի թերթերուն մէջ հրատարակուած են :

քիսեդեկ վարդապետի լուսանկար պատկերն հանեց , զոր ինքը զբկած էր յաստկ նամակաւ . ցոյց տուաւ ինձ զանոնք և ըստ թէ «քանի կարդացի նամակը՝ լացի » :

Մայրապետը այլեռոյլ բաներ ինձ հարցնելով տեղեկութիւն կուզէր և հետաքրքիր էր իմանալու թէ «ինչպէս որ տմեն այլ երկիր ցրուեցանք , կըսէր , արդեօք ժամանակը չէ՞ որ վաղուց պէս ամենքնիս ալ նորէն մէկտեղինք : » Ես ալ մեծ յայսեր տալով իրեն երբ վշտաղին կը բաժնուէի՝ սա յանձնարարութիւնը ըրաւ ինձ , ըսելով թէ , — Լուսաւորչի Պատրիարքին (Հայոց Պատրիարքին ըսել կուղէր) ձեռքը կը պագնեմ , և իր օրհնութիւնը կը հայցեմ , մանաւանդ ուրիշ Լուսաւորչի մայրապետաց իմ կողմանէս բարեներ տարէք , և այլն :

Վերջապէս բառ և գրիչ կը պակսի այս տիսուր տեսարանն ամբողջ նկարագրելու :

Աէմպէրկի այժմու եպիսկոպոսին անունն է Օրմիանցքի մետրօպօլիտ Քօմաշկա Կրիկոր (այսինքն Հայր Գրիգոր Քօմաշկա եպիսկոպոս Հայոց) : Ասոր նախորդ եպիսկոպոսը բնաւ հայերէն չղիտէ , և ազդասիրութեան նշոյլ մանգամ չկայ եղեր վրան , իսկ այս վերջին մետրօպօլիտը յայժ ազդասէր ըլլալով , տեղւոյն Հայոց այս վիճակին դարձան մընել կը մտածէ :

Յիշեալ եպիսկոպոսն այսպէս կը յայտնէր իւր վիշտը . — «Յաւելով կ'ըսեմ թէ՝ կըսէր , Աէմպէրկի վերջին Հայ եպիսկոպոսը ես պիտի ըլլամ , վասն զի այս տեղի Աէհ եպիսկոպոսը ժամ մ'առաջ՝ անունավ միայն Հայ այս ժողովուրդը իր հովուութեանը տակ առնուլ և բոլորովին ընկճել կը նայի , առանց դոնէ յիշելու 700 տարի շարունակ Հայոց առ Աէհացիս ըրած ծառայութիւններն , առանց յիշելու թէ Հայք ո՞ր աստիճան ողներ են թէ նիւթապէս և թէ բար-

թոյտապէս Աեհաց թաղաւորութիւնը զարգացնելու, ուր Հայք Յ քաղաք չիներ են . թէ Աեհ թաղաւորք՝ Հայքին իրենց թիկունք և ապաւէն առած՝ պատերազմներն անդ ամ. Հայոց ոսկիներով շարունակելու գիմացեր են տարիներով, ասոնց ամենքը Աեհաց արձանադրութեանցը մեջ դրուած ու յիշատակուած է , և զորս այսօր ծերունի Աեհացիք չեն ուրանար և կը վկայեն այսպէս ըլլալը : Գիբաղդաբար, կը յաւելոյի Աէմակերկի Հայ մետրոպոլիտը, նախորդ եպիսկոպոսաց դործած ազգային պարտազանցութեան տուգանքը ես պիտի տուժեմ եթէ ես վերջինն ըլլամ. և պատմանթեան մէջ ինձի համար Վասակ պիտի ըսեն, չունենալով տեղեկութիւն անցելոյն վրայ :

Հայր Գրիգոր Քօմոչկա այնքան կը տաղնապէր այս փափաքով, որ իր նպատակն ի դլուխ հանելու և իդար լցնելու համար անձամբ ելաւ. Վիէննա դնաց, որ Վիէննայի միաբանութիւնը համոզելով առկէ հայերէն զիացող մէկ քանի քահանայներ իր հովուութեանը տակ դանուած հայաբազաքները զրկէ . որպէս զի թէ այն տեղուանքը Հայ ազգութիւնը չկորսուի, և թէ իր մահուանէն յետոյ Վիէննացիք ձայն ունենան՝ այս տեղի Հայ եպիսկոպոսութիւնը թոյլ չը տալու համար որ խափանի, չը զեանալով ու չը կարծելով միամիտ մարդը թէ՝ այդ Վիէննացւոց քով ազգութեան ոզի բնաւ չը մնալով, ասոնք ամենէն աւելի պիտի դիւրացնեն Աեհատանի Հայ եպիսկոպոսութեան Հռովմայ ձեռքն անցնիլը, որպէսզի աւելի փառաւորուին և իրենց մատնութիւնը հայրապետական օրհնութեամբ վարձատրուի :

Այս եպիսկոպոսը հայութեան բոլոր հանդամանքներն ունի, և իր ողջութեանը ձեռքէն եկածին չափութեած է աշխատիլ Հայ ժողովուրդը լուսուորելու,

Հայոց բան մ'ալ չպիտի կրնայ ընել, վասնդի թիկունք  
և օգնական մը չունի, Հայոց վրայ կարգած քահառ  
նայից զրեթէ մէ ին ալ հայերէն չկիտէ, մէ ին ալ ազ-  
գային զգացում չկրեր :

Քաղաքիս Հայոց եկեղեցւոյն կալուածներէն շա-  
տը՝ յիքառի թէ ոլէտ այլք յափշտակած ու զբաւած  
են, սակայն գեռ բաւական մնացած է իրեն սեպհա-  
կան կալուածներ, որոց շնորհիւը քահանայք առաջո-  
քէն կուտեն ու ամեն բան կը վայելեն, սենեակներ-  
նին կոմներու ապարանաց որաշներու կը նմանի, ինչ-  
պէս նաև սեղաններնին, և . . . :

Քաղաքիս մէջ Հայ վարժարան չկայ, Հայ տղայք  
օտար դպրոց կը յաճախեն, ուր բնականաբար ամեն  
բան կը սովորին բաց ի հայելենէ :

Օր մը երիտասարդ մը ցոյց տուին ինձ, ըսելով  
թէ Հայու մը զաւակ է, Արախութեամբ մօտեցոյ  
իրեն յուսալով որ գէթ երկու բառ հայերէն խօսք  
մը պիտի լոէի բերնէն, բայց որքան մեծ եղաւ զար-  
մանքս՝ երբ իմացայ թէ ինքն ալ իր Հայ ըլլալը ա-  
ղէկ մը չէր գիտեր, թէ պէտ խոստովանելով կը յայտ-  
նիր դինքն ինձիներկոյացնող անձնն ըսելով թէ «Հայրս  
կըսէր որ մենք արևելեան աղջի սերունդ ենք»

Հոս 11 որանդոկ կայ, որոց երկուքը Պարուց ո-  
նուն երկու հայովով եղբարց սեպհականութիւնն է :  
26 եկեղեցի կայ, որոց ամեն մէկը 10.000ի շափ ժո-  
ղովորդ կտունէ : Եեհացւոց բարեպաշտութիւնը տես-  
նելով մարդ՝ սցնալէս կը կարծէ թէ տառնք մենէ տար-  
բեր մարգիկ են, կարծես ամենքն ալ կրօնաւոր ու  
չերմեռանդ ծներ են, և ամբողջ Լէմպէրկ ալ վանա-  
տուն և կուսասաան մ'է, Ընդհակառակն քահանայք  
կը օնախիրութեան մասին բոլորսին անտարբեր, կեղ-  
ծաւորութեամբ ժողովրդին բարեպաշտութիւնը շա-

ի աշտը գործածելով զանօնք որսալ կը հային , ճիշդ այն վարպետ գերասանին պէս՝ որն որ աղջկան կերպարանք մտնելով , և աղջկան կեղծ ձեւոր ընելով ռամիկ ժողովուրդը կը խարէ . Այս քահանայներն ժամերգութեան ատեն գերասանական կեղծ չերմեռանդութիւն մը ցոյց տալով , պատարագէն վերջը երբ գուրս ելնեն եկեղեցիէն ; այլեւ ազատ են ամեն բան ընելու :

Այժմ հոս ալ միւս քաղաքաց նման , խիստ հարուստ են Հրեայք , որք բոլոր բնակչաց մէկ երրորդը կը կազմեն , և որոնք ոսկերիչ , սեղանաւոր և վաճառական են , և մեծամեծ շենքերու տէրերն զրեթէ միշտ Հրեայներն են :

Եմագէրկի եպիսկոպոսին իրաւանութեանը ենթարկեալ Աւոտրիոյ Եհհասաանի հայաբնակ քաղաքներն ալ հետեւեալներն են :


### ԱՏԱՆԻԱԼԱՎ

Այս քաղաքը 1670ին հիմնաւած է Անդրէաս Բեթօցքի անուն իշխանէ մը , և իւր հրաւիրմամբ 3-400 Հայ ընտանիք գաղթելով հօն , քիչ ժամանակի մէջ քաղաքը պայծառացուցեր ու ծաղկեցուցեր են : Այն ատեն սոյն իշխանը իւր ծախիւքը ի պատիւ և ի փոխարինութիւն Հայոց մատուցած ծառայութեանցը : Հայկական վառաւոր եկեղեցի մը կառուցեր է , իսկ Հայերն 1741ին նոր և առջինէն աւելի փառաւոր մեծ եկեղեցի մը շիներ են , որ ցարդ կը կենայ , և զոր տեսնողը մեծ զարմանք կ'զգայ Հայոց այսքան եկեղեցի շինելու փափաքնուն վրայ , թէ ուր որ գացեր են կրօնքնին ու տաճարնին մէկտեղ տարած են , Եւ ո՞վ

կլնայ ուրանալ թէ՝ Հայք պատճառ եղած են իրենց  
դրացի ազգաց նախանձը դրդուելու՝ որ իրենք ալ Հա-  
յոց պէս մեծ եկեղեցիներ շինելու ճաշակ մ'զզալ  
սկսան, ինչպէս որ Աւարիոյ բոլոր երկրին մէջ, բաց  
ի Վիքնայի Ա. Ստեփանոս եկեղեցին 13րդ դարէն  
տռաջ այնքան յիշուելու արժանի եկեղեցի մը բնաւ  
չը տեսնուիր եղեր :

Հայոց այս եկեղեցին անդամ մը տեսնողը՝ Խոս-  
լիոյ երեելի եկեղեցիները բնաւ չը տեսած՝ կրնայ ա-  
սոնց վրայ դազափար մ'ունենալ, որոցմէ բնաւ պա-  
կաս կազմ մը չունի : Սոյն եկեղեցին որ Սնարատ  
Յզութեան անուանը նօւիրուած է, մատենադարան  
մ'ունի, որոյ մէջ և լեզուէ 3-400 կտոր գիրք կայ,  
որք փոշիներու մէջ թաղուած փատելու վրայ են :

Հոս ընդամենը 40 տունի չափ Հայ մնացած է  
այժմ, բայց ցաւալի է ըսել թէ մէկ քանի ծերունի-  
ներէ զատ՝ միւմներուն մէջ ամենեին հայերէն դիտ-  
ցող չկայ, և ազգային ղգացումնին ալ մեռած է : Այս  
քաղաքը Աէմպէրկէն 15 մղոն հեռաւորութիւն ունի :



### Ի. ԵՍՅՈ.

Աթանիսլաւէն 20 վայրկեան հեռի է երկաթուղի-  
ով : Հոս 20 տուն Հայ կայ, մէկ եկեղեցի ունին հրա-  
շագործ համարուած պատկերով մը : Այս աեզի ոչ  
քահանայն գիտէ հայերէն և ոչ ժողովուրդը :

---

### ՊէՌԷԺԱՆ

Աթանիսլաւէն երկաթուղիով 2 ժամու հեռաւո-  
րութիւն ունի, 30 տուն Հայ կայ՝ որք եկեղեցի մը  
ունին : Խոկ այս տեղի Հայերը անուամբ միտին Հայ

են, ինչու որ հոս եկեղեցւոյ մէջ Հայերէն կատարուած թիւ պատարագէն զատ՝ ուրիշ ո և Հայերէն քառ մը դիտցող չտեսնուիլ:

—ԹՐԿՈՅՑ—

### ԴԻՍՄԻՆԵՑ

Ասի ալ Ստանիսլաւէն մէկ ժամ հեռի է դէսլ ի արեւելք: Այս քաղաքին Հայոց եկեղեցին Ա. Գայեթանօս անուամբ անուանի է իւր մեծագործութեամբը, որ քաղաքին փառքը կ'աւելցնէ: Հոս հարուստ Հայեր շատ կան, բայց քիչերը կայ մէջերնին, ուրնք հազիւ քանի մը բառ հայերէն դիտեն, տակայն և այնպէս տեղւոյս Հայերն խիստ մօռ և հետապքըիր են օտար երկիր գանուող Հայոց վրայ տեղեկութիւններ ստանալու, խիստ հիւրասէր են, իսկ դժբաղդաբար կօրսուեան շաւզին մէջ մտած են: Ընդամենը 26 տուն Հայ կայ:

—♦♦♦♦—

### ՍՆԵՍԹԻՒՆ


Այս տեղի Հայերը երկու եկեղեցի շիներ են ժամանակաւ, որոց մէկը Աեհացիք գրաւած են այսօր ։ 40 տուն Հայ կայ, որոցմէ շատը փոքր ի չսահէ զիտեն Հայերէն, բայց անսնք՝ որ 50 տարեկան կան, իսկ երիտասարդք ամեննին չդիտեն:

—♦♦♦♦—

### ՀԱՅՕՏԻՒՆՔԱ

Հոս 10 տուն Հայ կայ ընդամենը, մեծ մասը աղքատ և մեծամեծաց քոլ ծառայութեամբ կ'ապրին, բայց իրենք չեն դիտեր Հայ ըլլալնին: Մէկ ե-

կեղեցի մ'ունին , ուր կ'երթան մինակ շաբաթը անդամ մը հայերէն թիւ պատարագ լսելու ասկէ միայն կը հասկցուի թէ ասոնք Հայ եղած ըլլալու են :



### ՇԱՄՈՍՅԱ.

Հոս եթէ ազդ արանական հետազօտութիւն մ'ըլլայ , թերեւս 100 ընտանիքի չափ Հայ կ'ենէ , բայց օտարաց հետ խնամութեամբ խառնուած և հետեաբար կորուածի պէս են : Ճամփորդ մը եթէ անդամ մը ասոնց դէմքի գծագրութիւնը տեսնէ , իսկոյն կիմանայ թէ Հայու դէմք է : Դեռ կեցած է հոս Հայոց խիստ մեծ ու փառաւոր եկեղեցին , որոյ մեծ դրան ճակատը զայդ կառւուցանողին անունը փարագրուած է , բայց Հայերն հետզհետէ տեղացւոց մէջ խպանուելով պակսելուն համար , այս եկեղեցին ալայժմ Լեհացիք գրաւած են :



### ԱՐԻՊԼԻՆ

Այս քաղաքն ալ որ քիչ հեռու է միւսէն , Հայ դաղթականութեան յիշատակարաններ տակաւին կը կենան , մինչդեռ Հայոց հետքը բնաւ չը տեսնուիր այժմ հոս : Հայոց քարաշէն սիւնաղարդ ու փառաւոր եկեղեցին այժմ Լեհացւոց ձեռքը կը դանուի , որոյ շատ կողմերը հայերէն ու լատիներէն լեզուաւ խառն արձանագրութիւններ կը տեսնուին , և որոյ բակը մէկ քանի հայերէն տապանաքարեր կան : Կըսեն թէ այս եկեղեցւոյ 1000ի մօտ մատեաններն տէրութիւնը գրաւած է :



## ԳՈՒԹԵՐԻ

Այս քաղաքը Հայերը շինած են 1840ին, որուն  
տեսքն ու դիրքը խիստ գեղեցիկ է, այնքան որ դը-  
րախտին նկարագրութենէն վար չը մնար, Չորս կողմը  
անտառներ ու այգեստան, տաները իրարմէ հեռի՝  
պարտէղներու մէջ շինուած է, Բաց ի շրջակայ գիւ-  
ղերու Հայոցմէ՛ հոս այժմ 100 տոն Հայ կայ, որք  
Մոլովիայէն գաղթած են, և որոց մեծ մասը զիւ-  
տեն ու կը խօսին հայերէն, իսկ կը օնքով պապական  
են: Առաջ այս Հայերն ալ հարուստ են եղեր, բացց  
թշուառական Հրեայք հոս ալ մուտ գտնելէն ի վեր,  
իրենք հարստացեր և Հայերն աղքատացեր են, այն-  
պէս որ այսօրուան օրս խիստ շատեր իրենց ապրուս-  
աը հաղիւ հաղ կը նան ճարել:

Այս քաղաքին Հայերը՝ բոլոր Լեհաստանի մէ-  
ջէն՝ ամենէն աւելի Հայու մօտ ժողովուրդն են, և այս  
քաղաքին Հայոց շնորհիւն է՝ որ տակաւին կանգուն կը  
կենայ Լէմպէրկի Հայ եպիսկոպոսութիւնը, ինչպէս  
նաև կանոնիկոսարանն ու կուսաստանն ալ գեռ Հայոց  
ձեռքը կը գտնուի: Նա մանաւանդ թէ Լէմպէրկի  
այժմու եպիսկոպոսը և թէ դլսաւոր մայրապետը Գու-  
թերցի են: Այս տեղի Հայերն մեծ ու փառաւոր եկեղե-  
ցի մասնին՝ որ իրենց պատիւ կը բերէ, ունին փոքրիկ  
գոլոց մը՝ ուր տղայք պարզ լնթերցմունք կ'ուսանին:  
Աղքատք գեռ անխափիր Հայերէն կը խօսին, իսկ հա-  
րուստներուն մէջ քիչեր կան Հայերէն խօսող, զար-  
մանալին սա՛ է թէ ժամանակ մը տեղացի Հրեայք ալ  
Հայերէն կը խօսին եղեր: Եկեղեցւոյ մէկ կողմը վանք  
մը կայ մեծ պարտեզով շրջապատեալ:

Այս քաղաքին մօտը Վիմիիցա անուն գիւղաքա-

զաք մը կայ , ուր 45 տուն Հայ կը գանուի , ամենքն ալ երկրագործ , որտեղ Գութէրէն գացած են :

Ս.սոնցմէ զատ Աւատրիւական Լեհաստանի ո՞ր քաշաքն ու գիւղն երթալուլ մարդ ելէ հետաղօտէ , անպատճառ Հայութեան մեացրդ մը ովհուի դտնէ , որք իրենց Հայ ըլլալն անդիտանալով , Հայ ճանբորդ մ'ուրախութենէն կը արտասուէ զանանք աեսնելով :

Ի՞նչ անհաշուելի վնասներ չե գործած պապական նութիւնն արգեօք Հայոց ազգին , դորոց ամենքն ալ ի գիր առնելու համար թուղթ և գրեշ չեն բաւական :

### Վ. Ի. Է. Ն. Ա.

Ա.յս քաղաքը Լէմպէրկէն երկաթուղւոյ ճամբով 26 ժամէ , որոց մէջաեզր 43 կայարան ( սթասիօն ) կայ , ուր կը հանդիպի կառաջարքը : Ա.յս ճամբուն վրայ խել մը քաղաքներու մէջ կը գտնուին Հայեր : Թէ՛ հողատէր և թէ՛ վաճառականութեամբ զբազոզ , որտեղ հայերէն բառ մ'անդամ չզիտնալնէն զատ , ամօթ անդամ կը համարին իրենք իրենց « Հայ ենք » ըսելու :

Ուղերսւթեանս միջոցին իմանալով որ Լէմպէրկէն քիչ հեռու գտնուած կայարանի մը տնօրէնը Հայ մ'է , հոն համնելուս ովէս աճապարանօք և ուրախութեամբ վար ցատկեցի վակօնէն , երթալ հետը տեսակցութիւն մ'ընելու : Ա.ո.ջի բերան սիրալիր կերպով զիս ընդունեց , բայց երբոր հայութեան վրայ եկաւ բացած խօսքիս կարգը , զարմանքով նշարեցի թէ կը վարանէր իր Հայ ըլլալը խոստավանելու . սու չափ միայն ըստ թէ՝

— « Սրդարե իմ նախնիքս Հայ են եղեր , և ես

թէ անոնցմէ սերեռու, բայց ի՞նչպէս կընսամը ըսել թէ  
չայ եմ, երբ ոչ Հայոց վրայ դաղափար մ'ունիմ,   
և ոչ ալ Հայոց վերաբերեալ խօսք մը և ոչ մէկ լրադ-  
րի մէջ կարդացած, և ոչ ալ պատիւ բերելու մէկ  
դործ քերնին կամ զովեստնին լուսած է ո.

Եւ յաւելցուց ըսելով թէ «Արեւելեան աղդաց  
մէջ մինչե անդամ Գարատաղ, որն որ 150,000 հոգիէ  
բաղկացեալ ժողովուրդ մ'է, բոլոր աշխարհ գիտէ և  
կը ճանչէ զիրենք, և շատ լրադիրներ իրենց քաջ աղդ-  
մ'ըլլանին կը գովենու աշխարհի կը հռչակեն, Կըսէք  
թէ Հայը այսքան միլիոն ժողովուրդ մ'է աշխարհի  
վրայ, ուր է իրենց քաջութիւնը, և կամ զովութեան  
ու համբաւոյ արժունի մէկ գործերնին, Վըսէք թէ  
Հայերն աշխատասէր են, զործունեալ, հարուստ, սա-  
կաւաղեա, աղջասէր, անձնուէր և ամեն տեսակ զո-  
հողութեանց պատրաստ ժողովուրդ մ'է, եթէ այս-  
պէս է, ի՞նչու ուրեմն 5-600 տարիէ ի վեր այսպէս  
իւր քաղաքական ազատութիւնը կորուսած վիճակի  
մը մէջ կ'աօդրի, և դոնէ Գարատաղի չափ ափ մը հոդ  
չ'ունի այսօր իր՝ ձեռը, որ մէք Հայերս ալ գոնէ այդ-  
քանով մը սլարծենալու տեղ ունենայինք:

«Այն աղդը, ըստ խօսակիցս եղող օտարացեալ  
Հայը, որ չ'ունի քաղաքական աղատ իշխանութիւն,  
նա Եւրոպայի մէջ պատիւ չ'ունի, այլ նուաստ և  
սորուկ աղդ մը կը ճանցցուի, անոր համար ես ալ իմ  
շուրջն գտնուող այս օտար ժողովրդոց մէջ չ'եմ հա-  
մարձակիր ըսելու թէ «Հայ եմ» :

—Պատասխանեցի իրեն թէ մք, Հայերս, Տաճ-  
կաստանի և Թուրքիոյ հպատակութեան մէջ ուրիշնե-  
րեն շատ աւելի երջանիկ ենք, թէ ամեն բանի մէջ  
կտարեալ աղատութիւն և հաւասար իրաւոնք կը  
վայելենք, թէ առայժմ ասկէ աւելի ուրիշ բանի մը

Փափաքելու պէտք և կարօտութիւն չունիմք և այլն :  
—Թողութիւն կը խնդրեմ ըստ , խօսքս ընդ-  
միջելով , աշխարհի գիտցած ճշմարտութենէն կը  
շեղիք կոր դուք , և կամ իրականութիւնը ծածկել  
կը ջանաք : Զայս ըսելով դրասեղանին դղրոցէն ծրար  
մը օտար լրադիր հանելով առջևութափեց՝ որ կարդամ  
Սրբելեան դործոց վրայօք դրուած յօդուածներն ,  
բոյց ես լեհերէն կամ զերմաներէն չեի գիտեմ , որ  
կարդամ ու հասկնամ :

Ս.յս նիւթին վրայօք դեռ շատ խօսքեր ըրաւ ,  
զոր աստանօր չեմ կրնալ ըսել , և մէջերնիս վիճաբա-  
նութեան բուն տաքցած ժամանակն էր որ կայարա-  
նէն՝ մեկնելու նշան տուող զանդակը հնչուելով , ա-  
ճապարանօք թողուցի զինքը վազելով երթալ վակօնս  
մանելու , հազիւ քառորդի մը չափ տեսակցութիւն մը  
կարենալով ըսել կայարանին սոյն ազատասէր կէս-Հայ  
տնօրէնին հետ , որ զիս ափ ի բերան թողլով ազշե-  
ցոյց , Հայոց վրայ այսքան տարօրինակ և ծայրայեղ  
դաղափարներու արտայայտութիւններ իրմէն լսելովս :

Տեսակցութիւննիս շատ կարճ ակելով , ինչու որ  
երկաթուղույ կառախումբը ընդամենը 20 վայրկեա-  
նէն աւելի չեր սոլասէր , կայարանին անօրէնը հանեց  
իր լուսանկար փոքր կենդանագիրն ինձ նուիրեց՝ իբր  
յիշատակ որ զինքը չմոռնամ , ես ալ քովս պատրաստ  
լուսանկար մը չունենալով , իմ այցելատոմս տուի ի-  
բեն ինչան փոխադարձ բարեկամութեան , և շտապաւ  
բամնուեցանք իրարմէ :

Ցնօրէնին ըրած խօսքերն այն տստիճան տպաւո-  
րութիւն մը ըրին վրաս , որ մինչեւ յաւիտեան չպիտի  
կարենամ մոռնալ :

Աերջապէս հասանք Սւստըիոյ տէրութեան մոյ-  
րաքաղաքը :

Ասկէ զբեթէ մէկ դարի չափ յառաջ , Ալէննա  
այնքան մեծ մայրաքաղաք մը չ'էր , իսկ հիմայ շատ  
մեծած է , և բոլոր արուարձաններն ալ քաղաքին հետ  
կցուած են , այնպէս որ բուն իսկ քաղաքը՝ իրեն հետ  
միացած արուարձաններուն նայելով վոքք բան մ'է :

Վիէննայի արուարձաններուն կամ չըջակաց թա-  
ղերուն փողոցները 30էն մինչև 140 կանգուն լայնու-  
թիւն ունի , իսկ բուն քաղաքին փողոցաց լայնութիւ-  
նը 40էն մինչև 30 կանգուն է , և փողոցներո էրակիք  
քարերով սալայտակ շինուած է : Արուարձաններուն  
մէջ հետիւստ երթալու ճամբայներն՝ կառուղի ճամ-  
բայէն զատ է , որք ասոր երկու կողմերը շինուած են :  
Ամառ առեն առտուընէ մինչև երեկոյ մարդ եթէ  
քաղաքին չորս կողմը օտարտի՛ բնաւ արեգակը չայ-  
րեր , ինչու որ փողոցներուն և հրապարակներուն ա-  
մենքն ալ ծառուղի և կանանչներով հովանաւորուած  
են : Գլշերը մարդ եթէ բարձր տեղ մը կենայ , կը  
կարծէ թէ արտաքոյ կարդի լուսավառութեան հան-  
դէս մ'է տեսածը , այնպէս որ մէկը ձեռքը լրագիր  
մը ըսնելով կընայ լսալտերներուն լուսովը կարդալով  
ճամբան շարունակել :

Քաղաքին մէջ գտնուած հասարակաց պարտէղներն  
անթիւ են , և հետաքրքրութեան ու հիացման արժա-  
նի մարմարեայ արձաններով ու հովաներով լի : Բայ ի  
փոքք իջևաններէն , մինակ Վիէննայի մէջ 89 մեծ  
պանդոկներ կան , փոքք տուն չ'կայ քաղաքին մօտե-  
րը , այլ եղածներուն ամենքն ալ Պօլսոյ Սպարապե-  
տութեան ընդարձակութեանը չափ ահադին յարկերու-  
բաժնուած ըլլալով , մէջը 100էն մինչև 300 ընտանիք  
կը բնակին : 14 հատ մեծ թապան կայ , 17 ալ Գա-  
փէ-Շանթան կամ երգեցիկ զբօսարաններ , իսկ նուազ

գահանդէմներու (գօնսէր) համար, բայց ի որոշեալ յատուկ 5-6 տեղերէ, ուրիշ ո և է սրահներու մէջ անսխափի տեղի կունենան : 800էն աւելի սրճարան կայ, ուր 10էն մինչև 130 տեսակ լրադիր կը բերուին, որոց մէջ միայն հայերէն թերթ մը կայ՝ Մասիս լրադիրը, ուր կը յաճախեն Հայք ստվորաբար, որոց համար բերել կուտայ զայն տէրն ալ :

Եթակէն ըսերու համար՝ քիչ ու բախութիւն ըսպատճառէր Հայու մը օտար եւրսապական մայրաքաղաք մը՝ այսքան անթիւ անհամար լեզուէ լրագրաց մէջ՝ գէթ հայերէն Մասիս մը դանօւած ըլլալը տեսնել :

Իսկ ասոնցմէ ամեէն աւելի փառաւոր ու զարմանաց արժանի են բայց ի մասնաւոր իշխանաց ունեցած անհամար թանգարաններէն, մինակ կայսերական 17 հատ նշանաւոր թանգարաններ կան . որոց մէջ կը գտնուին պատկերհանութեան, քանդակագործութեան, արձանագործութեան, ատաղձագործութեան, ազգակի և չիչի, գրքատան, մարդակաղմութեան և այլ Միւղէներն, ամեն տեսակ անանոց և անկոց համար կենդանաբանական և բուսաբանական պարտէղներ, զորս մի առ մի տեսնելու և ուսումնասիրելու համար մարդու մը ամբողջ կեանքը չէ՛ բաւական :

Վիշնայի փողոցաց մէջ ողջ հաւ մը, ագաղաղ մը, կոլ մը, վերջապէս ողջ կենդանի մը չը տեսնըսուիր, բայց ի բեռ տանող սայլի շուներէն, որոց աէրն ալ սանձը ձեռքէն բնաւ չ'ձկեր : Այս շուներուն փոխադրած բեռը՝ մեր Պօլսոյ գրաստներուն տարածէն շատ աւելի է, Վիշնայի մէջ 2 շուն սայլով մը մինչև 400 հօխայ բեռ կը քաշեն: Կան նաև որսորդի շուներ բերաննին սանձ դրուած, որոնք իրենց տիրո՞լը հետ միատեղ կերթան, իսկ անտէր կամ հասարակաց հրամարակներու վրայ անանկ թափառոյած շուներ բնաւ մէկ հատ մ'ալ չկայ :

Վիէննայի բեռնակիրներն՝ Պօլսոյ թաղապետուշատութեան ստոիկաններէն աւելի մաքուր հաքուած են, որոնք սակայն 20 հօփայէն աւելի բեռ չեն տանիիր, այլ անկէ աւելին ձեռքի սայլերով կը փոխադրեն, որոց թիւը 4,000ի մօտ բանէ : Բաց ի Թրամիէլ և 0միալիւս կառքերէն, 7,000 հատ հասարակաց կառք կը գտնուի վարձու, որոնք վայրկեան մը պարապ չեն մեար : Խանութներու մաքրութիւնը աեսնուած բան չէ, այնպէս որ խօսքով անկարելի է բացատրել, մինակ այսքանն ըսենք իրըն օրինակ թէ, մսավաճառ ուաց խանութներուն մէջ անանկ բաց տեղը դրուած միս ամեննեին չտեսնուիր, որ ճանճերուն 100ը գան վրան 100ը երթան, այլ ամենքն ալ կերպամներու պէս ապակեգարաններու (համեմեան ուստո) մէջ դրուած են, վերջապէս բոլոր վաճառանոցներու մէջ ալ մաքրութիւնը կը ծփայ, այն աստիճան որ կրնայ մինչեւ իսկ ըսուիլ թէ աներուն մէջ չկայ այնքան մաքրութիւն, որչափ կոյ փողոցներու վաճառանոցներու և հասարակաց վերաբերեալ տեղերը :

Եթէ մէկը փողոցի մանկիւնը կայնելով անցուադարձ ընողները դիտէ, պիտի տեսնէ թէ ամենքն ալ մաքուր ու միակերպ հագուած են, որն որ մայրաքաղաք մը ըսուելու արժանաւորութիւնը կապացուցանէ, անանկ Ա. Պօլսոյ մէջ եղածին նման մէկ բոպէի մէջ 800 տեսակ զգեստ հազնող մարդ չը տեսնուիր: Հասարակութիւնը եթէ անսովոր կամ առընդեր զգեստ կրող մէկը տեսնէ, իսկոյն հետաքրքրութեամբ իրին արտաքոյ կարգի բան մը՝ չորս կողմը կը խոնուի ու շագրութիւն ընելու :

Հասարակաց օգտին վերաբերեալ ամեն բան տեսնելու, զնելու և օրինակելու համար ամեն տեղ բաց ու ձրի է : Այս առթիւ կայսերական պալատան կից

արքունի զրքատունը , որ Փօղէ թինում կը կոչուի , ըստած մէկ այցելութիւնս հարկ կը համարիմ պատմել :

Սոյն զրքատան մանրամասն նկարագրութիւնն ընելիմ դըշէս վեր բան է , միայն եղելութիւնը պատմելով պիտի բաւականանամ : Երբ զրքատան շենքէն ներս մտայ , սպասուոր մը զիս դիմաւորելով , զիսարկը ձեռքը՝ առջեկս ինկած զիս մինչև թանգարանի տրնօրինին սենեալը տարաւ : Երբ մեծ սրահէն կ'անցնէի , ընդարձակ սեղանուտախտակ մը տեսայ , որոյ բոլորտիքը 40 հողիի չափ անձինք , ամենուն ալ առջել զրիչ , կաղամար ու այլ և այլ տեսակ զրքեր , նստեր բան կ'օրինակէին . խոր լուռթիւն մը կը տիրէր , այն աստիճան որ եթէ զրիներուն հաղիւ զգալի խշրացը չը լսէի , հոն մարդ գտնուիլը չ'պիտի իւմանայի , որք այնքան այնձայն ու լոիկ նստած էին , որ ես ալ առջես դացող սպասաւորին օրինակին հետեւելով , մատներուս ծայրին վրայ կոխած , թեթև ու անձայն քայլերով անցայ սրահէն : Այս անձինքը կայսերական մատենադարաննէն ձրի բան օրինակող հեղինակներ , ուսումնականներ , ուսանողներ , և այն էին , որոց մէջ երեք ալ օրիորդք կային , նոյնպէս դիրքէ քաղուած մ'օրինակելու զրագեալ :

Սոյն սրահէն անցնելով տնօրինին ներկայացայ , և խնդրեցի իրմէն որ եթէ կարելի է զրքատունը անդամ մը տեսնեմ : Մեծ հաճութեամբ ընդունեց խնդիրքս , և հարցուց թէ ի՞նչ տեսակ զիրք որ տեսնել կամ աչքէ անցնել կ'ուզէի , իմաց տամ իրեն , որ թիւը ծառային տալով հանէ զրքատունէն և ինձի յանձնէ : Պատասխանեցի իրեն թէ , ես Հայ ըլլալովս քնականաբար հայերէն գրքերը կը փափաքէի տեսնել իմացած ըլլալով թէ Լեհաստանէն այս թանգարանը բազմաթիւ հայերէն ձեռագիր մատեաններ բերուած

ու պահուած են , մանաւանդ այսօր Լատինաց ձեռքն  
անցոծ Հայ եկեղեցիներուն զրքելը , չորս Լատինե-  
կեղեցականք հոս դրկած են ,

Տնօրէնը երբ Հայ ըլլալո լսեց , յանկարծ դէմքը  
ժպտելով , և խօսած լեզուն փոխելով , դարձաւ ինձի  
հետեւալ խօսքն ըրաւ :

—Սակաւիկ մի վարժ իցեմ Հայ բարբառ արտա-  
սանելոյ , բայց ոչ դիտեմ զնորեկ լեզու :

Երեակայէ՝ անգամմը սիրելի ընթերցող թէ՝ այս-  
պիսի մտքէ չանցած օտար երկրի մը մէջ , Գերմանա-  
ցիի մը քերնէն այսպէս հայերէն խօսք մը լսած ատեն՝  
ի՞նչ կ'զգայ բարդ , ասի անկարելի է բացատրել : Խո-  
կոյն այնպիսի խնդութիւն մ'զգացի՝ որոյ նման չ'եմ ,  
յիշեր թէ ամբողջ կենացս մէջ այնքան ուրախացած  
լինիմ , տեսնելով որ հայերէն լեզուն՝ որոյ յարզը մենք  
ազգովին չ'եմք ճանչեր դժբաղվաբար , և քիչ շատ հա-  
յերէն դիտնալովսիս յանդերձ դարձեալ շատ անգամ  
մէջերնիս տաճկերէն կամ ուրիշ լեզուաւ խօսակցիլը  
նախամեծար կը համարիմք , այդ հայերէն լեզուն իր-  
րե Արևելեան կարեոր բարբառ մը՝ օտար երկիրնե-  
րու և օտարազգի ժողովրդոց , մինչև իսկ Ակադեմ-  
եաներու մէջ անգամ իր հետամուտներն և ուսանող-  
ներն ունեցած է , զորս աեւնելով ամօթ զգալու է այն  
Հայը՝ որ Հայ մ'ըլլով հայերէն չ'կիտեր . . . :

Հայախօս Գերմանացի մը տեսնելուս վրայ զգա-  
ցած ուրախութիւնս հազիւ Զ վայրկեան տեսեց , երբ  
սիւնառարձ և մարմարեայ արձաններով զարդարուած  
դրբառան սրահը մտնելով այն աղնիւ հայագէտ տնօ-  
րէն Պ. Քըիշմից Միւլլէրի հետ միատեղ , որն որ Հա-  
յու մը հետ հայերէն խօսելու փափաքով գրիշը ձեռ-  
քէն ձդեր և ինձի հետ մինչև սրահն ընկերացեր էր ,  
տեսած ամեն մէկ առարկայներուս վրայ մի ըստ միոնէ

բացատրութիւններ տալով ինձ , առջիս թափուած 40  
կտորի չափ հայերէն մատեաններն տեսայ , որոյ վրայ  
սիրտս փղձկելով աչքերէս ոկսան արտոտք հոսել . Այս  
զբեանց ամենքն ալ մագաղամի վրայ դրուած ու դըր-  
շէ նոր երածի պէս մաքուր և անաբատ պահուոծ է-  
ին : Ասոնցմէ մին բանալով , առաջին երեսը հետե-  
կալը գրուած աեսայ երկաթագիր Մերովլպեան տա-  
պերով ԳՐԵՅՈՒԻ Ս.Ո.ԽԵՑՈ.ԲՈ.ՆՍ Ռ.Շ. ԽԹԱԳՈՒՈ-  
ՐՈՒԹԵՅՈՒՆ Գ.Ա.ԳԿՈ.Յ Ո.Բ.ԲՈ.ՅԻ Հ.Յ.ՅՈՒ Խ.Յ.Յ.Յ.Յ.Յ  
Ա.Ն.Ի. և այլն :

Ընթերցողացս կը թողում մտածել թէ ի՞նչ կ'զգայ  
մարդ այս անդին ձեռագրերն տեսնելով մեր այն նա-  
նախահարցը , որոց այսօր մեք թոռներն ըլլալու չեմք  
արժանի : Այդ մարդիկն իրենց սուղժամանակը . Հա-  
յաստանի խռովութեանց , աւարառութեանց և սպան-  
նութեանց ատեններն չեն մոռցեր իրենց յաջորդ սե-  
րընդին ու թոռանցը այսպիսի թանկագին յիշատակ-  
ներ ձգել , զորս մեք այսօր երեսէ թողած , այդ յի-  
շատակներն օտար ազգաց թանգարաններու և մատե-  
նագարանաց մէջ կը մնան , և կամ անծանօթ տեղեր  
փոշիներու և մոխրոց տակ կը փստոին կոր :

Այս մտածութերն ընկելով մարդ չկրնար ինքը-  
զինքը զապել ցասկոտ և վրէժինդիր հայեացք մար-  
ձակելէ պապականութեան վրայ , որ ո՛չ նուազ նպաս-  
տած է մեր ազգին թշուառութեանն ու կործանմանը ,  
որ 1140էն Անիի կործանումէն ի վեր՝ շարունակ աշ-  
խատած և տակաւին կ'աշխատի Լուսաւորչայ հօտին ,  
հարազատ զաւակներն կորզելով փարախէն՝ պապա-  
կանութեան մէջ խեղդել ու օտարացնել , որ այսքան  
բիւրաւոր Հայոց կորուսով պատճառելէն զատ , Անիի  
ուկիներով շինուած այնքան անհամար Հայ եկեղեցիներ  
պապականութեան ձեռքը անցոյց , միայն Գերմանիոյ

Լեհաստանի մէջ 15-20 եկեղեցի, Ուռւսական Լեհաստանի մէջ 20-25, Հունգարիոյ մէջ 7-8 և այլ անթիւ վանքեր իրենց դպրոցներով ու կալուածներով . . .

Ընթերցո՞ղ, երբ այս տաղերը կարդաս, անշուշտ ովտի ցաւիս, բայց լոկ ցաւիլը ազգասիրութիւն չէ, ինչու որ ասոնք օտար մ'ալ կարդալու ըլլայ՝ քեզի չտփ և թերես քենէ աւելի ցաւ կ'զգայ, այլ բուն ազգասիրութիւնն այն է՝ որ եղածին վրայ ողբալը մէկդի հգելով ըլլալիք չարեաց առաջքն առնելու ճարընայիլ:

Ա.Հա Լէմոլէրկի Հայ եպիսկոպոսութիւնը վերջինն է, եթէ այժմու Հայ եպիսկոպոսը վախճանի, Աւստրիական Լեհաստանի մէջ 1,000 ընտանիք կայ, իր 23 եկեղեցիներով, վանքերովն ու կալուածներովը արծաթներովն ու ոսկիներովը, վերջապէս իր միլիօնաւոր գահնձովն ու հարստութեամբը՝ Լեհ եպիսկոպոսի մը ձեռքը պիտի անցնի, նայէ՛ որ զայս ազատես, և այս աղէտքին աւաշըն առնուս, այն ալ եթէ հիմակուընէ գործելու ոկտիս: Ա.Հա ամենուս ալ աչքին պաշնէն է Ուռւսական Լեհաստանի Հայոց օրինակը, ուրոնք բոլորովին Լատին եպիսկոպոսին ձեռքն ու իրաւասութեամբ տակ մտած են:

Սոյն գրատան մէջ անյագ փափաքով հետզետէ միւս գրքերն ալ աչքէ անցնելով, երբ տեսայ թէ մեծ մասը Հայոց թագաւորութեան օրովը գրուած գրքեր են, չկըցայ աչքիս արտառքը բռնել: Պ. Միւլլէր սկըսաւ զիս մխիթարել, Հայոց նախկին փառաւոր օրեւրուն հետ մեր թշուառութիւնը բազդատելով ու ցաւակից ըլլով ինձ հետ:

Եւ օրավիետեն մէկ անդամի այցելութեամբ մը անկարելի եր սոյն մատենադարանին գրքերն աչքէ անցնել, ուրիշ քանի մը անդամներ ալ դացի, և տնօրինին հետ ըրած մէկ տեսակցութեանս իմացայ թէ,

յիշեալ գրքատան մէջ 343 հատոր հայելէն ձեռագիր մատեան կը գտնուի եղեր, մեծ մասը մադաղաթի վրայ գրուած, և խնդրեց որ եթէ Եղնիկի կամ Եղիշէի մագաղաթեայ մէկ ձեռագիր օրինակը գտնեմ, իմաց տամ իրեն, որոյ փոխարէն վասահացուց լթէ Թամնդարանը 1,000 ֆիորին կ'տայ զայդ ծախու առնելու :

Սնդամ մը Վիեննայի արուարձաններէն մին Նոյպաւ, Վիեննայի Միարանութեան վանքը դնացի, ուր Լէմպէրկի Հայ եպիսկոպոսին հանդիպեցայ, որ նոյնապէս ինքն ալ այն օրը յիշեալ վանքը սցցելութեան եւ կած էր, Սա կարծ ելով թէ Վիեննայի Միթարեանք Հայ են և Հայոց աղղին զոյտթեանն ու տեալանութեանը փափաքող և նախանձախնդիր, եկեր էր ասոնցմէ օգնութիւն խնդրելու, որպէս զի վանքէն քանի մը վարդապետ դրկեն իրեն, զօրս ինքն ալ իր հայաբնակ թեմերուն մէջը բաժնէ եկեղեցեաց մէջ քառոզութեան համար, որով հայութեան ջնջուելուն առաջքն առնուած կ'ըլլար այն կողմերը, ինչու որ եթէ ինքը մեռնի՝ Լէմպէրկի Հայ եպիսկոպոսական աթոռը Լատինաց ձեռքը տիտի անցնի, կըսէր, ուստի և կը խնդրէր որ Վիեննայի Միթարեանք պաշտպան կենալով այդ աթոռոյն, չը թողուն որ Լատինաց կամ Լեհացոց անցնի, այլ կարենան իրեւ Հայ՝ իրենց ձեռքը պահել, Այս և ասոր նման ուրիշ մէկ քանի կողդպրութեանց համար՝ Վիեննացւոց օգնութիւնն ու աշակցութիւնը կը հայցէր :

Վիեննայի Միթարեանք զայս որ լսեցին, ուրախութենէն ինչ ըլլանին չեին զիտեր, ինչու որ մըտքերնուն չանցած անակնկալ որս մը ոտքսմի եկեր էր թակարթնին իյնալու, Լէմպէրկի եպիսկոպոսական վեհակ մը ժառանդելու և վաստկելու յանող և անյաւ-

սալի բաղդ մը կը տեսնէին առջենին բացուած , ուստի չեն զիտեր ինչպէս մեծարեն ու փառաւորեն Աէմպէրկի եպիսկոպոսը , ինքինքնին անդիի ծայր աղղասէր կեղծելով և խել մ'ալ մեծամեծ և վստահացուցիչ խոստումներ ընելով , որպէս զի Աէմպէրկի եպիսկոպոսին իւր միաքը դրած այդ առաջապրութեան և նօրատակին գործադրութիւնը փութացնեն :

Ասի արդարեւ մեծ բաղդ մ'էր իրենց համար , ինչու որ այսօր վահքը — ինչպէս ասկէ առաջ ըսինք առթիւ մը — պարտքի տակ կը հեծէ , միաբաններէն 45 հոգի չ'եներ վանքին մէջ , ամենքն ալ ցրուած են , մինչև իսկ ձմեռ ժամանակ հիւրընկալութեան սեն եակնուն մէջ վասելու փայտ անդամ չ'ունեին : Տեսէ՛ք սա կեղծ աղջասէրներն ու անձնուրաց (գու հասկըցիր անձնապարար) միաբաններն , որոնք մէկ կողմէն չ'ունդ արիոյ , և հաստանի և այլ երկիրներու մէջ չայոց եկեղեցիները օտարաց կողոպտել տալով երեսի վրայ թողած են , որ Հայ ժողովուրդը ժամմը յառաջ լատինացնեն , իրենք ասդին Վիէննայի մէջ լատինական եկեղեցի մը կը կանգնեն վանքին ստակովը օտարազգեաց համար , որպէս զի տեղացի Աւստրիացիներն այն եկեղեցին դան և իրենք ալ այդ օտարազգիներուն առջեր պատիւ և համարում ունենան : Սյնդէս որ այդ օտար եկեղեցին շինելու համար վանքին 60 լեզուէ տառ ունեցող ամենահարուստ տպարանը ծախեցին , նաև վանքին սեպհական գիւղը ծախելէն զատ , այսօր իրենք ալ անտանելի պարտուց տակ կը հեծեն : Տեսէ՛ք թէ ասոնք Հայ վարդապետներ են , որք Հայուն ստակովը , Հայուն գնած զիրքերուն ստակովը՝ օտարաց համար եկեղեցի կը շնեն , և Հայ եկեղեցիներն երեսի վրայ կը թողուն : Տեսէ՛ք և դատեցէ՛ք . . . . . :

Այս Վիէննացիներն էին՝ որք Պապին աւելի հայանալու համար, Վենետիկի Միաբանութիւնը չարախոսեցին ու դրաբարտեցին Վատիկանու արքունեաց առաջը, թէ ասի հռովմէականութեան հաւատարիմ կենալու դիմաւորութիւն չունի, ասոր համար երբ Ս.քայլ Հայր Հիւրմիւզեան Գէորգ արքեպիսկոպոսը վախճանելով, առող տեղը ուրիշ Ս.քայլ Հայր մը ընտրել պէտք եղաւ, Պապը՝ Վենետիկի Լատին արքեպիսկոպոսը կը զբկէ յիշեալ վանքը որ ընտրողական ժողովըն նախագահէ, որն որ անմիջապէս վանքը դալով կը յայտնէ միաբանութեան թէ Ս.Պապը թէև իրենց վրայ կասկած մը չ'ունի, սակայն ուրիշներուն կասկածը փարատելու համար՝ հարկ տեսած է որ միաբանութիւնը դաւանադիր մը ստորագրէ թէ Պապին անսխալականութիւնը, Հասունի օրինաւոր պատրիարքութիւնն աւ կաթողիկոսութիւնը և իրենց վրայ ունեցած իրաւասութիւնը, և առանց Հռովմայ աթոռոյ հրամանին՝ բան մ'ալ իրենք իրենցմէ տնօրինելու իրաւունք և արտօնութիւն չ'ունենալնին կը ճանչեն ու կը յայտարկարեն :

Նաեւ միաբանութենէն անոնք՝ որ այս դաւանագիրը չ'ստորագրեն, անմիջապէս վանքէն հրաժարեցուցուիլին հերետիկոս և բանակրեալ ճանչցուին :

Միաբանութիւնը երբ այս պայմանները կը լոէ, զայրանալով առջի բերան հաւանութիւն չ'տար, ուստի երեք անգամ մէջերնին ժողովք ընելով կ'որոշեն կամայ ակամայ առ այժմ ստորագրել յիշեալ դաւանագիրը, որպէսզի դայթակղութիւն մը յարուցանելու առիթ տուած չըլլան Եւրոպայի կրօնամոլ ժողովը մէջ, որոնք վերջը բանագրեալ պիտի նկատեն զիրենք, բայց միաբանութիւնը երգմամբ խօսք կառաւ Լատին արքեպիսկոպոսին, որ այս դաւանագիրը

դոյտթիւնը գաղտնի մնայ և չը յայտնուի , որպէս զի Հայերը իմանալով ազգին վրայ ունեցած համարումնին չկորսնցնեն . Լատին արքեպիսկոպոսին տուածադապահովութեանը հակառակ , ամիս մը չ'անցած բոլոր Լատին լրագիրք կը հրատարակեն , թէ Պապին անսխալականութիւնը նոյն իսկ Վենետիկի միաբանութեան կողմէն ալ ճանչցուերէ , և այլն :

Ս.սի անոր համար հրատարակած էին , ինչու որ Եւրոպայի մէջ Վենետիկի Միսիթարեան միաբանութիւնը խիստ իմաստուն և աստուածաբանութեան հըմուտ ճանչցուած ըլլալով , անսխալութեան վարդապետութիւնը ասոնցմէ ալ ընդունուելուն մեծ կարևորութիւն կ'առային :

Ասով հանգերձ տարի մ'է որ վանահայրը Հռովմայ գացած է եպիսկոպոս օծուելու , բայց դեռ չ'է յաջողած , իսեղճ վանահայրը մինչեւ անդամ իւր ազգականները իրենց կամքին հակառակ Հասունիով ընել տուաւ , նաև ինչ ինչ անմարսելի առաջարկութիւններ ընդունեց՝ բայց դարձեալ անօդուտ , միթէ միաբանութիւնը չ'զիտէ՝ 50-60 տարուան ոխերիմ և նշանակած թշնամինին , որոնք զիշեր ցերեկ կը ճղնին կամ Վենետիկի միաբանութիւնը բոլորովին լատինացնել իրենց պէս , որ ազգին վրայ ունեցած համարումնին կորանցնել տան , ինչպէս որ իրենք կորանցուցած են , կամ Եւրոպայի ռամիկ ժողովրդոց առջև զիրենք հերետիկոս և բանագրեալ հռչակել տալ , որ ունեցած բոլոր թեմերնին կորանցնեն , որով իրենց ասպարէզ բացուի , այս երկուքն որն ալ ըլլայ իրենց գործին կ'գայ , Բայց ասով հանգերձ Վենետիկի միաբանութիւնն ալ շատ սխալ քայլեր տուած է , որուն պատճառաւ այսօր իր թշնամեացը խաղալիկ եղաւ . . . :

Վիէննայի մէջ ժամանակաւ 800 ընտանիքի չափ

Յոյն կենալով, երկուք ալ եկեղեցի ունին եղեր . իսկ իրենց խաբէութեամբը և մէջերնին ախտ մը դարձած ընդաբոյս գէշ սովորութեամբը՝ հետզհետէ պատիւնին կորանցնելով, այսօրուան օրս այդ բազմաթիւ Յոյն դազմականութենէն ալ խիստ սակաւ մաս մը մնացած է, որոց մէկն ալ պատիւ չունի տեղտոցւոց քով :

Ընդհակառակն Հայերն մեծ համարում և յարագանք կը վայելեն այս քաղաքը, ուր 20-25ի չափ Հայընտանիք կան Հունգարիայէն եկած, 15ի չափ ալ Աեհացի պատուառը Հայեր, որոցմէ ոմանք վաճառուական են, ոմանք գործարաններու տէր, ոմանք Քօմէժնէն, և ոմանք ալ մեծամեծ գործերու ձեռնարկով հարուստ և տնտեսագէտ դրամատէրներ :

Ս.սոնց Հայ ըլլալը արտաքուստ ընաւ յայտնի չէ, բայց միայն այն առեն Հայ ըլլալնին կը ճանցուի երբ մօտէն յարաբերութիւն ունենայ մարդ հետերնին, այնպէս որ իրենց բնիկ գաւառին՝ ուրկէ գաղթած են՝ նոյն տեղի Հայոց հետ հաղորդակցութիւննին և յարաբերութիւննին բոլորովին կտրած են :

Վերոյիշեալներէն զատ՝ կան նաև Վիէննայի մէջ Մոլտովիացի և Տաճկաստանցի Հայեր, Կ. Պօլսէն, Զմիւռնիայէն, Տրապիզոնէն, որոց թիւը 30ի չափ կ'ելնէ, նաև 45ի չափ Ուուսիացի Հայեր, ամենքն ալ Լուսաւորչական եկեղեցւոյ անդամք, որոց մեծ մասը Քօմէժնէն են, վերջապէս Վիէննայի մէջ թէ՛ բուն Հայ և թէ՛ հռովմէական Հայ, ուսանողներն ալ միասեղ հաշուելով, ընդամենը 150ի չափ կ'ելնէ, որոց 30ը հօս Աւստրիացի օրիորդաց հետ ամուսնալով ու հաստատուելով, տուն տեղ և ընտանեաց տէր եղած են, բայց Հայ քահանայ մը չ'կենալուն համար դժբաղդաբար սահպուեր են լատինական ծէսով պասկուիլ և զաւակներնին ալ Լատինաց եկեղեցիները մկրտել :

Ասկից զատ՝ քանի որ Ալեքնայի մէջ հայերէնի ուսուցիչ մը չկայ, բնականաբար ասոնց զաւակներն ալ հայերէն չգիտնակով և իրենց մօրը լեզուն ուսնելով, այլև Աւստրիացի պիտի ըստին, և երբ մեծ նալու ըլլան՝ պիտի ըսեն. թէ ոկը յիշենք որ հայրերնիս Հայ մ'եղած ըլլալու է, բայց մենք հիմայ Աւստրիացի ենք: Մինչդեռ Աւստրիացի իգական սեռը Անդ-զիացի կաթոլիկաց կամ Բողոքականաց ոլէս այնքան սերտ կերպիւ իրենց կրօնին կապուած և յարեալ չըլլալով, յօժար և տրամադիր են իրենց ընտրած ամպանոյն կրօնքին հետեւելու, նոյնը պիտի ըլլար Վիենայի մէջ ալ, եթէ մէկ հատ Հայ քահանայ դրտնուէր:

Յաւալի է գիտել թէ ի՞նչ կը կորմացնենք կոր Հայ քահանայի մը չգոյտթեամբը. ո՞վ գիտէ որ այդ Հայուն դաւակը, որ այլևս Աւստրիացի անուամբ պիտի հանչցուի ու յիշուի, օր մը մինչև զօրապետ կամ սպարապետ մը չըլլայ, և ի՞նչպէս այս անձը իրեն համար պիտի կտրենայ ըսել թէ Հայ է, քանի որ հայերէն չգիտեր, Հայ ազգին վրայ գաղափար չունի, այլ պարզապէս իբր Ավստրիացի մեծած ու մեծցած է, հարկաւ Ավստրիացի պիտի անուանէ ինքվինքը, ճիշդինչպէս որ Ռուսիոյ մէջ այսօրուան օրս այնպիսի մէկ քանի երեւելի և նշանաւոր անձինք կան, որոնք Պետական մեծամեծ պաշտօններու վրայ բարձրացած կը դանուին, և շատերուն յայնի և ծանօթ է թէ այս ինչին հայրը, և այն ինչին մայրը Հայ է, իսկ ինքը բուն Ռուս:

Ապա ևս գիտելու արժանի ցաւալի կետ մ'է թէ Վիեննայի մէջ գտնուող Հայերն ալ ցեղային կամ կը բրօնական խտրութեան զգացման մը աղդեցութենէն զերծ չեն: Ասոնք փոխանակ իրրե. Հայ և մի Հայ ազգութեան անդամը՝ իրարու մէջ միանալու կամ մօպաւորութիւն ու յարարերութիւններ հաստատելու:

ընդհակառակն ամենքն ալ իրարու օտար աչքով կը  
նային , օրինակի համար Հունգարացին՝ Ահացիին ,  
Պօլսեցին Ռուսիացիին , Հայը Կաթոլիկին և այլն :

Աւստրիացիք ընդհանրապէս եկեղեցիէ պաղած  
ըլլալու երեսյթ մ'ունին , անանկ որ այժմու երխաւ-  
արդութիւնը բնաւ եկեղեցի չը յաճախեր :

Վիէննայի մէջ բաց ի վոքը մատուռներէն՝ 40էն  
աւելի եկեղեցի կայ , որոց ամենէն մեծն է Ա. Ստե-  
փաննոսի եկեղեցին 1444ին շնուած , արտաքին տես-  
քը հետաքրքրութիւն մը կը շարժէ , բայց մէջը տես-  
նելու արժանի հետաքրքրական բան մը չկայ , բաց ի  
ահագին մեծութենէն : Այս եկեղեցւոյն մէջ իշխա-  
նաց և մեծամեծաց նստելու տեղերը զատուած են  
հասարակ ժողովրդին կենալու յատկացեալ տեղէն ,  
իշխանաց տեղն է Աւագ խորանին մօտի երկու կարգ  
նպտարանները . եկեղեցիին մէջ կազով կը լուսաւոր-  
ուի , վասն զի խիստ մութ է :

Աւստրիացոց բնութիւնը շատ պաղ է , մտերիմ  
բարեկամութիւննին անկարելի է ստանալ . ո և է խըն-  
դրոյ վրայ մէջերնին տաք վիճաբանութիւն մը չլսուիր ,  
այլ բոլորովին պազարիւնութեամբ կը վիճին , այնպէս  
որ կարծես թէ յուզած խնդիրներնուն նկատմամբ  
բնաւ ննիեւսէ չեն : Երբ զբօսարան մը մտնեա , քիչերը  
կը աեսնես որ մէկտեղ գալով ինչ ինչ նիւթի վրայ  
խօսակցին , այլ ամենքն ալ զատ զատ սեղաններու  
առջել նստած՝ առանձինն լրագիր կարդալու կ'զբա-  
զին , կարծես թէ դործելէ աւելի՝ լրաթերթ կար-  
դալ և լուր ստանալ կը սիրեն : Կանանց բարոյակա-  
նութիւնը շատ վատթարացած է , որչափ որ պոռնկա-  
նօցներն արգիլուած են՝ այսու համով երձ որ պանդոկը  
կամ իջևանը մտնեա՝ ասոնցմէ 5-6 հատ կը գտնուին ,  
և եթէ արեւը մարը մտնէ՝ բոլոր արուարձաններուն մէջ

ֆամբայներն ու փողոցները այս տեսակ վատաքարոյ կիզ ներով կը վխտան :

Բայց արդարութեան պարտք մը կատարած ըլլալու համար, հարկ կը համարիմք ըսել թէ, բոլոր այս գայլթակական կենակցութեանց մէջ՝ Հայք միշտ իրենց բարոյական մաքրութիւնն ու ուստառաւորութիւնը կրցած են պահել :

### Բ Ե Շ Գ Ա.

Մաճառստանի Հայոցմէ այսօրուան օրո երեք երեսիոփան կայ մայրաքաղաքին հունգարական խորհրդարանին մէջ, որոնք Անոլա, Պաշտալով և Սէնթ Միքլօչ հայրաքաղաքներէն ընտրուած են, և որոցմէ մինչ է Կայծակօ :

Սոյն հայազգի երեսիոխաններն ժողովոյ մէջ մեծաղդեցութիւն ունին՝ իրենց ուշիմ խոհականութեանը և տաղանդին համար, և իրենց հունգարացի պաշտօնակիցներուն յարդանքը կը վայելեն :

Սակեց զատ՝ Բէշթա մայրաքաղաքին կառավարութեան կողմանէ կարդեալ առաջին բժիշկը Հայէ, Պաշտալովցի Բաթրուպան անուն (այս բառը վլահերէն է որ գանդ կը նշանակէ), այս անձը նշանաւոր է իր բժշկական հմտութեամբը և ունեցած հարստութեամբը :

Կը գտնուին նաևս թէ քաղաքական և թէ զինւորական մեծ Հայ պաշտօնատարներ, ինչպէս նաև խիստ հարուստ վաճառականներ :

Բէշթայի մէջ կան 20ի չափ Հայ ընտանիք, նաև 28ի չափ ալ Հայ ուսանողք, որոնք քաղաքային բարձը վարժարժարանաց մէջ այլևայլ ուսմանց և զիտութեանց կը պարապին :

Հոս կ'աւարտեմք տեղեկադրութիւննիս, վստահ ըլլալով թէ զոնէ փոքր ծառայութիւն մը ըրած եղանք ասով սիրելի աղգերնուս :

## ՅԱԿԵԼՈՒՌ

ՑԵՊԵԿՈՒԹԻՒՆԻ ԻՎԵՐՍՅ ՍՈՒՉԱԾԻՇԻ ՀԱՅՈՑ

Սուչաւայի Հայ դաղթականութեան վրայօք , ամ-  
կից յառաջ և Պօլսոյ մէջ ԼՌՈ.ԴԻԲ Ա.Զ.Գ.Ս.ՅԻՆ , թեր-  
թին միջոցաւը մեր հրատարակած տեղեկագրութիւ-  
նը մասամբ իւիք լրացնելու , և ինչ ինչ խնդրոց մա-  
սին բացատրութեան պատճառները յայտնելու բարի  
և անկեղծ նպատակաւ , և Պօլսոյ մէջ իւր ազգասի-  
րութեամբն հանրածանօթ Սուչաւայի Պատուարժան  
Տիար Ա. Զունդ՝ վերոյիշեալ լրագրոյն ուղղած և հրա-  
տարակեալ հետեւեալ յաւելուածական գրութիւնը ,  
աստանօք մեր սոյն տեղեկագրութեանը կցել հարկ և  
արժան կը համարիմք , որն որ Ն. Մեծապատութեան  
ուեէ ազգային կենաց և խնդրոց նկատմամբ անտար-  
քեր և անզգայ չըլլալուն հաստատ և անժխտելի մէկ  
ապացոյցը կը նկատի :

Հարկ կը համարիմք յաւելութե Ն. Մեծապատ-  
ութիւնը , ինչպէս կը յայտնէ իւր իսկ գրոյն մէջ՝  
24 տարիէ հետէ շարունակ բացակայ դժոնուելով իւր  
հայրենիքէն , բնականաբար այնքան մօտէն ծանօթու-  
թիւն չէր կրնար ունենալ անկէ ի վեր տեղի ունեցած  
փոփոխութեանցը , որոց մեք ականատես եղած եմք ,  
այսու հանդերձ իւր տուած տեղեկութիւններն՝ գիտ-  
նալու արժանի , և իւր այս գրութիւնն ալ իբրև հայ-  
րենասիրութեան ներշնչում մ'ըլլալը գիտնալով , կը  
փութամք հաճութեամբ զայն հիւրընկալել մեր տե-  
ղեկագրութեան էջերուն մէջ :

Ա.Հաւասիկ իւր նամակը :

Մեծ. Տնօրէն-Խմբադիր,

Լսած էի թէ Անեցւոց գաղթականութեան շարք  
մը կը հրատարակէք եղեր պատուական լ՛ՐՈՒԹՈՅՊ  
միջոցաւ . նոյնը այս օրերս ձեռքս հասաւ : Բնական և  
դիւրըմբռնելի է ենթադրել թէ քանի՛ հետաքրքրու-  
թեամբ և ուշի ուշով նոյնը կարդացի : Եթէ այդ ու-  
ղեոր ազգասէր երիտասարդը , որ յԱւատրիա և ի Ռո-  
մանիա գաղթող Անեցւոց աշխատասիրեր է յայց ել-  
նել և զիրենք Զերդ հրատարակութեամբ ընդհանուր  
ազգին ծանօթացնել՝ հասարակաց քաջալերութեան և  
դովենատից արժանի է . մենք անձնական պարտք հա-  
մարած ենք յատկապէս իրեն չնորհակալութիւնին  
յայտնել այն քաղաքավարական խօսքերուն համար ,  
զորս առաւել քան զմեր արժանիս բարեհաճեր է մեզ  
առատաձեռնել :

Իսկ գործոյն ներքին և իսկական արժէքին դա-  
լով , կը թողունք զայն այլոց գնհատել , և իւրաքան-  
չիւր քաղաքի բնակիչներուն ինչ աստիճան ստուգա-  
պատում ըլլալը քննադատել . մենք մեր հայրենիքն  
եղող Սուշաւայի մասին տրուած տեղեկութեանց վրայ  
քանի մը դիտողութիւններ ընել կուզենք , զորս այսու-  
մանաւանդ ստիպեալ ենք ընել , որովհետեւ ազգասէր  
երիտասարդը՝ ըսածները հաստատել և ամբողջացնել  
կը հրաւիրէ մեզ իւր հրատարակութեան մէջ : Սակայն  
պէտք ենք խոստովանիլ թէ՝ մենք 24 տարուընէ ի  
վեր մեր հայրենիքէն հեռացած ըլլալով , և այդ բազ-  
մամեայ միջոցին մէջ երկու անդամ միայն՝ և այն ալ  
մէկ և երկու օր հազիւ Սուշաւա կենալովսիս , եթէ  
մեր գիտցածը վաղեմի վիճակն է , որ թերեւս այժմեան  
իրական կացութեանը ճիշդ չպատասխաներ , չենք  
կարծեր թէ ազգասէր ուղևորն ալ ինքնահաճ իւր

վրոյ անսխալականութեան համարում ունենայ , և առանց կոնխաւոր հմտութեան , առանց տեղացւոց լեզուն գիտնալու և անոնց յարաբերութեանցը վերահաս ըլլալու՝ թռիչ մառնելը միայն , և շրջագայութեան համար տնեցած ոուղ ժամանակը բաւական համարի իրաց վիճակը ճիշդ թափանցելու համար :

Սպագաղցը է մեղ ենթագրելը թէ վերոյիշեալ պատճառներէն յառաջ եկած ըլլան երիտասարդ ուղևորին Սուչաւացւոց վրայ ըրած խոտու քննադատութիւնը և տխուր ստորագրութիւնները , զորուներու մեղ կանխաւ ըսել թէ ըստ իմիք չափազանցութիւն և ըստ իմիք բոլորովին անիրաւ կը գտնենք , և զրոյ պատասխանը պարտք կը համարիմք աստանօր համառուել :

Եւ նախ , աղղասէր ճանապարհորդը մեղագրունաց նիւթ կ'ընէ իրեն , իրը թէ Սուչաւացիք կրօնից մէջ անտարբեր և բոլորովին պաղած ըլլան , կէտ մը որ մանաւանդ իրենց իրքեւ պարծանք և այլոց յօրինակ յառաջ բերուելու էր : Պատմութիւնը մեղ կ'ցուցընէ թէ Նիկոլ եպիսկոպոսին հալածանաց ժամանակ Լեհաստանի և Լէմպէրկի մէջ գաղթեալ Անեցիքո 47 տարւոյ չափ անկնունք , առանց կրօնական թագման և հոգեորդական ամեն միսիթարութիւններէ զուրկ մնաւ լով , պապականութիւնը չընդունենուն համար երբ որ ստիպուեցան անկէց նորէն գաղթել , ընտիր մէկ մասը իրենց տուները և կալուածները ձգելով եկան Սուչաւա տեղաւորուեցան , ուր ի յիշառակ իրենց լքեալ նուիրական տեղեաց սննոց անուամբն եկեղեցիներ և ուխտատեղիներ շինեցին : Գրիթէ դար մ'ետքը Թաթարաց արշաւանքն վրայ գալում առկէց ալ մէկ մաս մը գէպ ի Թրանսիլվանիա և յՈւնդարիա գաղթել պարտաւորեցան , Ուր են արդ Լեհաստանի մէջ մնացող աղղայինները որ 70,000 գերդաստան կը հաշուրուէին , ուր են Սուչաւայէն Թրանսիլվանիոյ մէջ 400 տուն գաղթող չայերն : Աղղասէր ուղևորը առանց պախարակելու միայն ցաւօք կը յիշէ թէ սցդ երկիրներու չայերը կրօնափոխ ըլլալով չկան , անունին չը յիշուի իր , մեծակառոյց հոյտակապ եկեղեցիները Լա-

տինաց ձեռքն անցան , հայերէն լեզուն մոռցուեր է և միայն քանի մը ծերոց մէջ կը խօսուի եղեր :

Արդ այս տիսուը իրողոթիւնը արդեօք իրեկ ապացոյց չէ՞ր կրնար մի ծառայել մանաւանդ Սուչաւացւոց կրօնասիրութեան և ազգասիրութեան , որք զիշենց հայրենաւանդ . Լուսաւորչական կրօնքը , ազգութիւնը և հայկական բարբառը խնամօք պահած են , թէ և ամեն կողմէ դայթակլղեցուցիչ օրինակներէ և հրապուրիչ առիթներէ պաշարուած էին : Կրնայ մի արդեօք օրինակ մը ցուցնել յայլակրօնաւթիւն դարձած Սուչաւացւոյ մը , որք իրենց հայրենակից Զմիւռնիայի Սնեցւոց նման իրաւամը ասիկայ իրենց պարծանքի կէտ մ'ըրած են : Բայց պատարադի մէջ , այլ ե այլ տաեն քոյցի և ծնծղայի հետ դպիրք զանդակ ալ կը հնչեցնեն եղեր , Առաքելոցը կիսուկատար ըսելով շուտ կը լինցնեն եղեր , կանայք ժամերգութեան տաեն բարձր ձայնով իրարու հետ կը խօսակցին եղեր և այնու ժողովրդեան ճառածոկն աղօթքը կը խանգարեն եղեր : Ասոնք եթէ ըստ իմիք ստոյդ ալ ըլլան , օրոնց գարմանը այցելու քարողիներու ուշադրութեանը կը յանձնենք ինդրանօք . Թող ազգը չը դայթակլղի , կամ ի ամիւռս տարածուած աղդին այն մասը որ ազատ և անմեղ է այսովհի փոքր զեղծումներէ առաջին քարը նա Սուչաւացւոց վրայ նետէ : Աակայն այդ ըսածները երբէք Սուչաւացւոց կրօնքէ և ազգայնութենէ պազած ըլլանուն իրեկ ապացոյց չկրնար ծառայել . որք ինչպէս ջերմեաւանդ և եկեղեցասէր էին մեր ժամանակ , նոյնպէս և այժմ ըլլանին կը վկայեն Գերապատիւ Մելքիսէդէկ Հայր Սուրբը , Անդրէանուպօլսոյ առաջնորդ Գրիգոր Արքազան եպիսկոպոսն , երբեմն Ներսէս վարդապետ և այժմ Պօլսոյ Պատրիարք Սրբազնը և բոլոր այցելու նուիրակներն որք ժամանակ ժամանակ քարոզչութեան համար այցելութիւնները ըրեն և ամեն անդամ գովութեամբ և մեծարանօք կը խօսին Սուչաւացւոց կրօնասիրութեան , ազգասիրութեան և ծանրաբարոյ բնաւորութեանը վրայ : Կարծենք անպատութիւն ըրած չենք ըլլար ազգասէր երիտասարդին՝ եթէ իրեն ըսածներէն աւելի ար-

ժամանակաւատ համարինք այդ ազգախնամք բարձրաստիճան եկեղեցականաց համամիտ վկայութիւնները :

Սոյն փաստը իւր համոզողական բոլոր ուժովն կը ջրէ նաև այն գանգատը թէ Սուչաւացւոց մէջ ազգութեան ողին բոլորովին մարած, և այսու Ազգը օր ըստ օրէ նուազելու վրայ եղած ըլլայ, Ասիկայ հասատելու համար ի մէջ բերած վիճակադրական ապացոյցն ալ սխալ է, որն որ ներելի է, և հարկաւ իսկական վիճակին և պարագաներուն վերահաս կարող ըլլալու բաւական ժամանակ չունենալին յառաջ եկած է : Ազգ հեղինակը կը կարծէ թէ Հայոց նուազելուն մէկ պատճառն միայն 1-2 զաւակով բաւականալին է, բնչպէս անոր հակառակ չըրէից, զորս իրան բաղդատական տարր ի մէջ կը բերէ, բազմանալուն պատճառ 10-12 զաւակի աէք ըլլալին է : Եւ սակայն այս չէ պատճառը, Գիտնալու է որ Սուչաւա Աւստրիոյ և Մոլտավիոյ մէջ սահմանագլուխ ըլլալով, արևելքի և հարաւոյ կողմէն գոցուած է անցուգարծը և այնու քաղաքին առեւտուրը մաքսի խոնդումներով սահմանափակ : Հայք որ վաճառականութեան ազգային բնաձիր յառկաւթիւնը ունին, բնական է որ նախամեծար համարին ու բնարեն իրենց վաճառականութեան աւելի ընդարձակ ասպարէզ մը : Ասկէց զատ ի սկզբանէ անտի Սուչաւացիք դիմուորութեան հակակրութիւն ունենալով, դինուորութենէ ազատ ըլլալու համար՝ ծանր հարկը վճարելու անկարողներու մէջ ընդհանուր սովորութիւն եղած է զաւակին 10-12 տարու եղածին պէս մերձակայ Ռումանիայ երկիրը զրկել վաճառականի կամ խանութ պանի մը քով, որպէս զի չափահասութեան ատեն Աւստրիա չգտնուին :

Տշայքն Ռումանիա տեղաւորուելին և ինքնագլուխ վաճառականներ ըլլալին ետքը ծնաղքնին սովորաբար կ'երթան իրենց ծերութեան ժամանակը քովերնին կ'անցնեն : Ասկից է որ Ռումանիոյ գրեթէ բոլոր քաղաքները Սուչաւացիք տարածուած են, և ասկից է նաև որ Սուչաւայի մէջ մնացողները աւելի աղջիկներն են, որով օրիորդաց և երիտասարդաց մէջ հաւասարակը ըշուութիւնը խանգարած է : Բայց ասկից չհետեւիք

թէ ո՞ւ ա՞յ օրիորդաց շատը օաարազդիներու հետ կարգուելու ախտին բռնաւած են, պրովինցիան Սուչաւայի օրիորդք իրաւամբ պարկեցութեան, աանտկնութեան և նուազ զարդասիրութեան անուն և համարամ ունենալովին, Առումանիոյ մէջ տարածեալ Սուչաւացիք և նոյն իսկ Առումանիա ծնող երիտասարդք առ հասպակաւելի հետամուտ են Սուչաւայիքն իրենց ամուսիններ ընտրել, որով խանդարեալ հաւասարակշռութիւնը դարձեալ տեղը կերթայ:

Եթէ հայազգի ճրիտասարդի մը օաարազգի աղջը կան հետ ամումանալու զրեթէ օրինակ մը չկայ, Հայ օրիորդի մը օաարազգիի հետ կարգուիլ խիստ քիչ և բացառութիւն է: Ամուսնութիւնը չէ ուրեմն Ուուչաւացիներուննուազելու պատճառը, այլ վաճառականութեան և զինսուրազբութեան համար ի Առլուտաիա պնդնիլը: Եւ սակայն ըստ հեղինակին 700 տունէն 400 տունին խմբովին ի Թրանսիլվանիա մեկնելէն ետքը, միացեալ 300 տունը 150 աարուան միջոցի մէջ 160 տունի իջնալը ոչ սյնչափ մեղագրանաց առիթ կընայ ըլլալ Սուչաւացւոց համար, երբոր ինկատափ ասնուի նախ թէ այդ անեշան նուազումը ազգին անհասական կորուստ չէ, այլ պարզապէս տեղափողութիւն մը, և երկրորդ երբոր Թրանսիլվանիոյ մէջ կրօնից, իսկ Լեհաստանի մէջ թէ կըննի և թէ ազգութեան նկատմամբ այնչափ ազգայնաց բոլոր բովանդակ անհատ ըլլալուն հետ բազդատուի:

Յաւալի և արտասուակի կէտ մը եթէ կայ, այն ալ Սուչաւայի աղջային գպրոցին յետամնաց վիճակն է: Եթէ չափազանցութիւն է ըսելը թէ վարժապետնին, որ բատ մեզ բաւական հայկաբան է, առանց սիստմի տող մ'անգամ չկընար կարգալը ինչպէսնաև առհասարակ բոլոր քաղաքացիներուն խիստ կոկիկ և աղւոր գերը պախարակել, ըսելով թէ, «Ագամէ մնացած ըլլաց» իրը թէ Ագամայ ժամանակ հացերէն գեր ըլլար, սակայն սատոյդ է դժբաղդաբար, թէ ամեն ազգասէր և հայրենասէր՝ ազեխարչ և պատկտուր կը մնայ երբոր Սուչաւայի գպրոցին տխուր վիճակը նկատելու ըլլայ: Երկու սարի կարգավարի (Քէրենքէր) տիտղոսով երիտա-

սարդական եռանդեան ամեն ճիզն թափելով մենք և ամերօվանն նկրտեցանք գործակցութեամբ մեր բարեկամ կալուած ատէր Աղա Խիել աղդասէր ազնուականին ասոր դարձան մը տանիլ դպրոցը բարեկարդել և աղջկանց կանանաւոր դպրոց մը ևս հաստատեցինք բայց աւազ, երկոցունցա աշխատութիւնը ապախտ եղաւ: Այս դպրոցը Սուչաւացւոց պատիւ չքերեր, որն որ այսու մանաւանդ աւելի կը ծանրանայ, որովհետեւ լուսաւորութեան կեդրոնի մէջ կենալովին առաւել ի վիճակի են աղջային կը թութեան յարգն ու վարկը դընհատելու, առ որ պէաք եղած դրամը և հաստատ եկամուտը չպակսիր իրենց: Առոր համար, թէև հեռաւոր, բայց իրքեւ հայրենասէր զաւակ կ'երդուընցը կը թափանցենք մեր սիրելի քաղաքակիցները և յատկապէս հոդաբարձուներն ու քահանայները որ անյապաղ այս արատը չնշելու ճդնին:

Այս նպատակին հանելու միջոց է ըստ մեզ, նախ այժմեան ծերունի ութունամեայ վարժապետը արժանավայել թոշակը իրեն պահելով հանդստացնել, և անոր տեղ աշխայժ աղդասէր հայկարան մը բերել, ինչպէս նաև աղջկան դպրոցը հայազդի բարեմայն վարժուհու մը յանձնել: Երկըօրդ՝ եկեղեցական դպրութիւնը և գաստառի պաշտօնը անջատել զատել: Թող համոզուին թէ օսար լեզուաց և զիտութեանց մէջ իրենց կը թութիւնը սրչափ որ ալ կատարեալ և փայլուն ըլլայ, միշտ յետնեալ և նսեմ պիտի մնան և աշխարհին մէջ քայլերնին միշտ կազնի կազնի և առ խարխափս պիտի առնեն: Անձնական յարգ ու պատիւ, անկախ դիրք և լիասիրտ միսիթարութիւնը աղդային ողւոյ և մայրենի լեզուի մշակութեամբը միայն կրնան ունենալ:

Չենք ուղեր աղդասէր ճանապարհորդին հետեւիլ Սուչաւայի Հոգաբարձուաց և Քահանայից մէջ այժմ ծագած վէճին նկատմամբ, Այս ինդրոյն վրայ թէև քանի մը գրեր մեք ալ առինք, բայց մենք մէկ կողմէն միայն զրուած ըլլալովն և հեռու գտնուելովիս անաշառ ըլլալու պէտք եղած տարրը և մանրամասնութիւնը կը պակսի մեզ, ասկէց զատ, ոչ պաշտօն ունինք և ոչ իսկ խոհեմաւթիւն կը համարէնք տեղական

կամ լաւ ևս է ըսել ընտանեկան գործերու մէջ միջաւ մուխ ըլլալ : Բայց ուս միայն գիտել է ուտանք թէ : մէկ կողմէն կը սուի թէ Առւշաւայի մէջ մեր գիտացած ամիրայութիւնը կը տիրէ , բուն բառին նշանակութեամբ . եկեղեցւոյ Հոգաբարձուք ինչ որ հրամայեն այնպէս պիտի ըլլայ . քահանայք ըստ ամենայնի պատրաստ են անոնց հնազանդելու , իսկ միւս կողմանէ կը հաստատուի թէ «Քահանայն առանց մահկընելու Հոգաբարձուին պատուէրը երախային կը մկրտէ . և կը պատասխանէ թէ տոի իր պաշտօնն է . ուր որ մկրտութիւն պատկ և ննջեցեալ մ'ըլլայ՝ իր պարտքն է երթալ կատարել , զոր եթէ չընէ իր կարդին և կոչմանը գէմ մեզանչած կ'ըլլայ . և թէ ինքը ստակի բանակարգութեալ և այլն , և այլն . պատասխան մը որ Քահանայից ստորակարգեալ ծառայի մը նուաստ գեր ունենալուն հակասական է : Բայց այլի մեզ եթէ «Քահանայք իրենց անյագ արծաթսիրութեամբ և միայն իրենց շահուն համար աշխատելիք կարգերնին և պատիշին նուաստացած ըլլալուն ամբաստանութիւնն ալ , որուն ցաւ է մեզ հաւատալ , անձնանուէր զահողութեամբ արգարացնել կարող ըլլային :

Նոյնպէս կը գժկամակինք ընդունիլ հարուստներուն վրայ ըրած խփան խօսքերն : Կարելի է Սուշաւացի իշխանաւորք առաւել քան զարժանն կարեւութիւն մը տան շքաւոր աստիճաններու և աէրութեան տիտղոսներու , որք ըստ այժմեան ուղղագոյն տեսութեան և հաւատարական սկզբան անձնական արժանիքէ միշտ ստորագասելի են , և պարզապէս առաքինական , ազգասիրական և մարգասիրական նշանաւոր գործոց իրբե արտաքին նշան և վարձ իրենց գիմնը ունին . ստկայն այդ թերութիւնը մինչև իւր յետին հետեւթիւնը իջեցնել և անկից եղագակացնել թէ «մեծամեծներն իրենց ստորին մէկու մը բարեւ անդամ տալ կը զլանան , ողորմութիւն ինդրող քաղաքային կը վարնաւեն առջենուն հեռի է ճշմարտութենէ : Իրենց ինչպէս նաև բոլոր աեղացիներուն գերմանական ցրտութիւնը և գժուարամստչելի ըլլալը , զորն որ թերեւ

Հեղինակին ալ զգալի ըլքած են , պատճառ եղած ըլք լարու են այդ կարծեաց տիսուր և խիստ քննադատութեանց՝ որք այս իրրե անմիջական տպաւորութիւն պէտք է համարուին , բայց ոչ երբէք իրրե խոկական իրաց վիճակ :


Զանց կը նենք յիշատակել այլ և այլ շատ մը կէտերն , ընդ որու և այն իրը թէ «հասարակ ժողովուրդը ձայն չունի բարձրացնելու և հաշիւ ուղելու . թէ եկեղեցական կարդադրութիւնը 2-3 հոգաբարձուի ձեռքն է , որ 10 տարիէն ի վեր այս պաշտօնը կը վարէ , թէ ստակը ուր կ'երթայ կամ ուր մնացած է , ոչ զիտցող կայ և ոչ հարցնող փնտող : Որովհետեւ անհնարին է հաւատալ , թէ սահմանադրական և հըսկող աէրութիւն մը , ինքնիշխանական այսպիսի զեղծումներու թոյլատութիւն ընէ , ազգին կողմէն շնուռած և տէրութենէն վաւերացեալ կանոնադրութիւնն ուսնակոլս ըլլալուն աչք դոյշէ կամ որոշեալ պայմանաժամի մէջ հոգաբարձութեան ընտրութիւնը չպահանջէ , որն որ նորոգ անցեալ տարի եղաւ և վերընարելիութեան սկզբմաքը դարձեալ նախկին հոգաբարձուները հաստատուեցան , Անք վարժած ենք հոսդրամական անհաւատարմութիւններու հանգիստես ըլլալ , անսնց պատիմը անպատճառ և անմիջապէս ըլլետեւելուն համար , բայց տախկայ Աւատրիա չըլլար , և յայանի է թէ հեղինակը խարուած ըլլայ ընդդիմուկաց անձէ մը , որն որ լաւագոյն ըրած կ'ըլլար և աւելի աղդուռուտ էր տէրութեան ըողոքել և ամբաստանել եթէ այնպէս բան մը կայ , քան թէ երիտասարդի մը միտմատութեամբը զեղծանիլ :

Քաղցր է մեղ յուսալը թէ աղդասէր ուղեւորը իւր արդիւնաւոր հրատարակութեան և տուած հետաքըննին տեղեկութեանց մէջ սպրդած քանի մը սխալներուն վրաց այս գիտողութիւններուն ներողամիտ կ'ըլլայ , ինչպէս նաև իրրե անկեղծ յայտարարութիւն կընդունի սա մեր համոզաւմն ալ թէ իւր աշխատաւթիւնը և զոհողութիւնը ամեն զովեսափց և չնորհակալութեան արժանի է , որովհետեւ ի սփիւռս տարածուած աղդը մէկզմէկու ճանցնելու կը ծառայէ , հետաքրքրութիւ-

Նը կը զարթեցնէ և եթէ պակասութիւններնին յերեան հանուին, ամսոց դարման տանելու միջոցներուն վրայ ընդհանուրին մոտածել կուտայ, Երանի՛ թէ և այլք անձնուրացութեամբ այս օրինակին հետեւող ըլլացին:

Խնդրեմ, Մեծ. Տնօրէն-Խմբագիր, այն դիտազաւթիւններս բարեհաճիք պատռական Ա.Պ.Գ.Բ.Յ. մէջ հրատարակել, և ընդունիլ մեր մեծարանաց հաւատակիքն, որով մնամք Ձերդ բաղեցակամ

Ա. Խ. ԶՈՒԿԻԴ







1770

2 u 1.3

